

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԸՆԴԵՐՁԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ԼԵՌՆԱՍՏԵՏԱԼՈՒՐԳԻԿԱՅԻ ԻՆՍԻՏՈՒՏ

ԱԼՈՅԱՆ Պ.Գ., ԱԼՈՅԱՆ ՀԱՅԿ Պ.,
ԴԱՎԹՅԱՆ Ա.Ա., ՄԱՐԿՈՍՅԱՆ Ա.Ա., ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Տ.Մ.,
ՍՏԵՓԱՆՅԱՆ Ի.Հ.

ՄԵՏԱՂՆԵՐ

ՄԵՎ, ԳՈՒՆԱՎՈՐ, ԱԶԽԻՎ, ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ՄԵՏԱՂՆԵՐ
ԵՎ ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ՀՈՂԵՐ

Տպաշարք. Հայաստանի հանրային հումքի արդյունավետ
օգտագործում և ընդերքի լիարժեք յուրացում



Երևան
ԳԵՐԻԴ
2006

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԸՆԴԵՐՈՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ԼԵՌՆԱՍԵՏԱԼՈՒՐԳԻԱՅԻ ԲՆԱՌԵՏՈՒՏ

ԱԼՈՅԱՆ Պ.Գ., ԱԼՈՅԱՆ ՀԱՅԿ Պ.,
ԴԱՎԹՅԱՆ Ա.Ա., ՄԱՐԿՈՍՅԱՆ Ա.Ա., ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Տ.Մ.,
ՍՏԵՓԱՆՅԱՆ Ի.Հ.

ՄԵՏԱՂՆԵՐ

ՄԵՎ, ԳՈՒՆԱՎՈՐ, ԱԶՆԻՎ, ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ՄԵՏԱՂՆԵՐ
ԵՎ ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ՀՈՂԵՐ
(Համառոտ ձեռնարկ)

Տպաշարք. Հայաստանի հանքային հումքի արդյունավետ
օգտագործում և ընդերքի լիարժեք յուրացում

Թողարկում 7

Երևան
ԳՈՒՆ
2006



Հրատարակում է Հայաստանի Շարտարագիտական ակադեմիայի նախագահության, Լեռնամետալուրգիայի ինստիտուտի գիտատեխնիկական խորհրդի երկրաբանական սեկցիայի և Ընդերքի պահպանության ընկերության նախագահության որոշմամբ

Գ թ ա խ ո ս՝ Երկրաբանահանքարանական գիտությունների թեկնածու, դոցենտ Է.Խ.Խարազյան

Մ 650 Մետաղներ՝ սև, գունավոր, ազնիվ, հազվագյուտ մետաղներ և հազվագյուտ հողեր: Զեռնարկ / Պ.Գ. Ալոյան, Հայկ Պ. Ալոյան, Ա.Ա. Դավթյան և ուրիշ.

Եր.: ԳԵՈՒԴ, 2006. – 250 էջ:

Տպաշարք. Հայաստանի հանքային հումքի արդյունավետ օգտագործում և ընդերքի լիարժեք յուրացում

Թողարկում 7

Սույն ձեռնարկում առաջին անգամ հայերն լեզվով տրվում են ընդհանուր տեղեկություններ սև, գունավոր, ազնիվ, հազվագյուտ մետաղների և հազվագյուտ հողերի ֆիզիկա-քիմիական հատկությունների, նրանց գոյաձեւերի (միներալների) և առկա հանքատեսակների, ինչպես նաև տվյալներ հանքային հումքի, մետաղների արտադրության և սպառման ցուցանիշների վերաբերյալ՝ աշխարհի կտրվածքով:

Ձեռնարկն ընգրկում է համառոտ, բայց և սպառիչ տեղեկություններ Հայաստանի օգտակար հանածոների հանքավայրերում մետաղների պաշարների և պոտենցիալ ռեսուրսների, հանքաքարի նյութական կազմի, արդյունաբերական հանքատեսակների, մետաղների արտադրության և օգտագործման հեռանկարների վերաբերյալ:

Ձեռնարկում նյութերի որոշ մասը բերվում է քարգմանաբար, իսկ Հայաստանին վերաբերվող նյութերը հանդիսանում են ինչպես գոյություն ունեցող նյութերի, այնպես էլ հեղինակների հետազոտությունների արդյունքների ամփոփումներ:

Ձեռնարկը նախատեսվում է մասնագետների, ներդրողների և արդյունաբերողների լայն շրջանակների համար: Այն կարող է ծառայել որպես դասագիրք ԲՈՒՀ-երի երկրաբանական, լեռնային, քիմիա-մետալորգիական, տնտեսագիտական մասնագիտությունների համար:

Մ 1804060000
0179(01) – 2006 2006թ.

ԳՄԴ 26.325(2Հ)

ИНЖЕНЕРНАЯ АКАДЕМИЯ АРМЕНИИ
ОБЩЕСТВО ОХРАНЫ НЕДР
ГОРНО-МЕТАЛЛУРГИЧЕСКИЙ ИНСТИТУТ

Алоян П.Г., Алоян Гайк П.,
Давтян А.А., Маркосян А.А., Арутюнян Т.М.,
Степанян И.Г.

МЕТАЛЛЫ
ЧЕРНЫЕ, ЦВЕТНЫЕ, БЛАГОРОДНЫЕ, РЕДКИЕ МЕТАЛЛЫ
И РЕДКИЕ ЗЕМЛИ
(Краткое пособие)

Серия: Рациональное использование рудного сырья
и эффективное освоение недр Армении

Ереван
ГЕОИД
2006

ENGINEERING ACADEMY OF ARMENIA
ENTRAILS PROTECTION SOCIETY
MINING-METALLURGICAL INSTITUTE

Petros Aloyan, Hayk Aloyan,
Araik Davtyan, Alexan Markosyan, Tagor Harutunyan,
Irina Stepanyan

METALS
FERROUS, NONFERROUS, NOBLE, RARE METALS
AND RARE EARTHS
(Brief manual)

Ser.: Armenian mining raw materials rational using
and subsurface effective developing

Yerevan
GEOID
2006

Տպաշարքի պատասխանատու խմբագիր
ԽՍՀՄ և ՀՀ Պետական մրցանակների դափնեկիր, Երկրաբանական
գիտությունների դոկտոր, Հայաստանի ճարտարագիտական
Ակադեմիայի ակադեմիկոս

Պ.Գ.Ալոյան

Ժողովածուի խմբագրական կոլեգիա՝
Երկրաբ.գ.դ. Պ.Գ.Ալոյան (գլխավոր խմբագիր)
Երկրաբ.-հանք.գ.դ. Բ.Հ.Քեզիրզանով, տեխ.գ.դ. Վ.Ռ.Իսրայելյան
Երկրաբ.-հանք.գ.թ. Ս.Հ.Կարդանյան, Երկրաբ.-հանք.գ.թ.
Վ.Վ.Թովմասյան,
Երկրաբ.գ.թ. Հայկ Պ.Ալոյան (պատասխանատու քարտուղար)

Ответственный редактор серии
лауреат Госпремий СССР и РА, доктор геологических наук,
академик Инженерной академии Армении
П.Г.Алоян

Редакционная коллегия сборника:
доктор геол.н. П.Г.Алоян (главный редактор)
доктор геол.-мин.н. Б.Г.Безирганов,
доктор техн.н. В.Р.Исраелян,
канд. геол.-мин.н. С.У.Вартанян,
канд. геол.-мин.н. В.В.Товмасян
канд. геол.н. Гайк П.Алоян (ответственный секретарь).

Responsible editor of series
USSR and RA State Prizes Winner, doctor of geological sciences
Academician of the Engineering Academy of Armenia

P.G.Aloyan

Editorial board of series:

doctor of geol. s. (editor-in-chief) P.G.Aloyan,
doctor of geol.-mineral. s. B.G.Bezirganov,
doctor of tech. s. V.R.Israelyan,
Ph.D. of geol.-mineral. s. S.H.Vartanyan,
Ph.D. of geol.-mineral. s. V.V.Tovmasyan,
Ph.D. of geol.- s. Hayk P.Aloyan
(responsible secretary).

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման և ամրապնդման կարևորագույն երաշխիք է համարվում մայրենի լեզվով մասնագիտական գրականության և ուսումնական ծեռնարկների առկայությունը և օտարալեզու մասնագիտական տերմինների, դարձվածքների և արտահայտությունների հայեցի վերծանումը։ Հայալեզու գրականության ստեղծման շնորհակալ աշխատանք սկսված է Երևանի պետական համալսարանում՝ պրոֆեսոր Հ.Հ. Սարգսյանի կողմից՝ ցավոր ոչ պետական հոգատար հովանավորությամբ, այլ գուտ անձնական, ազգանվեր նախաձեռնությամբ։

Հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման կարևորագույն և առաջնահերթ ուղղություններից է լեռնահանքային արդյունաբերությունը, այդ թվում խտանյոթերի, մետաղների, տարբեր համաձուվածքների արտադրության և կիրառման ոլորտները։ Կարևորագույն այդ ճյուղը ապահովված չէ հայալեզու մասնագիտական գրականությամբ, ինչը խոչչոր խոչընդուռ է հանդիսանում մայրենի լեզվով կրթություն ստացած ինչպես Երիտասարդ կայրերի պատրաստմանը, այնպես էլ արդյունաբերության տարբեր ճյուղերում աշխատող մասնագետների գործունեությանը։ Այդ տեսակետից սև, գունավոր, ազնիվ և հազվագյուտ մետաղների վերաբերյալ հայալեզու գրականության խիստ պահանջարկ է զգացվում։

Սույն աշխատանքով փորձ է արվում լրացնել այդ բացը՝ շիականելով սպառիչ պատասխանի, քանի որ հայալեզու ընդիանուր լեռնահանքային տեխնիկական գրականության բացարձակ բացակայության պայմաններում հնարավոր չէ այդ բացը լրացնել մի քանի հրապարակումներով։

Մայրենի լեզվով տեխնիկական մասնագիտական գրականության ստեղծումը՝ ըստ բնագավառների, պետք է հանդիսանա պետության ամենօրյա հոգատարության խնդիր և իրականացվի ենուանկարային ծրագրով, որով պետք է ապահովվի կրթական հաստատությունների ու գիտական և արտադրական ծեռնարկությունների գործունեությունը։

Սույն ձեռնարկը կազմված է հանրապետությունում գոյություն ունեցող գիտական և տեխնիկական գրականության հիման վրա և, առանձին դեպքերում, ներառում է որոշ հեղինակների նյութերը՝ բարգմանաբար: Թարգմանաբար բերված նյութերի համար հեղինակները չեն հավակնում հեղինակային իրավունքի: Դա հիմնականում վերաբերվում է մետաղների լնդիանուր բնորագրմանը՝ նրանց ֆիզիկա-քիմիական հատկություններին, կիրառման ոլորտներին, արդյունաբերությանը, արտադրական ծավալներին, պաշարներին և կանխատեսումային հանքային ռեսուրսներին: Չհավակնելով հեղինակային իրավունքին՝ ձեռնարկը կազմելիս, օգտագործվել է տարալեզու մեծաքանակ գրականություն, որոնց վրա տեքստում հղումներ չեն կատարվում:

Ձեռնարկում նյութերի որոշ մասը բերվում է թարգմանաբար, իսկ Հայաստանին վերաբերվող նյութերը հանդիսանում են ինչպես մասամբ գոյություն ունեցող նյութերի, այնպես էլ հեղինակների հետազոտությունների արդյունքների ամփոփումներ: Հայաստանի զյուսպր հանքային ֆորմացիաները նկարագրելիս մանրամասն նկարագրվել են անվանամետաղները (Fe, Cu, Mo, Au, Ag), այդ պատճառով մետաղների անվանացանկում դրանք չեն ընդգրկվել:

Տեքստում լնդրունված կրճատումներ.

ԹՄԿ – Թույլատրելի սահմանային կուտակում

ԹՄԿ_{ագ} – Թույլատրելի սահմանային կուտակումը աշխատանքային գոտում

ԹՄԿ_{ամ} – Առավելագույն միանվագ թույլատրելի սահմանային կուտակումը

ԹՄԿ_{ած} – Միջին օրեկան թույլատրելի սահմանային կուտակումը

ԹՄԿ_շ – Թույլատրելի սահմանային կուտակումը ջրավագանում

ԹՄԿ_{ջա} – Թույլատրելի սահմանային կուտակումը ձկնարդյունաբերության ջրավագաններում

Մաս I. ՍԵՎ, ԳՈՒՆԱՎՈՐ, ԹԱՆԿԱՐԺԵՔ, ՀԱԶՎԱ-
ԳՅՈՒՏ ՄԵՏԱՂՆԵՐ ԵՎ ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ՀՈՂՆԵՐ

Գլուխ 1. ՍԵՎ ՄԵՏԱՂՆԵՐ

Երկար (Fe, VIII, 26)

Մետաղ, արծարափայլ-մոխրագույն, փափուկ, պլաստիկ: Հանդես է բերում հիմնային (FeO) և ամֆոտեր ($Fe_2 O_3$) հատկություններ, սիդերոֆիլ է, կայուն վալենտականությունները 2^+ և 3^+ :

Խտությունը 7874 կգ/մ³, կարծրությունը ըստ Բրինելլի՝ 490-915 ՄՊա, հալման ջերմաստիճանը 1535^0C , եռմանը՝ 2750^0C , ջերմահղորդականությունը 80.2 Վտ/(մ.Կ.), տեսակարար էլեկտրական դիմադրությունը $9.71 \cdot 10^{-8}$ Ohm մ, ֆերոմագնիսութիւն է, մագնիսական ընկալունակությունը մինչև 1մ³/կգ, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $12.3 \cdot 10^{-6}$ Կ⁻¹: Առաջացնում է պոլիմորֆ ձևափոխություններ α , β , γ , δ :

Երկարի ֆիզիկական և քիմիական հատկությունները զգալիորեն փոփոխվում են՝ կախված մի շարք տարրերի խառնուրդից: Լեզիրացնող տարրերը ածխածին, կայծքար, մանգան, քրոմ, վանադիում, նիկել, կորալտ, մոլիբդեն, վոլֆրամ, տիտան, բոր և այլն: Թույլ լեզիրացված պողպատները պարունակում են 2.5%-ից պակաս խառնուրդներ, միջին լեզիրացված՝ 2.5-10, լեզիրացված՝ 10-ից ավելի:

Երկարի համաձուլվածքները լինում են մագնիսական, ոչ մագնիսական, թթվակայուն, ջերմակայուն, արագ կտրող, չժանգություն, ձուլված, ճնշմամբ մշակվող:

Երկարի կլարիկը երկրակեղեռում 4.65% է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (%): Գերիմքային՝ 9.85, հիմքային՝ 8.56, միջին՝ 5.85, թթու՝ 2.7, նըստվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 3.33:

Երկարը համընդհանուր բունավորության (3-րդ կարգի վտանգավորություն), բայց կենսականորեն անհրաժեշտ տարր է: Թ-ՄԿ_{մո}-ն $Fe_2 O_3$ – 0.04 գ/մ³, $Fe SO_4$ – 0.007 գ/մ³, Թ-ՄԿ_ց-ն FeO – 0.3 մլգ/լ, Թ-ՄԿ_{ձաւ}- FeO – 0.5 մլգ/լ: Բնահողում բնական պարունակությունը 1-11 %:

Երկարի հանքաքարի համաշխարհային ընդհանուր պաշտամները կազմում են մոտ 450 մլրդ.տ, այդ թվում հաստատված՝ 230; տարեկան արդյունահանումը – 1.0 մլրդ.տ։ Առավել խոշոր արտադրողներն են՝ ԱՊՀ երկրները, Կանադան, ԱՄՆ-ն, Բրազիլիան, Ավստրալիան։

ԱՊՀ երկրների երկարի հանքաքարի պաշտամները կազմում են համաշխարհային պաշտամների մոտավորապես կեսը։ Ռուսաստանում երկարի պաշտամները 100 մլրդ.տ-ից ավելի են, հումքի արդյունահանումը – մոտ 200 մլն.տ է։

Երկարի և նրա համաձուլվածքները մերենաշինության, շինարարության և այլ բնագավառների հիմքում ընկած հիմնական կառուցվածքային տարրերն են։ Երկարի և նրա համաձուլվածքների բաժնեմասը կազմում է տեխնիկայում օգտագործվող մետաղների ընդհանուր քանակի քան 90%-ը։

Երկարից ստացվող սև մետաղուրգիայի արտադրանքներն են. գլոցվածք, սպիտակ թիթեղ, երկմետաղ, ցինկացված թիթեղ, կորացված պրոֆիլներ, աղալու գնդեր, երկարալար, տեսակավոր տրամաչափային պողպատ, սառը գլանման ժապավեն, պողպատի և թուղի ծովածքը և խողովակներ։

Հայտնի են երկարի 500-ից ավելի միներալներ։ Նրանց մեջ գերակշռում են օքսիդները, սուլֆիդները, սիլիկատները և կարբոնատները։ Արդյունաբերական նշանակություն ունեն 10 միներալներ։ Մագնետիտը, տիտանամագնետիտը, հեմատիտը, լիմոնիտը, սիլերիտը, սիլերոպլեզիտը, պիրիտը, պիրոտինը, շամոզիտը, բյուրինգիտը։

Հանքավայրերի արդյունաբերական տեսակները. մագմատիկ, մետասոմատիկ, ջրաջերմային (հիդրոքերմալ), մետամորֆային, նստվածքային, հողմնահարման կեղևի։ Առավել նշանակություն ունեն մետամորֆային, նստվածքային, մետասոմատիկ տեսակները։

Ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության երկարի հանքավայրերը դասվում են առաջին, երկրորդ և երրորդ խմբերին։

Ըստ հանքաքարերի պաշտամների (մլրդ.տ) երկարի հանքավայրերը դասակարգվում են. ունիկալ՝ 3-ից ավելի, առավել խոշոր՝ 3-1, խոշոր՝ 1-0.3, միջին՝ 0.3-0.05, փոքր՝ 0.05-ից պակաս։

Որոնման և հետախուզման աշխատանքների առանձնահատկությունը կայանում է ալրո-, հետիոտն և հորատանցքների տարրերակներով մագնիսահետախուզության օգտագործման գերակայության մեջ:

Արդյունաբերական հանքավայրերն են. մագնետիտային, հեմատիտային (առաջնային և օքսիդացված), կարբոնատային և գորշ երկարային: Հանքաքարի հիմնական զանգվածը ներկայացված է հեմատիտային և մագնետիտային տեսակներով:

Ըստ երկարի պարունակության (%) հանքավայրերը դասակարգվում են. առավել հարուստ՝ 60-ից ավելի, հարուստ՝ 60-37, միջին՝ 37-32, աղքատ՝ 32-16: Առավել արժեքավոր են մագնետիտային և հեմատիտային խոշորահատիկ սպեկույարիտային հանքաքարերը, ինչպես նաև խտաբիրիտները, որոնք ապահովում են խտանյութերում երկարի բարձր պարունակությունը (մինչև 70-72%):

Հանքավայրերը մշակվում են. բաց, ստորգետնյա և համակցված եղանակներով: Տարվում է հորատանցքային հիդրոարդյունահանման եղանակով փորձնական շահագործում: Հարուստ հանքաքարը մանրացվում է, տեսակավորվում, մնացածը՝ հարստացվում է՝ կիրառելով մագնիսական, գրավիտացիոն, ֆլուտացիոն, համակցված, երրեմն հիդրոմետալուրգիական տեխնոլոգիաներ: 10 մմ-ից փոքր հատիկայնությամբ հարուստ հանքաքարերը և նույր մանքացված խտանյութերը մամլացվում են:

Երկարի կորզումը տարրեր տիպերի հանքաքարերից կազմում է 65-85%, խտանյութերի մեջ մինչև 72% երկարի պարունակությամբ: Խտանյութերում վնասակար խառնուրդներին են պատկանում ծծումքը, ֆոսֆորը: Համալիր կազմի հանքաքարի հարստացման ժամանակ ստանում են պղնձի, պիրիտի, ապատիտի, բարիտի և այլ խտանյութեր: Ուղեկցող տարրերի կորզումը կազմում է 45-78%:

Երկարի հանքաքարը և մամլված խտանյութերը վերամշակվում են հրամետալուրգիական եղանակով – հրահալոցային (դրմնային) և պողպատաձուլման պրոցեսում:

Վերջին տարիներին զարգացում է ստացել երկարի ուղղակի ստացումը: Այն արտադրում են մետաղացմանք, էլեկտրամետալուրգիական պրոցեսներով, ինչպես նաև մինչև սպոն-

գային երկարի վերականգման ճանապարհով: Տարեկան մոտ 2 մլն.տ հղորությամբ էլեկտրապողպատի առավել խոշոր ձեռնարկությունները՝ երկարի ուղղակի ստացմամբ, գտնվում են Ռուսաստանի Ստարի Օսկոլ քաղաքում (Օսկոլի էլեկտրամետալուրգիական կոմբինատ):

Վերականգնված երկարից անմիջականորեն պատրաստվում են մի շարք կառուցվածքային արտադրատեսակներ: Այդ նպատակի համար կիրառվում է փոշեմետալուրգիան: Երկարահանքային փոշիները օգտագործում են լաքաներկանյութերի արդյունաբերության մեջ՝ բարձր որակի հակակորողիոն և պաշտպանիչ ներկերի պատրաստման համար:

Հանքաքարից ստացված ապրանքային քուջը պարունակում է 94-96% երկար, սովորական պողպատը՝ 98-99, էլեկտրամետալուրգիական պողպատը՝ 99.5-99.8:

Խտանյութերում պարունակվող ուղեկից տարրերը (վաճառքիում և ֆունֆորը) անցնում են քուջի մեջ, որտեղից նրանց կորզում են խարամների մեջ՝ կրկնակի պողպատաձուլման պրոցեսում:

Մանգան (Mn, VII, 25)

Մետաղ, արծաթափայլ, կարծր, փիսրուն: Հանդես է բերում ամֆոտեր հատկություններ, լիքո- և սիդերոֆիլ է, կայուն վալենտականությունները 2^+ , 3^+ և 4^+ :

Խտությունը $7440 \text{ կգ}/\text{մ}^3$, կարծրությունը ըստ Բրինելլի՝ 196 ՄՊա, հալման ջերմաստիճանը 1244^0C , եռմանը՝ 1962^0C , ջերմահաղորդականությունը $7.82 \text{ Վտ}/(\text{մ.Կ.})$, տեսակարար էլեկտրական դիմադրությունը $185.0 \cdot 10^{-8} \text{ Ом} \cdot \text{մ}$, տեսակարար մազնիսական ընկալունակությունը $1.21 \cdot 10^{-7} \text{ մ}^3/\text{կգ}$, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $22 \cdot 10^{-6} \text{ Կ}^{-1}$:

Մանգանի կլարկը երկրակենում 0.1% է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (%): գերիմքային՝ -0.15 , հիմքային՝ 0.2 , միջին՝ 0.12 , թթու՝ 0.06 , նրսովածքային (կավեր և թերթաքարեր)՝ 0.067 :

Մանգանը բունակոր (2-րդ և 3-րդ կարգի վտանգավորություն), բայց կենսականորեն անհրաժեշտ տարր է: MnO_2 սահմա-

նային թույլատրելի կուտակումները՝ ԹՄԿ_{ագ}-ն 0.1 գ/մ³, ԹՄԿ_{աճ}-ն 0.1 գ/մ³, ԹՄԿ_{մօ}-ն 0.01 գ/մ³, ԹՄԿ_շ- 0.1-1.0 մլգ/լ: Բնահողում բնական պարունակությունը՝ 0.05-0.3 %:

Սանգանի հանքաքարի հաստատված համաշխարհային ընդհանուր պաշարները 10 մլրդ.տ է, տարեկան արտադրանքը՝ 22 մլն.տ: Առավել խոշոր արտադրողներն են՝ Ուկրաինան, Չինաստանը, Հնդկաստանը, Քրազիլիան, Մեքսիկան, ՀԱՀ-ը:

ԱՊՀ երկրներում պաշարները կազմում են 3 մլրդ.տ հանքաքար, տարեկան արդյունահանումը - 11 մլն.տ: Ռուսաստանում պաշարները կազմում են մոտ 150 մլն.տ հանքաքար, տարեկան արդյունահանումը 120-150 հազ.տ:

Կիրառման հիմնական բնագավառը սև մետալորգիան է - 95%, ֆերոմանգանի և մի քանի այլ համաձուլվածքների (որպես լեզվացնող տարր) արտադրության համար:

Հայտնի են մանգանի 300 միներալներ: Նրանց մեջ գերակշռում են սիլիկատները, ֆուֆատները, օքսիդները, արսենատները: Արդյունաբերական նշանակություն ունեն 12 միներալներ. պիրուզուզիտը, փսիլոմելանը, մանգանիտը, բրաունիտը, հաուսմանիտը, վերնադիտը, բոդրովիտը, ունսեիտը, ոռղոքրոզիտը, ոռղոնիտը, բուտամիտը:

Հանքավայրերի արդյունաբերական տեսակներն են. նստվածքային, հրաբխանստվածքային, փոխակերպածին, հիպերեզեն (հողմնահարման կեղև): Առավել կարևոր է առաջին տեսակը:

Ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության մանգանի հանքավայրերը դասվում են առաջին, երկրորդ և երրորդ խմբերին:

Ըստ հանքաքարի պաշարների (տ) մանգանի հանքավայրերը դասակարգվում են. առավել խոշոր՝ միլիարդավոր, խոշոր՝ հարյուր միլիոնավոր, միջին՝ տասնյակ միլիոնավոր, փոքր՝ միլիոնավոր:

Հանքաքարի արդյունաբերական տեսակներն են. օքսիդային, կարբոնատային, օքսիդակարբոնատային, օքսիդացված:

Ըստ մանգանի պարունակության հանքաքարերը դասակարգվում են՝ հարուստ – 55-25% և աղքատ – 25-10%:

Հանքավայրերը մշակվում են բաց և ստորգետնյա եղանակներով:

Հանքաքարի նախապատրաստումը վերամշակման ընթանում է մանքացմամբ, հարուստ հանքաքարի տեսակավորմամբ և աղքատ հումքի համակցված տեխնոլոգիաներով հարստացմամբ (լվացում, գրավիտացիա, մազմիսական տարանջատում, նստեցում):

Մանգանի կորզումը տարրեր տիպի հանքաքարերից կազմում է 50-75%, խտանյութում նրա 25-50% պարունակությամբ:

Խտանյութում վտանգավոր խառնուրդներն են՝ կայծքարահողը և ֆոսֆորը:

Մանգանի խտանյութերը վերամշակվում են էլեկտրամետալուրգիական եղանակով:

Մանգանի պարունակությունը ապրանքային արտադրատեսակներում կազմում է (%). Փերոմանգան՝ 75-85, կայծքարամանգան՝ 60-65, մետաղային մանգան՝ մինչև 99.9: Համաձուլվածքներում վնասակար խառնուրդներն են՝ C, Si, P, S; մետաղում՝ C, Si, Fe, Ni, Cu, P, S, Al, Ca, Mg:

Երկաթամանգանային առաջացումներ (ԵՍԱ)

Դրանք օվկիանոսի հատակում երկարի և մանգանի հիդրօքիդային միներալային գուգակցություններ են, որոնք առաջանում են նատկածքակուտակման և դիագենետիկ պրոցեսների ընթացքում՝ ջրի և նատկածքների անջատման սահմանում:

Քիմիական կազմը (%). SiO_2 9-14, TiO_2 0.5-1.4, Al_2O_3 4.5-5.3, MgO 2.4-4.0, CaO 4.6-5.4, Na_2O 2.4-3.0, K_2O 0.7-1.3, P_2O_5 0.4-1.5, Mn 22-30, Fe 6-16, Cu 0.1-1.0, Ni 0.4-1.2, Co 0.2-0.6:

Ֆիզիկամեխանիկական հատկանիշները՝ խոռոչումը 2900-3500 կգ/ m^3 , ծակոտկենությունը 30-60%, խոնավությունը 13-15%, փափկեցման ջերմաստիճանային տիրույթը $1350-2000^\circ\text{C}$, ամրությունը սեղմման նկատմամբ 40-70կգ/նմուշ (չոր), տեսակարար մազմիսական ընկալունակությունը $(5-10) \cdot 10^{-8} \text{ m}^3/\text{kg}$, գունավոր և հազվագյուտ մետաղների խոնների նկատմամբ կլանման տարողությունը 1.0-2.0 մգ-էկվ/գ:

Առաջացումների էկոլոգիական ներգործությունը շրջակա միջավայրի վրա – արտահայտվում է ԵՄԱ մշակման ժամանակ ծովային ջրերի մեջ քացասական հետևանքներով՝ կախույթային նյութերի կուտակումների մեծացում, քրվածնային ռեժիմի վատրարացում, քիմիական նյութերի կուտակում, ծովի հատակի մակերևույթի խախտում:

Կիրառման բնագավառները. նիկելի, կորալտի, պղնձի, մանգանի և այլ մետաղների (մոլիբդեն, հազվագյուտ մետաղներ, պլատին) ստացման հումք:

Հիմնական միներալները. մանգանի՝ վերնայիտ, բերմեսիտ, հիդրոհատամանիտ, բրաունիտ; երկարի՝ ակատենիտ, լեսպիդոկրոկիտ, հեմատիտ, մագնեմիտ, ֆերօքսիգիտ, մագնետիտ; գունավոր և ազնիվ մետաղների՝ խալկոպիրիտ, կովելին, նիկելին, վիոլարիտ; նիկելի, ուլու, պլատինի ինտերմետաղային միացություններ, ոչ մետաղային՝ քվարց, դաշտային սպար, փայլար, օլիվին, պիրոքսեններ, ամֆիբոլներ, կավային միներալներ, ցեռլիտներ, ապատիտ, կալցիտ, արագոնիտ, ոռոտիլ, բարիտ, շպինել:

Հումքի տեսակները. նիկել-պղնձնական-կորալտային, մանգան-նիկելային, կորալտային, կորալտ-մանգանային: Առաջին տեսակը ստորարածմանվում է. շատ խոշոր, հարուստ և շարքային, երկրորդը՝ նիկելով և մանգանով հարուստ, չորրորդը՝ շատ հարուստ և հարուստ:

Հանքավայրերը մշակվում են ֆրեզման եղանակով՝ լողացող միջոցներով արդյունահանված հանքաքարերի հիդրոտեղավոխմամբ:

Հումքի արդյունաբերական վերամշակումը ներառում է հիդրո և հրամետալորգիական պրոցեսները:

Ապրանքային արտադրատեսակները՝ պղնձի, նիկել-կորալտի, մանգանի խտանյութեր: Խտանյութերում համապատասխան պարունակությունները (%). Cu-38, Ni-23, Co-4, Mn-62: Տարբերի կորզումը կազմում է 83-97%: Վտանգավոր խառնուրդներն են ֆոսֆորը, ծծումբը:

Սետաղ, երկնագույն-սպիտակ: Հանդիս է քերում ամֆոտեր հատկություններ, լիբու և սիդերոֆիլ է, կայուն վալենտականությունները 2^+ , 3^+ և 6^+ :

Խտությունը 7190 կգ/մ³, կարծրությունը լստ Բրինելի՝ 2170-2360 ՄՊա, հալման ջերմաստիճանը 1857°C, եռմանը՝ 2672°C, ջերմահաղորդականությունը 93.7 Վտ/(մ.Կ.), տեսակարար էլեկտրական դիմադրությունը $12.7 \cdot 10^{-8}$ Օհմ մ, տեսակարար մազնիսական ընկալունակությունը $4.45 \cdot 10^{-8}$ մ³/կգ, գծային ընդարձակման ցերմաստիճանային գործակիցը՝ $6.2 \cdot 10^{-6}$ Կ⁻¹:

Քրոմի կլարկը երկրակեղևում 83 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ/տ). զերիխմքային՝ 2000, հիմքային՝ 200, միջին՝ 50, բրու՝ 25, նստվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 200:

Քրոմը խիստ բունավոր (1-ին և 3-րդ կարգի վտանգավորություն), բայց կենսականորեն անհրաժեշտ տարր է: ԹՍԿ_{ազ}-ն և Cr³⁺ - 1.0 մգ/մ³, ԹՍԿ_{ամ}-ն - CrO₃ 0.01, Cr₂O₃ - 1.0, ԹՍԿ_{օօ} - CrO₃ 0.0015 մգ/մ³, ԹՍԿ_զ - CrO₃ 0.1 մլգ/լ, Cr₂O₃ - 1.0, ԹՍԿ_{ձա} CrO₃ - 0.1 մլգ/լ, Cr₂O₃ - 0.5 մլգ/լ: Բնահողում բնական պարունակությունը մինչև 1000գ/տ:

Քրոմի հանքաքարի համաշխարհային հաստատված ընդհանուր պաշարները 1.8 մլրդ.տ է, տարեկան արտադրանքը կազմում է 12 մլն.տ: Առավել խոշոր արտադրողներն են՝ ՀԱՀ և Ղազախստանը (համաշխարհային արդյունահանման 60%):

Ուստաստանում քրոմի հանքաքարի պաշարները կազմում են 6.4 մլն.տ (համաշխարհային պաշարների 0.36%), տարեկան արտադրությունը շուրջ 100 հազ.տ:

Կիրառման բնագավառները (%): Մետալուրգիա՝ 80, հրակայուն արտադրության մեջ՝ 10, քիմիական արդյունաքերություն՝ 10:

Հայտնի են քրոմի 40 միներալներ: Նրանց մեջ գերակշռում են քրոմատները, սիլիկատները, օքսիդները, հիդրօքսիդները: Արդյունաքերական նշանակություն ունեն երեք միներալ. քրոմիտ, մազնոքրոմիտ, ալյոմոքրոմիտ:

Հանքավայրերի արդյունաբերական տեսակները. ստրատիֆիկացված՝ մազմայածին հանքայնացմամբ, ալյունատիպ՝ մազմայածին-մետաստմատիկ հանքայնացմամբ գերիմքային գանգվածներում, էկզոգեն՝ մնացորդային և թեկորային հանքայնացմամբ: Ամենամեծ նշանակությունն ունեն առաջին և երկրորդ տեսակները:

Ըստ երկրաբանական կառուցվածքի բարյության քրոմի հանքավայրերը պատկանում են երկրորդ և երրորդ խմբերին:

Ըստ հանքաքարի պաշարների (մլն.տ) քրոմի հանքավայրերը դասակարգվում են. առավել խոշոր՝ հարյուրավոր, խոշոր՝ տասնյակ, միջին՝ միավոր, փոքր՝ 1-ից պակաս:

Արդյունաբերական հանքաքարերը բնորոշվում են նրանց մեջ գտնվող քրոմշպինելիդների ստրոկտորայով և պարունակությամբ (%). Իոծ՝ 90-ից ավելի, խիտ ցանավոր՝ 90-70, միջին ցանավոր՝ 70-50, նոսր ցանավոր՝ 50-30 և աղքատ ցանավոր՝ 30-ից պակաս: Քրոմի ցրոնները (ավագներ, գլաքարեր) դասվում են առանձին տեսակի:

Ըստ Cr_2O_3 պարունակության (%) հանքաքարերը դասակարգվում են. շատ հարուստ՝ 65-ից ավելի, հարուստ՝ 52, միջին՝ 52-45, աղքատ՝ 45-30, շատ աղքատ՝ 30-10:

Հանքավայրերը մշակվում են բաց, ստորգետնյա և համակցված եղանակներով:

Հանքաքարի նախապատրաստումը վերամշակման ընթանում է հանքաքարի նանրացմամբ, հարուստ մասի տեսակավորմամբ և աղքատ հումքի հարստացմամբ՝ համակցված (գրավիտացիա, մազնիսական տարրանցատում, ֆլուտացիա) տեխնոլոգիաներով:

Cr_2O_3 կորզումը տարբեր տեսակի հանքաքարերից կազմում է 80-90%՝ խտանյութում նրա 45-52% պարունակությամբ: Խտանյութում վնասակար խառնուրդներին են պատկանում՝ SiO_2 , FeO , CaO , S , P , C :

Քրոմի հարուստ հանքավայրերը և խտանյութերը մշակվում են բովմամբ, մետալուրգիական և քիմիական եղանակներով:

Ապրանքային արտադրատեսակներն են. հրակայուն նյութեր՝ ֆերոճուլվածքներ, ֆերոքրոմ, որոնք պարունակում են 60-

70% քրոմ: Ֆերոքրոմում վնասակար խառնուրդներն են՝ Si, S, P, C:

Տիտան (Ti, IV, 22)

Մետաղ արծաթափայլ, կարծր: Հանդես է քերում ամֆոտեր հատկություններ, լիբոֆիլ է, կայուն վալենտականությունները 3^+ և 4^+ :

Խտությունը $4540 \text{կգ}/\text{մ}^3$, կարծրությունը քստ Բրինելի 1815-2770ՄՊա, հալման ջերմաստիճանը՝ 1660°C , եռմանը՝ 3287°C : Զերմահաղորդականությունը $21.9 \text{ Վո}/(\text{մ.կ})$, տեսակարար էլեկտրական դիմադրությունը $42.0 \cdot 10^{-8} \text{ Оհմ.մ}$, տեսակարար մազնիսական ընկալունակությունը $4.01 \cdot 10^{-8} \text{ } \text{մ}^3/\text{կգ}$; գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը $8.35 \cdot 10^{-6} \text{ } \text{Կ}^{-1}$, կորոզիակայուն է:

Տիտանի կլարկը երկրակեղևում 0.45% է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (%): զերիխմքային՝ 0.03 , հիմքային՝ 0.9 , միջին՝ 0.8 , քրոմ՝ 0.23 , նըստվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 0.45 :

Տիտանը բունավոր տարր է (3 -րդ և 4 -րդ կարգի վտանգավորություն) Թ-ԱԿ_{wq} Ti $10 \text{ } \text{մգ}/\text{մ}^3$, տիտանի միացություններ՝ նիտրիդ 4, սիլիցիդ 4, քլորիդ 1, օքսիդ 10, Թ-ԱԿ_g Ti, TiCl_4 , TiO_2 - $0.1 \text{մգ}/\text{l}$: Բնահողում բնական պարունակությունը 0.3 - 2.0% :

TiO_2 -ի համաշխարհային հաստատված պաշարները (առանց Ռուսաստանի) $735 \text{ } \text{մլն}$ տ, տարեկան արտադրությունը մոտ 3.5 մլն տ: Առավել խոշոր արտադրողներն են՝ Կանադան, Նորվեգիան, ՀԱՀ, Ավստրալիան, Ռուսաստան, Բրազիլիան, Հնդկաստանը, Չինաստանը:

Սպառման ճյուղեր են (%): Լաքերի և ներկերի արտադրություն՝ 60 ; պլաստմասաների արտադրություն՝ 20 ; ցելյուլոզա-թղթի արտադրություն՝ 13 ; այլ ճյուղեր՝ 7 :

Կիրառման հիմնական բնագավառներն են. ավիատիեզերական տեխնիկա, քիմիական արդյունաբերություն, նավթային մեքենաշինություն, մետալուրգիա, լաքերի ու ներկանյութերի, թղթի արտադրություն, խեցեգործություն, ապակու, հրակայուն նյութերի արտադրություն:

Հայտնի են տիտանի 150-ից ավելի տեսակներ: Նրանց մեջ գերակշռում են սիլիկատները և օքսիդները: Արդյունաբերական նշանակություն ունեն չորս միներալներ՝ իլմենիտ, ռուտիլ, անատազ, լեյկորսեն:

Հանքավայրերի արդյունաբերական տեսակները. մագմայածին, էկզոգեն (ցրոնեներ և հողմնահարման կեղև): Առավել նշանակություն ունեն ցրոնեները (ծովային):

Ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության հանքավայրերը վերագրվում են առաջին, երկրորդ և երրորդ խմբերին:

Ըստ TiO_2 -ի (մլն.տ) պաշարների տիտանի հանքավայրերը դասակարգվում են մագմայածին՝ շատ խոշոր՝ 50-ից ավելի, խոշոր՝ 50-10, միջին՝ 10-5, փոքր՝ 5-ից պակաս: Ցրոնային՝ շատ խոշոր՝ 10-ից ավելի, խոշոր՝ 10-5, միջին՝ 5-1, փոքր՝ 1-ից պակաս; հողմնահարման կեղև՝ շատ խոշոր՝ 15-ից ավելի, խոշոր՝ 15-5, միջին՝ 5-1, փոքր՝ 1-ից պակաս:

Մագմայածին հանքավայրերի հանքաքարերի արդյունաբերական տեսակներն են. իլմենիտային, տիտանամագնետիտային, լեյկորսենային, ռուտիլային, ապատիտ-մագնետիտ-իլմենիտային; ցրոնային հանքաքարեր՝ իլմենիտային, լեյկորսենային, ցիրկոն-իլմենիտային, ցիրկոն-ռուտիլ-իլմենիտային:

Ըստ TiO_2 -ի պարունակության (%) մագմայածին հանքավայրերի հանքաքարերը դասակարգվում են. հարուստ՝ 10-ից ավելի, շարքային՝ 10-7, աղքատ՝ 7-5:

Արդյունաբերական ցրոնեները պարունակում են տիտանային միներալներ, որոնց քանակը մեկ խորանարդ մետրում տասնյակից մինչև հարյուրավոր կիլոգրամ է:

Հանքավայրերը մշակվում են բաց, ստորգետնյա և համակցված եղանակներով: Հանքաքարի նախապատրաստումը վերանշակման ընթանում է առաջատար համակցված տեխնոլոգիաների (դեղինտեգրացիա, լվացում, գրավիտացիա, մագնիսական և էլեկտրական տարրանցատում, չորացում) կիրառմամբ:

Տարրեր տեսակի հանքաքարերից տիտանի երկօրսիդի կորզումը կազմում է 70-90%, տարրեր նշանակության խտանյութերում նրա 94% պարունակությամբ:

Խտանյոթերում վնասակար խառնուրդներին են վերագրվում Fe_2O_3 , Cr_2O_3 , Al_2O_3 , SiO_2 , MnO , V_2O_5 , CuO , Nb_2O_5 , P_2O_5 , ZrO_2 , SO_3 :

Համալիր կազմի հանքաքարերի հարստացման ժամանակ հարակից ստանում են ցիրկոնային, դիստեն-սիլիմանիտային, ստավրոլիտային խտանյոթեր:

Տիտանային խտանյոթերը մշակվում են քլորաթորման, հիդրոմետալորդիական և մետաղական եղանակներով:

Ապրանքային արտադրատեսակներ են տիտանային շապար և մետաղական տիտանը, որոնք համապատասխանաբար պարունակում են մինչև 30% TiO_2 և մինչև 99.9999 Ti.

Մետաղական տիտանի մեջ վնասակար տարրերն են. N, C, O, H, Cl, Fe, Si:

Գլուխ 2. ԳՈՒՆԱՎՈՐ ՄԵՏԱԴՆԵՐ

ԱԼՅՈՒՄԻՆ (Ա1, III, 13)

Մետաղ, արծաթափայլ-սպիտակ, պինդ, ամոր: Հանդես է բերում ամֆոտեր հատկություններ, լիքոֆիլ է, կայուն վալենտականությունը 3^+ :

Խտությունը $2698 \text{ կգ}/\text{մ}^3$, կարծրությունը ըստ Բրինելի՝ 160 - 350 ՄՊա, հալման ջերմաստիճանը 660°C , եռմանը՝ 2467°C , ջերմահաղորդականությունը $237 \text{ Վտ}/(\text{մ.Կ.})$, տեսակարար էլեկտրական դիմադրությունը $2.6 \cdot 10^{-8} \text{ } \Omega\text{-մ}$, տեսակարար մազնիսական ընկալունակությունը $7.7 \cdot 10^{-9} \text{ м}^3/\text{կգ}$, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $23.03 \cdot 10^{-6} \text{ Կ}^{-1}$:

Ալյումինի կլարկը երկրակեղևում 8.05% է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (%): գերիշմքային՝ 0.45 , հիմքային՝ 8.76 , միջին՝ 8.85 , թրու՝ 7.7 , նրատվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 10.45 :

Ալյումինը համընդհանուր քունավորության (2-րդ և 4-րդ կարգի վտանգավորություն) տարր է: ԹՎԿ_{ազ}-ն $2\text{մգ}/\text{մ}^3$, ԹՎԿ_{մօ} $0.04\text{մգ}/\text{մ}^3$, ԹՎԿ_զ $0.5 \text{ մգ}/\text{l}$: Բնակողում բնական պարունակությունը 5 - 6.5% :

Բորսիտների համաշխարհային ընդհանուր պաշարները 70 մլրդ.տ է, այդ թվում հաստատված՝ մոտ 33, տարեկան արդյունահանումը կազմում է ավելի քան 100 մլն.տ: Առավել խոշոր արտադրողներն են. Ավստրալիան, Գվինեան, Չամայկան, Բրազիլիան, Հնդկաստանը, Չինաստանը:

Այսումինը առավել լայն կիրառում ունի ավիացիոն և ավտոմոբիլային արդյունաբերության, շինարարության և մեքենաշինության, էլեկտրաարդյունաբերության մեջ: Բորսիտները օգտագործվում են որպես հումք հղութերի, ցեմենտի, հրակայուն նյութերի, կավահողի, մարտենյան պողպատի ստացման համար: Նեֆելինները օգտագործվում են խեցեգործության և ապակու արտադրության մեջ:

Հայտնի են ալյումինի մոտ 250 միներալներ: Նրանց մեջ գերազանց են ալյումինասիլիկատները: Արդյունաբերական նշանություն ունեն մոտ 12 միներալներ. հիբսիտ, բեմիտ, դիասպոր, կորունդ, կառինիտ, հիդրօֆայլարներ, քլորիտներ, նեֆելին, կալսիլիտ, ալունիտ:

Հանքավայրերի արդյունաբերական տեսակներն են. բորսիտային՝ լաբերիտային, նստվածքային, նեֆելինային՝ (մազմածին) ալունիտային՝ հրաբխամետաստմատիկ:

Ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության ալյումինի հանքավայրերը վերագրվում են առաջին, երկրորդ և երրորդ խմբերին:

Ըստ բռքսիտների պաշարների (մլն.տ) հանքավայրերը դասակարգվում են. ունիկալ՝ 500-ից ավել, խոշոր՝ 500-100, միջին՝ 100-25, փոքր՝ 25-ից պակաս:

Բորսիտային հանքավայրերի որոնման և հետախուզման առանձնահատկությունները կայանում են երկրածեաբանական և էլեկտրահետախուզության մեթոդների կիրառման մեջ:

Արդյունաբերական հանքավարերն են՝ բորսիտները, նեֆելինները, ալունիտները, կրտոլիտները:

Կայծքարի 7-ից ավել մողոլով բռքսիտները բարձր որակի են, 2-6-ը՝ ցածր որակի: 15%-ից բարձր Fe_2O_3 -ի պարունակությամբ բռքսիտները համարվում են բարձր երկարային, իսկ 10%-ից պակաս՝ քիչ երկարային:

Նեֆելինային հանքաքարերում բատ նեֆելինի պարունակության (%) առանձնացվում են բուն նեֆելինային՝ պերի քան 60, առանց դաշտային սպաքների նեֆելինային ապարներ 60-40, նեֆելինային սիենիտներ՝ 40-10:

Բորսիտները, նեֆելինների և ալունիտների հանքաքարերը մշակվում են քաց, ստորգետնյա և համակցված եղանակներով:

Հանքաքարի նախապատրաստումը վերամշակման ընթանում է հանքաքարի մանրացմամբ, հարուստ մասի տեսակավորմամբ և նեֆելինային ու ալունիտային աղքատ հումքի ֆլուտացիոն հարստացմամբ:

Al_2O_3 -ի կորզումը տարրեր տեսակի հանքաքարերից կազմում է 80-95%՝ խտանյութում նրա 28-45% պարունակությամբ:

Խտանյութերում վճասակար խառնուրդներ են համարվում՝ SiO_2 , ScCO_2 , Fe_2O_3 , P_2O_5 , $\text{Na}_2\text{O}+\text{K}_2\text{O}$ սուլֆիդները, օրգանական նյութերը, ֆոսֆորի պենտօքսիդը, քրոմի միացությունները:

Համալիր կազմի հանքաքարերի հարստացման ժամանակ կարող են ստացվել տիտանի և երկարահանքային խտանյութեր:

Բորսիտների, նեֆելինային և ալունիտային խտանյութերը սկզբում վերամշակվում են կավահող ստանալու համար Բայերի պրոցեսով և եռակալմամբ: Կովահողերից էլեկտրոլիզով ստանում են տեխնիկական մաքրությամբ ալյումին: Մաքրումը կատարվում է էլեկտրոլիտիկ ռաֆինացմամբ:

Այդանքային արտադրանքը պարունակում է ալյումին (%), տեխնիկական՝ 99.5-99.85, բարձր մաքրության՝ 99.95-99.995, առանձնահատուկ մաքրության՝ 99.999:

Խտանյութերում պարունակվող ուղեկցող տարրերը (գալումը և վանադիումը) անցնում են շրջանառու և մայր լուծույթներ, որտեղից նրանք կորզվում են էլեկտրոլիզի և խառը նատրիումական աղերի բյուրեղացման միջոցով՝ մինչև $30-40^{\circ}\text{C}$ ջերմաստիճանի սառեցման պայմաններում:

Այսումինի մեջ վճասակար խառնուրդներն են՝ Fe , Si , Cu , Zn , Ti :

Մետաղ, արծաթափայլ-սպիտակ: Հանդես է բերում ամֆոնտեր հատկություններ, լիթո- և սիդերոֆիլ է, առավել կայուն վալենտականությունները 4^+ և 6^+ :

Խտությունը 19300 կգ/մ³, կարծրությունը ըստ Բրինելի՝ 2570 ՄՊա, հալման ջերմաստիճանը $3407 \pm 20^\circ\text{C}$, եռմանը՝ 5657°C : Ջերմահաղորդականությունը 174 Վտ/(մ.Կ.), տեսակարար էլեկտրական դիմադրությունը $5.65 \cdot 10^{-8}$ Օհմ մ, տեսակարար մազնիսական ընկալունակությունը $4.0 \cdot 10^{-9}$ մ³/կգ, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $4.59 \cdot 10^{-6}\text{Կ}^{-1}$: Դժվարահալ է:

Վոլֆրամի կարկը երկրակեղևում 1.3 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ/տ). գերիշմանային՝ 0.1, հիմքային՝ 1.0, միջին՝ 1.0, քրու՝ 1.5, նըստվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 2.0:

Վոլֆրամը քունավոր (I-ին և IV-րդ կարգի վտանգավորություն) տարր է: Վոլֆրամի սուլֆիդների և կարբիդների ԹՄԿ_{ազ} 6 մգ/մ³, WO₃-ի ԹՄԿ_{ազ} 0.5, ԹՄԿ_{ամ}. WO₃-ի 5.0, ԹՄԿ_{աօ}. WO₃ 0.15 մգ/մ³, W սուլֆիդների, կարբիդների ԹՄԿ_զ 0.05 մգ/լ, ԹՄԿ_{ձա} W⁶⁺ 0.0008: Բնահողում բնական պարունակությունը 0.5-1.2 գ/տ:

Վոլֆրամի համաշխարհային ընդհանուր պաշարները (առանց Ռուսաստանի) կազմում են 7 մլն.տ, հաստատված՝ մոտ 4, տարեկան արտադրանքը – 20.0 հազ.տ: Առավել խոշոր արտադրողներն են՝ Չինաստանը, Ռուսաստանը, Կորեան, Ավստրիան:

Ռուսաստանում վոլֆրամի տարեկան արտադրությունը կազմում է 3.5 հազ.տ:

Կիրառման բնագավառները (%): Մետաղամշակման, լեռնաարդյունահանման և շինարարական արդյունաբերության համար մեքենաների և սարքավորումների արտադրության մեջ՝ լեզիրացված պողպատների և համաձողվածքների ձևով – 68; լամպերի և լուսատուների պատրաստման համար – 12, էլեկտրոնային արդյունաբերության մեջ և տրանսպորտում – 12, քիմիական արդյունաբերության մեջ – 5, այլ բնագավառներում – 3:

Հայտնի են վոլֆրամի 28 միներալներ: Նրանց մեջ գերակշռում են վոլֆրամատները: Արդյունաբերական նշանակություն ունեն երկու միներալ՝ վոլֆրամիտը և շեելիտը:

Հստ երկրաբանական կառուցվածքի բարդության վոլֆրամի հանքավայրերը պատկանում են առաջին, երկրորդ և երրորդ խմբերին:

Հստ WO₃ պաշարների (հազ.տ) վոլֆրամի հանքավայրերը դասակարգվում են. ունիկալ՝ 250-ից ավելի, խոշոր՝ 250-100, միջին՝ 100-30, փոքր՝ 30-15:

Որոնման և հետախուզման աշխատանքների առանձնահատկությունները կայանում են շլիխային հանույթի և հորատանցքների կարոտաժի տարրեր ձևեր կիրառման արդյունավետության մեջ:

Արդյունաբերական հանքաքարերն են. վոլֆրամիտային, շենիխտային, վոլֆրամիտ-շենիխտային, կասիտերիտ-վոլֆրամիտային, մոլիբդենիտ-վոլֆրամիտային, մոլիբդենիտ-շենիխտային, շենիխտ-սուլֆիդային (բազմամետաղային):

Հստ WO₃ պարունակության (%) հանքաքարերը դասակարգվում են. հարուստ՝ 2.5-1, միջին՝ 1-0.3, աղքատ՝ 0.3-0.15:

Հանքավայրերը մշակվում են բաց, ստորգետնյա և համակցված եղանակներով:

Հանքաքարի նախապատրաստումը վերամշակման ընթանում է նախապես ծանր-միջին հարստացման, գրավիտացիայի, մազճիսական տարանջատման և հետագա խորը հարստացման համակցված սխեմաներով (գրավիտացիա, ֆլոտացիա):

WO₃-ի կորզումը տարրեր տեսակի հանքաքարերից կազմում է 50-75%՝ խտանյութում նրա 55-67% պարունակությամբ: Խտանյութի մեջ վնասակար խառնուրդներն են՝ MnO, SiO₂, P, S, As, Sn, Cu, Mo, CaO, Pb, Sb, Bi:

Համալիր կազմի հանքաքարի հարստացման ժամանակ հարակից ստացվում է մոլիբդենի, անագի և բիսմութի խտանյութեր: Ուղեկից տարրերի կորզումը կազմում է 15-85%:

Վոլֆրամի խտանյութը վերամշակվում է էլեկտրամետալուրգիական թրծման և ավտոկլավացման եղանակներով:

Ապրանքային արտադրանքները՝ ֆերովոլֆրամ, վոլֆրամային անիդրիտ, մետաղային վոլֆրամ, որոնք պարունակում են վոլֆրամ (%) համապատասխանաբար 50-85, 99.95-99.99 և 99.8-ից ավելի:

Խտանյութում պարունակվող ուղեկից տարրերը՝ ոսկին, արծաթը, ցինկը, անցնում են փոշու և սորախցուկի մեջ, որոնցից դրանք կորզվում են հիդրո- և էլեկտրամետալուրգիական եղանակներով:

Վոլֆրամի մեջ վճառակար խառնուրդներն են. Mn, Cu, P, S, Ag, Si, As, Sn, Mo, Li, Sb, Bi, Pb:

Կորալտ (Co, VIII, 27)

Սետաղ, արծաթափայլ-երկնագույն, կուկի, կարծր: Հանդես է բերում ամֆուտեր հատկություններ, լիթո-, խալկո- և սիդերոֆիլ է, առավել կայուն վայենտականություններն են 2^+ և 3^+ :

Խտությունը $8900 \text{ կգ}/\text{մ}^3$, կարծրությունը ըստ Բրինելի՝ 471-1230 ՄՊա, հալման ջերմաստիճանը 1495°C , եռմանը՝ 2870°C : Զերմահաղորդականությունը $100 \text{ Վտ}/(\text{մ.Կ.})$, տեսակարար էլեկտրական դիմադրությունը $6.24 \cdot 10^{-8} \text{ Ом} \text{ մ}$, ֆերոմագնիսական է, զժային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը $13.36 \cdot 10^{-6} \text{ Կ}^{-1}$: Կորոզիակայուն է:

Կորալտի կլարկը երկրակեղելում $18 \text{ գ}/\text{լ}$ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում ($\text{գ}/\text{լ}$): գերիհմքային՝ 20, հիմքային՝ 45, միջին՝ 10, բբու՝ 5, նըստվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 20:

Կորալտը խիստ բունավոր ($1\text{-ին և } 2\text{-րդ կարգի վտանգավորություն$), բայց կենսականորեն անհրաժեշտ տարր է: ԹՍԿ_{ազ}-ն CoSO₄ 0.005 $\text{մգ}/\text{մ}^3$, ԹՍԿ_{ալ} CoSO₄ – 0.001, ԹՍԿ_{ած} CoSO₄ – 0.0004, Co⁺ 0.001, ԹՍԿ_զ Co 0.1 $\text{մգ}/\text{l}$: Բնահողում բնական պարունակությունը 5.0-26.0 $\text{գ}/\text{լ}$:

Կորալտի համաշխարհային պաշարները (առանց ԱՊՀ երկրների) կազմում է մոտ 4 մլն.տ, տարեկան արտադրությունը՝ 25.0 հազ.տ: Առավել խոշոր արտադրողներն են՝ Չափրը, Չամբիան, Կանադան, Կուրան, Ավստրալիան, Նոր Կալիֆորնիան:

Կորալտը հիմնականում օգտագործում են ջերմակայուն համաձուլվածքների մեջ, հաստատուն մագնիսների և կորող գործիքների պատրաստման համար:

Հայտնի են կորալտի 45 միներալներ: Նրանց մեջ գերակշռում են սուլֆիդները, արսենիդները, սելենիդները, արսենատ-

ները: Արդյունաբերական նշանակություն ունեն 7 միներալներ. լիննեխտ, կորալտին, սկուտերութիտ, սմալտին, սաֆֆլորիտ, երիտրին, հետերոգենիտ:

Հանքավայրերի արդյունաբերական տեսակներն են. մագմայածին, իջորոքերմալ, իհապերգեն: Առավել նշանակություն ունեն առաջին և վերջին տեսակները:

Ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության կորալտի հանքավայրերը վերագրվում են երրորդ և չորրորդ խմբերին:

Ըստ կորալտի պաշարների (հազ.տ.) հանքավայրերը դասակարգվում են. խոշոր՝ 100-ից ավելի, միջին՝ 100-40, փոքր՝ 40-10:

Արդյունաբերական հանքաքարերն են. մազմայածին՝ կորալտ պարունակող պղինձ-նիկելային, իջորոքերմալ՝ արծար պարունակող մկնդեղ-նիկել-կորալտային, կորալտ-նիկել-սիլիկատային:

Ըստ կորալտի պարունակության (%) հանքաքարերը դասակարգվում են. հարուստ՝ 0.3-0.1 և աղքատ՝ 0.1-0.04%:

Հանքավայրերը մշակվում են քաց և ստորգետնյա եղանակներով:

Հանքաքարի նախապատրաստումը վերամշակման ընթացում է գրավիտացիոն-ֆլոտացիոն տեխնոլոգիաներով հումքի հարստացմամբ:

Կորալտի կորզումը տարբեր տեսակի հանքաքարերից կազմում է 65-90%՝ խտանյութում նրա ավելի քան 0.15% պարունակությամբ:

Խտանյութում վճասակար խառնուրդներին են դասվում պղինձը, քրոմը, ցինկը, կապարը, մկնդեղը, ֆոսֆորը:

Կորալտ պարունակող խտանյութերը վերամշակվում են մետալուրգիական և էլեկտրոլիտիկ եղանակներով:

Ապրանքային արտադրանքներն են՝ կորալտի օքսիդը և մետաղական կորալտը, որոնք պարունակում են համապատասխանաբար 72-65% CoO և մինչև 99.98% Co:

Խտանյութերում պարունակվող ուղեկցող տարրերը՝ նիկելը, ազնիվ մետաղները, անցնում են էլեկտրոլիզի շլամների մեջ, որտեղից նրանք կորզվում են հրա- և իջորումնետալուրգիական եղանակներով՝ աֆինածի կիրառմամբ:

Կորպալտի մեջ վնասակար խառնուրդներն՝ Fe, Mn, Ni, Na, Ca, Cd, Cu, Zn, As, Bi, Sn, Sb, Pb, Si, Mg, Al, S, P, C:

Պղինձ (Cu, I, 29)

Սետաղ, փափուկ, կրելի, կարմիր գույնի: Հանդես է քերում հիմնային և ամֆոտերին մոտ հատկություններ, խալկոֆիլ է, առավել կայուն վալենտականություններն են 1^+ և 2^+ :

Խտությունը 8960 կգ/մ³, կարծրությունը ըստ Բրինելլի՝ 235 ՄՊա, հալման ջերմաստիճանը 1083.6°C, եռմանը՝ 2567°C: Ջերմահաղորդականությունը 401 Վտ/(մ.Կ.), տեսակարար էլեկտրական դիմադրությունը $1.67 \cdot 10^{-8}$ Ohm⁻¹, տեսակարար մազնիսական ընկալունակությունը $1.08 \cdot 10^{-9}$ մ³/կգ, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $1.65 \cdot 10^{-6}$ Կ⁻¹: Կորողիակայուն է:

Պղնձի կլարկը երկրակեղևում 47 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ/տ), գերիմքային՝ 20, հիմքային՝ 100, միջին՝ 35, բրու՝ 20, նրատվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 57:

Պղնձը խիստ բունավոր (2-րդ կարգի վտանգավորություն), բայց կենսականորեն անիրաժեշտ տարր է: ԹՍԿ_{ամ} 0.1 մգ/մ³, ԹՍԿ_{աօ} 0.002 մ/մ³, ԹՍԿ_զ 0.05 մգ/լ, ԹՍԿ_{ծա-ն} 0.01: Բնահողում բնական պարունակությունը 4.0-7.0 գ/տ:

Պղնձի համաշխարհային պաշարները (առանց ԱՊՀ երկրների) կազմում են ավելի քան 300 մլն.տ, տարեկան արդյունահանումը՝ մոտ 10.0: Առավել խոշոր արտադրողներն են՝ Չիլին, ԱՄՆ, Կանադան, Չահրը, Չամբիան:

Նշանակալից ծավալով պղնձի ապրանքային հանքաքար են արդյունահանում Ռուսաստանը, Ղազախստանը, Ուզբեկստանը, Հայաստանը: Պղնձի խտանյութերի արտադրությունը Ռուսաստանում բավարարում է այդ հումքի նկատմամբ եղած պահանջարկը:

Կիրառման բնագավառները (%): Էլեկտրատեխնիկական արդյունաբերություն (մալուխի արտադրություն)՝ մոտ 50, համաձուլվածքներ (արույր, անազապդինձ, բրոնզ, մելքիոր, նիկելին և այլն)՝ մինչև 40:

Հայտնի են պղնձի 170 միներալներ: Նրանց մեջ գերակշռում են սուլֆիդները, սուլֆոաղերը, սուլֆատները, օքսիդները: Արդյունաբերական հանակություն ունեն ոչ ավել 17 միներալներ, այդ թվում խալկոպիրիտը, բորնիտը, խալկոզինը, կովելինը, խունացած միներալները, էնարգիտը, կորանիտը, կուպրիտը:

Հանքավայրերի արդյունաբերական տեսակներն են. պղնձ-պորֆիրային, մոլիբդեն-պղնձ-պորֆիրային, պղնձ-կոլչետանային, պղնձ-ցինկ-կոլչետանային, պղնձային ավազաքարեր և քերաքարեր, պղնձ-նիկելային (մագմայածին):

Ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության պղնձի հանքավայրերը վերագրվում են առաջին, երկրորդ և երրորդ խմբերին:

Ըստ պղնձի պաշարների (մլն.տ) հանքավայրերը դասակարգվում են. շատ խոշոր՝ 10-ից ավել, խոշոր՝ 10-3, միջին՝ 3-0.5, փոքր՝ 0.5-ից պակաս:

Արդյունաբերական հանքաքարերն են. պիրիտ-խալկոպիրիտային, մոլիբդենիտ-խալկոպիրիտ-պիրիտային, պիրիտ-սֆալերիտ-խալկոպիրիտային, խալկոպիրիտ-բորնիտ-խալկոզինային, բորնիտ-խալկորպիրիտ-մագնետիտային, պենտանիտ-պիրոտինային, բնածին պղնձի:

Ըստ պղնձի պարունակության (%) հանքաքարերը դասակարգվում են. բավականին հարուստ՝ 3-5 և ավելի, հարուստ՝ 2-ից ավելի, շարքային՝ 1-ից ավելի, աղքատ՝ 1-0.7:

Ըստ օքսիդացման աստիճանի հանքաքարերը բաշխվում են. սուլֆիդային՝ պղնձի պարունակությունը օքսիդացված ձևով մինչև 10%, խառն՝ 11-50, օքսիդացված՝ 50-ից ավելի:

Հանքավայրերը մշակվուն են բաց (65%) և ստորգետնյա եղանակներով: Սահմանափակ չափով կիրառվում է ստորգետնյա և կույտային տարալվացում:

Հանքաքարերի նախապատրաստումը վերամշակման ընթացում է մանրացմամբ, հարուստ հանքաքարի տեսակավորմամբ և աղքատ հումքի հարստացմամբ՝ օգտագործելով սուլֆիդային հանքաքարերի համար գրավիտացիոն և ֆլոտացիոն տեխնոլոգիաներ, իսկ օքսիդացված տարատեսակների համար վերականգնողական բովում:

Պղնձի կորզումը տարրեր տեսակի հանքաքարերից կազմում է 50-97% խտանյութում նրա 15-40% պարունակությամբ:

Խտանյութում վճասակար խառնուրդներին են դասվում ցինկը, կապարը, երկարը:

Համալիր կազմի հանքաքարի հարատացման ժամանակ ստացվում են մոլիբդենի, ցինկի, նիկելի և պիրիտի խտանյութեր: Ուղեկցող տարրերի կորզումը կազմում է 52-58%:

Պղնձի խտանյութերը վերամշակվում են հրամետալուրգիական եղանակով (սկզբում ստանում են սև պղինձ, իսկ հետո՝ գույքած բարձր մաքրությամբ պղինձ):

Ապրանքային արտադրանքը պարունակում է 99-99.8% մետաղ:

Խտանյութում պարունակվող ուղեկից տարրերը՝ կապարը, բիսմուրը, ցինկը, կադմիումը, գերմանիումը, ազնիվ մետաղները հալման ժամանակ, անցնում են խարամների և էլեկտրոլիտների մեջ, որտեղից նրանց կորզումը կատարվում է հիդրոմետալուրգիական եղանակով:

Պղնձի մեջ վճասակար խառնուրդներն են. Bi, Sb, As, Fe, Ni, Pb, Sn, S, O, Zn:

Մոլիբդեն (Mo, VI, 42)

Սետաղ, արծաթափայլ, փափոկ: Հանդես է բերում թթվային հատկություններ, սիդերո- և խալկոֆիլ է, կայուն վալենտականություններն են 4^+ և 6^+ :

Խտությունը 10220 կգ/ մ^3 , կարծրությունը լատ Քրինելի՝ 2450-25000 ՄՊա, հալման ջերմաստիճանը 2617 $^{\circ}\text{C}$, եռմանը՝ 4612 $^{\circ}\text{C}$, ջերմահաղորդականությունը 138 Վտ/(մ.Կ.), տեսակարար էլեկտրական դիմադրությունը $5.2 \cdot 10^{-8}$ Ohm m , տեսակարար մագնիսական դնկալունակությունը $1.2 \cdot 10^{-8}$ $\text{м}^3/\text{կգ}$, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $5.43 \cdot 10^{-6}$ Կ^{-1} :

Մոլիբդենի կլարկը երկրակեղևում 1.1 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ/տ). գերիհմքային՝ 0.2, հիմքային՝ 1.4, միջին՝ 0.9, քրու՝ 1.0, նըստվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 2.0:

Մոլիրդենը բունավոր (2-րդ կարգի վտանգավորություն), բայց կենսականորեն անհրաժեշտ տարր է: ԹՍԿ_{ամ}. 4 մգ/մ³, ԹՍԿ_զ 0.5 մգ/լ:

Բնահողում բնական պարունակությունը 1-2 գ/տ:

Մոլիրդենի համաշխարհային հաստատված պաշարները (առանց ԱՊՀ երկրների) կազմում են մոտ 7 մլն.տ, մոլիրդենի խտանյութերի տարեկան արտադրությունը՝ մոտ 100հազ.տ: Առավել խոշոր արտադրողներն են՝ ԱՄՆ, Չիլին, Կանադան, Պերուն, Մեքսիկան Չինաստանը:

ԱՊՀ երկրներում մոլիրդենի հումքի պաշարները բաշխվամ են (%). Ռուսաստան՝ 45, Ղազախստան՝ 28, Հայաստան՝ 22, Ուզբեկստան՝ 5: Խտանյութերի արտադրությունը (%): Ռուսաստան՝ 57.5, Հայաստան՝ 31.5, Ուզբեկստան՝ 6.8, Ղազախստան՝ 4.2:

Կիրառման բնագավառները (%): Աև մետալորգիայում համաձուլվածքների արտադրության մեջ – ավելի քան 80, քիմիական արդյունաբերության մեջ – 10, մաքուր մոլիրդենի ստացման համար (էլեկտրասայրերի մեջ) – 6, զյուլատնտեսության մեջ (միկրոպարարտանյութ) և այլ բնագավառներում – 4:

Հայտնի են մոլիրդենի 20 միներալներ: Արդյունաբերական նշանակություն ունեն 6-ը՝ մոլիրդենիտ, պովելիտ, վոլֆենիտ, մոլիբդենիտ, մոլիրդիտ, ֆերոմոլիբդիտ:

Հանքավայրերի արդյունաբերական տեսակներն են. մոլիրդենային, արինճ-մոլիրդենային, վոլֆրամ-մոլիրդենային, մոլիրդեն-ուրանային:

Ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության մոլիրդենի հանքավայրերը վերագրվում են երկրորդ և երրորդ խմբերին:

Ըստ մոլիրդենի պաշարների (հազ.տ) հանքավայրերը դասակարգվում են. ունիկալ՝ 500-ից ավելի, խոշոր՝ 500-150, միջին՝ 150-25, փոքր՝ 25-ից պակաս:

Որոնման և հետախուզման առանձնահատկությունները կայանում են առաջնային և երկրորդային ցրման պսակների բացահայտման նպատակով լիբորդիմիական մեթոդի կիրառման, ինչպես նաև բարձր ճշտությամբ ծանրաչափական (գրավիմետրիա), մագնիսահետախուզուզության, զամնա-լուսապատկերաչափային (զամնա-սպեկտրոմետրիայի) և էլեկտրահետախուզության տարրեր ձևերի օգտագործման արդյունավետության մեջ: Հորատ-

անցքերի հանուկի նմուշարկման ժամանակ հաշվի է առնվում մոլիբդենի ընտրողական մասրացման հնարավորությունը, ինչը վերահսկվում է առավել ներկայացուցչական եղանակներով:

Արդյունարերական հանքաքարերն են. մոլիբդենիտային, խալկոպիրիտ-մոլիբդենիտային, խալկոպիրիտ-մոլիբդենիտ-քվարցային, վոլֆրամ-մոլիբդենիտ-քվարցային, վոլֆրամ-շենիտ-մոլիբդենիտային, մոլիբդենիտ-նորդիզիտ-կրֆֆինիտ-նաստորանային:

Ըստ մոլիբդենի պարունակության (%) հանքաքարերը դասակարգվում են. հարուստ՝ 0.1, միջին՝ 0.01, աղքատ՝ 0.001:

Հանքավայրերի մշակումը իրականացվում է բաց, ստորգետնյա և համակցված եղանակներով:

Հանքաքարերի նախապատրաստումը վերամշակման ընթանում է ֆլոտացիոն-մագնիսական և հիդրոմետալուրգիական տեխնոլոգիաներով հարստացման ճանապարհով:

Տարբեր տեսակի հանքաքարերից մոլիբդենի կորզումը կազմում է 45-89%՝ տարբեր որակի խտանյութերում մոլիբդենի 47-60% պարունակությամբ: Խտանյութերում վնասակար խառնուրդներն են՝ SiO_2 , As, Sn, P, Cu, Na_2O , WO_3 , Sb:

Համալիր կազմի հանքաքարերի հարստացման ժամանակ ստանում են պղնձի և վոլֆրամի խտանյութեր: Սուլֆիդային խտանյութերի հիդրոմետալուրգիական տեխնոլոգիայով վերամշակման ժամանակ կորզում է նաև ռենիում: Ուղեկից տարբերի կորզումը կազմում է 30-70%:

Մոլիբդենային խտանյութերը մետալուրգիական եղանակով վերամշակվում են մինչև պոլիմոլիբրդատի և ֆերոմոլիբրդենի:

Ապրանքային ֆերոմոլիբդենը պարունակում է 55-58% մոլիբդեն, պոլիմոլիբրդատը՝ 99%-ից ավելի մոլիբդեն: Ապրանքային մոլիբդենային արտադրանքներում վնասակար խառնուրդներ են հանդիսանում՝ ծանր մետաղների օքսիդները, Fe, Ni, S, Ca, Mn, P, Mg, C, Sb, Cu, Sn, W, As:

Նիկել (Ni, VIII, 28)

Մետաղ, արծաթափայլ-սպիտակ, կռելի, պլաստիկ: Հանդես է բերում ամֆոտեր հատկություններ, լիքո-, խալկո- և սիդերոֆիլ է, առավել կայուն վալենտականություններն են 2^+ և 3^+ :

Խտությունը $8902 \text{ кգ}/\text{մ}^3$, կարծրությունը ըստ Բրինելլի՝ $600-800 \text{ UPa}$, հաղման ջերմաստիճանը 1453°C , եռմանը՝ 2732°C , ջերմահաղորդականությունը $90.7 \text{ Вт}/(\text{մ}\cdot\text{Կ.})$, տեսակարար էլեկտրական դիմադրությունը $6.84\cdot10^{-8} \text{ Ом} \text{ մ}$, ֆերոմագնիսական է, զծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $13.3\cdot10^{-6} \text{ К}^{-1}$: Կորոզիակայուն է:

Նիկելի կլարկը երկրակեղևում $58 \text{ գ}/\text{տ}$ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում ($\text{գ}/\text{տ}$). գերիհմքային՝ 2000 , հիմքային՝ 160 , միջին՝ 55 , բրու՝ 8 , նըստվածքային (կավեր և բերքաբարեր)՝ 95 :

Նիկելը խիստ բունավոր (1-ին և 2-րդ կարգի վտանգավորություն), բայց կենսականորեն անհրաժեշտ տարր է: ԹՍԿ_ա-ն NiC_4O_4 $0.0005 \text{ մգ}/\text{մ}^3$, ԹՍԿ_{ամ}-ն NiSO_4 0.002 , ԹՍԿ_{մօ}-ն NiO $0.001 \text{ գ}/\text{մ}^3$, NiSO_4 $0.0002 \text{ մգ}/\text{մ}^3$, ԹՍԿ_զ NiO $0.05 \text{ մգ}/\text{l}$: Բնահողում բնական պարունակությունը $5.4-61 \text{ գ}/\text{տ}$:

Նիկելի համաշխարհային հաստատված պաշարները (առանց ԱՊՀ երկրների) կազմում է մոտ 65 մլn.տ , տարեկան արտադրությունը – մոտ 1 մլn.տ : Առավել խոշոր արտադրողներն են՝ Ռուսաստանը, Կանադան, Նոր Կալեդոնիան, Ինդոնեզիան, Ավստրալիան, ՀԱՀ, Կուրան:

Ռուսաստանում նիկելի տարեկան արտադրությունը կազմում է 225 հազ.տ :

Կիրառման բնագավառներն են (%): արանսպորտային մեքենաշնություն՝ 30 , քիմիական արդյունաբերություն՝ 15 , շինարարություն՝ 10 , էլեկտրասարքերի արտադրություն՝ 10 , մետաղային արտադրանքների պատրաստում՝ 9 , կենցաղային տեխնիկա՝ 7 , մեքենաշինական սարքավորումներ՝ 8 , այլ բնագավառներ՝ 11 :

Հայտնի են նիկելի 105 միներալներ : Նրանց մեջ գերակշռում են սուլֆիդները, օքսասաղերը, արսենիդները, ինտերմետաղները: Արդյունաբերական նշանակություն ունեն սուլֆիդները և արսենիդները՝ պենտանիտը, միկրիտը, պոլիտիմիտը, վիոլարիտը, նիկելինը:

Հանքավայրերի արդյունաբերական տեսակները՝ մագմայածին, հիդրոթերմալ, հիպերգեն: Առավել նշանակություն ունեն առաջին և վերջին տեսակները:

Տարեկան արտադրությունը 800-830 տ ԲԵՕ: Բերիլիումի խտանյութի ամենախոշոր արտադրողներն են ԱՄՆ, Չինաստանը, Քրազիլիան, ԱՊՀ երկրները, Չինքարվեն, Նամիբիան:

Կիրառման բնագավառները (%)՝ միջուկային և աերոտիեզերական տեխնիկայում - 23, նավագազային արդյունաբերության մեջ - 25, էլեկտրատեխնիկայում - 35, էլեկտրոնիկայում - 17:

Հայտնի է բերիլիումի ավելի քան 80 միներալ: Գերակշռում են սիլիկատները, ալյումինասիլիկատները, ֆոսֆատները: Արդյունաբերական նշանակություն ունեն բերիլը, բերտրանդիտը և ֆենակիտը:

Հանքավայրերի արդյունաբերական տեսակները. հրաբխային և խորքային-հիդրոթերմալ, գրեյզենային, սկառնային-գրեյզենային, պեզմատիտային:

Ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության բերիլիումի հանքավայրերը պատկանում են երկրորդ, երրորդ և չորրորդ խմբերին:

Ըստ ԲԵՕ-ի պաշարների (հազ.տ) հանքավայրերը դասակարգվում են՝ եզակի – 50-ից ավել, շատ խոշոր – 50-20, խոշոր – 20-5, միջին – 5-1, փոքր – մեկից քիչ:

Որոնման և հետախուզման առանձնահատկությունները կայանում են բնական մերկացումների, լեռնային վորվածքների և հորատանցքների նմուշարկման նեյտրոնային մեթոդի, ինչպես նաև փոշենմուշների էքսպրես անալիզի կիրառման մեծ արդյունավետության մեջ:

Արդյունաբերական հանքաքարերը. բերտրանդիտ-ֆենակիտային, խրիզորերիլ-բերիլային, գենտիելվին-լեյկոֆանային:

Ըստ ԲԵՕ-ի պարունակության (%) հանքավայրերը դասակարգվում են. հարուստ 0.6-ից բարձր, շարքային՝ 0.6-0.3, աղքատ՝ 0.3-0.1, շատ աղքատ՝ 0.1-0.04:

Հանքավայրերի մշակումը իրականացվում է քաց, ստորգետնյա և համակցված եղանակներով:

Հանքաքարի հարստացումը իրականացվում է համակցված տեխնոլոգիաների (հանքաքարի ջոկում, ռադիոմետրական սեպարացիա, ֆլուտացիա, հիդրոմետալուրգիա) կիրառմամբ:

Բերիլիումի կորզումը հանքաքարերի տարրեր տեսակներից կազմում է 85-90%, խտանյութում ԲԵՕ-ի 10-12% պարունա-

կուրյամբ: Խտանյութերում վճասակար խառնուրդներ են համար վում երկարը, ալյումինը, սիլիկահողը, մանգանը, պղինձը, նիկելը, բորը, ուրանը, քորիումը:

Համալիր կազմի հանքաքարերի հարստացման ժամանակ ստացվում են ֆլյուորիտային խտանյութեր: Ուղեկցող ֆլյուորիտի կորզումը կազմում է մինչև 90%:

Բերիլիումային խտանյութերը վերամշակվում են ֆոտորիդների մետաղաբերմիկ վերականգնման կամ էլեկտրոլիտիկ եղանակներով:

Այրանքային արտադրանքները պարունակում են հիդրօքսիդ՝ 66.7% BeO, հարստացված հիդրօքսիդ՝ 97.7% BeO, մետաղական՝ 99% Be:

Բերիլիումի օքսիդի և տեխնիկական բերիլիումի վճասակար տարրեր են համարվում Fe, Al, SiO₂, Mn, Cu, Ni, Cr, Pb, Ti, Co:

Վաճառիում (V, V, 23)

Մետաղ, արծաթափայլ, փափուկ: Հանդես է բերում ամֆոտեր հատկություններ, լիքոֆիլ է, ավելի սակավ խալկո- և սիդերոֆիլ: Կայուն վալենտականությունները 3⁺, 4⁺, 5⁺:

Խտությունը 6110 կգ/մ³, կարծրությունը ըստ Բրինելլի՝ 600 ՄՊա: Հալման ջերմաստիճանը 1887⁰C, եռմանը՝ 3377⁰C, ջերմահաղորդականությունը 30.7 Վտ/(մ.Կ.), տեսակարար էլեկտրական դիմադրությունը 24.8 · 10⁻⁸ Ohm մ, տեսակարար մագնիսական ընկալունակությունը՝ 6.28 · 10⁻⁸ մ³/կգ, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ 8.3 · 10⁻⁶ Կ⁻¹:

Վաճառիումի կլարկը երկրակելում 90 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ/տ), գերիմքային՝ 40, հիմքային՝ 200, միջին՝ 100, բբու՝ 40, նըստվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 130:

Վաճառիումը խիստ քանավոր տարր է (I-ին կարգի վտանգավորություն): ԹՍԿ_{ամ} – 0.5 մգ/մ³, ԹՍԿ_{մօ} – 0.002 մգ/մ³, ԹՍԿ_զ – 0.1 մգ/լ: Բնահողում բնական պարունակություն՝ 38-460 գ/տ:

V₂O₅ համաշխարհային ընդհանուր պաշարները (առանց ԱՊՀ երկրների) 48 մլն.տ է, այդ թվում՝ հաստատված – 10 հազ.տ:

Տարեկան արտադրությունը 28 հազ. տ: Ամենախոշոր արտադրողներն են ՀԱՀ, Չինաստանը, Ավստրալիան, Նոր Զելանդիան:

Կիրառման քնագավառները (%): պողպատաձուլման արդյունաբերություն՝ 85, հատուկ համաձուլվածքների արտադրություն՝ 10, քիմիական արդյունաբերություն՝ 5:

Հայտնի է վաճաղիումի 129 միներալ: Գերակշռում են վանադատները: Արդյունաբերական նշանակություն ունեն 9 միներալ՝ կորվուսիտ, վանադինիտ, կառնոտիտ, տյույամոնիտ, դեկլուազիտ, ռուկուլիտ, պատրոնիտ, մոտտորամիտ, ինչպես նաև վանադիում պարունակող տիտանամագնետիտ:

Հանքավայրերի արդյունաբերական տեսակները մագմայածին, մետաստատիկ և նատվածքային: Վանադիումային հանքաքարերի ամենախոշոր կուտակումները բնորոշ են մագմայածին տեսակին:

Ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության վանադիումի հանքավայրերը պատկանում են երկրորդ խմբին:

Ըստ V_2O_5 -ի պաշարների (տ) հանքավայրերը դասակարգվում են. շատ խոշոր՝ մի քանի միլիոն, խոշոր՝ հարյուր հազարավոր, միջին՝ տասնյակ հազարավոր և փոքր՝ մի քանի հազար:

Արդյունաբերական հանքաքարերը տիտանամագնետիտային, իլմենիտ-տիտանամագնետիտային, մագնետիտային, իլմենիտ-մագնետիտային, ռուկուլիտային, շողերիտ-մոնտմորիլոնիտային, դեկլուազիտ-վանադինիտային, կառնոտիտային, տեխնածին (խարանային շլամներ, մոխրային մնացորդներ և այլն):

Վանադիումի միջին պարունակությունը տարբեր տեսակի հանքաքարերում տատանվում է 0.02-2.8%:

Վանադիում պարունակուղ հանքաքարերի հանքավայրերի մշակումը իրականացվում է գերազանցապես բաց եղանակով:

Տիտանամագնետիտային հանքաքարերի (վանադիում պարունակող հումքի իմնական աղբյուրը) նախապատրաստումը մետալորգիական պրոցեսին իրականացվում է հանքաքարի հարլստացմամբ՝ մագնիսական սեպարացիայի կիրառման ճանապարհով:

Վանադիումի կորզումը տարբեր տիպի հանքաքարերից հասնում է մինչև 75%՝ խտանյութում նրա մինչև 0.6% պարունա-

կությամբ: Խտանյութում վնասակար խառնուրդ է համարվում տիտանը:

Համալիր կազմի հանքաքարերի հարստացման ժամանակ ստացվում են երկարահանքային, ուրանյային, բազմամետաղային խտանյութեր, բոքսիտներ, ալունիտներ, բիորումային նյութեր: Հիմնական ուղեկցող տարրի՝ երկարի կորզումը կազմում է 70-80%:

Խտանյութերը վերամշակվում են էլեկտրամետալուրգիական եղանակով՝ ֆերովանադիումի ստացմամբ:

Վանադիում պարունակող խտանյութերը վերամշակվում են երկարի խտանյութերի կրկնակի մետալուրգիական վերահաման և խարամների հիդրոմետալուրգիական վերամշակման եղանակով: Հիդրոմետալուրգիական խտանյութը պարունակում է 97-98% V_2O_5 : Նրանում վնասակար խառնուրդներ են համարվում FeO , MnO , SiO_2 , Cr_2O_3 , P_2O_5 , S , Cl , $K+Na$, As :

Ապրանքային արտադրանքը ֆերովանադիումն է՝ 35% վանադիումի պարունակությամբ: Ֆերովանադիումում վնասակար խառնուրդներն են՝ սիլիկահողը, ֆոսֆորը, ծծումբը, ածխածինը, ալյումինը, մկնդեղը:

Ուղեկցող տարրերից երկարը, ուրանը և բազմամետաղներն անցնում են վանադիում պարունակող խտանյութերի մեջ և նրանցից կորզվում են հրամետալուրգիական եղանակով:

Ֆերովանադիումում վնասակար տարր է FeO :

Գալիում (Ga, III, 31)

Սետաղ, արծաթափայլ-սպիտակ, փափուկ: Հանդես է բերում ամֆոտեր հատկություններ: Լիթո-, սիլիկո-, խալկոֆիլ տարր է: Կայուն վալենտականությունը 3^+ :

Խտությունը $5907 \text{ կգ}/\text{մ}^3$, կարծրությունը լստ Բրինելի՝ $56.8-68.7 \text{ UΠω}$, հալման ջերմաստիճանը 29.7°C , եռմանը՝ 2403°C , ջերմահաղորդականությունը $40.6 \text{ Վտ}/(\text{մ.Կ.})$, տեսակարար էլեկտրական դիմադրությունը $27 \cdot 10^{-8} \text{ Ohm} \text{ մ}$, տեսակարար մազնիսական ընկալունակությունը՝ $3.9 \cdot 10^{-9} \text{ м}^3/\text{կգ}$, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $11.5 \cdot 10^{-6} \text{ Կ}^{-1}$:

Գալիումի կլարկը երկրակեղենում 19 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում

(գ/տ). գերիշմքային՝ 2, հիմքային՝ 18, միջին՝ 20, բրու՝ 20, նրաստվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 30:

Գալիումը բունավոր տարր է (III կարգի վտանգավորություն): ԹՎԿ_{ազ} GaAs – 2.0 մգ/մ³; Ga₂O₃ – 3.0: Պարունակությունը բնականում՝ 10-50 գ/տ:

Գալիումի համաշխարհային ընդհանուր պաշարները (առանց ԱՊՀ երկրների) 165 հազ.տ է, տարեկան արտադրությունը՝ 60 տ: Ամենախոշոր արտադրողներն են ԱՄՆ, Նամիրիան, Չափրը, Հնդկաստանը:

Գալիումը օգտագործում են էլեկտրոնիկայում, մանրաբելային և ինֆրակարմիր օպտիկայում, բարձր հաճախականության տեխնիկայում:

Հայտնի է գալիումի չորս միներալ, որոնց մեջ գերակշռում են սուլֆիդները: Արյունաքարերական նշանակություն ունեն զալիում պարունակող միներալները՝ սֆալերիտը, խալկոպիրիտը, նեֆելինը, սոդալիտը, յարոզիտը, ալունիտը, կասիտերիտը:

Գալիումը չի առաջացնում սեփական հանքավայրեր, այլ հանդես է զալիս միներալային հումքի տարրեր հանքաքարերում:

Գալիում պարունակող հանքաքարերի հանքավայրերի արդյունաքարերական տեսակները նստվածքային (բռնսխներ), հրածին (նեֆելին պարունակող ապարներ և հանքաքարեր), հիդրոքերմալ (ցինկ-կապար-պղնձային հանքաքարեր):

Գալիում պարունակող արդյունաքարերական հանքաքարեր են համարվում բռնսխները, նեֆելին պարունակող հանքաքարերը և ապարները, կապար-ցինկային, հրաքար-բազմամետաղային, հազվագյուտ մետաղային-բազմամետաղային՝ գալիումի և գերմանիումի միներալների առկայությամբ:

Հանքավայրերը շահագործվում են հիմնական օգտակար հանածոների հետ հարակից:

Գալիումը ստանում են գերազանցապես մոտ 0.25գ/լ Ga₂O₃ պարունակությամբ ալյումինատային լուծույթներից՝ ալյումինի արտադրության ժամանակ որոնց մեջ անցնում է գալիումի 70-80%-ը: Լուծույթները վերամշակվում են կարբոնատացմամբ, էլեկտրոլիզի և վակուումում հալման եղանակներով:

Ապրանքային արտադրանքը պարունակում է 99.999 - 99.99999% Ga: Նրանում վնասակար խառնուրդներ են համարվում

Ni, Co, Cu, Sn, Al, Pb, Mg, Fe, Si, Bi, Cd, Cr, Mn, S, Se, Te, P, Ag, In:

Գերմանիում (Ge, IV, 32)

Ոչ մետաղ, արծաթափայլ-սպիտակ, փխրուն: Հանդես է բերում ամֆոտեր հատկություններ, լիքո- և խալկոֆիլ է, կայուն վալենտականություններն են 2^+ , 4^+ :

Խտությունը $5323 \text{ կգ}/\text{մ}^3$, կարծրությունը ըստ Մոռսի սանդղակի՝ 6, հալման ջերմաստիճանը 937°C , եռման ջերմաստիճանը 2930°C , ջերմահաղորդականությունը $59.9 \text{Վտ}/(\text{մ.Կ.})$, տեսակարար էլեկտրական դիմադրությունը $0.46 \text{ Ohm}^{-1}\text{m}$, տեսակարար մազեխական ընկալունակությունը $-1.33 \cdot 10^{-9} \text{ մ}^3/\text{կգ}$, զծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը $5.57 \cdot 10^{-6} \text{ Կ}^{-1}$:

Գերմանիումի կլարկը երկրակեղևում $1.4 \text{ գ}/\text{տ}$ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների զինավոր տեսակներում ($\text{գ}/\text{տ}$). գերիխմքային՝ 1.0 , հիմքային՝ 1.5 , միջին՝ 1.5 , քրոմ՝ 1.4 , նատվածքային (կավեր և թերքաքարեր)՝ 2.0 :

Գերմանիումը բունավոր տարր է (III կարգի վտանգավորություն): $\text{Թ.Ս.Կ}_{\text{ագ}} \text{ Ge, GeO } 2.0 \text{մգ}/\text{մ}^3$, $\text{GeCl } 1.0$, $\text{Ge-ի հիդրիդ } 5.0$; $\text{Թ.Ս.Կ}_{\text{ազ}} \text{ GeO}_2 0.04 \text{ մգ}/\text{մ}^3$: Բնահողում նրա բնական պարունակությունը $1.2\text{-}50.0 \text{ գ}/\text{տ}$:

Արտասահմանյան երկրներում ցինկի հանքաքարերում գերմանիումի հաստատված պաշարները մոտ 3 հազ.տ են, տարեկան արտադրությունը (առանց ԱՊՀ երկրների) կազմում է 65 տ : Առավել խոշոր արտադրողներն են՝ ԱՄՆ, Նամիբիան, Զաիրը:

ԱՊՀ երկրները, ածուխներում, երկարային և սովորական հանքաքարերում, գերմանիումի պաշարներով գրավում են աշխարհում առաջին տեղը:

Կիրառման բնագավառները (%): մանրաթելապատիկական համակարգերում՝ 40 , ինժրակարմիք օպտիկայում՝ 15 , միջուկային էներգետիկայում՝ 10 , կիսահաղորդիչներում՝ 5 , քիմիական, մետալուրգիական, քիմիկության և այլ ճյուղերում՝ 30 :

Հայտնի են գերմանիումի 2 միներալ-սովորական՝ գերմանիտ և ունյերիտ: Արդյունարերական նշանակություն ունեն գերմա-

նիում պարունակող միներալները՝ սֆալերիտը (զլխավոր) և խալկոպիրիտը:

Գերմանիումը ինքնուրույն հանքավայրեր չի առաջացնում և գտնվում է այլ տեսակի հանքային հումքերի հանքաքարերի մեջ:

Գերմանիում պարունակող հանքավայրերի արդյունաբերական տեսակներն են. անագ-վոլֆրամային, հազվագյուտ-մետաղային, կապար-ցինկային, պղինձ-մոլիբդենային, պղինձ-ցինկային, երկարահանքային, գորշ ածխային և քարածխային:

Ըստ գերմանիումի պաշարների (տ) հանքավայրերը ստորաբաժնվում են. խոշոր՝ 500-ից ավելի, միջին՝ 500-100, փոքր՝ 100-ից պակաս:

Գերմանիումի և գերմանիում պարունակող արդյունաբերական հանքավայրերն են. գերմանիում-սուլֆիդային, բազմամետաղային, կապար-ցինկային, գերմանիում-ածխային:

Ըստ գերմանիումի պարունակության (գ/տ) հանքաքարերը դասակարգվում են. հարուստ՝ հարյուրավոր, միջին՝ տասնյակ, աղքատ՝ միավոր:

Հանքավայրերը մշակվում են հիմնական օգտակար հանածոներին հարակից:

Հանքաքարերի և ածուխների այրման մոխիրների նախապատրաստումը մշակմանը ընթանում է մազնիսական գուման և շերմային եղանակներով:

Խտանյութերի մեջ գերմանիումի պարունակությունը կազմում է ոչ պակաս 5 գ/տ, ածուխների մոխիրների մեջ 90 գ/տ-ից քարձու:

Զգալի քանակությամբ գերմանիում ստանում են փոշիներից, սորախցուկից և 0.3-0.4 % գերմանիում պարունակող պղինձ-ցինկային հանքաքարերի ծովման խարամներից: Վճարակար խառնուրդներն են. Al, Ga, Mg, Ca, Si, Fe, As, Cl:

Գերմանիում պարունակող արտադրանքները վերամշակվում են հիդրոմետալուրգիական եղանակով, ջրածնով վերականգնմամբ, գոտիային հալման և բյուրեղաֆիզիկական մաքըրմամբ:

Սիարյութեղային գերմանիումի որակը զնահատվում է տեսակարար էլեկտրական դիմադրությամբ: Դրան համապատաս

խանում է էլեկտրական ակտիվ խառնուրդների մինչև $1 \cdot 10^{-8}$ պարունակությունը:

Բիսմութ (Bi, V, 83)

Սետաղ, արծաթափայլ-վարդագույն, փիբրուն: Հանդես է քերում հիմնային հատկություններ, խալկոֆիլ է, կայուն վալենտականությունը 3^+ :

Խտությունը 9747 կգ/մ³, կարծրությունը ըստ Բրինելլի՝ $70\text{-}94$ ՄՊա, հալման ջերմաստիճանը 271^0C , եռմանը՝ 1560^0C , ջերմահաղորդականությունը 7.87 Վտ/(մ.Կ.), տեսակարար էլեկտրական դիմադրությունը $106.8 \cdot 10^{-8}$ Օհմ մ, տեսակարար մազնիսական ընկալունակությունը $1.7 \cdot 10^{-8}$ մ³/կգ, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $13.4 \cdot 10^{-6}$ Կ⁻¹:

Բիսմութի կլարկը երկրակեղևում 0.009 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ/տ), գերիհմքային՝ 0.001 , հիմքային՝ 0.007 , միջին՝ 0.01 , բրու՝ 0.01 , նստվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 0.01 :

Բիսմութը խիստ բունավոր (2-րդ և 4-րդ կարգի վտանգավորություն) տարր է: ԹՍԿ_{ազ}-ն Bi-0.05 մգ/մ³, ԹՍԿ_{օօ} Bi₂O₃-0.05 մգ/մ³, ԹՍԿ_զ Bi 0.5-0.1 մգ/լ: Բնահողում բնական պարունակությունը $0.1\text{-}0.3$ գ/տ:

Բիսմութի համաշխարհային պաշարները (առանց ԱՊՀ երկրների) կազմում են 250 հազ.տ, կորզվող՝ -110 , տարեկան արտադրանքը - $4.5\text{-}5$ հազ.տ: Առավել խոշոր արտադրողներն են՝ Չինաստանը, Պերուն, Սեքսիլան, Շապոնիան:

Ուսաստանում բիսմութի տարեկան արտադրությունը կազմում է $400\text{-}500$ տոննա:

Կիրառման բնագավառները (%): Քիմիական արտադրություն, դեղագործություն, շաքարանյութերի արտադրություն- 53, մետալուրգիա - 27, ռադիոտեխնիկա - 17, այլ ճյուղեր - 3:

Հայտնի են բիսմութի ավելի քան 140 միներալներ: Նրանց մեջ գերակշռում են խալկոդիմները: Արդյունաբերական նշանակություն ունեն 6 միներալներ. բնածին բիսմութ, բիսմութին, բիսմուտ, բիսմութիտ, բազոքիսմութիտ, բիսմութ պարունակող գալենիտ:

Հանքավայրերի արդյունաբերական տեսակներն են՝ բիսմուրային՝ (մկնդեղ-բիսմուրային, նիկել-կորալտ-բիսմուրային, պղողինձ-բիսմուրային) և բիսմուր պարունակող՝ (վոլֆրամային, անագային, ոսկու, կապար-ցինկային, պղնձային, ցրոնային: Առավել նշանակություն ունեն պղինձ-բիսմուրային, վոլֆրամային, կապար-ցինկային, ցրոնային տեսակները):

Բիսմուրի հանքավայրերի երկրաբանական կառուցվածքի բարդությունը որոշվում է հիմնական օգտակար հանածոյի հանքավայրի կառուցվածքով:

Ըստ բիսմուրի պաշարների (հազ.տ) հանքավայրերը դասակարգվում են. ունիկալ՝ 10-ից ավելի, խոշոր՝ 10-4, միջին՝ 4-1, փոքր՝ 1-ից պակաս:

Բիսմուրային հանքաքարերում բիսմուրի պարունակությունը 0.1-0.2% է:

Բիսմուր պարունակող հանքաքարերը ըստ որակի քաժանվում են երեք տեսակի. բիսմուրային՝ (բիսմուրի պարունակությունը 0.1-0.2%), համալիր՝ (0.05%-ից ավելի), ուղեկցող (0.05%-ից պակաս):

Հանքավայրերը մշակվում են ստորգետնյա եղանակով:

Հանքաքարի նախապատրաստումը վերամշակման ընթացում է հարատացմամբ՝ համակցված տեխնոլոգիաների (գրավիտացիա, մագնիսական տարանջատում, ֆլուտացիա) կիրառմամբ:

Բիսմուրի կորզումը տարբեր տեսակի հանքաքարերից կազմում է 30-90% խտանյութում նրա 0.05-0.5% պարունակությամբ: Բիսմուրային խտանյութերը և բիսմուր պարունակող արտադրանքները վերամշակվում են հիդրո- և էլեկտրոլիտիկ եղանակներով:

Մետալուրգիական վերամշակման դեպքում բիսմուրը կուտակվում է փոշու, խարամի և մետալուրգիական արտադրության մյուս թափոնների մեջ:

Ապրանքային արտադրանքը պարունակում է 96.5 – 99.999% բիսմուր:

Բիսմուր պարունակող նյութերում ուղեկցող տարրերն են՝ ոսկին, արծաթը և այլն, որոնք կորզվում են հիդրոմետալուրգիական եղանակով:

Բիսմութի մեջ վնասակար խառնուրդներն են՝ Pb, Zn, Fe, Sb, Cu, Ag, As, Te, Co, Cd, Mn, Ni, Sn, Cr, Au, In:

Կաղմիում (Cd, II, 48)

Մետաղ, արծաթափայլ: Հանդես է քերում հիմնային հատկություններ, խալկոֆիլ է, կայուն վալենտականությունը 2^+ :

Խտությունը 8650 կգ/ մ^3 , կարծրությունը ըստ Բրինելի՝ $203\text{-}275$ ՄՊա, հալման ջերմաստիճանը 321°C , եռմանը՝ 765°C , ջերմահաղորդականությունը 96.8 Վտ/(մ.Կ.), տեսակարար էլեկտրական դիմադրությունը $6.83 \cdot 10^{-8}$ Ohm m , տեսակարար մազնիսական ընկալունակությունը $2.21 \cdot 10^{-9}$ $\text{մ}^3/\text{կգ}$, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $29.8 \cdot 10^{-6}$ Կ^{-1} ջերմային նեյտրոնների ընդգրկման մակերևույթը $24.5 \cdot 10^{-26}\text{մ}^2$:

Կաղմիումի կլարկը երկրակեղևում 0.13 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լինային ապարների գլխավոր տեսակներում (գ/տ). գերիմքային՝ 0.05 , հիմքային՝ 0.19 , միջին՝ 0.15 , բրու՝ 0.1 , նստվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 0.3 :

Կաղմիումը խիստ թունավոր (1-ին կարգի վտանգավորություն) տարր է: Անօրգանական միացությունների համար Cd-ի վերահաշվարկված $\text{ԹՄԿ}_{\text{ագ}}\text{-ն} 0.01$ մգ/ մ^3 , $\text{ԹՄԿ}_{\text{ամ}}\text{-ն} 0.01$ մգ/ մ^3 , $\text{ԹՄԿ}_{\text{ած}}\text{-ն} 0.0003$ մգ/ մ^3 , $\text{ԹՄԿ}_{\text{չ}} 0.001$ մգ/ լ , $\text{ԹՄԿ}_{\text{ձա}}\text{-ն} 0.005$:

Բնահողում բնական պարունակությունը $0.1\text{-}0.6$ գ/տ:

Կաղմիումի համաշխարհային հաստատված պաշարները (առանց ԱՊՀ երկրների) կազմում են մոտավորապես 900 հազ.տ, արդյունահանվող պաշարները՝ 465 հազ.տ, տարեկան արտադրանքը՝ 20.0 : Առավել խոշոր արտադրողներն են՝ Շապոնիան, Կանադան, ԱՄՆ, Բելգիան:

ԱՊՀ երկրները կաղմիումի պաշարներով գրավում են աշխարհում առաջին տեղը և արտադրում են տարեկան 250 հազ.տ., որից 30% - Ռուսաստանը:

Կիրառման բնագավառները (%): Էլեկտրոնիկա և նիկել-կաղմիումային մարտկոցների արտադրություն՝ մոտ 65 , ներկանութերի պատրաստում՝ 15 , պլաստմասայի արտադրություն՝ 11 , մետաղախառնուրդներում՝ 3 , համաձուլվածքներում՝ 2 , մնացածը՝

օպտիկայի, կիսահաղորդիչների, ատոմային արագացուցիչների և այլ բնագավառներում:

Կաղմիումի բուն միներալները՝ օքսիդը, կարբոնատը, արսենիտը, սելենիտը, սուլֆիդները, չափազանց հազվադեպ են: Արդյունաբերական նշանակություն ունեն կապար-ցինկային և պրոճի հանքավայրերի հանքաքարերում կարմիում պարունակող միներալ-կուտակիչները՝ սֆալերիտ ($2000\text{-}9000$ գ/տ), գալենիտ ($100\text{-}400$ գ/տ), խալկոպիրիտ ($60\text{-}125$ գ/տ):

Կաղմիումը ինքնուրույն հանքավայրեր չի առաջացնում, այլ գտնվում է գլխավորապես զունավոր մետաղների հանքավայրերում:

Կաղմիում պարունակող հանքաքարերի հանքավայրերի արդյունաբերական տեսակներն են. հրաբխանստվածքային, ստրատիֆիկացված, հիդրոքերմալ-մետաստմատիկ, նստվածքային: Ռուսաստանում առավել նշանակություն ունեն առաջին երկու տեսակները:

Քարտության խումբը որոշվում է հիմնական օգտակար հանածոյի հանքավայրերի երկրաբանական կառուցվածքով:

Հատ կաղմիումի պաշարների (հազ.տ) հանքավայրերը դասակարգվում են. շատ խոշոր՝ $10\text{-}ից$ ավելի, խոշոր՝ $10\text{-}3$, միջին՝ $3\text{-}0.5$, փոքր՝ $0.5\text{-}ից$ պակաս:

Կաղմիում պարունակող արդյունաբերական հանքաքարերն են. կապար-ցինկային, պղնձային, ոսկի և ոսկի-արծաթային, անագային, ֆոտորասպաթային:

Հանքաքարերում կաղմիումի միջին պարունակություններն են (%). կապար-ցինկային՝ $0.001\text{-}0.04$, պղնձային՝ $0.0002\text{-}0.01$, ոսկու և ոսկի-արծաթային՝ $0.004\text{-}0.01$, անագային՝ $0.005\text{-}0.003$, ֆոտորասպաթային՝ 0.02 :

Հանքավայրերի շահագործումը իրականացվում է կապար-ցինկային և պղնձային հանքաքարերի արդյունահանման համար կիրառվող եղանակներով (բաց, ստորգետնյա և համակցված համակարգեր):

Հանքաքարի նախապատրաստումը վերամշակման ընթանում է կաղմիում պարունակող հումքի հարստացմամբ, օգտագործելով գրավիտացիոն-ֆլոտացիոն տեխնոլոգիաները: Կաղմի-

ումի կորզումը տարբեր տեսակի հանքաքարերից կազմում է 10-55%՝ խտանյութում նրա 0.11-0.6% պարունակությամբ:

Խտանյութերում վնասակար խառնուրդներին են պատկանում՝ ծարիքը, մկնդեղը և անագը:

Կաղմիում պարունակող խտանյութերը վերամշակվում են համակցված հիդրո- և հրաԵլեկտրոլիտիկ տեխնոլոգիաներով:

Ապրանքային արտադրանքը պարունակում է 99.8-99.95% Cd: Մետաղի մեջ վնասակար խառնուրդներն են. Pb, Zn, Fe, Ni, Te:

Սկնդեղ (As, V, 33)

Ոչ մետաղ, մոխրագույն, փափուկ, փխրուն: Հանդես է բերում ամֆոտեր հատկություններ, խալկոֆիլ է, կայուն վալենտականություններն են 3⁻, 3⁺, 5⁺:

Խտությունը 5780 կգ/մ³, կարծրությունը ըստ Մոոսի սանդղակի՝ 3.5, հալման ջերմաստիճանը 817⁰C, եռման ջերմաստիճանը 616⁰C, ջերմահաղորդականությունը 50 Վո/(մ.Կ.), տեսակարար էլեկտրական դիմադրությունը $26 \cdot 10^{-8}$ Ohm մ, տեսակարար մազնիսական ընկալունակությունը $9.17 \cdot 10^{-10}$ մ³/կգ, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը $4.7 \cdot 10^{-6}$ Կ⁻¹: Ունի հստակ արտահայտված մետաղական հատկություններ:

Սկնդեղի կլարկը երկրակեղևում 1.7 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ/տ). գերիմքային՝ 0.5, հիմքային՝ 2, միջին՝ 2.4, թրու՝ 1.5, նատվածքային՝ (կավեր և թերթաքարեր) 6.6:

Սկնդեղը խիստ քունավոր (I-II կարգի վտանգավորություն), բայց ֆիզիկոլոգիական ակտիվ տարր է: As Թ-ԱԿ_{ագ} 0.1 մգ/մ³, օրսիդների 0.3, Թ-ԱԿ_{ամ} As 0.1, Թ-ԱԿ_{աօ} As 0.003 մգ/մ³, Թ-ԱԿ_ա As 0.03 մգ/լ, Թ-ԱԿ_{ած} As 0.01, Թ-ԱԿ վարելահողում 2 մգ/կգ As: Բնահողում բնական պարունակությունը 5.0-10 գ/տ:

Սկնդեղի համաշխարհային պաշարները գնահատվում են մի քանի մլն.տ, համաշխարհային տարեկան արտադրությունը՝ տասնյակ հազար տոննա As₂O₃:

Առավել խոշոր արտադրողներն են՝ ԱՄՆ և Չվելիան:

Սկնդեղը կիրառվում է մետաղորդիայում՝ համաձավածքների արտադրության մեջ, էլեկտրոնիկայում՝ որպես կիսահաղոր-

դիշներ, լազերային օպտիկայի բնագավառում, ինչպես նաև բարձր հաղորդիչների և լումինֆորմերի պատրաստման, թժշկության և գյուղատնտեսության մեջ:

Հայտնի են մկնդեղի մոտ 370 միներալներ: Նրանց մեջ գերակշռում են արսենատները, սուլֆաարսենատները, ինտերմետաղները, սուլֆիդները: Արդյունաբերական նշանակություն ունեն չորս միներալներ՝ արսենապիրիտը, տենանտիտը, աուրիափիզմենտը, ունալգարը:

Հանքավայրերի արդյունաբերական տեսակներն են. սկառնային-հիդրոթերմալ (միջին ջերմաստիճանային), հիդրոթերմալ (միջին ջերմաստիճանային), հիդրոթերմալ – թելեբերմալ (ցածր ջերմաստիճանային): Առավել նշանակություն ունի վերջին տեսակը:

Ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության հանքավայրերը վերագրվում են երկրորդ և երրորդ խմբերին:

Ըստ As_2O_3 պաշարների (հազ.տ) մկնդեղի հանքավայրերը ստորաբաժանվում են. խոշոր՝ հարյուրավոր, միջին՝ տասնյակ, փոքր՝ միավոր:

Արդյունաբերական հանքաքարերն են. արսենապիրիտային, տենանտիտային, ունալգար-աուրիափիզմատիտային, բնածին մկնդեղային, սկորոդիտային:

Ըստ As պարունակության (%) հանքաքարերը դասակարգվում են. հարուստ՝ 10-ից ավելի, միջին՝ 10.0-1.0, աղքատ՝ 1.0-0.1:

Հանքավայրերը մշակվում են ստորգետնյա եղանակով:

Հանքաքարի նախապատրաստումը վերամշակման ընթանում է մանրացմամբ, հարուստ հանքաքարի տեսակավորմամբ և աղքատ հումքի հարստացմամբ՝ ֆլոտացիոն և գրավիտացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ:

Մկնդեղի կորզումը տարբեր տեսակի հանքաքարերից կազմում է 82-92%՝ խտանյութում մինչև 40% նրա պարունակությամբ:

Համալիր կազմի հանքաքարի հարստացման ժամանակ հարակից ստանում են բազմամետաղային խտանյութեր:

Հարուստ հանքաքարերը և խտանյութերը մշակվում են օրսիդացնող բրծումով:

Ապրանքային արտադրանքը պարունակում է 90-95% As_2O_3 , գույնից հետո՝ 97%-ից ավելի: Մետաղական մկնդեղ ստանում են

Վերականգնմամբ: Նրա մեջ մկնդեղի պարունակությունը հասնում է 95%:

Հաֆնիում (Hf, IV, 72)

Մետաղ, արծաթափայլ, ճկուն: Հանդես է բերում հիմնային հատկություններ, լիբոֆիլ է, կայուն վալենտականությունը 4^+ , խտությունը 13310 կգ/մ³, կարծրությունը ըստ Բրինելի՝ $1680\text{--}1860$ ՄՊա, հալման ջերմաստիճանը 2230°C , եռման ջերմաստիճանը 5297°C : Ջերմահաղորդականությունը 23.0 Վտ/(մ.Կ.), տեսակարար էլեկտրական դիմադրությունը $35.1 \cdot 10^{-8}$ Оհմ մ, տեսակարար մազնիսական ընկալունակությունը $5.3 \cdot 10^{-9}$ մ³/կգ, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը $5.9 \cdot 10^{-6}$ կ⁻¹, կորոզիակայուն է:

Հաֆնիումի կլարկը երկրակեղևում 1.0 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ/տ): գերիշմքային՝ 0.1 , հիմքային՝ 1.0 , միջին՝ 1.0 , բբու՝ 1.0 , նըստվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 6.0 :

Հաֆնիումը թունավոր տարր է (III-IV-րդ կարգի վտանգավորություն): Մետաղական հաֆնիումի ԹԱԿ_{ագ} – 0.5 մգ/մ³, HfN և HfC – 5.0 : Բնահողում բնական պարունակությունը՝ $0.1\text{--}54$ գ/տ:

Հաֆնիումի համաշխարհային ընդհանուր պաշարները (առանց ԱՊՀ երկրների) 850 հազ.տ HfO₂: Տարեկան արտադրությունը կազմում է մի քանի հազ.տ: Ամենախոշոր արտադրողներն են Ավստրալիան, ՀԱՀ, Կանադան, Հնդկաստանը: Ռուսաստանում հաֆնիումի պաշարները կազմում են ԱՊՀ երկրների պաշարների 66%:

Կիրառման բնագավառները (%): Սուզանավերի միջուկային ռեակտորներում – 58 , գերհամածուլվածքներում, կոնստրուկցիոն կտրող նյութերում և պաշտպանական ծածկույթներում- 40 , խեցեգործության և ապակու արտադրության մեջ – 2 :

Հայտնի է հաֆնիումի և ցիրկոնիումի սիլիկատը՝ ալվիտը, որը պարունակում է մինչև 16% HfO₂: Արդյունաքերական նշանակություն ունի ցիրկոնը, որը պարունակում է $1\text{--}4\%$ HfO₂: Հաֆնիումը չի առաջացնում սեփական հանքավայրեր, այլ տեղայնացվում է ցիրկոնիումի հանքավայրերում:

Հաֆնիում պարունակող հանքավայրերի արդյունաբերական հանքատեսակները առափնյա ծովային գրուներ, մոտակա տեղահանման, գետաբերուկային և գետաբերուկա-լճային, հազվագյուտ հողային-ալկալա-գրանիտային, ազպահտ-նեֆելին-սիենիտային, կարրոնատիտային, ալկալային գրանիտների հողմնահարման կեղևի: Առավել մեծ նշանակություն ունեն առափնյա ծովային գրուները:

Ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության հանքավայրերը դասվում են առաջին և երկրորդ խմբերին:

$ZrO_2 + HfO_2$ -ի պաշարներով (մլն.տ.) հանքավայրերը դասակարգվում են՝ եզակի՝ ավելի քան 10, խոշոր՝ 10-1, միջին՝ 1-0.1, փոքր՝ 0.1-0.01:

Որոնման և հետախուզման առանձնահատկությունները կայանում են կարոտաժի, աէրո և մակերեսային գամմա-սպեկտրոսկոպիայի, լիթոքիմիական մեթոդի կիրառման արդյունավետության մեջ:

Արդյունաբերական հանքաքարերը՝ արտածին՝ ցիրկոնային, բաղելեհտային; էնդոգեն. ցիրկոն-պիրոքլորային, ցիրտոլիտ-կոլումբիտային, բաղելեհտային, էվկլիալիտային:

$ZrO_2 + HfO_2$ -ի պարունակությամբ (%) հանքավայրերը դասակարգվում են. հարուստ՝ 3-ից ավել, շարքային՝ 3-1.5, աղքատ՝ 1.5-0.5:

Վերամշակումը իրականացվում է ցիրկոնի հանքաքարերի հարստացման տեխնոլոգիայով:

HfO_2 -ի կորզումը տարրեր հանքատեսակներից կազմում է 70%՝ խտանյութում մինչև 2% պարունակությամբ:

Հաֆնիում-ցիրկոնային խտանյութերը վերամշակվում են մետաղաբերմիայով, ֆոտորիդների ֆրակցիոն-բյուրեղացմամբ, ցիրկոնիտումի ոռղանիդների լուծահանման և այլ մեթոդներով:

Ապրանքային արտադրանքը պարունակում է ($ZrO_2 + HfO_2$) 99.3-99.9% հաֆնիումի երքօքսիդ, 99.8% մետաղական հաֆնիում:

Հաֆնիումի երկօքսիդի մեջ վնասակար խառնուրդներ են համարվում ZrO_2 , SiO_2 , Fe_2O_3 , Al_2O_3 , TiO_2 , MgO , CaO , SO_3 , մետաղական հաֆնիումում՝ O, N, Mg, Fe, Al, Mn, V, Ni, Ti, Pb:

Ինդիում (In, III, 49)

Մետաղ, արծաթավայլ-սպիտակ, փափուկ: Հանդես է բերում ամֆոտեր հատկություններ: Լիռո-, սիդերո-, խալկոֆիլ տարր է: Կայուն վալենտականությունը՝ 3^+ :

Խտությունը $7310 \text{ կգ}/\text{մ}^3$, կարծրությունը ըստ Բրինելլի՝ 9-10 ՄՊա: Հալման ջերմաստիճանը 156^0C , եռմանը՝ 2080^0C , ջերմահաղորդականությունը $81.6 \text{ Վտ}/(\text{մ.Կ.})$, տեսակարար էլեկտրական դիմադրությունը $8.37 \cdot 10^{-8} \text{ Ohm}^{-1}$, տեսակարար մազնիսական ընկալունակությունը՝ $7.0 \cdot 10^{-9} \text{ մ}^3/\text{կգ}$, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $33 \cdot 10^{-6} \text{ Կ}^{-1}$:

Ինդիումի կլարկը երկրակեղեսում $0.25 \text{ գ}/\text{տ}$ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում ($\text{գ}/\text{տ}$): գերիմքային՝ 0.013 , հիմքային՝ 0.22 , բբու՝ 0.26 , նստվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 0.05 :

Ինդիումը բունավոր տարր է (II-րդ և III-րդ կարգի վտանգավորություն): ԹՍԿ_{ազ} $\text{In}_2\text{O}_3 - 4.0 \text{ մգ}/\text{մ}^3$; ԹՍԿ_{օօ} – 0.005 :

Ինդիումի համաշխարհային ընդհանուր պաշարները (առանց ԱՊՀ երկրների) 2.6 հազ.տ է, հաստատվածը՝ 1.4 հազ.տ : Տարեկան արտադրությունը 160 տ : Ամենախոչըր արտադրողներն են՝ Կանադան, ԱՄՆ-ն, Պերուն, Շապոնիան: Ռուսաստանում ինդիումի պաշարները կազմում են ԱՊՀ երկրների պաշարների 80% :

Կիրառման բնագավառները (%): Էլեկտրոնիկայում՝ 55 , լուսանկարչական սարքավորումներում՝ 11 , կիսահաղորդիչներում՝ 6 , դյուրահալ համածոլվածքներում՝ 10 , ատամնատեխնիկայում՝ 3 , այլ բնագավառներում՝ 15 :

Հայտնի են ինդիումի վեց միներալներ, որոնցում գերակշռում են խալկածինները: Արդյունաբերական նշանակություն ունեն ինդիում պարունակող միներալները՝ սֆալերիտը, խալկոփիրիտը, կասիտերիտը:

Ինդիումը չի առաջացնում բուն հանքավայրեր. գոտնվում է այլ օգտակար հանածոների հանքավայրերում:

Ինդիում պարունակող հանքավայրերի արդյունաբերական տեսակները՝ կապար-ցինկային, պղինձ-հրաքարային, անագային, ոսկու, պղինձ-մոլիբդենային, վոլֆրամային, ֆլյուորի-

տային: Առավել մեծ նշանակություն ունեն առաջին երեք տեսակները:

Հստ պաշարների ինդիումի հանքավայրերը (մետաղ տոննայով) դասակարգվում են. շատ խոշոր - 500-ից ավելի, խոշոր - 500-200, միջին - 200-50, փոքր - 50-ից պակաս:

Արդյունաբերական հանքաքարերը՝ բազմամետաղային, կապար-ցինկային, կապարային, անագ-կապար-ցինկային, պղընձային և պղինձ-ցինկ-սուլֆիդային, ծծմբահրաքարային, սուլֆիդային-կասիտերիտային, ոսկի-բազմամետաղային, պղինձ-մոլիբդենային, շենկլիտային, ցինկ-ֆլյուորիտային:

Հանքաքարերում ինդիումի պարունակությունը կազմում է 2-10 գ/տ (միջինը 3.6):

Վերամշակումը իրականացվում է ինդիում պարունակող հանքաքարերի հիմնական արդյունաբերական տեսակների հարատացման տեխնոլոգիայով:

Ինդիումի կորզումը տարբեր տեսակի հանքաքարերից կազմում է 2-35%. ինդիում պարունակող խտանյութերում ինդիումի պարունակությունը 0.01-1.0% :

Ինդիում պարունակող հանքաքարերի մետաղորդիական վերամշակման ժամանակ ինդիումը անցնում է արտադրության փոշիների, շամների և սորախցուկի մեջ: Վերջիններս վերամշակվում են հիդրո- և էլեկտրամետալուրգիական եղանակներով:

Աղլանքային արտադրանքը պարունակում է 99.96-99.999% In:

Ինդիումի մեջ վնասակար խառնուրդներ են համարվում Fe, Cd, Cu, As, Ni, Sn, Hg, Pb, Te, Zn:

Խտրիում (Y, III, 39)

Սետաղ, արծարափայլ-սպիտակ, փափուկ: Հանդես է բերում հիմնային հատկություններ, լիթոֆիլ է, վալենտականությունը՝ 3^+ :

Խտությունը $4469 \text{ կգ}/\text{մ}^3$, կարծրությունը ըստ Բրինելլի՝ 320-589 UՊա: Հալման ջերմաստիճանը 1522^0C , եռմանը՝ 3338^0C , ջերմահաղորդականությունը $17.2 \text{ Վտ}/(\text{մ.Կ.})$, տեսակարար էլեկտրական դիմադրությունը $57 \cdot 10^{-8} \text{ Ohm}^{-1} \text{ m}^{-1}$, տեսակարար մագնիսական

ընկալունակությունը՝ $2.7 \cdot 10^{-8}$ մ³/կգ, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $10.6 \cdot 10^{-6}$ Կ⁻¹:

Խորիումի կլարկը երկրակեղևում 29 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների զիսավոր տեսակներում (գ/տ). գերիշմքային և հիմքային՝ 20, միջին և բրու՝ 34, նատվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 30:

Խորիումը բունավոր տարր է (II-րդ և III-րդ կարգի վտանգավորություն): ԹՍԿա-ն լուծելի միացությունների համար 1.0 մգ/մ³, Y_2O_3 -ի համար 2.0, խորիումային լուսմինոֆորների համար 1-2: Պարունակությունը բնահողում՝ 21-39 գ/տ:

Խորիումի համաշխարհային ընդհանուր պաշարները (առանց ԱՊՀ երկրների) 1 մլն.տ Y_2O_3 է: Տարեկան արտադրությունը կազմում է 1000 տոննայից ավելի: Ամենախոշոր արտադրողներն են՝ Չինաստանը, ԱՄՆ, Ավստրալիան, Հնդկաստանը:

Օգտագործվում են գունավոր հեռուստատեսության համար լուսմինոֆորների, ինչպես նաև լուսմինիսցենտային լամպերի, հրակայուն հակակորողինն զերհամածովվածքների, չժանգույնող պողպատի, լազերների, օպտիկական ապակու, հրակայուն խեցեգործության, արագակտրիչ գործիքների արտադրության մեջ:

Հայտնի է մոտ 20 միներալներ, որոնցում խորիումը համարվում է հիմնական տարր: Նրանցում զերակշռում են ֆոսֆատները և հազվագյուտ մետաղների միներալները: Արդյունաբերական նշանակություն ունեն որք միներալներ՝ բաստեզիտ, մոնացիտ, քսենոտիմ, խորոսինիզիտ, չերչիտ, ուարդոֆանիտ, գագարինիտ, գաղոլինիտ:

Հանքավայրերի արդյունաբերական տեսակները՝ մազմայածին (հազվագյուտ մետաղային ալկալային գրանիտները և նրանց մետասոմատիտները, ալկալային սիենիտների կարբոնատիտները), մետամորֆածին (ուրանարեր խառնաքարեր), արտածին (հողմնահանման կեղև, առավելա-ծովային և գետաբերուկային ցրոններ):

Առավել մեծ նշանակություն ունեն հազվագյուտ մետաղային ալկալային գրանիտների և նրանց մետասոմատիտների, հիդրոթերմալ-հողմնահարման կեղևի լվացման, ուրանարեր խառնաքարերի և ցրոնների հանքավայրերը:

Ըստ Երկրաբանական կառուցվածքի բարդության հանքավայրերը դասվում են առաջին, երկրորդ և երրորդ խմբերին:

Հազվագյուտ հողերի օրսիդների (ՀՀՕ) պաշարներով (հազ.տ) խորհումային հողերի հանքավայրերը դասակարգվում են՝ շատ խոշոր - ավելի քան 500, խոշոր – 500-100, միջին – 100-10, փոքր – 10-ից պակաս:

Հանքաքարերի արդյունաբերական տեսակներն են՝ բաստնեզիտային, խորոսինխիզիտային, մոնացիտային, քսենոտիմային:

Ըստ ՀՀՕ-ի պարունակության (%) հանքաքարերը դասակարգում են՝ շատ հարուստ – 1-ից բարձր, հարուստ – 1-0.5, շարքային – 0.5-0.1, աղքատ – 0.1-ից ցածր:

Հանքավայրերը շահագործվում են բաց և ստորգետնյա եղանակներով:

Հանքաքարերի վերամշակումը իրականացվում է գրավիտացիայի, ֆլոտացիայի և համակցված (գրավիտացիա, մազնիսական և էլեկտրական տարանցատում, ֆլոտացիա) տեխնոլոգիաներով՝ հազվագյուտ հողերի կոլեկտիվ խտանյութերի ստացմանը:

ՀՀՕ-ի կորզումը տարբեր հանքատեսակներից կազմում է 20-75%՝ խտանյութում 1-20% Y_2O_3 -ի պարունակությամբ:

Խտանյութում վնասակար խառնուրդներին են պատկանում TiO_2 , MnO , Cr_2O_3 , Fe_2O_3 , SiO_2 , P , Th :

Համալիր կազմի հանքաքարերի հարստացման ժամանակ հարակից ստացվում են այլ հազվագյուտ հողերի տարրերի խտանյութեր, բարիտային և ֆուֆատային նյութեր:

Խորիում պարունակող խտանյութերը վերամշակվում են քիմիական անջատման, լուծահանման, քլորացման և խոնավութանակման քրոմատոգրաֆիական եղանակներով:

Ապրանքային արտադրանքը պարունակում է 99,98282-99,99936 % Y_2O_3 :

Խտանյութում առկա ՀՀՕ-ին ուղեկցող տարրերը կորզվում են խորիումի օրսիդի արտադրության ժամանակ:

Խորիումի օրսիդում վնասակար խառնուրդներին են պատկանում V, Mn, Cu, Ni, Fe, K, Na, Ca, Si:

Լիթիում (Li, I, 3)

Մետաղ, արծաթափայլ սպիտակ, փափուկ: Հանդես է բերում ալկալային հատկություններ, լիթոֆիլ է, կայուն վալենտականությունը՝ 1^+ :

Խտությունը $534 \text{ կգ}/\text{մ}^3$, կարծրությունը ըստ Բրինելլի՝ 5.0 ՄՊա , հալման ջերմաստիճանը 180°C , եռմանը՝ 1347°C , ջերմահաղորդականությունը $84.7 \text{ Վտ}/(\text{մ.Կ.})$, տեսակարար էլեկտրական դիմադրությունը $8.55 \cdot 10^{-8} \text{ Օհմ մ}$, տեսակարար մազնիսական ընկալունակությունը՝ $2.56 \cdot 10^{-8} \text{ մ}^3/\text{կգ}$, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $56 \cdot 10^{-6} \text{ Կ}^{-1}$, ջերմային նեյտրոնների ընդգրկման հատույքը $9.45 \cdot 10^{-26} \text{ մ}^2$:

Լիթիումի կլարկը երկրակեղևում $32 \text{ գ}/\text{տ}$ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ.տ.) գերիշմքային՝ 0.5 , հիմքային՝ 15.0 , միջին՝ 20.0 , բբու՝ 40.0 , նատվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 60.0 :

Լիթիումը խիստ քունավոր տարր է (II-րդ կարգի վտանգավորություն): Վիշտը Թ-ՍԿ_{ազ}-ն մինչև $1 \text{ մլգ}/\text{մ}^3$ է, վիշտը Թ-ՍԿ_{աօ} 0.1 ; LiCl Թ-ՍԿ_{աօ} – $0.02 \text{ մլգ}/\text{մ}^3$, Li⁺ Թ-ՍԿ_ա – $0.03\text{-մգ}/\text{լ}$ բնահողում բնական պարունակությունը $7\text{-}75 \text{ գ}/\text{տ}$ է:

Li₂O-ի համաշխարհային հաստատված պաշարները (առանց ԱՊՀ երկրների) կազմում են մոտ 17.4 մլն. տ , տարեկան արտադրությունը՝ մոտ 20.0 հազ.տ Li₂O: Առավել խոշոր արտադրողներն են՝ ԱՄՆ, Չիլին, Ավստրալիան, Գերմանիան, Շապոնիան:

ԱՊՀ երկրների մեջ լիթիումի հումքի պաշարների 96% քամին է ընկնում Ռուսաստանին:

Կիրառման բնագավառներն են (%): ապակու և խեցեգործության արտադրություն – 48 , քանձր քսուկների համար – 20 , օդի և գազերի մաքրում – 9 , կոտակիչ մարտկոցների պատրաստում- 5 , արհեստական կառչուկների ստացման համար որպես կատալիզատոր – 2 , դեղագործության և օգտագործման այլ բնագավառներ – 16 :

Հայտնի են լիթիումի 86 միներալներ: Նրանց մեջ գերակշռում են սիլիկատները, ալյումասիլիկատները, ֆոսֆատները: Արդյունաբերական նշանակություն ունեն 6 միներալներ՝ սպոդո-

մեն, լեպիդոլիտ, պետալիտ, ամբլիգոնիտ, էվկրիպտիտ, ցիննվալիխ:

Հանքավայրերի արդյունաբերական տեսակներն են. հազվագյուտ մետաղային գրանիտային պեզմատիտներ և աղային նստվածքների և լճերի աղաջրեր: Առավել նշանակություն ունեն վերջիններս:

Ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության հանքավայրերը պատկանում են երկրորդ, երրորդ և չորրորդ խմբերին: Ըստ Li_2O պաշարների (հազ.տ) հանքավայրերը դասակարգվում են. եզակի – 1200-ից ավելի, բավականին խոշոր՝ 1200-600, խոշոր՝ 600-300, միջին՝ 300-10, փոքր՝ 100-40:

Որոնման և հետախուզման առանձնահատկությունները կայանում են (Ենդոգեն հանքավայրերի համար) գամմա-հանույթի, գամմա-կարոտաժի և առաջնային պսակների լիքորիմիայի կիրառման արդյունավետության մեջ:

Արդյունաբերական հանքաքարերն են. ներծին-պեզմատիտային և գրեյզենային, հիդրոմիներալային՝ կարբոնատային, սուլֆատային, քլորիդային:

Ըստ Li_2O պարունակության (%) ներծին հանքավայրերը դասակարգվում են. բավական հարուստ՝ 1.5-ից ավելի, հարուստ – 1.5-1.3, շարքային՝ 1.3-0.7, աղքատ՝ 0.7-0.5:

Հանքավայրերը մշակվում են առավելապես բաց եղանակով:

Հանքաքարի նախապատրաստումը վերամշակման ընթանում է հանքաքարի մանրացմամբ, հարուստ մասի տեսակավորմամբ և աղքատ հումքի հարստացմամբ՝ կիրառելով գրավիտացիայի, ֆլոտացիայի, թերմիկ և համակցված տեխնոլոգիաներ:

Լիքիումի կորզումը հանքաքարերի տարրեր տեսակներից կազմում է 76-90%, խտանյութում 4.6-7% Li_2O_5 պարունակությամբ: Խտանյութում վնասակար խտանյութներին են պատկանում SiO_2 , Al_2O_3 , K_2O , N_2O , FeO , MgO , CaO , F , MnO , P_2O_5 :

Լիքիումի խտանյութերը մշակվում են հիդրոմետալուրգիական եղանակով:

Ապրանքային արտադրանքում լիքիումի պարունակությունը կարբոնատում, լիքիումի հիդրօքսիդում և քլորիդում կազմում է ավելի քան 99%, իսկ մետաղների մեջ՝ 97%:

Լիքիումի միացություններում վնասակար խառնուրդներն են. SO_4 , CaO , $\text{Na}_2\text{O} + \text{K}_2\text{O}$, Cl , Fe_2O_3 , CO_2 , Al , PO_4 , մետաղում – Cd , Na , Mg , Ca , Al , Fe , Mn , SiO_2 , նիտրիդային ազոս:

Նիոբիում (N_b, V, 41)

Մետաղ, արծաթափայլ, փափուկ: Հանդես է բերում հիմնային հատկություններ, լիքոֆիլ է, կայուն վալենտականությունը՝ 5^+ :

Խտությունը $8570 \text{ կգ}/\text{մ}^3$, կարծրությունը ըստ Բրինելլի՝ $735-750 \text{ UPIa}$, հալման ջերմաստիճանը 2468°C , եռմանը՝ 4742°C , ջերմահաղորդականությունը $53.7 \text{ Վտ}/(\text{մ.Կ.})$, տեսակարար էլեկտրական դիմադրությունը $12.5 \cdot 10^{-8} \text{ Ohm} \text{ մ}$, տեսակարար մազնիսական ընկալունակությունը՝ $2.76 \cdot 10^{-8} \text{ м}^3/\text{կգ}$, գծային ընդարձակման ջերմաստիճաննային գործակիցը՝ $7.07 \cdot 10^{-6} \text{ Կ}^{-1}$; Կորոզիակայուն է:

Նիոբիումի կլարկը երկրակեղեսում 20 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ/տ). գերիմքային՝ 1.0, հիմքային՝ 20.0, միջին՝ 20.0, քրու՝ 20.0, նստվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 20.0:

Նիոբիումը թունավոր տարր է (II-րդ–III-րդ կարգի վտանգավորություն): ԹՍԿ_{ազ}-ն $\text{NbB}_2 - 4\text{մգ}/\text{մ}^3$ է, $\text{NbN} - 10\text{մգ}/\text{մ}^3$, ԹՍԿ_չ-ն $\text{NbN} - 0.01\text{մգ}/\text{լ}$, բնակչությունը բնական պարունակությունը 17-53 գ/տ է:

Nb_2O_5 համաշխարհային հաստատված պաշարները (առանց ԱՊՀ երկրների) կազմում են մոտ 3.6 մլն. տ, տարեկան արտադրությունը՝ մոտ 15.0 հազ.տ մետաղ: Առավել խոշոր արտադրողներն են՝ Բրազիլիան, Կանադան:

Կիրառվում է հիմնականում ջերմակայուն համաձուլվածքների արտադրության մեջ՝ որպես կոռոդ մետաղ, ինչպես նաև օպտիկական էլեկտրոնիկայում, ձայնաէլեկտրոնային սարքավորումներում և ատոմային էներգետիկայում:

Հայտնի են նիոբիումի ավելի քան 70 միներալներ: Նրանց մեջ գերակշռություն են օքսիդները, հիդրօքսիդները, սիլիկատները: Արդյունաբերական նշանակություն ունեն պերովսկիտի և ափրոքլորի խմբի, տիտանատանտալանիորատների, տանտալանիորատների, նիոբոտիտանացիրկոնատների 25 միներալներ:

Հանքավայրերի արդյունաբերական տեսակները. ներծին՝ մագմատիկ կարբոնատիտային, ալֆիտիտային; արտածին՝ մնացորդային հողմնահարման կեղևի և ցրոններ: Առավել նշանակություն ունեն ներծին հանքավայրերը և ցրոնները:

Ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության հանքավայրերը պատկանում են առաջին, երկրորդ և երրորդ խմբերին: Ըստ Nb_2O_5 պաշարների (հազ.տ) հանքավայրերը դասակարգվում են. եզակի – 10000-ից ավելի, խոշոր՝ 10000-1000, միջին՝ 1000-100, փոքր՝ 100-ից պակաս:

Որոնման և հետախուզման առանձնահատկությունները կայանում են ուղղուակտիվ մեթոդների կիրառման արդյունավետության մեջ:

Արդյունաբերական հանքարերն են պիրոքլորային, լոպարիտային: Ըստ Nb_2O_5 պարունակության (%) հանքավայրերը դասակարգվում են. չափազանց հարուստ՝ 1.5-ից ավելի; հարուստ՝ 1.5-0.8; միջին՝ 0.8-0.15; աղքատ՝ 0.15-0.03:

Հանքավայրերը մշակվում են բաց, ստորգետնյա և համակցված եղանակներով:

Հանքաքարի վերամշակումն իրականացվում է հանքհարստացման համակցված տեխնոլոգիաների (մագնիսական տարանցատում, զրավիտացիա, ֆլոտացիա) կիրառման ճանապարհով:

Նիոբիումի օրսիդի կորզումը տարրեր հանքատեսակներից կազմում է մինչև 80%՝ խտանյութում – մինչև 60% Nb_2O_5 պարունակությամբ:

Խտանյութում վճասակար խառնուրդներին են պատկանում կայծքարահորդ, տիտանի երկօքսիդը, ֆոսֆորը, ծծումբը, օքսիդները, (Al, Fe,Ca) տանտալի պենտօքսիդը, կալիումը, նատրիումը, ֆոտորը, քլորը, կորբալտը, ածխածինը:

Համալիր կազմի հանքարերի հանքհարստացման ժամանակ հարակից ստացվում են անագի, ցիրկոնի, ապատիտի խտանյութեր:

Նիոբիումի խտանյութերը վերամշակվում են հիդրոմետալորդիական, քլորաքրորման և մետալուրգիական եղանակներով:

Ապրանքային արտադրանքը պարունակում է նիոբիումի պենտօքսիդը – 99% Nb_2O_5 , նիոբիումի հիդրօքսիդը – 75-80% ($Nb_2O_5 + Ta_2O_5$), ֆերոնիոբիումը – 85-95% Nb_2O_5 :

Խտանյոթերում պարունակվող ուղեկցող տանտալը անցնում է հիդրոմետալորգիական խտանյոթ, որտեղից նրան կորզում են լուծահանման և այլ եղանակներով:

Նիորփումի պատրաստի արտադրանքում վնասակար խառնուրդներն են՝ կայծքարահողը, տիտանի երկօքսիդը, P, S, ալյումինի, երկարի, կալցիումի օքսիդները, տանտալի պենտաքսիդը, K, Na, Cl, Co, C, Cu, Mn, Mo, Mg, W, Sn, V:

Ո-Ենիում (Re, VII, 75)

Սետաղ, արծաթափայլ: Հանդես է բերում ամֆոտեր հատկություններ, խալկո- և սիլիկոֆիլ է, կայուն վալենտականությունները՝ 4^+ և 7^+ :

Խտոթյունը 21020 կգ/մ³, կարծրությունը քստ Բրինելլի՝ 1320-2000 ՄՊա, հալման ջերմաստիճանը 3180°C, եռմանը՝ 5627°C, ջերմահաղորդականությունը 47.9 Վտ/(մ.Կ.), տեսակարար էլեկտրական դիմադրությունը $19.3 \cdot 10^{-8}$ Ohm մ, տեսակարար մագնիսական ընկալունակությունը՝ $4.56 \cdot 10^{-9}$ մ³/կգ, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $6.63 \cdot 10^{-6}$ Կ⁻¹: Կորոզիակայուն է:

Ո-Ենիումի կարկը երկրակեղևում 0.0007 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ/տ). հիմքային՝ 0.00071, բբու՝ 0.00067:

Ո-Ենիումի Թ-ՄԿ-ն չի նորմավորվում, բացառությամբ Թ-ՄԿ_{ագ}-ի, որը կազմում է 4 մլգ/մ³:

Ո-Ենիումի համաշխարհային արդյունահանվող պաշարները ավելի քան 10 հազ.տ է, տարեկան արտադրությունը՝ 30-35տ: Առավել խոշոր արտադրողներն են՝ Ղազախստանը, ԱՄՆ: Ուսասատանում ունիումի հումքային աղբյուրները բացակայում են:

Կիրառվում է նավթաքիմիական արդյունաբերության մեջ որպես կատալիզատոր, ջերմակայուն համաձուլվածքների ստացման համար, տիեզերական տեխնիկայում, տաքացնող սարքերում, միջուկային արագացուցիչներում, ունտգենատեխնիկայում:

Հայտնի են ունիումի 4 միներալներ. ջեղկազգանիտ (քարդսուլֆիդ), ունիումի մոնոսուլֆիդ և օքսիդ, բնածին ունիում: Ար-

դյունաքերական նշանակություն ունի մոլիբդենիտը՝ ռենիումի հիմնական միներալը ու նրա ստացման հիմնական աղբյուրը:

Ռենիումը ինքնուրույն հանքավայրեր չի առաջացնում, այլ գտնվում է տարրեր տեսակի հանքավայրերի հանքաքարում:

Ռենիում պարունակող հանքավայրերի արդյունաքերական տեսակներն են. ներծին՝ պղնձա-մոլիբդենային պորֆիրային և պղնձի շերտաձևային; արտածին-մոլիբդեն-ուրանային: Առավել նշանակություն ունեն առաջին երկու տեսակները:

Հանքավայրերի երկրաքանական կառուցվածքի քարտուքունը որոշվում է հիմնական օգտակար հանածոների հանքավայրերի կառուցվածքի քարտուքամբ:

Արդյունաքերական հումք են հանդիսանում ռենիում պարունակող խտանյութերը (գ/տ). մոլիբդենի՝ 100, պղնձի՝ 1.5-2.5, կապարի՝ 3.5-5.5: Ռենիումի առաջնային տեխնոլոգիական խտանյութը - դա մեկ խորանարդ մետրում հարյուրավոր գրամ ռենիումի պարունակությամբ լուծույթն է:

Հանքաքարի վերամշակումն իրականացվում է ռենիում պարունակող հանքաքարերի հիմնական տեսակների հարստացման տեխնոլոգիայով:

Տարրեր տեսակի հանքաքարերից ռենիումի կորզումը կազմում է 40-60%, խտանյութում նրա մինչև 2 կգ/տ պարունակությամբ:

Պղնձի և մոլիբդենի հանքաքարերի մետալուրգիական վերամշակման ժամանակ ռենիումը կուտակվում է վերամշակման փոշու մեջ:

Ռենիում պարունակող խտանյութերը և մետալուրգիական փոշիները վերամշակվում են հիդրոմետալուրգիական եղանակով:

Ապրանքային արտադրանքը պարունակում է ռենիում (%). ռենիումաքքվային ամոնիում՝ 69, ռենիումի օրսիդ (7)՝ 69, մետաղական ռենիում՝ 99.9:

Ռենիումի արտադրանքում վճասակար խառնուրդներն են. Al, Fe, K, Ca, Si, Mn, Mg, Cu, Mo, Na, Ni, P, S, W:

Մետաղ, արծաթավայլ-սպիտակ, փափուկ: Հանդես է քերում ալկալային հատկություններ, լիբոֆիլ է, վալենտականությունը՝ 1^+ :

Խտությունը 1532 կգ/մ³, կարծրությունը ըստ Բրինելլի՝ 0.216 ՄՊա, հալման ջերմաստիճանը 39^0C , եռմանը՝ 688^0C , ջերմահաղորդականությունը 58.2 Վտ/(մ.Կ.), տեսակարար էլեկտրական դիմադրությունը $12.5 \cdot 10^{-8}$ Օհմ մ, տեսակարար մազնիսական ընկալունակությունը՝ $2.49 \cdot 10^{-9}$ մ³/կգ, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $90 \cdot 10^{-6}$ Կ⁻¹, ջերմային նեյտրոնների ընդգրկման հատույքը՝ $7.3 \cdot 10^{-29}$ մ²:

Երկրակեղենում ոուրիդիումի կլարկը 150 գ/տ: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ/տ). գերիհմքային՝ 2, հիմքային՝ 45, միջին՝ 100, բբու՝ 200, նստվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 200:

Ո-ուրիդիումի կլարկը երկրակեղենում 150 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ/տ). գերիհմքային՝ 2, հիմքային՝ 45, միջին՝ 100, բբու՝ 200, նստվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 200:

Ո-ուրիդիումը խիստ բունավոր տարր է (II-րդ կարգի վտանգավորություն): փոշու Թ-ԱԿ (մլգ/մ³), Թ-ԱԿ_{ազ}-ն 3-4, Թ-ԱԿ_{ամ}-1-2, Թ-ԱԿ_{աօ}- 0.1; Թ-ԱԿ_զ RbCl – 0.1 մլգ/մ³ է: Բնահողում բնական պարունակությունը – 36-150 գ/տ:

Rb₂O համաշխարհային պաշարները (առանց ԱՊՀ երկրների) կազմում են 173 հազ.տ, տարեկան արտադրանքը՝ մոտ 1000 տ: Առավել խոշոր արտադրողներն են՝ ԱՄՆ, Կանադան: Ո-ուրիդիումի համաշխարհային պաշարների 99% տեղաբաշխված է Ռուսաստանում:

Կիրառման հիմնական բնագավառներն են՝ ֆոտոէլեկտրական և ցածր լարման սարքեր; թիմիական արտադրության մեջ՝ կատալիզատորներ, նորագույն էներգետիկայի, բժշկության, կենսաբանության մեջ, գիտական հետազոտություններ:

Ո-ուրիդիումը գտնվում է գերազանցապես կալիումի միներալների, այդ բվում միկրոկլինի, լեպիդոլիտի, ցիննվալդիտի, մուսկովիտի, ֆենօգիտի, ինչպես նաև պոլուցիտի, սպողումենի, բերիլլի,

Աեֆելինի, կարնալիտի ստրոկտորաներում: Արդյունաքերական նշանակություն ունեն հիմնականում լեպիդոլիտը, հազվադեպ՝ ցիննվալյուտը:

Ուրիդիտումը ինքնուրույն հանքավայրեր չի առաջացնում, այլ գտնվում է տարբեր տեսակի հումքի հանքավայրերում:

Ուրիդիտում պարունակող հանքավայրերի արդյունաքերական տեսակներն են՝ հազվագյուտ մետադային – պեզմատիտային, ապատիտ-Աեֆելինային, կարնալիտային:

Հստ Rb_2O -ի պաշարների (հազ.տ) հանքավայրերը դասակարգվում են. քավական խոշոր՝ 1000-ից ավելի, խոշոր՝ 100-100, միջին՝ 100-10, փոքր՝ 10-ից պակաս:

Որոնման և հետախուզման առանձնահատկությունները կայանում են գամմա-հանույթի (աէրո - և հետիոտն) և հորատանցքերի գամմա-կարոտաժի կիրառման մեջ արդյունավետության մեջ:

Արդյունաքերական հանքաքարերն են. համալիր ցեզիումուրիդիտումային (ապլուցիտային և փայլարային) և ոուրիդիտում պարունակող (ապատիտ-Աեֆելինային, կարնալիտային):

Հստ Rb_2O պարունակության (%) հանքաքարերը դասակարգվում են. հարուստ – 0.5-0.2, միջին – 0.2-0.01, աղքատ – 0.01-0.006:

Հանքավայրերի շահագործումը իրականացվում է կապված հիմնական հանքաքարերի հետ:

Հանքաքարի նախապատրաստումը հիդրոմետալուրգիական վերամշակմանը կատարվում է հարստացման համակցված գրավիտացիոն-ֆլոտացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ:

Ուրիդիտումի կորզումը տարբեր տեսակի հանքաքարերից կազմում է 6-20%՝ խտանյութում մինչև 6% նրա պարունակությամբ: Ուրիդիտում պարունակող խտանյութերը մշակվում են հիդրոմետալուրգիական և հրամետալուրգիական եղանակներով:

Ապրանքային հիդրոմետալուրգիական խտանյութը պարունակում է 91% ուրիդիտում: Նրանում վնասակար խառնուրդներ են համարվում Na , Cs , K , Mg , Ba : Մետադայական ուրիդիտում ստանում են մետադարմիայով:

Սելեն (Se, V, 34)

Սետաղ, արծաթափայլ-մոխրագույն, փափոկ, ճկուն: Հանդես է բերում թթվային հատկություններ, խալկոֆիլ է, կայուն վալենտականությունը՝ $2^-, 2^+, 4^+$, 6^+ :

Խտությունը 4790 կգ/մ³, կարծրությունը ըստ Բրինելլի՝ 736 ՄՊա, հալման ջերմաստիճանը 217°C , եռմանը՝ 685°C , ջերմահղորդականությունը 2.04 Վտ/(մ.Կ.), տեսակարար էլեկտրական դիմադրությունը $0.01 \cdot 10^{-8}$ Ωմ մ, տեսակարար մագնիսական ընկալունակությունը՝ $4.0 \cdot 10^{-9}$ մ³/կգ, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $36.9 \cdot 10^{-6}$ Կ⁻¹: Հանդես է բերում կիսամետաղի հատկություններ:

Սելենի կլարկը երկրակեղեսում 0.5 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ/տ). գերիշմքային՝ 0.05, հիմքային՝ 0.05, միջին՝ 0.05, քրու՝ 0.05, նատվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 0.6:

Սելենը խիստ բունավոր տարր է (II-րդ կարգի վտանգավորություն): ԹՄԿ_{աս}-2, ԹՄԿ_{մօ}- 0.0005; ԹՄԿ_զ- 0.01 մլգ/մ³ է: Բնահողում բնական պարունակությունը – 0.2-1.0 գ/տ է:

Սելենի համաշխարհային հաստատված պաշարները (առանց ԱՊՀ երկրների) կազմում են մոտավորապես 130 հազ.տ, այդ թվում արդյունահանվող՝ 80, տարեկան արտադրանքը (առանց ԱՊՀ երկրների)՝ մոտավորապես 2 հազ.տ, այդ թվում 200 տտեխնածին երկրորդական սելեն:

Սովոր խոշոր արտադրողներն են՝ ճապոնիան, Կանադան, ԱՄՆ:

ԱՊՀ երկրները սելենի պաշարներով աշխարհում գրավում են առաջին տեղը: Ռուսաստանի պաշարները կազմում են ԱՊՀ երկրների պաշարների 69%:

Կիրառման բնագավառներն են (%): Գոտոպատճենահանման տեխնիկա – 40-66; ապակու արտադրություն – 20; սելեն պարունակող ջերմակայուն ներկանյութեր – 13; մնացած մասը - էլեկտրոնիկա:

Հայտնի են սելենի 80-ից ավելի միներալներ: Նրանց մեջ գերակշռում են հիմնականում պղնձի և նիկելի սելենիդները: Արդյունաբերական նշանակություն ունեն սելեն պարունակող մինե-

բալները. խալկոպիրիտը, պիրիտը, պենտլանդիտը, սֆալերիտը, զալենիտը, մոլիբդենիտը:

Սելենը ինքնուրույն հանքավայրեր չի առաջացնում, այլ ուղղեկցում է գունավոր մետաղների հանքայնացումը:

Սելեն պարունակող հանքավայրերի արդյունաբերական տեսակներն են. պղինձ-կոլչետանային, պղինձ-պորֆիրային, պղինձ-սկառնային, պղինձավազաքարային, պղինձ-երկաթ-վանդիումային, պղինձ-նիկելային, պղինձ-մոլիբդենային, կապարցինկային:

Հստ սելենի պաշարների (տ) հանքավայրերը դասակարգվում են. առավել խոշոր՝ 10000-ից ավելի, խոշոր՝ 10000-2000, միջին՝ 2000-500, փոքր՝ 500-50, մանր՝ 50-ից պակաս:

Սելեն պարունակող արդյունաբերական հանքավայրերն են. պղնձի, պղինձ-նիկելային, պղինձ-մոլիբդենային, բազմամետաղային, կապարցինկային:

Հստ սելենի պարունակության (գ/տ) հանքավայրերը դասակարգվում են. հարուստ՝ 120, միջին՝ 60, աղքատ՝ 20:

Կախված հիմնական օգտակար հանածոյից սելեն պարունակող հանքաքարերը մշակվում են բաց, ստորգետնյա և համակցված եղանակներով:

Սելեն պարունակող հումքի նախապատրաստումը վերամշակման ընթանում է հիմնական հանքաքարի հետ համատեղ՝ ջարդման, հարուստ հանքաքարի տեսակավորման և աղքատ հումքի ֆլուտացիոն տեխնոլոգիական հարատացմամբ:

Սելենի կորզումը խտանյութի մեջ տարրեր հանքատեսակներից կազմում է 30-40%, խունայութում նրա 700-800 գ/տ պարունակությամբ:

Սելեն պարունակող խտանյութերը մշակվում են մետալորգիական, իսկ ծծմբային սելեն պարունակող զագերը՝ քիմիական եղանակներով:

Ապրանքային արտադրանքը պարունակում է 99.0-99.8 %-ից ավելի սելեն: Վճասակար խառնուրդներն են. Te, Fe, Cu, Pb, Hg, As, S, Al:

Կիսամետաղ, արծաթավայլ-սպիտակ: Հանդես է բերում ամֆոտեր հատկություններ, խալկոֆիլ է, կայուն վալենտականությունները՝ $2^-, 0, 2^+, 4^+, 6^+$:

Խտությունը 6240 կգ/մ³, կարծրությունը ըստ Բրինելլի՝ 180-270 ՄՊա, հալման ջերմաստիճանը 449.7°C , եռմանը՝ 990°C , ջերմահաղորդականությունը $2.35 \text{ } \text{Վտ}/(\text{մ.Կ.})$, տեսակարար էլեկտրական դիմադրությունը $4.36 \cdot 10^{-3} \text{ } \text{Օհմ} \text{ մ}$, տեսակարար մազնիսական ընկալունակությունը՝ $3.9 \cdot 10^{-9} \text{ } \text{մ}^3/\text{կգ}$, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $16.75 \cdot 10^{-6} \text{ } \text{Կ}^{-1}$: Հստակ արտահայտված են մետաղային հատկությունները:

Տեղուրի կլարկը երկրակեղեսում 0.001 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ.տ) քրու՝ 0.001, նստվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 0.01; գերիխմքային, հիմքային, միջին կազմի ապարների համար տվյալները բացակայում են:

Տեղուրը խիստ քունավոր տարր է (I-ին – II-րդ կարգի վտանգավորություն): Թ-ԱԿ_{աց}- TeO₂-0.01 մլգ/մ³, Թ-ԱԿ_{մօ}- TeO₂-0.5, Te – 0.01 մլգ/մ³, Թ-ԱԿ_զ- Te 0.0001 մլգ/մ³ է:

Համաշխարհային հաստատված պաշարները (առանց ԱՊՀ երկրների) կազմում են 32 հազ. տ, տարեկան արտադրանքը – 300 տ: Առավել խոշոր արտադրողներն են՝ Շապոնիան, Կանադան, Բելգիան, ԱՄՆ, Ֆիլիպինները:

ԱՊՀ երկրներում տեղուրի պաշարների 76% պատկանում է Ռուսաստանին:

Կիրառման բնագավառները (%): պողպատաձուլական արտադրության մեջ – 80, համաձուլվածքներում որպես հակակոռզիտ և ամրացնող խառնուրդներ – 12, լազերային և ինքրակարմիր տեխնիկայում, կիսահաղորդիչների մեջ-8:

Հայտնի են տեղուր պարունակող 108 միներալներ: Նրանց մեջ գերակշռում են խալկոծիները, միջմետադիները, օքսիդները: Արդյունաբերական նշանակություն ունեն տեղուր պարունակող միներալները՝ խալկոպիրիտը և գալենիտը:

Տեղուրը չի առաջացնում իր հանքավայրերը, այլ գտնվում է օգտակար հանածոների այլ տեսակների հանքավայրերում:

Տեղուր պարունակող հանքավայրերի արդյունաբերական տեսակներն են՝ պղինձ-հրաքարային, պղինձ-նիկելային, պղինձ-մոլիբդենային, հրաքար-բազմամետաղային:

Հանքավայրերի երկրաբանական կառուցվածքի բարդության խումբը որոշվում է եիմնական հումքի տեսակով:

Տեղուրի հանքավայրերը ըստ պաշարների (տ) դասակարգվում են՝ շատ խոշոր – տասնյակ հազար, խոշոր – հազարվոր, միջին – հարյուրավոր, փոքր – տասնյակ, մանր – միավոր:

Տեղուր պարունակող արդյունաբերական հումք են հանդիսանում պղնձի, նիկելի, կապարի և ցինկի խտանյութերը:

Հանքավայրերը մշակվում են քաց, ստորգետնյա և համակցված եղանակներով:

Հանքաքարի վերամշակման նախապատրաստումը ընթանում է նրա մանրացմամբ, հարուստ հանքաքարի տեսակավորմամբ, աղքատ հումքի հարստացման համակցված տեխնոլոգիաների կիրառմամբ:

Տեղուրի կորզումը պղնձի, ցինկի, և այլ խտանյութերի մեջ կազմում է մինչև 45%, խտանյութում տոկոսի մի քանի հարյուրերորդական պարունակությամբ:

Տեղուր պարունակող խտանյութերը մշակվում են քիմիական մաքրման և վերաբյուրեղացման գոտիների եղանակներով:

Տեղուրի կորզումը մետալուրգիական արտադրության ժամանակ էլեկտրոլիզի խարամների մեջ հասնում է 90%:

Ապրանքային արտադրանքը պարունակում է մինչև 99.98% Te: Տեղուրում վտանգավոր խառնուրդներն են՝ Cu, Zn, S:

Սկանդիում (Sc, III, 21)

Մետաղ, արծաքափայլ-սպիտակ, փափուկ: Հանդես է բերում ամֆոտեր հատկություններ, լիքոֆիլ է, կայուն վալենտականությունը՝ 3^+ :

Խտությունը $2989 \text{ կգ}/\text{մ}^3$, կարծրությունը ըստ Բրինելի՝ $736-1200$ ՄՊա, հալման ջերմաստիճանը 1541°C , եռմանը՝ 2831°C , ջերմահաղորդականությունը $15.8 \text{ Վտ}/(\text{մ.Կ.})$, տեսակարար էլեկտրական դիմադրությունը $61.0 \cdot 10^{-8} \text{ Ohm}^{-1}\text{m}^{-1}$, տեսակարար մազնի-

սական ընկալունակությունը՝ $8.8 \cdot 10^{-8}$ մ³/կգ, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $10.0 \cdot 10^{-6}$ Կ⁻¹:

Սկանդիումի կլարկը երկրակեղևում 10 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ/տ). գերիշմքային՝ 5, հիմքային՝ 4, միջին՝ 2.5, թթու՝ 3, նստվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 10:

Սկանդիումը խիստ բունավոր տարր է (III-րդ կարգի վտանգավորություն): ԹՄԿ_{ազ}-ն 4 մգ/մ³ է: Բնահողում բնական պարունակությունը՝ 4.0-33 գ/տ:

Սկանդիումի համաշխարհային պաշարները 2.4 հազ.տ, տարեկան արտադրանքը (առանց ԱՊՀ երկրների) կազմում է 0.8-1տ: Առավել խոշոր արտադրողներն են՝ ԱՄՆ, Նորվեգիան, Բրազիլիան:

Կիրառման հիմնական բնագավառներն են. սկանդիումայումինային համաձուլվածքներ, սնդիկային լապտերներ, լազերներ, հատուկ խեցեգործություն:

Հայտնի են սկանդիումի հինգ միներալներ՝ սիլիկատներ և ֆոսֆատներ: Արդյունաբերական նշանակություն ունեն բուն սկանդիումային միներալ տորտվեյտիտը և սկանդիում կուտակող միներալները՝ օրսիդներ, սիլիկատներ, ֆոսֆատներ:

Սկանդիումի ինքնուրույն հանքավայրեր չկան:

Սկանդիում պարունակող հանքավայրերի արդյունաբերական տեսակներն են. մագմայածին, կարրոնատային, պեզմատիտային, սկառնային, գրեյզենային, ալբիտիտային, մետամորֆածին, արտածին: Առավել նշանակություն ունի վերջին տեսակը:

Հատ սկանդիումի պաշարների (տ) հանքավայրերը դասակարգվում են՝ առավել խոշոր – հարյուր հազարավոր, խոշոր – տասնյակ հազարավոր, միջին – հազարավոր, փոքր – հարյուրավոր և տասնյակ:

Սկանդիում պարունակող արդյունաբերական հանքավայրերն են. երկարահանքային (պիրոքսենիտներում և հորբլենդիտներում), տիտանային (գարբրոիդներում), հազվագյուտ հողային (պեզմատիտներում), վոլֆրամ-անագային (գրեյզեններում), ուրանարեր (մետաստատիտներում և խառնաքարերում), հողմնահարման կեղևի (կարրոնատներում և գարբրոիդներում), ցրնային, բորսիտային, ֆոսֆատային:

Տարբեր տիպի հանքաքարերում սկանդիտումի պարունակությունը տատանվում է 0.0001-0.06% միջակայքում:

Հանքավայրերը մշակվում են հիմնական օգտակար հանածոյին հարակից:

Սկանդիտում ստանում են հարակից՝ որանային հարստացված լուծույթներից, տիտանային հանքաքարերից, վոլֆրամի և անագի արտադրական խարամներից, վոլֆրամային խտանյութերի մշակման սորախցուկից, տիտանային հանքաքարի քլորացված լողունից և ցիրկոն պարունակող հումքի կրաքլորիդային վերամշակման լուծույթներից:

Սկանդիտումի կորզումը հանքաքարերի տարբեր տեսակներից կազմում է 70-90%, խտանյութում նրա 0.1-5% պարունակությամբ:

Սկանդիտումի խտանյութերը վերամշակվում են հեղուկային մղման և նստեցման տարբեր մեթոդներով՝ հետագա օքսալատային շիկացմամբ:

Ապրանքային արտադրանքը՝ սկանդիտումի օքսիդների ձևով, պարունակում է 99.0-99.9% Sc_2O_3 : Սկանդիտումի օքսիդների մեջ վճառակար խառնուրդներ են. լանքանիդների օքսիդները, Ni, Mn, Co, Cr, V, Fe, Th:

Ստրոնցիում (Sr, II, 38)

Արծաթափայլ-սպիտակ, փափուկ մետաղ: Հանդես է բերում հիմնային հատկություններ, լիքոֆիլ է, կայուն վալենտականությունը՝ 2^+ :

Խտությունը $2540 \text{ կգ}/\text{մ}^3$, կարծրությունը Մոոսի սանդղակով՝ 1.8, հալման ջերմաստիճանը 769°C , եռմանը՝ 138°C , ջերմահաղորդականությունը $35.3 \text{ Վտ}/(\text{մ.Կ.})$, տեսակարար էլեկտրական դիմադրությունը $23.0 \cdot 10^{-8} \text{ Ohm}^{-1}\text{m}^{-1}$, տեսակարար մագնիսական ընկալունակությունը՝ $1.32 \cdot 10^{-8} \text{ մ}^3/\text{կգ}$, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը $23 \cdot 10^{-6} \text{ Կ}^{-1}$:

Ստրոնցիումի կլարկը երկրակեղևում 340 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ.տ) գերիշմքային՝ 10, հիմքային՝ 440.0, միջին՝ 800.0, քրու՝ 300, նստվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 450:

Ստրոնցիումը բունավոր տարր է (II-րդ - IV-րդ կարգի վտանգավորություն): Ստրոնցիումի միացությունների ԹՄԿ_{wq}-ն 1.0-6.0 մլգ/մ³ է, ստրոնցիումի ԹՄԿ_g-ն - 7.0 մգ/լ, բնահողում բնական պարունակությունը 130-500 գ/տ է:

Ստրոնցիումի համաշխարհային հաստատված պաշարները (առանց ԱՊՀ երկրների) մոտ 7 մլն. տ, տարեկան արտադրությունը կազմում է մոտ 200.0 հազ.տ SrO: Առավել խոշոր արտադրողներն են՝ Գերմանիան, ճապոնիան, ԱՄՆ, Մեքսիկան, Թուրքիան, Իրանը, Ալժիրը: Ուստաստանը ստրոնցիումի պաշարներով աշխարհում գրավում է առաջին տեղը:

Կիրառման հիմնական բնագավառներն են. հեռուստացույցների կինոսկզբանների, խեցեգործական ֆերոմագնիսների, էլեկտրաքիմիական արդյունաբերության մեջ, ռադիո-և լուսատեխնիկայում, լյումինոֆորների արտադրության մեջ, պիրոտեխնիկայում, պողպատի հալման ժամանակ որպես ֆլյուսային հավելանյոթ, տիտանային համաձուլվածքներում, մետաղների ուաֆինացման, հատուկ ապակիների, բարձր հրակայուն խեցեգործության, ներկերի և լաքերի պատրաստման, ռետինի լցուկների, բժշկության, շպարանյոթերի մեջ:

Հայտնի են ստրոնցիումի 55 միներալներ: Նրանց մեջ գերակշռում են ֆոսֆատները, կարբոնատները, բորատները, սիլիկատները: Արդյունաբերական նշանակություն ունեն 2 միներալ՝ ցելեստինը և ստրոնցիանիտը:

Հանքավայրերի արդյունաբերական տեսակները. հազվագյուտմետաղա-ֆոսֆատային, ցելեստինային կոնկրեցիային, ցելեստինային և ցելեստին-բարիտային (ստրատիֆորմային), ցելեստին պարունակող ծծմբային: Առավել նշանակություն ունեն հազվագյուտամետաղա-ֆոսֆատային և ցելեստինային կոնկրեցիային տեսակները:

Հատ երկրաբանական կառուցվածքի բարդության ստրոնցիումի հանքավայրերը պատկանում են առաջին, երկրորդ և երրորդ խմբերին:

Հատ ստրոնցիումի պաշարների (հազ.տ.) հանքավայրերը դասակարգվում են՝ շատ խոշոր - ավելի քան 1000, խոշոր - 1000-400, միջին - 400-100, փոքր - 100-ից պակաս: Որոնման և հետախուզման առանձնահատկությունները կայանում են հանքավայրի

բնական տեղադրման և ստրոնցիում պարունակող ապարների ռենտգենառադիոմետրիկ էքսպրես նմուշարկման կիրառման արդյունավետության մեջ:

Արդյունաքարերական հանքաքարերը ապատիտային, ցելեստինային, ծծմբային:

SrO միջին պարունակությունը հանքաքարերում կազմում է (%) ապատիտ-հազվագյուտ մետաղային 2-3 (ապատիտի խտանյութում), ցելեստինային (կոնկրեցիային) – 6-8, ցելեստինային և ցելեստին-բարիտային (ստրատիֆորմային) – 20-40, ծծմբացելեստինային – 1-1.5:

Հանքավայրերը մշակվում են առավելապես քաց եղանակով: Հանքաքարի նախապատրաստումը վերամշակման ընթացում է գրավիտացիայի և ֆլոտացիայի տեխնոլոգիաների օգտագործմամբ:

Ստրոնցիումի կորզումը հանքաքարերի տարրեր տեսակներից կազմում է 75-85%, խտանյութում 80-96% SrCO_3 պարունակությամբ:

Խտանյութում վճասակար խառնուրդների թվին են պատկանում կալցիումի սուլֆատը, երկարը:

Ստրոնցիումի խտանյութերը վերամշակվում են հիդրոմետալուրգիական եղանակով:

Ապրանքային արտադրանքը արտադրվում է ածխա-, ֆոսֆորա-, ազոտա- և քրոմաբթվային ստրոնցիումի տեսքով 85-96% SrCO_3 -ի, 99.3% $\text{Sr}(\text{NO}_3)_2$ -ի, 97.5% SrCrO_4 -ի պարունակություններով:

Վճասակար խառնուրդները ապրանքային արտադրանքում՝ CaCO_3 , BaCO_3 , Fe_2O_3 , Na_2CO_3 , SO_3 , Cl , P_2O_5 , $\text{Ca}(\text{NO}_3)_2$, Cu :

Մետաղական ստրոնցիումը ստացվում է ալյումարեմիայով: Նրանում ստրոնցիումի պարունակությունը 99.5%-ից ավելի է:

Թալիում (Tl, III, 81)

Մետաղ, արծաթափայլ-մոխրագույն, փափուկ: Հանդես է բերում ալկալային հատկություններ, լիթո- և խալկոֆիլ է, վալենտականությունները՝ 1^+ և 3^+ :

Խտությունը $11850 \text{ կգ}/\text{մ}^3$, կարծրությունը ըստ Բրինելլի՝ 25-
44.7 ՄՊա, հալման ջերմաստիճանը 303°C , եռմանը՝ 1457°C , ջեր-
մահաղորդականությունը 46.1 Վտ/(մ.Կ.), տեսակարար էլեկտրա-
կան դիմադրությունը $18.0 \cdot 10^{-8}$ Օհմ մ, տեսակարար մազնիսական
ընկալունակությունը՝ $3.13 \cdot 10^{-9} \text{ մ}^3/\text{կգ}$, գծային ընդարձակման ջերմ-
աստիճանային գործակիցը՝ $28 \cdot 10^{-6} \text{ Կ}^{-1}$:

Թալիումի կլարկը երկրակեղևում 1 գ/տ է: Նրա միջին պա-
րունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում
(գ.տ). գերիշմքային՝ 0.01, հիմքային՝ 0.2, միջին՝ 0.5, բթու՝ 1.5,
նստվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 1.0:

Թալիումը խիստ բունավոր տարր է (I-ին կարգի վտանգա-
վորություն): Թ-ՍԿ_{ազ}-ն $0.01 \text{ մգ}/\text{մ}^3$, Թ-ՍԿ_{մո}- 0.0004 ; Թ-ՍԿ_զ- 0.0001
մլգ/լ է: Բնահողում բնական պարունակությունը – $0.1\text{-}0.6$ գ/տ:

Ցինկի հանքաքարերում թալիումի համաշխարհային պա-
շարները (առանց ԱՊՀ երկրների) կազմում են 644 տ, արդյուն-
ահանգող – 377, տարեկան արտադրանքը – 15-16 տ: Առավել
խոչը արտադրողներն են՝ Կանադան, Սեքսիկան, Ավստրալիան,
ճապոնիան, Բելգիան:

ԱՊՀ երկրներում թալիումի արտադրությունը կենտրոնաց-
ված է Ղազախստանում: Ուսուաստանում թալիումի պաշարները
գերազանցում են համաշխարհային պաշարներին:

Կիրառման բնագավառները (%): Կիսահաղորդիչների ար-
տադրություն – 70, դեղագործական արդյունաբերություն – 10,
ապակիների, ներկանյութերի, առանցքակալերի արտադրության
մեջ, համաձուլվածքներում և այլ ոլորտներում – 20:

Հայտնի են թալիումի 36 միներալներ: Նրանց մեջ գերա-
կշռում են խալկածինները: Արդյունաբերական նշանակություն
ունեն թալիում պարունակող գալենիտը, սֆալերիտը, երկ-
սուլֆիդային միներալները, 150-200 գ/տ թալիումի պարունակու-
թյամբ:

Թալիումը ինքնուրույն հանքավայրեր չի առաջացնում, այլ
գտնվում է տարբեր տեսակի օգտակար հանածոների հանքա-
վայրերի կազմում:

Թալիում պարունակող հանքավայրերի արդյունաբերա-
կան տեսակներն են. շերտածե (կարբոնատային և տերիզեն կար-
բոնատային ապարների մեջ), հրաբխանստվածքային (մետամոր-

ֆային, հրաբխածին և տերիզեն հաստվածքներում), մետասոմատիկ (կրաքարերում և սկառներում):

Ըստ թալիումի պաշարների (ա) հանքավայրերը դասակարգվում են՝ թափական խոշոր – 2500-ից ավելի, խոշոր – 2500-500, միջին – 500-50, փոքր – 50-ից պակաս:

Թալիում պարունակող արդյունարերական հանքաքարերը. կապար-ցինկային, պղնձային և պղինձ-հրաքարային, ծծմբահրաքարային:

Հանքաքարի նախապատրաստումը վերամշակման ընթանում է թալիում պարունակող հանքաքարերի հիմնական տիպերի հարստացման տեխնոլոգիայով:

Թալիումի կորզումը հանքաքարերի տարրեր տեսակներից կազմում է 5-90%՝ խտանյութում նրա 4-25 գ/տ պարունակությամբ:

Սետալուրգիական արտադրության ժամանակ թալիումը կուտակվում է այրման, հալման և քորման փոշիներում Tl_2 և $TlCl$ տեսքով:

Փոշիները մշակվում են հիդրո- և էլեկտրամետալուրգիական եղանակներով:

Ապրանքային արտադրանքը պարունակում է 99.9-99.9999% թալիում: Թալիումում վնասակար խառնուրդներ են. Pb , Cd , Cu , Zn , Fe :

Տանտալ (Ta, V, 73)

Սետաղ, արծաքափայլ, փափուկ: Հանդես է թերում ամֆոտեր հատկություններ, սիներո- և լիքոֆիլ է, կայուն վալենտականությունը՝ 5^+ :

Խտությունը 16654 կգ/ m^3 , կարծրությունը ըստ Բրինելլի՝ $400-1230$ ՄՊա, հալման ջերմաստիճանը 2996^0C , եռմանը՝ 5425^0C , ջերմահաղորդականությունը 57.5 Վտ/(մ.Կ.), տեսակարար էլեկտրական դիմադրությունը $12.45 \cdot 10^{-8}$ Օհմ մ, տեսակարար մագնիսական ընկալունակությունը՝ $1.07 \cdot 10^{-8}$ $m^3/\text{կգ}$, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $6.6 \cdot 10^{-6}$ Կ $^{-1}$:

Տանտալի կլարկը երկրակեղեսում 2.5 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում

(գ.տ) գերհիմքային՝ 0.018, հիմքային՝ 0.48, միջին՝ 0.7, ըրու՝ 3.5, նստվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 3.5:

Թալիումը բունավոր տարր է (IV-րդ կարգի վտանգավորություն): ԹՍԿ_{ազ}-ն Տա և Ta_2O_3 -10 մգ/մ³ է:

Համաշխարհային հաստատված պաշարները (առանց ԱՊՀ երկրների) կազմում են մոտավորապես 75 հազ. տ Ta_2O_5 , տարեկան արտադրանքը կազմում է 350 տ մետաղ: Առավել խոշոր արտադրողներն են՝ Ավստրալիան, Չինաստանը, Բրազիլիան, Թալիանդը, Մալազիան:

Տանտալը օգտագործում են առավելապես ուղիղութեակտրնիկայուն, մետաղանշակման արդյունաբերության մեջ որպես մետաղակտրիչ, քիմիական, ավիատիեզերական և բժշկական արդյունաբերության մեջ:

Հայտնի են տանտալի ավելի քան 50 միներալներ: Նրանց մեջ գերակշռում են օքսիդները: Արդյունաբերական նշանակություն ունեն պիրոքզիրի, տիտանատանտալանիորատների, անագատանտալատների, տանտալանիորատների խմբերի 15 միներալներ:

Հանքավայրերի արդյունաբերական տեսակները ներծին պեզմատիտային, մազմայածին, կարբոնատային, արտածին – մնացորդային հողմնահարման կեղևի և ցրոնային: Առավել նշանակություն ունեն ներծին տեսակները և ցրոնները:

Ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության տանտալի հանքավայրերը պատկանում են երկրորդ, երրորդ և չորրորդ խմբերին:

Ըստ Ta_2O_5 պաշարների (հազ.տ) տանտալի հանքավայրերը դասակարգվում են՝ եզակի - ավելի քան 100, խոշոր – 100-30, միջին – 30-4, փոքր – 4-ից քիչ:

Որոնման և հետախուզման առանձնահատկությունները կայանում են ուղիղակտիվ մեթոդների արդյունավետ օգտագործման մեջ:

Արդյունաբերական հանքաքարերն են. տանտալիտային, վողժինիտ-տանտալիտային, միկրոլիտային, լոպարիտային: Ըստ Ta_2O_5 -ի պարունակության (%) հանքաքարերը դասակարգվում են. շատ հարուստ՝ 0.4-ից բարձր, հարուստ՝ 0.4-0.25, միջին՝ 0.25-0.1, աղքատ՝ 0.1-0.01:

Հանքավայրերը մշակվում են բաց, ստորգետնյա և համակցված եղանակներով:

Հանքաքարի հարստացումը կատարվում է համակցված տեխնոլոգիաների (գրավիտացիա, ֆլոտացիա, մագնիսական և էլեկտրական տարանջատում) կիրառմամբ:

Տանտալի կորզումը հանքաքարերի տարրեր տեսակներից կազմում է 95%, խտանյութում մինչև 70% Ta_2O_5 -ի պարունակությամբ:

Խտանյութում վնասակար խառնուրդներին են պատկանում ֆոսֆորը, ծծումբը, կայծքարահողը, տիտանի օքսիդը: Համալիր կազմի հանքաքարերի հարստացման ժամանակ հարակից ստանում են անագային, ցիրկոնային, ոսկի պարունակող խտանյութեր: Տանտալային և տանտալ պարունակող խտանյութերը վերամշակվում են հիդրոմետալուրգիական, քլորիդաքրոման և մետալուրգիական եղանակներով:

Ապրանքային արտադրանքը պարունակում է (%): Տանտալի պենտոքսիդ - 99.9 Ta_2O_5 , կալիումի ֆոտրտանտալատը - 45.5-ից ավելի Ta , մետաղական տանտալը - 99.9 Ta :

Խտանյութում՝ ուղեկցվող նիորիումը, անցնում է հիդրոմետալուրգիական խտանյութ, որտեղից նրան կորզում են լուծահանման և այլ եղանակներով:

Տանտալի արտադրանքում վնասակար խառնուրդներն են W , Fe , Co , Si , Mn , Cu , Mo , Ni , Pb , Cr , V , Nb , Al , Ti , Ca , Mg :

Ցեզիում (Cs , I, 55)

Անտաղ, ոսկեգույն, փայլուն, փափուկ: Հանդես է բերում ալկալային հատկություններ, լիքոֆիլ է, փակենտականությունը՝ 1^+ :

Խտությունը $8240 \text{ կգ}/\text{մ}^3$, կարծրությունը ըստ Բրինելի՝ $186\text{-}300 \text{ U}^{\text{Պ}}$, հալման ջերմաստիճանը 799°C , եռմանը՝ 3426°C , ջերմահաղորդականությունը $11.4 \text{ Վտ}/(\text{մ.Կ.})$, տեսակարար էլեկտրական դիմադրությունը $7.3 \cdot 10^{-8} \text{ Ohm}^{-1}$, տեսակարար մագնիսական ընկալունակությունը՝ $2.17 \cdot 10^{-7} \text{ Ա}^2/\text{կգ}$, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $8.5 \cdot 10^{-6} \text{ Կ}^{-1}$, ջերմային նեյտրոնների ընդգրկման մակերևույթը՝ $29 \cdot 10^{-28} \text{ մ}^2$:

Ցեզիումի կլարկը երկրակեղեռում 4 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ.տ.) գերիշմքային՝ 0.1, հիմքային՝ 1.0, միջին և բրու՝ 5.0, նըստվածքային (կավեր և թերքաքարեր)՝ 12.0:

Ցեզիումը խիստ քունավոր տարր է (I-ին – II-րդ կարգի վտանգավորություն): ԹՄԿ_{ագ}-ն AsCs_3 - 0.03 մլգ/մ³, հիդրօքսիդ՝ 0.3, ԹՄԿ_{աց} փոշու-1.0; ԹՄԿ_{մօ} փոշու - 0.1 մլգ/մ³: Բնահողում բնական պարունակությունը – 2.9-3.7 գ/տ:

Ցեզիումի համաշխարհային պաշարները (առանց ԱՊՀ երկրների) կազմում են մոտավորապես 315 հազ.տ, տարեկան արտադրությունը՝ մոտ 10 տ: Առավել խոշոր արտադրողներն են՝ Կանադան, ԱՄՆ, Անգլիան, Գերմանիան:

Ուստաստանում ցեզիումի պաշարները կազմում են համաշխարհային և ԱՊՀ երկրների պաշարների 99%:

Կիրառման բնագավառները (%): օգտագործման նոր ոլորտներ – 66, էլեկտրոնային տեխնիկա - 23, քիմիական արդյունաբերություն – 11:

Հայտնի է ցեզիումի 15 միներալներ: Նրանց մեջ գերակշռում են սիլիկատները և ալյումասիլիկատները: Արդյունաբերական նշանակություն ունեն պոլուցիտը, սպորումները, ցինվալիտը, մուսկովիտը, լեպիդոլիտը, բերիլը, միկրոկլինը, նեֆելինը:

Ցեզիումը սեփական հանքավայրեր չի առաջացնում, այլ գտնվում է այլ տեսակի հումքի հանքավայրերում:

Ցեզիում պարունակող հանքավայրերի արդյունաբերական տեսակներն են՝ հազվագյուտ մետաղային – պեզմատիտային, ապատիտ – նեֆելինային:

Հատ Cs_2O պաշարների (հազ.տ.) հանքավայրերը ստորաբաժանվում են. եզակի – 50-25, առավել խոշոր – 25-10, խոշոր – 10-3, միջին – 3-1, մանր – 1-0.1:

Որոնման և հետախուզման աշխատանքների առանձնահատկությունները պայմանավորված են հորատանցքերի գամմակարոտածի և գամմա-հանույթի (աէրո- և հետիոտն) օգտագործման բարձր արդյունավետությամբ:

Արդյունաբերական հանքավայրերը ստորաբաժանվում են պոլուցիտ պարունակող և համալիր ցեզիում-ոռորիդիտումային (պոլուցիտային և փայլարային):

Cs_2O պարունակությամբ (%) հանքաքարերը բաժանվում են. հարուստ – 0.6-0.1, աղքատ – 0.1-0.001, շատ աղքատ – 0.001-0.0003:

Հանքավայրերը շահագործվում են բաց և, հազվադեպ, ստորգետնյա եղանակներով:

Վերամշակման համար հանքաքարի նախապատրաստումը ընթանում է հարուստ ֆրակցիայի անջատման և աղքատ հումքի ֆլոտացիոն հարստացման տեխնոլոգիայի օգտագործման ճանապարհով:

Cs_2O կորզումը տարրեր տեսակի հանքաքարերից կազմում է 65-85%՝ խտանյութում նրա 85% և ավելի պարունակությամբ:

Հարուստ ֆրակցիան և ֆլոտացիայի խտանյութերը վերամշակվում են հիդրոմետալուրգիական եղանակով:

Ապրանքային հիդրոմետալուրգիական խտանյութը (մկրն-դեղաքրվային ցեղիում) պարունակում է 99%-ից ավել Cs_2O : Մետաղական ցեղիում ստանում են մետաղաքերմիայով:

Սկնդեղաքրվային ցեղիումի վճասակար խառնուրդներն են Al , Cr , Ti , V , Co , Ni , Cu , Pb , Sn , Mn և Fe , իսկ մետաղական ցեղիումինը՝ Na , Pb , K :

Ցիրկոնիում (Zr , IV, 40)

Մետաղ, արծաթափայլ, կարծր: Հանդես է բերում հիմնային հատկություններ, լիբոֆիլ է, կայուն վալենտականությունը՝ 4^+ :

Խտությունը $6506 \text{ կգ}/\text{մ}^3$, կարծրությունը ըստ Բրինելի՝ $638-687 \text{ ՄՊա}$, հալման ջերմաստիճանը 1852°C , եռմանը՝ 4377°C , ջերմահաղորդականությունը $22.7 \text{ Վտ}/(\text{մ.Կ.})$, տեսակարար էլեկտրական դիմացքությունը $42.1 \cdot 10^{-8} \text{ Ohm} \text{ մ}$, տեսակարար մազնիսական ընկալունակությունը՝ $1.68 \cdot 10^{-8} \text{ մ}^3/\text{կգ}$, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $5.78 \cdot 10^{-6} \text{ Կ}^{-1}$: Կորոզիակայուն է:

Ցիրկոնիումի կլարկը երկրակեղեսում 170 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ.տ.) գերիմքային՝ 30, հիմքային՝ 100, միջին՝ 260, քրու՝ 200, նստվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 200:

Ցիրկոնիումը խիստ քունավոր տարր է (II-րդ-III-րդ կարգի վտանգավորություն): Թ.ՄԿ_{wq}-ն $Zr - 6.0 \text{ մլգ}/\text{մ}^3$ է, ցիրկոնիումի նիտ-

րիդում – 4.0, ֆոտրցիրկոնատներում – 1.0 մլ/մ³, ԹՍԿ_{δω}-Zr⁴⁺ – 0.07մլգ/լ: Բնահողում բնական պարունակությունը 180-500 գ/տ:

Ցիրկոնիումի համաշխարհային հաստատված պաշարները կազմում են մոտ 52 մլն. տ ZrO₂: Տարեկան արտադրությունը՝ մոտ 7 հազ.տ: Առավել խոշոր արտադրողներն են՝ Ավստրալիան, ՀԱՀ-ն:

Ուստատանի պաշարները կազմում են ԱՊՀ երկրների պաշարների 60%:

Կիրառման բնագավառները (%)։ Իրակայուն նյութերի արտադրության մեջ – 60, խեցեգործական իրերի պատրաստում – 17, պողպատաձուլման ճյուղերում – 13, այլ բնագավառներում – 10:

Հայտնի են ցիրկոնիումի 60 միներալներ: Նրանց մեջ գերազանցում են սիլիկատները և օքսիդները: Արդյունարերական նշանակություն ունեն երկու միներալ՝ ցիրկոն և բաղդելեիտ:

Հանքավայրերի արդյունարերական տեսակներն են. առավինյա-ծովային. մոտակա բերվածքի, գրունները, հազվագյուտ մետաղային, ալկալազրանիտային, ագվախտ-նեֆելին-սիենիտային, կարրոնատային, ալկալային գրանիտների հողմնահարման կեղևի: Առավել հետաքրքրություն են ներկայացնում առավինյա-ծովային գրունները:

Ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության ZrO₂ հանքավայրերը դասվում են առաջին և երկրորդ խմբերին:

Ըստ պաշարների (մլն.տ) ցիրկոնիումի հանքավայրերը դասակարգվում են. եզակի – ավելի քան 10, խոշոր – 10-1, միջին – 1-0.1, մանր – 0.1-0.01:

Հետախուզման և որոնման առանձնահատկությունները կայանում են աէրո- և վերգետնյա գամմա-սպեկտրաչափական, լիքորիմիական մեթոդների, հորատանցքերի կարուտածի կիրառման արդյունավետության մեջ:

Արդյունարերական հանքավայրերն են. արտածին՝ ցիրկոնային, բաղդելեիտային, ներծին՝ ցիրկոն-պիրոքտրային, ցիրտոն-կոլոմբիտային, բաղդելեիտային, էվդիալիտային:

ZrO₂ պարունակությամբ (%) հանքավայրերը ստորաբաժնվում են. հարուստ – 3-ից ավելի, շարքային – 3-1.5, աղքատ – 1.5-0.5:

Հանքավայրերը շահագործվում են բաց եղանակով, ընդունում արմատական հանքաքարի շահագործումը ընթանում է հորատապայթեցման աշխատանքներով, իսկ ավազների շահագործումը իրականացվում է առանց դրանց:

Հանքաքարի նախապատրաստումը վերամշակման ընթանում է հարստացման համակցված ճյուղավորված (վացում, գրավիտացիա, էլեկտրական և մագնիսական տարանջատում, թրծում, երրեմն ֆլոտացիա) տեխնոլոգիաների կիրառմամբ:

Տարբեր տեսակի հանքաքարերից ZrO_2 կորզումը խտանյութի մեջ կազմում է մինչև 95%, նրա 62-66% պարունակությամբ: Խտանյութում վնասակար խառնորդներին են պատկանում. Fe_2O_3 , TiO_2 , Al_2O_3 , P_2O_5 , $Th+U$:

Համալիր կազմի հանքաքարի հարստացման ժամանակ հարակից ստանում են պղնձի, մագնետիտի խտանյութեր և ուրանյին նյութեր:

Ցիրկոնային խտանյութերը վերամշակվում են քլորացմամբ, հեղուկամղմամբ, մետաղաբերմիայով, էլեկտրոլիզով և էլեկտրաճառագայթային գոտիներով առանց տիգելային ձուլման, կոտորակված բյուրեղացմամբ:

Ապրանքային արտադրանքը պարունակում է մինչև 99.9999 % Zr : Խտանյութում ուղեկցվող տարրը (հաֆնիում) անցնում է ցիրկոն պարունակող արտադրանքի մեջ, որից նրան կորզում են ֆոտորահաֆնիտների և ֆոտորացիրկոնատների կոտորակային բյուրեղացմամբ:

Ցիրկոնումում վնասակար խառնորդներն են. Ti , Fe , Mn , Cu , SiO_2 , Hf , P :

Գլուխ 5. ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ՀՈՂԵՐ (ԼԱՆԹԱՆՈՒԴՆԵՐ)

Լանդհանուր տեղեկություններ: Լանթանիդները (15 քիմիական տարր) խտրիումի հետ միասին կազմում են հազվագյուտ հողային տարրերի (հազվագյուտ հողերի – TR) խումբը: Պարբերական համակարգում լանթանիդներն ընդգրկվում են III-րդ խմբի մեջ և ունեն 57-ից մինչև 71 ատոմական համարներ:

Լանթանից մինչև լուսեցիում՝ ատոմների և իոնների շառավիղների նվազմանը զուգընթաց, տեղի է ունենում հազվագյուտ հո-

դերի հիմնայնության նվազում, աղերի լուծելիության, կոմպլեքսային աղերի կայտնության փոփոխություն: Հազվագյուտ հողային մետաղները (ՀՀՄ) ունեն բարձր քիմիական ակտիվություն և համեմատաբար ցածր ջերմաստիճաններում փոխազդեցության մեջ են մտնում համարյա բոլոր տարրերի հետ:

Սունձնացվում են երկու ենթախմբեր. թերև լանթանոիդներ (կամ ցերիում-հողային) և ծանր լանթանոիդներ (կամ իտրիում-հողային): Անջատումը կատարվում է նեոդիմ-սամարիում տարրերով:

Հազվագյուտ հողերի համաշխարհային հաստատված պաշարները (առանց ԱՊՀ երկրների) գնահատվում է 100 մլն.տ ՀՀՄ (հազվագյուտ հողերի օրսիդներ): Տարեկան արտադրությունը (առանց ԱՊՀ երկրների) կազմում է 60-80 հազ.տ հազվագյուտ հողերի օրսիդներ (ՀՀՕ): Հիմնական արտադրողներն են Չինաստանը և ԱՄՆ:

ՀՀՕ-ի (հազվագյուտ հողերի մետաղներ) կիրառման առավել լայն բնագավառներն են. կատալիզ նավթի կրեկինգում, մետալուրգիա, ապակու և խեցեգործության արտադրություն, գյուղատնտեսություն:

Հայտնի են մոտ 120 հազվագյուտ հողային միներալներ: Արդյունաբերական նշանակություն ունեն վեց միներալ՝ լոպարիտ, մոնացիտ, քենոտիմ, բատմեզիտ, իտրոսինիզիզիտ և իտրիում պարունակող ճենակավաքար և ապատիտ:

ՀՀՄ հանքավայրերի արդյունաբերական տեսակները՝ գերազանցապես համալիր հազվագյուտ մետաղային և մասամբ՝ բուն հազվագյուտ հողերի:

Ցերիում-հողային հանքավայրերի առավել կարևորագույն տեսակներին են պատկանում ալկալային սիենիտների կարբոնատիտները, լոպարիտի հետ համակցված ուրտիտները և նալինիտները: Արտածին հանքավայրերի թվին է պատկանում ալկալային սիենիտների հողմնահարման կեղեկը:

Իտրիում-հողային հանքավայրերի շարքում առաջատար տեսակներին են պատկանում հազվագյուտ հողային ալկալային գրանիտները և նրանց մետասոմատիտները, հողմնահարման կեղեկի հիդրոքրմալ լվացման, ուրանաբեր խառնաքարերը, առավ-

նյա ծովային ցրոնները, օրգանածին-նստվածքային առաջացումները:

Հստ երկրաբանական կառուցվածքի բարդության հազվագյուտ հողերի հանքավայրերը պատկանում են առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ խմբերին:

Հստ ՀՀՕ-ի պաշարների (հազ.տ) ցերիումային հողերի հանքավայրերը դասակարգվում են. շատ խոշոր – ավելի քան 10000, խոշոր – 10000-1000, միջին – 1000-100, փոքր – 100-ից պակաս:

Հանքաքարերի արդյունաբերական տեսակները՝ լոպարիտային, բատճակիտային, մոնացիտային, ապատիտային, էվդիալիտային, սինիսիկիտային:

Հստ ՀՀՕ-ի պարունակության (%) հանքաքարերը դասակարգվում են. շատ հարուստ – 10-ից ավել, հարուստ – 10-5, շարքային – 5-3, աղքատ – 3-ից պակաս:

Հստ ՀՀՕ-ի պաշարների (հազ.տ) իտրիումային հողերի հանքավայրերը դասակարգվում են. շատ խոշոր – 500-ից ավել, խոշոր – 500-100, միջին – 100-10, փոքր – 10-ից պակաս:

Հանքաքարերի արդյունաբերական տեսակները՝ մոնացիտային, ապատիտային, դետրիտային, քսենոտիմային, էվդիալիտային, ռաբդոֆանիտային, չերչիտային, իտրոսինիսիկիտային, գագարինիտային, ֆերգյուտնիտային:

Հստ ՀՀՕ-ի պարունակության (%) հանքաքարերը դասակարգվում են. շատ հարուստ – 1-ից ավել, հարուստ – 1-0.5, շարքային – 0.5-0.1, աղքատ – 0.1-ից պակաս:

ՀՀՄ հանքավայրերը շահագործվում են բաց և ստորգետնյա եղանակներով:

Հանքաքարի վերամշակումը իրականացվում է հանքահարստացման՝ համակցված եղանակներով՝ գրավիտացիայի, մազմնիսական և էլեկտրական տարանջատման կիրառմամբ:

ՀՀՄ-ի կորզումը տարրեր հանքատեսակներից կազմում է 20-80%; կոլեկտիվ խտանյութում 27-70% ՀՀՕ-ի պարունակությամբ:

Համալիր կազմի հանքաքարերի հարստացման ժամանակ հարակից ստացվում են բարիտային և ֆոսֆատային նյութեր:

Հազվագյուտ հողերի կոլեկտիվ խտանյութերը մշակվում են հիդրոմետալուրգիական եղանակով և քլորացման մեթոդով՝ կոլեկտիվ խտանյութերի ստացմամբ: ՀՀՄ-ի անջատումը իրականացվում է կոտորակված բյուրեղացմամբ, նատեցմամբ, ընտրողական օքսիդացմամբ, աղերի ջերմային քայլայմամբ, իոնափոխանակմամբ, լուծահանմամբ:

ՀՀՄ-ի վերամշակման ապրանքային արտադրանք են համարվում օքսիդները՝ նրանց 99% պարունակությամբ: Օքսիդներից և քլորիդներից մետաղը ստացվում է էլեկտրաքերմիկ վերականգնման և նրանց հալոցքների էլեկտրոլիզի եղանակներով: Տեխնիկական մաքուր մետաղում տարրերի պարունակությունը կազմում է ավելի քան 97%, իսկ միշմետաղում (ցերիումի, լանթանի և նեոդիմի խառնուրդ) – մինչև 99%:

Լանթան (La, 57)

Մետաղ, արծաթափայլ-սպիտակ, փափուկ: Հանդես է քերում իհմնային հատկություններ, լիբոֆիլ է, կայուն վալենտականությունը՝ 3^+ : Մտնում է թերև (ցերիումային) լանթանոդիդների խմբի մեջ:

Խտությունը $6145 \text{ կգ}/\text{մ}^3$, կարծրությունը ըստ Բրինելի՝ $350-400$ ՄՊա: Հալման ջերմաստիճանը 921°C , եռմանը՝ 3457°C , ջերմահաղորդականությունը $13.5 \text{ Վտ}/(\text{մ.Կ.})$, տեսակարար էլեկտրական դիմադրությունը $57 \cdot 10^{-8} \text{ Ohm} \text{ մ}$, տեսակարար մազնիսական ընկալունակությունը՝ $1.1 \cdot 10^{-8} \text{ մ}^3/\text{կգ}$, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $4.9 \cdot 10^{-6} \text{ Կ}^{-1}$:

Լանթանի կլարկը երկրակեղեռում 29 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ/տ). հիմքային՝ 27, քրու՝ 60, նատվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 40: Գերիհմքային և միջին կազմի ապարների համար տվյալները բացակայում են:

Լանթանը բույլ թունավոր տարր է: $(\text{La-Gd})\text{PO}_4$ լյումինիֆորի թՄԿ_{ազ}-ն 4 $\text{մգ}/\text{մ}^3$ է, La_2O_3 ՝ 6: Բնահողում բնական պարունակությունը՝ 25-38 գ/տ:

Լանթանի համաշխարհային պաշարները (առանց ԱՊՀ երկրների) կազմում է ավելի քան 15 մլն.տ, տարեկան արտադրու-

թյունը 14 հազ.տ: Ամենախոշոր արտադրողներն են՝ Չինաստանը, ԱՄՆ, Հնդկաստանը, Բրազիլիան, ՀԱՀ: Ուստաստանում լանթանի արտադրությունը իրականացվում է Մուրմանսկի մարզի Լովոգերոյի լեռնահարստացուցիչ կոմբինատում:

Կիրառվում է օպտիկական ապակու, նիկել-հիդրատային մարտկոցների, խեցեգործական խտարարների, պողպատի և ջերմակայուն համաձուլվածքների, լումինոֆորների, մանրաթելային օպտիկայի արտադրության մեջ:

Հայտնի է լանթանով և ցերիումի խմբի այլ լանթանիդներով հարստացված 48 միներալ: Գերակշռում են սիլիկատները, կարբոնատները, ֆոսֆատները: Արդյունարերական նշանակություն ունեն 4 միներալ՝ մոնացիտը, բաստնեզիտը, լոպարիտը, ապատիտը:

Հանքհարստացման ժամանակ ՀՀՄ կորզումը տարբեր հանքատեսակներից կազմում է 60-70%՝ խտանյոթում մինչև 60% La₂O₃ -ի պարունակությամբ: Խտանյոթում վնասակար խառնուրդներ են համարվում Ca, Fe:

Համալիր կազմի հանքաքարերի հարստացման ժամանակ հարակից ստացվում են ֆոսֆատային նյոթեր:

Հիդրոմետալուրգիական վերամշակման ապրանքային արտադրանքը պարունակում է 99.89577-99.99635% La₂O₃:

Լանթանի օրոխում վնասակար խառնուրդներ են համարվում V, Mn, Ni, Ti, Cu, Cr, Ca, Fe:

Ցերիում (Ce, 58)

Սետաղ, մոխրագույն: Հանդես է բերում հիմնային հատկություններ, լիթոֆիլ է, կայուն վալենտականությունները՝ 3⁺ և 4⁺:

Ստում է թերև լանթանուրդների ենթախմբի մեջ:

Խտությունը 8240 կգ/մ³, կարծրությունը ըստ Բրինելլի՝ 186-300 ՄՊա: Հալման ջերմաստիճանը 799⁰C, եռմանը՝ 3426⁰C: Զերմահաղորդականությունը 11.4 Վտ/(մ.Կ.), տեսակարար էլեկտրական դիմադրությունը 7.3 · 10⁻⁸ Ohm մ, տեսակարար մագնիսական ընկալունակությունը՝ 2.17 · 10⁻⁷ м³/կգ, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ 8.5 · 10⁻⁶ К⁻¹:

Յերիումի կլարկը երկրակեղևում 70 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ/տ) հիմքային՝ 4.5, բրու՝ 100, նատվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 50: Գերիհմքային և միջին կազմի ապարների համար տվյալները բացակայում են:

Յերիումը թույլ թունավոր տարր է (III-րդ կարգի վտանգավորություն): $\text{Θ-ՍԿ}_{\text{ազ}}\text{-ն} \text{CeF}_3\text{-}2.5$ մգ/մ³ է, $\text{CeO}_2\text{-}5$:

Յերիումի համաշխարհային պաշարները (առանց ԱՊՀ երկրների) կազմում են ոչ պակաս 27 մլն.տ, տարեկան արտադրությունը՝ մոտ 7 հազ.տ: Ամենախոշոր արտադրողներն են՝ ԱՄՆ, Չինաստանը, ՀԱՀ, Բրազիլիան, Վիետնամը:

Ուսասատանում արտադրությունը իրականացվում է Մուրմանսկի մարզի Լովոգերոյի լեռնահարատացուցիչ ֆաբրիկայում:

Կիրառվում է ապակո, կատալիզատորների արտադրության մեջ, երկարի, տիտանի և պղնձի համաձուլվածքների, թուղի, ջերմակայուն նիկել-կորալտային համաձուլվածքների լեզիրացման համար, մազնիսական համաձուլվածքներում, ծխային զազերի մաքրման համար:

Հայտնի է ցերիումի կազմի ավելի քան 50 միներալ: Գերակշռում են սիլիկատները, կարբոնատները, արսենաֆոսֆատները:

Արդյունաբերական նշանակություն ունեն չորս միներալ՝ մոնացիտ, բաստեզիտ, լոպարիտ, ապատիտ:

Հանքհարստացման ժամանակ ՀՀՄ-ի կորզումը տարբեր հանքատեսակներից կազմում է մինչև 80%՝ խտանյութում 12-30% Ce_2O_3 -ի պարունակությամբ: Խտանյութում վճասակար խառնուրդներին է պատկանում երկարը:

Համալիր կազմի հանքաքարերի հանքհարստացման ժամանակ հարակից ստացվում է բարիտային խտանյութ:

Խտանյութի հիդրոմետալուրգիական վերամշակման այրանքային արտադրանքը պարունակում է 99.79370-99.99646% CeO_2 : Յերիումի օքսիդում վճասակար խառնուրդներ են՝ V, Ca, Mn, Ni, Ti, Cu, Cr:

Պրագեռդիմ (Pr, 59)

Մետաղ, արծաթափայլ, թերև, կոնչի: Հանդես է թերում հիմնային հատկություններ, լիբոֆիլ է, կայուն վալենտականությունները՝ 3^+ և 4^+ : Ստում է թերև (ցերիումային) լանժանողների խմբի մեջ:

Խտությունը 6773 կգ/մ^3 , կարծրությունը ըստ քրինելլի՝ $250\text{-}500 \text{ ՄՊա}$: Հալման ջերմաստիճանը 931°C , եռմանը՝ 3512°C , ջերմահաղորդականությունը 12.5 Վտ/(մ.Կ.) , տեսակարար էլեկտրական դիմադրությունը $68 \cdot 10^{-8} \text{ Ohm}^{-1}$, տեսակարար մազնիսական ընկալունակությունը՝ $4.47 \cdot 10^{-7} \text{ մ}^3/\text{կգ}$, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $6.79 \cdot 10^{-6} \text{ Կ}^{-1}$:

Պրագեռդիմի կլարկը երկրակեղեսում 9 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների զիսավոր տեսակներում (գ/տ): հիմքային՝ 4, բրու՝ 12, նատվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 5: Գերիշմքային և միջին կազմի ապարների համար տվյալները բացակայում են:

Պրագեռդիմը բույլ բունավոր տարր է: Թ $\text{U}_{\text{ագ}}\text{-6}$ Pr_2O_3 6 մգ/ մ^3 է:

Պրագեռդիմի համաշխարհային արտադրությունը (առանց ԱՊՀ երկրների) տարեկան կազմում է 200 տ: Ամենախոշոր արտադրողները նույնն են, ինչ որ լանժանի համար՝ Չինաստանը, ԱՄՆ, Հնդկաստանը, Բրազիլիան, ՀԱՀ-ը:

Կիրառվում է ապակու և խեցեգործական իրերի գունավորման համար, հաստատուն մազնիսներում, կատալիզատորներում, երկարի և մագնեզիումի համաձուլվածքներում: PrNi_5 -ի օգնությամբ ստացվել են բացարձակ զրոյից աստիճանի միլիոններորդական մասերով բարձր ռեկորդային ջերմաստիճաններ: Պրագեռդիմի բարձր պարունակությամբ հայտնի է 2 միներալ՝ էշենիտ, ունցիան: Արդյունաբերական նշանակություն ունեն վեց միներալ՝ մոնացիտ, լոպարիտ, սինիսիզիտ, ապատիտ, էվդիալիտ, բաստնեզիտ:

Հանքհարստացման ժամանակ ՀՀՄ-ի կորզումը տարբեր հանքատեսակներից կազմում է 65-80%, խտանյութում 1-4% Pr_2O_3 պարունակությամբ:

Խտանյոթում վնասակար խառնուրդներ են համարվում Ca, Fe, Si:

Հիդրոմետալորդիական վերամշակման ապրանքային արտադրանքը պարունակում է $99.98404\text{-}99.87868\%$ Pr_2O_3 : Պրազեոլիմի օքսիդում վնասակար խառնուրդներ են համարվում Ca, Fe, Cu, Sn, Cl:

Նեոդիմ (Nd, 60)

Մետաղ, արծաթափայլ-սպիտակ: Հանդես է թերում հիմնային հատկություններ, լիբոֆիլ է, կայուն վալենտականությունը՝ 3^+ : Մտնում է թերև (ցերիումային) լանթանուլիդների խմբի մեջ:

Խտությունը $7007 \text{ կգ}/\text{մ}^3$, կարծրությունը քստ Բրինելի՝ $265\text{-}700 \text{ UPI}$: Հալման ջերմաստիճանը 1021°C , եռմանը՝ 3068°C , ջերմահաղորդականությունը $16.5 \text{ Վտ}/(\text{մ.Կ.})$, տեսակարար էլեկտրական դիմադրությունը $64 \cdot 10^{-8} \text{ Ohm}^{-1}$, տեսակարար մագնիսական ընկալունակությունը՝ $4.9 \cdot 10^{-7} \text{ մ}^3/\text{կգ}$, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $6.7 \cdot 10^{-6} \text{ K}^{-1}$:

Նեոդիմի կլարկը երկրակեղևում 37 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ/տ). հիմքային՝ 20, թրու՝ 46, նստվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 23: Գերիմքային և միջին կազմի ապարների համար տվյալները բացակայում են:

Նեոդիմը բույլ քունավոր տարր է (III-րդ կարգի վտանգավորություն): Թ-U₄-ն Nd₂O₃ 6 մգ/մ³, NdF₃ - 2.5:

Նեոդիմի համաշխարհային պաշարները (առանց ԱՊՀ երկրների) կազմում է ավելի քան 15 մլն.տ, տարեկան արտադրությունը՝ ոչ պակաս 14 հազ.տ: Ամենախոշոր արտադրողները նույնն են, ինչ որ լանթանի համար՝ Չինաստանը, ԱՄՆ, Հնդկաստանը, Բրազիլիան, ՀԱՀ-ը:

Կիրառվում են հաստատուն մագնիսներում, ապակու գունավորման համար, գունավոր հեռուստատեսությունում, լազերներում, խեցեգործական կոտակիչներում, շիկացման լամպերում, կատալիզատորներում, երկարի, մագնեզիումի և ալյումինի համաձուլվածքներում:

Հայտնի է նեռդիմով հարստացված 24 միներալ: Գերակշռում են սիլիկատները, կարբոնատները, օքսիդները: Արդյունաբերական նշանակություն ունեն հինգ միներալ՝ մոնացիտ, լոպարիտ, գաղոլինիտ, էվիլիալիտ, ապատիտ:

Հանքհարստացման ժամանակ ՀՀՄ-ի կորզումը տարրեր հանքատեսակներից կազմում է 60-75%՝ խտանյութում – մինչև 39% Nd_2O_3 պարունակությամբ:

Խտանյութում վնասակար խառնուրդ է համարվում երկարը:

Համալիր կազմի հանքաքարերի հանքահարստացման ժամանակ հարակից ստացվում է բարիտային խտանյութ:

Հիդրոմետալուրգիական վերամշակման և քլորային գոլորշիացման ապրանքային արտադրանքը պարունակում է 99.48963-99.98162% Nd_2O_3 և ավելի քան 58 % Nd: Նեռդիմի օքսիդում վնասակար խառնուրդներին են պատկանում V, Co, Mn, Cu, Ni, Ti, Cr, Fe, Ca:

Սամարիում (Sm, 62)

Մետաղ, արծաթափայլ-սպիտակ: Հանդես է քերում հիմնային հատկություններ, լիբոֆիլ է, վալենտականությունը՝ 2^+ և 3^+ : Մտնում է ծանր (իտրիումային) լանքանուղղակի խմբի մեջ:

Խտությունը $7520 \text{ կգ}/\text{մ}^3$, կարծրությունը ըստ Բրինելի՝ $441-600 \text{ UPI}$: Հալման ջերմաստիճանը 1077°C , եռմանը՝ 179°C : Ջերմահաղորդականությունը $13.3 \text{ Վտ}/(\text{մ.Կ.})$, տեսակարար էլեկտրական դիմադրությունը $94 \cdot 10^{-8} \text{ Ohm}^{-1}\text{m}^{-1}$, տեսակարար մազգիսական ընկալունակությունը՝ $1.52 \cdot 10^{-7} \text{ մ}^3/\text{կգ}$, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $10.4 \cdot 10^{-6} \text{ Կ}^{-1}$ ջերմային նեյտրոնների ընդգրկման մակերևույթը՝ $55 \cdot 10^{-26} \text{ մ}^2$:

Սամարիումի կլարկը երկրակեղեսում 8 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ/տ): հիմքային՝ 5, թթու՝ 9, նատվածքային (կավեր և թերաքարեր)՝ 6.5: Գերիհմքային և միջին կազմի ապարների համար տվյալները բացակայում են:

Սամարիումը քոյլ քունավոր տարր է (3-րդ կարգի վտանգավորություն): Թ-ՍԿ_{ազ}-ն CmCl_3 , $\text{Cm}(\text{SO}_4)_3$, $\text{Sm}_2\text{O}_3 - 5 \text{ մլգ}/\text{մ}^3$ է:

Սամարիումի համաշխարհային արտադրությունը (առանց ԱՊՀ երկրների) տարեկան կազմում է մոտ 1000 տ: Ամենախոշոր արտադրողները նույնն են, ինչ որ խորիումի համար:

Կորալի հետ միացություններում կիրառվում է նույր շարժիչների, ոռոտների, ձայնագրիչների, համակարգիչների, հեռախոսային տպագրական սարքավորումների, չափիչ սարքերի, լիցքավորված մասնիկների արագացուցիչների մագնիսներում:

Հայտնի են սամարիումով հարուստ մի քանի միներալ: Գերակշռում են օրսիդները, ինդրոկարբոնատները, սիլիկատները: Արդյունաբերական նշանակություն ունեն հինգ միներալ՝ մոնացիտ, լոպարիտ, գաղոլինիտ, էվֆիալիտ, ապատիտ:

Հանքհարստացման ժամանակ ՀՀՄ-ի կորզումը տարբեր հանքատեսակներից կազմում է մինչև 75%՝ խտանյութում – մինչև 1.5% Sm_2O_3 պարունակությամբ:

Խտանյութում վնասակար խառնուրդ է համարվում երկարը:

Հիդրոմետալուրգիական վերամշակման ապրանքային արտադրանքը պարունակում է 99.48945-99.996968% Sm_2O_3 : Սամարիումի օրսիդում վնասակար խառնուրդներին են պատկանում Fe , Cu , Co , Si , Cl :

Եվրոպիում (Eu, 63)

Սետաղ, արծաթափայլ, փափուկ: Հանդես է բերում հիմնային հատկություններ, լիքոֆիլ է, վալենտականությունը՝ 2^+ և 3^+ : Մոնում է ծանր (խորիումային) լանժանուրդների ենթախճի մեջ:

Խտությունը $5243 \text{ կգ}/\text{մ}^3$, հալման ջերմաստիճանը 822°C , եռմանը՝ 1597°C : Ջերմահաղորդականությունը $13.9 \text{ } \text{Վտ}/(\text{մ.Կ.})$, տեսակարար էլեկտրական դիմադրությունը $90 \cdot 10^{-8} \text{ Ohm}^{-1}$, տեսակարար մագնիսական ընկալունակությունը՝ $2.81 \cdot 10^{-6} \text{ մ}^3/\text{կգ}$, գծային լնդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $32 \cdot 10^{-6} \text{ Կ}^{-1}$ ջերմային նեյտրոնների ընդգրկման մակերևույթը $46 \cdot 10^{-26} \text{ մ}^2$:

Եվրոպիումի կլարկը երկրակեղեռում 1.3 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ/տ). ուլտրահիմքային՝ 0.01, հիմքային՝ 1.0, բրու՝ 1.5, նատված-

քային (կավեր և թերթաքարեր)` 1.0: Սիջին կազմի ապարների համար տվյալները բացակայում են:

Եվրոպիումը թույլ թունավոր տարր է: $\text{MoU}_{\text{aq}}^{\text{-6}}$ Eu_{2O_3} , 6 մլգ/ m^3 է:

Եվրոպիումի համաշխարհային արտադրությունը (առանց UPL երկրների) տարեկան կազմում է մոտ 40տ: Ամենախոշոր արտադրողներն են, Չինաստանը, ԱՄՆ, Ավստրալիան, Հնդկաստանը:

Կիրառվում է գունավոր հեռուստատեսության և բարձր արդյունավետության լուսարձակման լամպերի համար անհրաժեշտ լուսմիննֆորմներում, ինչպես նաև միջուկային արագացուցիչներում՝ որպես կարգավորող առանցքածող:

Հայտնի է եվրոպիումով նշանակալի կուտակումներով մի քանի միներալ: Արդյունարերական նշանակություն ունեն 5 միներալ՝ մոնացիտ, քսենոտիմ, ուրդոֆանիտ, չերչիտ, էվոլիալիտ:

Հիդրոմետալուրգիական վերամշակման ապրանքային արտադրանքը պարունակում է $99.89787\text{-}99.98837\%$ Eu_{2O_3} : Եվրոպիումի օրսիդում վնասակար խառնուրդներ են համարվում Ca , Fe , Cu , Si , Cl , Zn :

Գաղոլինիում (Gd , 64)

Սետաղ, արծաթափայլ-սպիտակ, փափուկ: Հանդես է թերում հիմնային հատկություններ, լիբոֆիլ է, կայուն վալենտականությունը՝ 3^+ : Մտնում է ծանր (իտրիումային) լանթանիդների ենթախմբի մեջ:

Խտդրյունը 7900 կգ/ m^3 , հալման ջերմաստիճանը 1313^0C , եռմանը՝ 3266^0C : Զերմահաղորդականությունը 10.6 Վտ/(մ.Կ.), տեսակարար էլեկտրական դիմադրությունը $134 \cdot 10^{-8}$ $\text{Ohm}^{-1}\text{m}^{-1}$, տեսակարար մագնիսական ընկալունակությունը՝ $6.0 \cdot 10^{-5}$ $\text{m}^3/\text{կգ}$, գծային ընդարձակման զերմաստիճանային գործակիցը՝ $8.6 \cdot 10^{-6}$ Կ^{-1} , զերմային նեյտրոնների ընդորկման մակերևույթը $49 \cdot 10^{-25}$ մ^2 :

Գաղոլինիումի կլարկը երկրակեղևում 8 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների զիսավոր տեսակներում (գ.տ): հիմքային՝ 5, քրու՝ 9, նստվածքային (կավեր և թերթաքա-

բեր)` 6.5: Գերիշմքային և միջին կազմի ապարների համար տվյալները բացակայում են:

Գաղոլինիումը քույլ քունավոր տարր է: Թ-U₄-ն Gd_2O_3 - 4 մլգ/մ³ է:

Գաղոլինիումի համաշխարհային արտադրությունը (առանց ԱՊՀ երկրների) տարեկան կազմում է մոտ 100տ: Ամենախոշոր արտադրողներն են Չինաստանը, ԱՄՆ, Ավստրալիան, Հնդկաստանը:

Գալիում-գաղոլինային կազմով նոճաքարերը կիրառվում են միկրոալիքային վառարանների, կրիոգենային սարքավորումների, օպտիկական ապակիների համար, ինչպես նաև ունագենատեխնիկայում, միջուկային արագացուցիչներում և լազերներում:

Հայտնի է գաղոլինիում պարունակող 16 միներալ: Գերակշռում են օրսիդները և կարբոնատները: Արդյունարերական նշանակություն ունեն 5 միներալ՝ գագարինիտ, քսենոտիմ, իտրունիսիդիտ, չերչիտ, մոնացիտ:

Ինքնուրույն հանքավայրեր չի առաջացնում, այլ գտնվում է մյուս հազվագյուտ հողերի հումքի հանքավայրերում:

Հանքհարստացման ժամանակ ՀՀՍ-ի կորզումը տարբեր հանքատեսակներից կազմում է 50%-ից ավել՝ խտանյութում ավելի քան 0.5% Gd_2O_3 պարունակությամբ:

Հիդրոմետալուրգիական վերամշակման ապրանքային արտադրանքը պարունակում է 99.4894-99.9995% Gd_2O_3 : Գաղոլինիումի օրսիդում վնասակար խառնուրդներ են համարվում Ca, Fe, Cu, Si, Cl:

Տերբիում (Tb, 65)

Սետաղ, արծաթափայլ-սպիտակ: Հանդես է քերում հիմնային հատկություններ, լիբռֆիլ է, կայուն վալենտականությունները՝ 3^+ և 4^+ : Մտնում է ծանր (իտրիումային) լանքանոիդների ենթախմբի մեջ:

Խտությունը 8229 կգ/մ³, կարծրությունը ըստ Բրինելի՝ 677-873 ՄՊա: Հալման ջերմաստիճանը 1356°C , եռմանը՝ 3123°C , ջերմահաղորդականությունը 11.1 Վտ/(մ.Կ.), տեսակարար էլեկտ-

բական դիմադրությունը $114 \cdot 10^{-8}$ Ohm մ, տեսակրար մագնիսական ընկալունակությունը՝ $1.15 \cdot 10^{-5} \text{ м}^3/\text{կգ}$, զծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $7 \cdot 10^{-6} \text{ К}^{-1}$:

Տերքիումի կլարկը երկրակեղևում 1.0 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների զիսավոր տեսակներում (գ/տ). հիմքային՝ 0.8, բբու՝ 2.5, նատվածքային (կավեր և թերքաքարեր)՝ 0.9: Գերիմքային և միջին կազմի ապարների համար տվյաները բացակայում են:

Տերքիումը բույլ բունավոր տարր է: $\text{Թ-ՍԿ}_{\text{ագ}}\text{-ն} \text{ Tb}_2\text{O}_3$ - 4 մլգ/մ³ է:

Տերքիումի համաշխարհային արտադրությունը (առանց ԱՊՀ երկրների) տարեկան կազմում է մի քանի տասնյակ տոննա: Առավել խոշոր արտադրողները նույնն են ինչ մյուս հազվագյուտ հողերի համար:

Կիրառվում է գունավոր հեռուստատեսության, բարձր արդյունավետության լուսարձակման լամպերի, մագնիսաստրիկցիոն և մագնիսաօպտիկական նյութերի լումինֆորների համար, ինչպես նաև ռենտգենատեխնիկայում և կատալիզի ժամանակ:

Հայտնի են տերքիումով հարուստ մի քանի միներալներ. սամարսկիտ, օքրուչկիտ, քսենոտիմ, խորոսինիզիդիտ, ապատիտ:

Տերքիումը ինքնուրույն հանքավայրեր չի առաջացնում, այլ գտնվում է մյուս խորիում-հողային հումքի հանքավայրերում:

Տերքիում պարունակող նյութերի հիդրոմետալորդիական վերամշակման ապրանքային արտադրանքը պարունակում է 99.45261-99.99231% Tb_2O_3 : Տերքիումի օքսիդում վնասակար խառնուրդներն են՝ Ca, Fe, Cu, Si, Cl:

Դիսպրոզիում (Dy, 66)

Մետաղ, արծաթափայլ, ամոր: Հանդես է թերում հիմնային հատկություններ, լիբոֆիլ է, կայուն վալենտականությունը՝ 3^+ :

Մտնում է ծանր (խորիումային) լանդանուիդների ենքախմբի մեջ:

Խտությունը 8550 կգ/մ³, կարծրությունը ըստ Բրինելի՝ 500-1050 ՄՊա, հալման ջերմաստիճանը 1412°C , եռմանը՝ 2562°C , ջերմահաղորդականությունը 10.7 Վ.տ/(մ.Կ.), տեսակարար էլեկտրական դիմադրությունը $57 \cdot 10^{-8}$ Ohm մ, տեսակարար մագնիսական

ընկալունակությունը՝ $8.0 \cdot 10^{-6}$ մ³/կգ, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $10.0 \cdot 10^{-6}$ Կ⁻¹, ջերմային նեյտրոնների ընդգրկման մակերևույթը $10 \cdot 10^{-26}$ մ²:

Դիսպրոզիումի կլարկը երկրակեղեռում 5 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ.տ.) գերիշմքային՝ 0.05, հիմքային՝ 2.0, քրու՝ 6.7, նատվածքային (կավեր և բերբարաբեր)՝ 4.5: Միջին կազմի ապարների համար տվյալները բացակայում են:

Դիսպրոզիումը բույլ բունավոր տարր է: ԹՍԿ_{ագ}-ն Dy_2O_3 - 5 մլգ/մ³ է:

Դիսպրոզիումի համաշխարհային արտադրությունը (առանց ԱՊՀ երկրների) տարեկան կազմում է 200 տ: Առավել խոշոր արտադրողները նույն են, ինչ մյուս հազվագյուտ հողերի համար:

Կիրառվում է միջուկային արագացուցիչների առանցքների կարգավորման համար, մագնիսների, մագնիսաստրիկցիոն սարքավորումների, լումինոֆորների, կատալիզատորների, միկրոալիքային սարքերի, նեյտրոնների հոսքի չափիչ սարքերի մեջ:

Հայտնի են դիսպրոզիումի բարձր պարունակությամբ 25 հազվագյուտ հողերի միներալներ: Նրանց մեջ գերակշռում են սիլիկատները: Արյունաբերական նշանակություն ունեն չորս միներալ: Քսենոտիմ, գագարինիտ, խորոսինիզիդ, չերչիտ:

Դիսպրոզիումը ինքնուրույն հանքավայրեր չի առաջացնում, այլ գտնվում է տարբեր տեսակի ծանր լանժանողների հանքավայրերում:

Հիդրոմետալուրգիական վերամշակման ապրանքային արտադրանքը պարունակում է 99.98923-99.97979% Dy_2O_3 : Դիսպրոզիումի օքսիդում վնասակար խառնուրդներն են՝ Ca, Fe, Cu, Si, Cl:

Հոլմիում (Հօ, 67)

Մետաղ, արծաթափայլ: Հանդես է բերում հիմնային հատկություններ, լիբրֆիլ է, կայուն վալենտականությունը՝ 3⁺: Մտնում է ծանր (խորիումային) լանժանողների ենթախմբի մեջ:

Խտությունը 8795 կգ/մ³, կարծրությունը ըստ Բրինելլի՝ 500-1250 ՄՊա, հալման ջերմաստիճանը 1474⁰C, եռմանը՝ 2795⁰C,

Չերմահաղորդականությունը $16.2 \text{ Վտ}/(\text{մ.Կ.})$, տեսակարար էլեկտրական դիմադրությունը $87 \cdot 10^{-8} \text{ Ohm m}$, տեսակարար մագնիսական ընկալունակությունը՝ $5.49 \cdot 10^{-6} \text{ м}^3/\text{կգ}$, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $9.5 \cdot 10^{-6} \text{ К}^{-1}$:

Հոլմիումի կլարկը երկրակեղևում 1.7 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ/տ), հիմքային՝ 1.0, բրու՝ 2.0, նստվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 1.0: Գերիհմքային և միջին կազմի ապարների համար տվյալները բացակայում են:

Հոլմիումը թույլ թունավոր տարր է: ԹՍԿ_{ագ}-ն H_2O_3 - 4 մլգ/մ³ է:

Հոլմիումի համաշխարհային արտադրությունը (առանց ԱՊՀ երկրների) տարեկան կազմում է մոտավորապես 100 տ: Առավել խոշոր արտադրողները նույնն են, ինչ մյուս հազվագյուտ հողերի համար:

Կիրառվում է օպտիկական ապակիների, լումինոֆորների, լազերների, բարձր հաղորդականության խեցագործության մեջ:

Հայտնի են հոլմիումի բարձր պարունակությամբ մի քանի միներալներ՝ քսենոտիմ, էվքսենիտ, չերչիտ, ֆերգյուսոնիտ:

Հոլմիումը ինքնուրույն հանքավայրեր չի առաջացնում, այլ գտնվում է մյուս ծանր լանքանոիդների հանքավայրերում:

Հիդրոմետալուրգիական վերամշակման ապրանքային արտադրանքը պարունակում է $99.4946\text{-}99.9969\% \text{ H}_2\text{O}_3$: Հոլմիումի օքսիդում վնասակար խառնուրդներն են՝ Ca, Fe, Cu, Si, Cl:

Երբիում (Er, 68)

Մետաղ արծաթափայլ-մոխրագույն: Հանդես է բերում հիմնային հատկություններ, լիբոֆիլ է, վալենտականությունը՝ 3^+ :

Մտնում է ծանր (իտրիումային) լանքանոիդների ենթախմբի մեջ:

Խտությունը 9066 կգ/մ³, կարծրությունը ըստ Բրինելի՝ 600-950 ՄՊա, հալման ջերմաստիճանը 1529°C , եռնանը՝ 2863°C : Ջերմահաղորդականությունը 14.3 Վտ/(մ.Կ.), տեսակարար էլեկտրական դիմադրությունը $87 \cdot 10^{-8} \text{ Ohm m}$, տեսակարար մագնիսական

ընկալունակությունը՝ $3.33 \cdot 10^{-6}$ մ³/կգ, գծային ընդարձակման զերմաստիճանային գործակիցը՝ $9.2 \cdot 10^{-6}$ Կ⁻¹:

Երբիումի կլարկը երկրակեղևում 3.3 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ/տ). հիմքային՝ 2.0, բրու՝ 4.0, նատվածքային (կավեր և թերքաքարեր)՝ 2.5: Գերիհմքային և միջին կազմի ապարների համար տվյալները բացակայում են:

Երբիումը բույլ քունավոր տարր է: $\text{ԹՄԿ}_{\text{ագ}}\text{-6}$ Er_2O_3 - 4 մլգ/մ³ է:

Երբիումի համաշխարհային արտադրությունը (առանց ԱՊՀ երկրների) տարեկան կազմում է ոչ ավելի, քան 100 տ: Առավել խոշոր արտադրողները նույն են, ինչ մյուս հազվագյուտ հողերի համար:

Կիրառվում է լազերների, լուսմինոֆորների, միկրոալիքային և միջուկային տեխնիկայի, կատալիզատորների, ապակիների արտադրությամ մեջ:

Հայտնի են երբիումի բարձր պարունակությամբ 15 միներալներ: Նրանց մեջ երբիումի առավել մեծ կուտակումներով են բնորոշվում Էվրսենիտը, գալենիտը, էվդիալիտը:

Երբիումը ինքնուրույն հանքավայրեր չի առաջացնում, այլ գտնվում է մյուս հազվագյուտ հողերի հումքի հանքավայրերում:

Հիդրոմետալուրգիական վերամշակման ապրանքային արտադրանքը պարունակում է 99.49482-99.99747% Er_2O_3 : Երբիումի օքսիդում վնասակար խառնուրդներն են՝ Ca, Fe, Cu, Si, Cl, K, F:

Թուլիում (Tu, 69)

Սետաղ արծաթափայլ: Հանես է բերում հիմնային հատկություններ, լիբոֆիլ է, կայուն վալենտականությունները՝ 2^+ և 3^+ : Մտնում է ծանր (հորիումային) լանժանուիդների ենթախմբի մեջ:

Խտությունը 9321 կգ/մ³, կարծրությունը ըստ Բրինելլի՝ 550-900 ՄՊա, հալման ջերմաստիճանը 1545°C , եռմանը՝ 1947°C : Զերմահաղորդականությունը 16.8 Վտ/(մ.Կ.), տեսակարար էլեկտրական դիմադրությունը $79 \cdot 10^{-8}$ Ohm մ, տեսակարար մագնիսական

ընկալունակությունը՝ $1.9 \cdot 10^{-6}$ մ³/կգ, գծային ընդարձակման ջերմ-աստիճանային գործակիցը՝ $13.3 \cdot 10^{-6}$ Կ⁻¹:

Թուլիումի կլարկը երկրակեղևում 0.27 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ.տ). հիմքային՝ 0.2, բբու՝ 0.3, նատվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 0.25: Գերիմքային և միջին կազմի ապարների համար տվյալները բացակայում են:

Թուլիումը բույլ թունավոր տարր է: Թ-ԱԿ_{ագ}-ն Տm₂O₃ - 4 մլգ/մ³ է:

Թուլիումի համաշխարհային արտադրությունը (առանց ԱՊՀ երկրների) տարեկան չի գերազանցում 100 տ: Առավել խոշոր արտադրողները նույն են, ինչ մյուս հազվագյուտ հողերի համար:

Կիրառվում է լազերների, ռենտգենալյումինֆորմերի, լուսաղիոդների, միջուկային տեխնիկայում:

Հայտնի է թուլիումի բարձր պարունակությամբ 4 միներալ՝ քսենոտիմ, էլքսենիտ, չերչիտ, ֆերգյուսոնիտ:

Թուլիումը ինքնուրույն հանքավայրեր չի առաջացնում, այլ գտնվում է մյուս հազվագյուտ հողերի հումքի հանքավայրերում:

Հիդրոմետալորդիական վերամշակման ապրանքային արտադրանքը պարունակում է 99.49461-99.99848% Tm₂O₃: Թուլիումի օրսիդում վնասակար խառնուրդներն են՝ Ca, Fe, Cu, Si, Cl:

Խտերթիում (Yb, 70)

Մետաղ արծաթափայլ-սպիտակ: Հանդես է քերում հիմնային հատկություններ, լիբրֆիլ է, կայուն վալենտականությունը՝ 3⁺: Մտնում է ծանր (խտրիումային) լանթանիդների ենթախմբի մեջ:

Խտությունը 4469 կգ/մ³, կարծրությունը ըստ Բրինելի՝ 343-441 ՄՊա, հալման ջերմաստիճանը 1522⁰C, եռմանը՝ 3338⁰C: Զերմահաղորդականությունը 17.2 Վո/(մ.Կ.), տեսակարար էլեկտրական դիմադրությունը $57 \cdot 10^{-8}$ Ohm մ, տեսակարար մագնիսական ընկալունակությունը՝ $2.7 \cdot 10^{-8}$ մ³/կգ, գծային ընդարձակման ջերմաստիճանային գործակիցը՝ $10.6 \cdot 10^{-6}$ Կ⁻¹:

Իտերբիումի կլարկը երկրակեղևում 3.3 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ.տ.) հիմքային՝ 2.0, թթու՝ 4.0, նատվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 3.0: Գերիհմքային և միջին կազմի ապարների համար տվյալները բացակայում են:

Իտերբիումը թույլ թունավոր տարր է: $\text{ԹՄԿ}_{\text{ագ}}\text{-ն} \text{Yb}_2\text{O}_3$ - 4 մլգ/մ³ է:

Իտերբիումի համաշխարհային արտադրությունը (առանց ԱՊՀ երկրների) տարեկան կազմում է մոտ 5 տ: Առավել խոչոր արտադրողները նույն են, ինչ մյուս հազվագյուտ հողերի համար:

Կիրառվում է կատալիզատորներում, ճնշման չափման սարքավորումներում, ռենտգենատեխնիկայում:

Հայտնի է իտերբիումի բարձր պարունակությամբ 20 միներալ, նրանց թվում՝ քսենոտիտ, գագարինիտ, էվքսենիտ, գաղոլինիտ, չերչիտ, խորոսինիզիդիտ, խորոֆլյուորիտ, էվդիալիտ:

Իտերբիումը ինքնուրույն հանքավայրեր չի առաջացնում, այլ գտնվում է տարբեր տեսակի հազվագյուտ հողերի հումքի հանքավայրերում:

Հանքհարստացման ժամանակ ՀՀՄ-ի կորզումը տարբեր հանքատեսակներից կազմում է 60%-ից ավել, խտանյութում՝ Yb_2O_3 -ի մինչև 0.5% պարունակությամբ:

Խտանյութում վնասակար խառնուրդներին է վերագրվում երկարը:

Հիդրոմետալուրգիական վերամշակման ապրանքային արտադրանքը պարունակում է 99.49461-99.92848% Yb_2O_3 : Իտերբիումի օքսիդում վնասակար խառնուրդներն են՝ Ca, Fe, Cu, Si, Cl:

Լյուտեցիում (Լւ, 71)

Մետաղ, շատ ամուր և կարծր: Հանդես է բերում հիմնային հատկություններ, լիբոֆիլ է, վալենտականությունը՝ 3⁺: Մտնում է ծանր (իտրիումային) լանքանիդների ենթախմբի մեջ:

Խտությունը 9840 կգ/մ³, կարծրությունը ըստ Բրինելլի՝ 893-1300 ՄՊա, հալման ջերմաստիճանը 1663°C, եռմանը՝ 3395°C: Ջերմահաղորդականությունը 16.4 Վտ/(մ.Կ.), տեսակարար էլեկտրական դիմադրությունը $79 \cdot 10^{-8}$ Ohm մ, տեսակարար մագնիսական

ընկալունակությունը՝ $1.3 \cdot 10^{-9}$ մ³/կգ, գծային ընդարձակման ջերմ-աստիճանային գործակիցը՝ $8.2 \cdot 10^{-6}$ Կ⁻¹:

Լյուտեցիումի կլարկը երկրակեղևում 0.8 գ/տ է: Նրա միջին պարունակությունը լեռնային ապարների գլխավոր տեսակներում (գ.տ). հիմքային՝ 0.6, բբու՝ 1.0, նատվածքային (կավեր և թերթաքարեր)՝ 0.7: Գերիհմքային և միջին կազմի ապարների համար տվյալները բացակայում են:

Լյուտեցիումը բույլ բունավոր տարր է: ԹՍԿ_{ագ}-ն Lu2O3 - 4 մլգ/մ³ է:

Լյուտեցիումի համաշխարհային արտադրությունը (առանց ԱՊՀ երկրների) տարեկան կազմում է մոտ 100 տ: Առավել խոշոր արտադրողները – իտրիում արտադրող պետություններն են:

Կիրառվում է լյումինֆորներում, օպտիկակենտրոնիկայում, դիսպլեյներում:

Հայտնի է լյուտեցիումի բարձր պարունակությամբ 20 միներալներ, այդ թվում՝ կեյլինտեսորվեյտիտ, քսենոտիմ, ֆերգուսոնիտ:

Լյուտեցիումը ինքնուրույն հանքավայրեր չի առաջացնում, այլ գտնվում է տարբեր տեսակի հազվագյուտ հողերի հումքի հանքավայրերում:

Հիդրոմետալուրգիական վերամշակման ապրանքային արտադրանքը պարունակում է 99.49459-99.99848% Lu2O3: Լյուտեցիումի օքսիդում վնասակար խառնուրդներն են՝ Ca, Fe, Cu, Si, Cl:

Մաս II. ՄԵՏԱԴՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ- ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՆՔԱԶՄԵՐՈՒՄ

Գլուխ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՆՔԱՅԻՆ ՖՈՐՄԱՑԻԱ- ՆԵՐԸ ԵՎ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԸ

1.1. Երկարահանքային ֆորմացիա. Երկարի հանքավայրերը

Ընդհանուր առնամբ, Հայաստանի տարածքում աշխարհի գետսիփերի նմանությամբ, առանձնացվում են երկարահանքային ֆորմացիայի հետևյալ տեսակները.

1. Տիտանամազնետիտային՝ զարրո-պիրոքսենիտներում և հազվագյուտ հողային – ապատիտ-մազնետիտային՝ անդեզիտադացիտներում (Սվարանց, Կամաքար, Արովյան):

Հայաստանի բուն մազմատիկ (հիսուերոմազմատիկ) տիտանամազնետիտային հանքավայրերը (Սվարանց, Կամաքար) տեղադրված են վերին էոցեն-օլիգոցեն կոմպլեքսի գերիհմքային և հիմքային ապարներում: Արովյանի հիոլորերմալ-մետասոմատիկ հազվագյուտ հողային-ապատիտ-մազնետիտային հանքավայրը տեղադրված է պլիոցենի էքստրուզիվ-էֆուզիվային կոմպլեքսի անդեզիտներում և անդեզիտադացիտներում: Այս ենթաֆորմացիայի հանքավայր-նմանատիպերից առաջատար են համարվում Կաչկանար-Գուսեղորսկի (Ուրալ, ՌՖ), Պուլոնժգորի և Կոյկարո-Սվյատնավոլսկի (Կարելիա, ՌՖ) տիտանամազնետիտային, ինչպես նաև հազվագյուտ հողային-ապատիտ-մազնետիտային Կովդոր (Կոլա, ՌՖ) և Պալարոր (ՀԱՀ) հանքավայրերը: Պլատինարեր վանադիտ-տիտանամազնետիտային ենթաֆորմացիայի գետիպ է հանդիսանում Չինեյի հանքավայրը (ԲԱՄ, ՌՖ), որը կապված է համանուն զարրոյի զանգվածի հետ:

2. Ոսկի-երկարային – ոսկի-հենամատիտային (սկառնային, կոնտակտ-մետասոմատիտային)՝ զարրո-դիտրիտներում, մետասոմատիկ թերթաքարերում, անդեզիտներում և անդեզիտադացիտներում (Հրազդան, Մարմարիկ, Կողը և այլ գետերի ավազանների հանքավայրեր): Սկառնային (կոնտակտ-մետասոմատիտային)

Երկաթային (մազնետիտային) հանքաքարերի ենթաֆորմացիան հարում է, գերազանցապես, միջին էոցեն-օլիգոցենի հասակի մերձալկալային և ալկալահողային կազմի խոշոր գրանիտոհային զանգվածների և կարբոնատային, երարխածին-տերիգեն-կարբոնատային ապարների ու մետամորֆային թերթաքարերի կոնտակտին:

Վերջին տասնամյակներում ստացվել են հետաքրքիր տվյալներ կրաքարասկառնային տիպի հանքավայրերի հանքաքարերի ոսկեբերության և հազվագյուտ մետաղների (հազվագյուտ հողերի) պարունակության վերաբերյալ: Բացի դրանից, հայտնաբերվել են նրանց հնարավոր պլատինարերության բացահայտ չափանիշներ: Այդ տեսակետից առավել հեռանկարային են Հրազդանի, Աղավնաձորի, Հանքավանի (Մարմարիկի խումբ), Կողը խմբի, Կարցախի, Սառնաղբյուրի, Սոտի, Հախնիճորի (Նազարսարի խումբ), Բազումի և Չանգեզորի մի շարք հանքավայրեր: Հրազդանի հանքավայրը ուղղակի հանքատիպ-նմանատիպեր չունի, սակայն նրան առավել մոտիկ համարվում են ալքայ-սայանյան տիպի սկառնային հանքավայրերը (Տաշտագոլ, Սինյուխին և այլն, Ռ-Ֆ): Պլատինարեր կրաքարասկառնային մազնետիտային նմանատիպ հանքավայրեր հայտնի են Ղրղստանում, Ուգրեկստանում և Ռուսաստանում: Ղրղստանում պլատինի հանքայնացումը կապված է կուգու-տե-գերեւելյան տիպի սկառների հետ:

3. Տիտանամազնետիտային ավազաքարեր (Հաղարծին, Գետիկ, Լալվար, Վայք): Ստրատիֆիկացված՝ տերիգեն-կարբոնատային նատվածքներում կամ ավազաքարային տիպերի հանքավայրերը ունեն լայն տարածում: Այդ տիպի խոշոր հանքավայրեր հայտնի են Հյուսիսային Ամերիկայում, Արգենտինայում, Նիկերիայում, Ֆրանսիայում, Սեքսիկայում, Ավստրալիայում, Իտալիայում, Հարավսլավիայում, Հունգարիայում, ճապոնիայում: ԱՊՀ երկրներում ավազաքարային տիպի շերտավորված հանքավայրերը ներկայացված են խոշոր օբյեկտներով, ինչպես նաև տարբեր հասակի “խայտարդես” ֆորմացիաներում բազմաթիվ մասր հանքավայրերով ու հանքաերևակումներով: Այդ ենթաֆորմացիայի հիմնական գեոտիպեր են համարվում Ուրոկանը, Կրասնին և Բարպալան՝ Արևելյան Սիրիորի (Ալղանի վահան) ստորին պրոտերոզոյի մետամորֆացված առաջացումներում, ինչ-

պես նաև Զեզկազգանը՝ Ղազաստանի կարբոնատային նստվածքներում:

Հայաստանի տարածքում երկաթի արդյունաբերական հանքավայրերը վերագրվում են հետևյալ ծագումնաբանական (գենետիկ) տիպերին.

1. Հիստերոնազմատիկ հանքավայրեր - այստեղ առանձնացվում են.

ա) ապատիտ-մագնետիտային հանքավայրեր՝ կապված սիենիտ-դիորիտների հետ (Աբովյան, Կապուտան, մասամբ Կամարար),

բ) տիտանամագնետիտային հանքավայրեր՝ կապված հիմքային ներժայքության ապարների հետ (Սվարանց և Կամարար):

2. Սկառնային (կոնտակտ-մետաստմատիկ) հանքավայրեր կապված չափավոր թքու գրանիտոհիների հետ. տեղադրված են վերջիններիս և կարբոնատային ապարների ու մասամբ հրաբխածին հաստվածքների կոնտակտում (Հրազդան և Կողբի խմբի հանքավայրեր):

3. Հիորոթերմալ մագնետիտային, հեմատիտային և սիլեռիտային երակային և մետաստմատիկ ոչ մեծ հանքավայրեր (մագնետիտային Յախշատովա բալկա և հեմատիտային Բովերիդոյ հանքավայրեր):

4. Մագնետիտային և իլմենիտ-մագնետիտային ժամանակակից և բրածո ցրոններ (Հաղարծին):

5. Երկարային (լիմոնիտային) վերնածածկ, որը առաջացել է սուլֆիդային հրաքարային և սիլեռիտային հանքարերի օքսիդացման հաշվին:

6. Երկարային լաքերիտային հանքավայրեր՝ առաջացած գերիհմքային ապարների հողմնահարման արդյունքում:

7. Գետնաջրերից նստեցված գնդասիդերիտային և լիմոնիտային հանքավայրեր:

8. Նստվածքային հանքավայրեր՝ ծովային և լճային տեսակի օօլիտային գյորիթ-շամոզիտ-սիլեռիտային հանքարերով:

9. Մետամորֆոգեն երկաթային քվարցիտներ և եղջրաքարաքարային տիպի հանքավայրեր (Մարմարիկ գետի ավազանի երևակումներ):

Կողըի (Միսխանայի) հանքավայրը հայտնի է շատ վաղ ժամանակներից: Հանքավայրը 1900-1914թթ. պարբերաբար հետախուզվել է առանձին մասնավոր ձեռներեցների կողմից: Պահպանվել են հիմ փորվածքների հետքերը: 1946թ. Հայաստանի ԳԱ ԵԳԻ կողմից հանքավայրի շրջանում կատարվել են երկրաբանահանութային, 1947թ. մագնիսաչափական, իսկ 1950թ՝ Հայկական երկրաբանական վարչության կողմից, որոնողահետախուզական աշխատանքներ:

Հանքավայրը գտնվում է Նոյեմբերյանից 8-9 կմ հեռավորության վրա՝ Ուղիկ գետի ձախ ափին: Հանքավայրից մինչև երկարօդի Այրում կայարանը ավտոճանապարհով 30 կմ է:

Հանքայնացումը կապված է պորֆիրիտների և քվարցային դիորիտների ու կրաքարերի և կրաքարային տուֆերի կոնտակտի գոտու հետ:

Հիմ փորվածքների թափոններում հանդիպում են հարուստ, խոշոր թեփուկային հեմատիտային, ինչպես նաև փշրաքարանման հեմատիտ-մագնետիտային էպիդրոտացված պորֆիրներ՝ մագնետիտային հանքաքարի խոշոր թեկորներով:

Հանքայնացման տեղաբաշխման մեջ նկատվում է որոշակի օրինաչափություն. մագնետիտային և խառը մագնետիտ-հեմատիտային հանքաքարերը հաճախ հանդիպում են հանքավայրի հարավ-արևմտյան մասում, իսկ մաքուր հեմատիտային հանքաքարերը՝ արևելյան մասում:

1950թ. հանքավայրում կատարված որոնողահետախուզական աշխատանքների արդյունքում բացվել են երկու ոսպնյակաձև երկաթահանքային մարմիններ, որոնցում երկարի միջին պարունակությունը 25-45% է, պղնձինը՝ 0.1-0.5%: Հիմ բուլանցքներից մեկում կան նաև փոքր հզորությամբ (30-35սմ) 35-40° անկյան տակ հարավ-արևմտյան անկմանք երակաձև մարմիններ: Հանքաքարը կազմված է հեմատիտի խոշոր թեփուկավոր ազրեգատներից՝ մագնետիտի, պիրիտի, փոքր քանակի խալկոզինի, լիմնիտի, քվարցի և քլորիտի խառնուրդներով: Հեմատիտ և մագնետիտ քանակական հարաբերակցությունը տարբեր է. որպես

կանոն հեմատիտը գերակշռում է մազնետիտին, երբեմն էլ բաշխվում են հավասարաչափ:

Հանքաքարում երկարի պարունակությունը տատանվում է 20-25%-ից մինչև 40-45% սահմաններում: Հոծ հարուստ հանքաքարի առանձին նմուշներում երկարի պարունակությունը հասնում է մինչև 62%: Մինչև 1% պղնձի պարունակությունը պայմանավորված է ազորիտի և մալախիտի առկայությամբ: Որոշ նմուշներում հայտնաբերվել է նաև կորալու՝ 0.03-0.1% պարունակությամբ:

Ըստ միներալային կազմի առանձնացվում են հանքաքարի հետևյալ տեսակները.

1. Միամիներալային հեմատիտային կամ մազնետիտային հանքաքարեր՝ Fe 45-55% ;

2. Սկառնացված ապարներ՝ հեմատիտով և մազնետիտով՝ Fe 30-45% ;

3. Ցանավոր հեմատիտ-մազնետիտային հանքաքարեր՝ Fe 20-30% :

Ըստ ծագման հանքավայրը դասվում է կոնտակտ-մետաստմատիկայինից մինչև հիդրօքիրմալ տեսակների անցումային տիպին: Այստեղ հաշվարկված է 145 հազ. տոննա C₁ կարգի հանքաքարի պաշարներ:

Հետագա երկրաբանահետախուզական, երկրաֆիզիկական աշխատանքներում պետք է առաջին հերթին ընդգրկվի հանքավայրի տարածքը, իսկ հետազոտում ինտենսիվ անոնականությունը պետք է ստուգվեն լեռնային փորվածքներով և հորատանցքներով:

Բովերի-դոշ հանքավայրը նույնպես շահագործվել է վաղ ժամանակներում, ինչի մասին վկայում են հին փորվածքները և հանքավայրի առանձին մասերում երկարի հանքաքարի ծովալման խարամների կոտակումները: 1913-1914թթ. հանքավայրը մասնաբ հետախուզվել է, պահպանվել են առանձին ոչ խորը բովանցքներ:

Հանքավայրը գտնվում է Կողը գյուղից 3.5 կմ դեպի արևմուտք – հարավ-արևմուտք՝ Բովեր սարի հյուսիսային լանջին: Այրում երկարգծի կայարանի հետ կապված է 6-7 կմ երկարությամբ ճանապարհով: Հանքավայրը հարում է Կողըի ներժայքուկային զանգվածի հյուսիս-արևմտյան եզրագծին և կազմված է քվարցային դիորիտ-գրանոդիորիտներից, որոնք տեղ-տեղ հատվում են

գրանիտ-ապիտների և ապիտների երակների ցանցով: Քվարց-հեմատիտային հանքայնացումը վերահսկվում է հյուսիսնելյան և միջօրեկան տարածմամբ ճեղքերով:

Հանքային մարմինները ձևաբնորեն ներկայացված են քոյլ փոփոխված քվարց-դիորիտների մեջ տեղադրված քվարց-հեմատիտային երակներով:

Ըստ տարածման երակները հետամտված են տասնյակ, երբեմն հարյուրավոր մետրեր՝ 1-2 մ միջին հզորությամբ: Տեղամասում հայտնաբերված են 10 երակներ, որոնց որոշ մասը հետախուզված է:

Երակների ընդհանուր անկումը հարավ-արևելք ($140-170^{\circ}$) է՝ $55-60^{\circ}$ -ից մինչև 80° անկման անկյամբ: Երակներն ունեն քարդ կառուցվածք, երբեմն առաջացնում են փրփածքներ: Առկա են նաև մինչև 10-15 մ հզորությամբ հանքայնացված գոտիներ:

Բովեր սարի հյուսիսային զառիքափ լանջում տեղադրված որոշ երակներ անկում են հյուսիս - հյուսիս-արևմուտք:

Բովերի-դոշ հանքավայրի հանքաքարերը կազմված են հիմնականում քվարցից և հեմատիտից: Ոչ մեծ քանակությամբ առկա են մագնետիտ, պիրիտ, շատ հազվադեպ նաև խալկոպիրիտ: Երկրորդական առաջացումներից հանդիպում է լիմոնիտը: Առանձին քարարեկորային նմուշների քիմիական անալիզները (ՀԱԱ ԵԳԻ) ցույց են տվել հետևյալ արդյունքները (%): Fe - 54,65-56.91; SiO₂ - 17.58-22.62; Cu - 0.11; S - 0.12-0.5:

Հանքավայրում հանդիպում են համարյա միամիներալային հեմատիտային, քվարց-հեմատիտային՝ պիրիտի հետ և քվարցային զանգվածում՝ հեմատիտի ցանով հանքայնացմամբ տեղամասեր:

Հեմատիտային հանքաքարերը կապված են Կողքի զանգվածի քոյլ փոփոխված դիորիտների հետ և ներկայացված են քվարց-հեմատիտային երակներով ու երակահանքային գոտիներով: Այդ երակները իրենցից ներկայացնում են հիդրոքրեմալ առաջացումներ, որոնք ծագումնաբանորեն կապված են Կողքի զանգվածի ձևավորման հետ:

Որպես ինքնուրույն օբյեկտ՝ Բովերի-դոշի հանքավայրի հեռանկարները համեմատաբար մեծ չեն, քայլ տնտեսական քարենապաստ պայմանները, երակների կայունությունը՝ ըստ տարած-

ման և անկման, իիմք են հանդիսանում առավել մանրամասն երկրաբանահետախուզական աշխատանքների անցկացման համար:

Սվարանցի հանքավայրը գտվնվում է Բարգուշատի լեռնաշղթայի հյուսիսային լանջում, Կապան քաղաքից 55 կմ դեպի հյուսիս-արևմուտք, Արամազդ լեռան հյուսիսային լանջին, 2100-3000 մ բարձրությունների վրա:

1957-58թթ. մանրամասն մազնիսաչափական աշխատանքների արդյունքներով հայտնաբերվել են բազմաթիվ մազնիսական անոնալիաներ:

Հանքավայրի երկրաբանական կտրվածքում մասնակցում է մոտ 1 կմ հզորությամբ հրաբխանստվածքային հաստվածքը, որը կազմված է վերին կավճի և էղենի հասակի կարբոնատային ապարներից, ավազաքարերից, տուֆավիշրաքարերից, տուֆախառնաքարերից, կավակրաքարերից, պլազիոկլազային և պլազիոգլազ-պիրոքսենային պորֆիրիտներից: Այդ հզոր հաստվածքը պատռված է երեք հաջորդական փուլերի (գարբրո, գրանոլիորիտներ, սիենիտներ) ներդրման արդյունքում ձևավորված բարդ պետրոգրաֆիական կազմի երրորդական ներժայքությունով:

Հանքավայրի տարածքի մոտավորապես 80% կազմված է ներժայքությունուներից ապարներից. գիսավորապես՝ գարբրո-պիրոքսենիտներից, գարբրոներից, օլիվինային գարբրոներից, գարբրո-վիորիտներից, մննցոնիտներից՝ դիաբազ-պորֆիրիտային և անդեղիտարազալտային կազմի երակային ապարների ուղեկցությամբ: Ինտրուզիվ ապարների ողջ զանգվածը ներդրված է անտիկլինալային ծալքերի միջուկում և ձգվում է մերձլայնակի ուղղությամբ՝ 5-7 կմ ընդհանուր երկարությամբ և 1.5-2 կմ լայնությամբ:

Զևարանորեն հանքայնացումը տեղայնացված է միջօրեականին մոտ, հազվադեպ լայնակի տարածմամբ դայլկանման և ոսպնյակաձև զառիթափ անկմամբ մազնետիտային պերիտոտիտների (օլիվինիտներ) հանքային մարմիններում: 15 կմ² մակերեսի վրա հայտնաբերվել են դեպի արևելք ընդհանուր անկմամբ 30 հանքային մարմիններ և մազնիսական անոնալիաներ: Նրանցից մի քանիսը՝ 20-50 մ միջին հզորությամբ, հետամտված են 300-1200 մ ըստ տարածման և 800 մ խորությամբ: Ներփակող ապարների

հետ հանքային մարմինների կոնտակտները սովորաբար քավականին կտրուկ են: Մագնիսիտային հանքայնացումը առաջանում է ցաներ, երակներ, շիթեր, բներ, ոսպնյակիկներ և անկանոն շիթրային կոստակումներ:

Գլխավոր հանքառաջացնող միներալներն են՝ մագնետիտը, տիտանամագնետիտը, իլմենիտը, ոչ մեծ քանակությամբ հանդիպում են շպինել, պիրիտ և հազվադեպ՝ խալկոզին: Ոչ հանքային միներալներից բնորոշ է սերպենտինը: Որոշ տեղերում տարածված են քլորիտ, բիոտիտ, պիրոքսեն, պլազմիկլազ, ապատիտ: Սվարանցի հանքավայրի հանքաքարի յուրահատկությունը կայանում է օլիվինի հետ մագնետիտի և տիտանամագնետիտի մշտական զուգորդության մեջ:

Իլմենիտը և շպինելը ներկա են մագնետիտի դաշտում և առաջացնում են պինդ լուծույթների տրոհման էմուլսիոն, թերթաձև և ցանավոր ստրոկսուրաներ: Իլմենիտի պարունակությունը կազմում է 2, երբեմն 4%, իսկ շպինելի՝ 3-5%:

Քիմիական անալիզի արդյունքներով Սվարանցի հանքավայրը բնութագրվում է հետևյալ քաղաքությամբ՝ Fe 15-43; MgO 17-21; SiO₂ 14-20; Al₂O₃ 3-7; Cr₂O₃ մինչև 3; MnO 0.07-1; V₂O₃ մինչև 1; P₂O₅ 0.23; S մինչև 0.3; Au մինչև 0.4, Ag 2.2 գ/տ:

Ըստ հանքայնացման բնույթի, երկարի և այլ տարրերի պարունակության՝ հանքավայրում կարելի է առանձնացնել հանքաքարի հետևյալ տեսակները.

1. հարուստ, զանգվածային՝ Fe 32-43 %, TiO₂ 2.5-3.0 %, V₂O₅ 0.3-0.4 %;

2. խիտ ցանավոր - երակացանավոր՝ Fe 20-25 %, TiO₂ 1.5-2.5 %, V₂O₅ 0.1-0.2 %;

3. նոր ցանավոր - աղքատ՝ Fe 15-20 %, TiO₂ 0.7-1.5 %, V₂O₅ 0.03-0.05 %:

Գերակռում են վերջին 2 տեսակները: Հանքավայրում երկարի միջին պարունակությունը կազմում է 18-20 %:

Պետք է նշել, որ մագնետիտի և տիտանամագնետիտի հետ հանքավայրում նկատվում է նաև երակային տեսակի հեմատիտային և ոռոտիլային հանքատեսակներ՝ մմ-ից մինչև 15-18 սմ հզրությամբ:

Սվարանցի հանքավայրի հանքաքարը հարտացվում է մազնիսական սեպարացիայի մեթոդով՝ խտանյութում երկարի 45% պարունակությամբ և 74% կորզմամբ: Հարտացման մնացուկները բնորոշվում են MgO քարձր պարունակությամբ և իրենց քիմիական կազմով նրանց կարելի է դիտել որպես մետաղախեցեգործական իրերի պատրաստման և MgO ու Mg ստացման հումք:

Սվարանցի երկարի հանքավայրը դասվում է ոչ մազմատիկ (հիստերոմազմատիկ) հանքավայրերի տեսակին: 9 հանքային մարմինների համեմատաբար մանրամասն ուսումնասիրման արդյունքներով պաշարները կազմում են 423 մլն.տ հանքաքար՝ երկարի 20% միջին պարունակությամբ, այդ թվում. Յ կարգի 39 մլն.տ, C₁ – 98 մլն.տ, C₂ – 286 մլն.տ:

Նույնիսկ մանրամասն ուսումնասիրված մարմինները ըստ տարածման և խորության եզրագծված չեն, չեն ստուգվել հանքային դաշտում գրանցված մազնիսական անոնական ներքությամբ: Սվարանցի երկարահանքի ռեսուրսները գնահատվում են 800 մլն.տ:

Հաղարծինի մազնեսփոտային ավագաքարերի հանքավայրը գտնվում է Տավուշի մարզում, Աղստև գետի Հաղարծին վտակի ստորին հոսանքներում: Հանքավայրի տարածքում մերկանում են միջին յուրայի հրաբխածին ապարները (պորֆիրիտներ, պլազմակազմական պորֆիրիտներ և այլն) և եղցենի գորշ կանաչավուն տուֆավազաքարերը և տուֆախառնաքարերը, որոնք մինյանց նկատմամբ տեղաշարժված են հյուսիս-արևմտյան ուղղությամբ խոշոր վարնետքով: Զեարանորեն հանքային մարմինները ներկայացված են շերտերով: Հանքավայրը ներկայացված է հիմնականում մեծ տարածմամբ և հզորությամբ մազնետփոտային ավագաքարերի 5 շերտերից:

Ծերտ 1 – գտնվում է հանքավայրի հարավային մասում, խճուղուց մոտ 1 կմ հյուսիս: Ծերտի տարածումը լայնակի է, անկումը՝ հարավ՝ 60-71° անկյան տակ, ընդհանուր երկարությունը 600-650 մ, հզորությունը՝ ըստ 1 և 2 բովանցքների տվյալների՝ 5-7մ: Հանքայնացումը ներկայացված է ցանավոր և հոնք երկարահանքով: Ցանավոր հանքաքարում՝ Fe₂O₃ – 22-35%, TiO₂ – 1.95-3.25%, V₂O₅ – 0.05-0.35%:

Ծերտ 2 – տեղադրված է I շերտից 800-900 մ դեպի հյուսիս և հետամտված է առուներով, հետախուզահորերով և 2 հորա-

տանցքերով: Շերտի ընդհանուր երկարությունը մոտավորապես 850-900 մ է, հզորությունը – 1-9 մ, անկումը դեպի հյուսիս-արևմուտք, անկման անկումը՝ $25\text{-}30^{\circ}$:

Հանքատեսակների կազմը հետևյալն է (%): ցանավոր հանքարում – $14.33\text{-}40.75$ Fe_2O_3 ; $1.24\text{-}11.0$ TiO_2 ; $0.02\text{-}0.09$ V_2O_5 (17 նմուշ), հոծ հանքարում – $37.74\text{-}54.51$ Fe_2O_3 ; $0.32\text{-}6.16$ TiO_2 ; $0.09\text{-}0.15$ V_2O_5 (7 նմուշ):

Շերտ 3 – գտնվում է շերտ 2-ից 1-1.2 կմ դեպի հյուսիս, հետամտված է $450\text{-}500$ մ, անկումը դեպի հարավ-արևմուտք՝ $25\text{-}30^{\circ}$ անկյան տակ: Հզորությունը տատանվում 1-3 մ սահմաններում: Ըստ 8 նմուշների տվյալների առկա են $13.12\text{-}63.79\%$ Fe_2O_3 ; $1.6\text{-}6.78\%$ TiO_2 ; $0.05\text{-}1.1\%$ V_2O_5 :

Շերտ 4 – գտնվում է Հաղարծին գյուղի ավերակներից 500 մ դեպի հյուսիս, հետամտված է առուներով և բովանցրով՝ 800 մ երկարությամբ և 1-3 մ հզորությամբ: Տարածումը լայնակի է, անկումը դեպի հարավ $65\text{-}70^{\circ}$ անկյան տակ: 12 նմուշներով որոշված են $15.99\text{-}52.65\%$ Fe_2O_3 ; $12.3\text{-}7.94\%$ TiO_2 ; $0.01\text{-}0.08\%$ V_2O_5 :

Շերտ 5 – տեղադրված է Դալիդաղ լեռնաշղթայի հարավային լանջում, կրաքարերի մերկացումից ներքև՝ Ծաղկոտ տեղամասում: 7 նմուշներով որոշված է $45.92\text{-}56\text{-}62\%$ Fe_2O_3 ; $2.28\text{-}4.95\%$ TiO_2 ; $0.1\text{-}0.5\%$ V_2O_5 :

Հանքային շերտերը սովորաբար կազմված են գորշ երկարուվ և հանքային միներալներով ներկայացված հարուստ և համեմատաբար աղքատ լիմոնիտացված 5-10 մմ հզորությամբ տուֆաավազաքարերի նրբաշերտերից:

Հանքային միներալներն են՝ մագնետիտը, իլմենիտը, հեմատիտը, ռուստիլը, տիտանամագնետիտը, մարտիտը, լիմոնիտը: Հանքային միներալների հատիկները ցեմենտացված են քվարցով, դաշտային սպարներով, քլորիտով: Բոլոր տեղամասերում հանքային շերտերի ստրուկտորան անհամասեռ է: Ըստ մագնետիտի հանքայնացման քննությի անջատվում են. հոծ հանքաքար՝ ամբողջովին կազմված մանրահատիկ մագնետիտից, շերտավոր հանքաքար՝ կազմված միմյանց հաջորդող մագնետիտի և տուֆաավազաքարերի նուրբ շերտերից և, վերջապես, նոսր ցանավոր հանքաքար՝ ներկայացված տուֆաավազաքարերի մեջ մագնետիտի նոսր ցանով:

Հաղարծինի հանքավայրը ծագումնաբանորեն դասվում է նստվածքային տեսակին: Մագնետիտային ավազաքարերի շերտերը առաջացել են Էոցենյան ծովի մերձափնյա գոտում:

Հաղարծինի հանքավայրի հանքաքարին բնորոշ է արժեքավոր խառնուրդների՝ տիտանի օրսիդի և վանադիումի հնգօրսիդի մշտական առկայությունը:

Մագնետիտային ավազաքարերը հեշտ հարստացվող են: Լարորատոր պայմաններում 3 նմուշների մագնիսական զատման եղանակով խտանյութի ելքը կազմում է 43 % մագնիսական ֆրակցիա (Fe 48.25%, TiO_2 4.5%) 26.5% էլեկտրամագնիսական ֆրակցիա (Fe 14.5%): Ոչ մագնիսական ֆրակցիան կազմում է 1.5%:

Նախնական հետախուզական աշխատանքներով բացված և հետամտված է մագնետիտային ավազաքարերի 5 շերտերը, որոնց գումարային երկարությունը կազմում է 3400 մ՝ 2.5մ միջին հզրությամբ: Հանքաքարի մոտավոր պաշարները կազմում են 6.0 մլն.տ՝ Fe 25-30%, Ti_2O_3 2-3%, V_2O_5 0.1% միջին պարունակություններով: Նորագույն տվյալներով մագնետիտային ավազաքարերի հեռանկարները շատ ավելի մեծ են:

Տնտեսական և շահագործման լեռնատեխնիկական բարենպատ պայմանները մեծ հետաքրքրություն են առաջացնում Հաղարծինի հանքավայրի նկատմամբ:

Հաղարծինի հանքավայրը համանման է Խսֆարից (հարավային Ֆերգանա) արևելյա Գուզան լեռան վերին կարբոնի և Դաշըսանի (Աղրբեջան) յորայի մագնետիտային ավազաքարերում տարածված հանքավայրերին:

Արովյանի (Կապուտանի) հանքավայրը գտնվում է Կապուտան գյուղից հարավ-արևմուտք, Երևանից 30 կմ դեպի հյուսիս-արևելք: Կապուտան գյուղի մոտ մագնետիտի երևակումները հայտնի են վաղ ժամանակներից, սակայն հանքավայրի արմատական ելքերը հայտնաբերվել են Հ.Գ. Մաղաքյանի կողմից 1947թ.: 1961թ. երկրաբանական վարչության մագնիսաչփական աշխատանքների արդյունքներով եզրագծել են 800 մ երկարությամբ ճգփող անոնալիաներ, որոնք կապված են հիդրոքերմալ փոփոխված փշրաքարային անդեղիտների հետ:

Հատիս լեռան շերտագրական կտրվածքում, որի արևմտյան լանջում տեղադրված է հանքավայրը, Ն.Ն. Պաֆիենիոլցի

տվյալներով առավել հին ապարները ներկայացված են օլիգոցենի հասակի անդեզիտարազալտներով, անդեզիտներով, ոլորդիտացիտներով, ոլորդիտներով, վանակատային տուֆափշրաքարերով: Հրաբխածին հաստվածքը ծածկված է չորրորդական հասակի բազալտներով: Օլիգոցենի առաջացումները բավականին դեֆորմացված են: Հանքավայրում հետամտվում է հարավ-արևմտյան տարածմամբ, մոտ 1.5 կմ երկարությամբ խախտման գոտի:

Հանքավայրում առանձնացվում է 2 տեղամաս՝ աջափնյա և ձախափնյա: Հանքաքարի արմատական ելքերը այդ տեղամասերում կապված են փոփոխված, ջարդութված բաց-գորշագույն անդեզիտների հետ և նրանց նկատմամբ նակածին են: Հանքային մարմինների հետ ունեցած կրնտակտում անդեզիտների փոփոխությունները արտահայտվում են նրանցում քլորիտի և էպիլորտի զարգացմամբ: Տեղամասերը միմյանցից տարրերվում են հանքային մարմինների ձևաբանությամբ: Ձախափնյա տեղամասում հոծ մազնետիտ-ապատիտային հանքաքարերի արմատական ելքերը ունեն $20\text{--}30^{\circ}$ անկյան տակ հարավ-արևմտյան անկմամբ կուտակների ձև, և 1.0-2.5 մ տեսանելի հզորությամբ հետամտվել են մոտավորապես 10-15 մ երկարությամբ:

Աջափնյա տեղամասում հանքաքարի արմատական ելքը գտնվում է ձախափնյա տեղամասի դիմաց, գոգահովտի աջ ափին: Այստեղ հանքայնացման գոտին իրենից ներկայացնում է միմյանց փոխադարձ հատող մազնետիտային երակների և նրբերակների ցանց: Հանդիպում են նաև ապատիտի երականմամ մարմիններ, 0.4-0.5 մ հզորությամբ: Երակների և նրբերակների անկումը հյուսիս – հյուսիս-արևելք 5° և $45\text{--}50^{\circ}$ անկյան տակ: Մազնետիտ-ապատիտային երակները և նրբերակները ունեն կտրուկ սահմաններ և հատում են ներփակող անդեզիտներին, հետամտված են 5-6 մ և ունեն 2-5-ից մինչև 25-30 սմ հզորություն: Բացի արմատական ելքերից, 0.2-0.3 կմ² մակերեսով տարածքում, դելյուվիալ նատվածքների մեջ հանդիպում են մազնիսական երկաքահնքի բեկորներ, ընդ որում բեկորների տարածման վերին սահմանը կտրուկ է և անցնում է Կապուտան գյուղից 50 մ հիպսոմետրիկ բարձրության վրա:

Մազնիսական անոնմադիանների սահմաններում փորված հորատանցքերով հայտնաբերվել են մինչև 50-60% երկարի պա-

բունակությամբ 5-70 մ հզրությամբ երականման և շերտանման մարմիններ, և 10-20-ից մինչև 100 մ և ավելի հզրությամբ երակի-կացանավոր գոտիներ՝ մագնետիտ-ապատիտային հանքայնացմամբ:

Հանքաքարի միներալային կազմը բավականին պարզ է և կայուն: Գլխավոր հանքային միներալը մագնետիտն է, որի դաշտում խառնուրդի տեսքով հազվադեպ հանդիպում են իլմենիտը և ոչ հանքային միներալներից՝ մեղրադեղին գույնի ապատիտը (ֆտոր-ապատիտ): Վերջինս հոծ մագնետիտային հանքաքարի մեջ առաջացնում է երկարավուն անջատումներ և խոշոր հզրմետրիկ բյուրեղներ:

Երկրաքանական կառուցվածքը, հանքայնացման քնույթը, հանքաքարի միներալոգիական և քիմիական կազմը բույլ են տալիս Արովյանի հանքավայրը դասել ապատիտ-մագնետիտային յուրահատուկ տեսակին, որը առաջացել է ուշ մագնատիկ վիոլում՝ երկարով, ֆուֆորով, ֆտորով հարուստ մնացորդային հանքային մագմայից:

Կարելի է ենթադրել, որ հանքավայրը ծագումնաբանորեն կապված է խորքային ներժայքության մարմնի հետ, որը մերկացված չէ երողիայով:

Արովյանի հանքավայրը իր առաջացման պայմաններով, միներալային կազմով և հանքաքարի տեսակով համարվում է Լեռյաժնի (միջին Ուրալ), Հյուսիսային Ծվեղիայի Կիրանավարի, Լյուտսսավարի և Գուլիկավարի հանքավայրերի գեոտիպ նմանակը:

Հանքավայրը հանդիսանում է Հայաստանի երկարահանքային հանքավայրերից առավել հեռանկարայինը:

Կատարված որոնողա-հետախուզական աշխատանքների արդյունքում հանքավայրի պաշարները գնահատվում են մոտ 200 մլն.տ հանքաքար՝ երկարի 32% միջին պարունակությամբ:

Դպրաբակի հանքավայրը գտնվում է Գեղարքունիքի մարզի Դպրաբակ գյուղից 1.5 կմ դեպի հյուսիս-արևելք՝ Գետիկ գետի աջ ափին:

Հանքավայրը ներկայացված է հրաբխանատվածքային առաջացումներով (ստորին-միջին Էոցենի հասակի միջին-մանրահատիկ տուֆավազաքարեր, պորֆիրիտներ, տուֆիտներ), որոնք ընդգրկվում են լայնակի տարածմամբ կամարածալքում:

Եցենի ապարները պատռվում են քվարցային դիորիտի ներժայթուկով: Հանքավայրը հարում է խոշոր տեկտոնական խզվածքի կախված թվին: Հանքային մարմինը ներկայացնում է լայնակի տարածմամբ շերտանման կուտակ և անկում է դեպի հյուսիս՝ $45\text{--}65^{\circ}$ անկյան տակ: 2-5 մ հզորությամբ հանքային մարմինը, ընդհատումներով, հետամտված է 700-750 մ:

Հանքարդիակող ապարները քվարցացված են և պիրիտացված:

Գլխավոր միներալներն են. մագնետիտ, հեմատիտ, յակորսիտ. երբեմն հանդիպում է պղնձի հանքայնացում, որը մակերեսում ներկայացված է դահանակով (մալախիտ), ազուրիտով, հազվադեպ, խալկոպիրիտով: Առկա են նաև պիրիտը և սֆալերիտը: Պղնձի պարունակությունը հասնում է 1.5%: Ոչ հանքային միներալները ներկայացված են. քվարցով, կրասպարով, ճենակավով և այլն: Երկարի պարունակությունը տատանվում է 27-40%:

Ծագումնաբանորեն հանքավայրը դասվում է հիդրոքերմալ (կամ, հնարավոր է էկզակարգիոն նստվածքային) տեսակին:

Հանքավայրը թույլ է ուսումնասիրված: Հեռանկարները պարզ չեն, բայց հանքավայրի շրջանը արժանի է ուշադրության երկրաբանակրութիվիկական մանրամասն աշխատանքների կատարման առումով:

Այրիջուրի երևակումը գտնվում է Շամբարակի շրջանի Դպրաբակ գյուղից 1.5-2 կմ դեպի հարավ-արևելք, Գետիկ գետի ծախ ափին: Երևակումը կապված է տեկտոնական խախտման հետ և տեղադրված է Դպրաբակի կամարածալքում:

Հանքների կառավագանքը ապարները ներկայացված են տուֆափշրաբարերով, որոնք հաճախ շերտավորվում են ստորին էղենի պորֆիրիտներով: Հայտնաբերված են անկանոն ձևի հանքային մարմիններ, որոնցից երկուսը հետամտվել են 100-150 մ ըստ տարածման և ունեն 3-7 մ հզորություն: Երրորդ հանքային մարմինը հետամտված է 100 մ, որի հզորությունը 20-50 մ է: Fe_2O_3 պարունակությունը տատանվում է 40-47%: Հանքաքարը կազմված է հիմնականում հեմատիտից, համատեղ հանդիպում են մագնետիտ, խալկոպիրիտ, լիմոնիտ, դահանակ, ազուրիտ:

Ծագումնաբանական տեսակետից երևակումը դասվում է հիդրոքերմալ տեսակին:

Կողքի ներժայքուկի կոնտակտային գոտու երկարի հանքավայրեր: Կողքի ներժայքուկի կոնտակտային գոտում գտնվում են Կողքի, Հանքավանի, Կարցախի հանքավայրերը և մի շարք երևակումներ, որոնք ներկայացված են սկառնացված հրաբխային և նստվածքային ապարներով, կոնտակտամետամատիկ տեսակի մազնետիտային, հազվադեպ հեմատիտային հանքայնացմամբ:

Ծակերի դոշ երկարի հանքավայրը հայտնի է հնուց, ինչի մասին վկայում են պահպանված թափոնները և խարամները: Հանքավայրի համակարգված երկրաբանական ուսումնասիրությունները սկսվել են 1944թ.: 1946 թ. ՀԽՍՀ ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի կողմից կազմվել է հանքավայրի երկրաբանական քարտեզը, իսկ 1947թ. կատարվել են մանրամասն մազնիսաշահման աշխատանքներ, որոնք ի հայտ են բերել մի շարք բավականին ինտենսիվ անոնալիաներ:

Հանքավայրը գտնվում է Տավուշի մարզում և տեղադրված է Կողք գյուղից 3 կմ դեպի հյուսիս-արևմուտք, Այրում երկարգծի կայարանից 5-6 կմ հեռավորության վրա:

Հանքավայրը հետախուզված է մակերեսային և ստորգետնյա լեռնային փորվածքներով ու հորատանցքներով:

Հանքավայրում առաջին երկրաբանահետախուզական աշխատանքները սկսվել են 1950 թ. Հայկական երկրաբանական վարչության կողմից: Առաջին երկու բովանդքները՝ խավանցքներով և վերգետնյա լեռնային փորվածքներով, բացել են երկարի հանքարի կուտակումներ: 1951թ. կատարվել է հանքավայրի առանձին տեղամասերի եզրագծում և ուսումնասիրություններ, որոնք ուղեկցվել են նոր ստորգետնյա լեռնային փորվածքների և հորատանցքների անցմամբ և կազմվել է հանքավայրի երկրաբանական քարտեզը:

Նախնական հետախուզությունից հետո հանքավայրը «Հայբարիտ»-ի կողմից հետախուզվել և մշակվել է, արդյունահանելով երկարի հանքաքար՝ նավթային արդյունաբերության մեջ օգտագործելու նպատակով: «Հայբարիտ»-ի աշխատանքների արդյունքում եզրագծվել են նոր հանքային մարմիններ, բայց հետագայում հետախուզական աշխատանքները դադարացվել են:

Հանքավայրը տեղադրված է Կողըի ներժայքուկի արտաքին կոնտակտային մասում, որը ճեղքում է հանքավայրի տարածքի միջին-վերին յուրայի հրաբխանատվածքային հաստվածքը՝ ածխատների ոսպնյակներով, որոնք տարածված են հյուսիսարևմտյան ուղղությամբ և իրենց առավել հզորությանն են հասնում հանքավայրի սահմաններից դուրս՝ Կածանի-չալ տեղամասում։ Հանքայնացումը հարում է քվարցային դիորիտների և միջին յուրայի հրաբխանատվածքային հաստվածքի կոնտակտին։

Հանքավայրում հայտնի են հանքայնացման մի քանի արմատական ելքեր։ Հանքային մարմիններից մեկը ներկայացված է էպիդոտ-հեմատիտ-մագնետիտային սկառնով՝ դահանակի և ազուրիտի քսուկներով։ Հանքաքարի այդ արմատական ելքը տեղադրված է կարբոնատային ոսպնյակի հետ պորֆիրիտների կոնտակտի պառկած թևում։ Հանքային մարմինը ներկայացնում է 2 մ տեսանելի հզորությամբ, և ըստ տարածման 4-5 մ հետամտված, ածխատների անկմանը ներդաշնակ տեղադրված, դեպի հյուսիս անկմամբ ոսպնյակ։ Այդ ելքից 100 մ դեպի հարավ-արևմուտք գոյություն ունի հին թեք փորվածք, որը տրված է հեմատիտային երականման մարմնի տարածման ուղղությամբ։ Հեմատիտային երակի տարածումը 290° է, անկումը հյուսիս-արևելք՝ 50° անկյան տակ։

Երկարի հանքաքարի հաջորդ արմատական ելքը գտնվում է հորերի շարանից 200 մ արևելք, Վարդիզուղի տեղանքի հողային ճանապարհից վերև, որտեղ էպիդոտ-հեմատիտային կազմի երականման հանքային մարմինը կապված է սկառնացված ածխատների ոսպնյակի և էպիդոտացված պորֆիրիտների կոնտակտի հետ։ Հանքային մարմինի անկումը հյուսիս-արևմուտք 330° է, անկման անկյունը՝ 30° ։

Հանքային մարմինների համար բնորոշ են բնաձև, երականման և ոսպնյակաձև ձևաբանական տեսակները։

Հանքավայրի սահմաններում երկրաբանաերկրաֆիզիկական աշխատանքների արդյունքում եղագածվել են հանքաքեր գոտիներ. զյսավոր հանքային գոտին 500 մ երկարությամբ և 80-100 մ լայնությամբ բացված է հետախուզահորերով և թ. 1 ու 2 բոլանցքերով։ Հոծ մագնետիտ-հեմատիտային հանքաքարից կազմված հանքային մարմինները այս գոտում ներկայացված են ոսպնյա-

կաձև կուտակներով և բներով, ընդ որում հանքայնացման բաշխումը ինչպես ուղղաձիգ, այնպես էլ հորիզոնական ուղղություններով անհամաշափ է: Բացի դրանից, թ. 1 ու 2 բովանցքերի տվյալների համեմատությունից պարզվում է, որ թ. 2 բովանցքի հանքաքարը թ. 1 բովանցքի համեմատությամբ հարուստ է և նրանում երկարի պարունակությունը հասնում է 55.0-59.7%:

Երկրորդ գոտին, ըստ էության, գլխավոր գոտու առանձնացված հատվածն է՝ 3600 մ² (120x30) մակերեսով: Այս տեղամասում տեղադրված հանքային մարմինները բացվել են հետախուզահորերով և հորատանցքերով: Ըստ 12 նմուշների տվյալների Fe – 41.38% է, S – 3.2%:

Երրորդ գոտին գտնվում է գլխավոր գոտուց 180 մ դեպի հյուսիս-արևմուտք և զբաղեցնում է 1000 մ² (50x20) մակերես: բացված է հետախուզահորերով և հետախուզաառուներով: Հանքայնացումը ներկայացված է մազնետիստի և հեմատիտի բնանման կուտակումներով՝ երկարի միջև 49.13% պարունակությամբ:

Չորրորդ գոտին զբաղեցնում է փոքր մակերես, մերկանում է անմիջապես ճանապարհի մոտ և բացված է առուներով և հետախուզահորերով:

Նկարագրվող տարածքում հանքաքեր գոտիները ցանավոր հանքայնացմամբ տեղայնացվում են ոսպնյակաձև կուտակներում և հոծ մազնետիտ-հեմատիտային հանքաքարի բներում: Հանքայնացման բնույթով նշված գոտիները համարյա չեն տարբերվում միմյանցից և հորատանցքերով հետամտված են 100-150 մ խորությամբ:

Կողքի հանքավայրի հանքաքարի կազմը համեմատարար պարզ է: Հանքային գլխավոր միներալներն են հեմատիտը, մազնետիտը, մուշկետովիտը: Սակավ տարածում ունեն սուլֆիդները՝ պիրիտը, խալկոպիրիտը, երբենն կովելլինը: Ոչ հանքային միներալներից լայն տարածված են էալիտոտը և քլորիտը, ոչ մեծ քանակությամբ քվարցը և կալցիտը: Օքսիդացման գոտում հանքաքեր ապարները ինտենսիվ լիմոնիտացված են՝ դահանակի և ազուրիտի քսուկներով:

Հանքաքարը կազմված է մազնետիտի մանր բյուրեղիկներից, հեմատիտի թեփուկներից և բավական հաճախ՝ մուշկետովի-

տից. հազվադեպ հանդիպում են պիրիտի և խալկոպիրիտի առանձին բյուրեղներ: Երբեմն լայն տարածված է լիմոնիտը:

Հանքաքարում երկարի պարունակությունը խիստ տատանվում է՝ հարուստ տարատեսակներում հասնելով մինչև 50-60%: Ցանավոր հանքաքարում Fe – 30% է, S` մինչև 0.6%, իսկ հոգ հանքաքարում՝ Fe – 30-ից մինչև 56%, S` մինչև 2% և Cu – 0.06-ից մինչև 0.22%:

Հստ հանքաքարի միներալային կազմի և հանքայնացման բնույթի հանքավայրում անջատվում են հետևյալ տեսակները.

ա) սորուն հեմատիտային հանքաքար՝ էպիդոտացված ապարների մեջ հեմատիտի ցրված մասն քեփուկային ցանով (Fe – 15-25%);

բ) մազնետիտային հանքաքար՝ պիրիտի, էպիդոտի, քլորիտի, քվարցի և կալցիտի խառնուրդներով (Fe – 25-40%);

գ) մազնետիտ-հեմատիտային հոգ հանքաքար՝ էպիդոտի հետ (Fe- 40-55%):

Նշված տեսակների մեջ հանքաքարի փոխադարձ անցում նկատվում է շատ հաճախ:

Կողքի հանքավայրը մի շարք բնորոշ հատկանիշներով վերագրվում է կոնտակտամետասոմատիկ տեսակին: Բայց մազնետիտային հանքաքարի մանրահատիկությունը և հոգ բնույթը, քվարցի և քլորիտի առատությունը, մազնետիտի անջատումները պիրիտի բյուրեղներից հետո, բարձր զերմաստիճանային նոնաքարի բացակայությունը հնարավորություն են տալիս նրան վերագրելու նաև հիդրօքերմալ տեսակին: Ասվածից երևում է, որ հանքավայրը ձևավորվել է 2 փուլերով.

1. Ավելի վաղ և բարձր զերմաստիճանային, երբ տեղի են ունեցել կողային ապարների՝ պորֆիրիտների, նրանց տուփերի և մասամբ կրաքարերի փոխակերպումներ էպիդոտային սկառների՝ մազնետիտի և հեմատիտի հազվադեպ անջատումներով:

2. Ցածր զերմաստիճանային, երբ հիդրօքերմալ լուծույթների շրջանառության արդյունքում առաջացել են մազնետիտի հոգ և ցանավոր մանրահատիկ հանքաքար հեմատիտի, պիրիտի և խալկոպիրիտի հետ՝ քլորիտի և քվարցի նշանակալի դերով:

Կողքի հանքավայրը իր երկրաբանական կառուցվածքով և հանքայնացման բնույթով բավականին նման է սկառնային տե-

սակի Երկաքահանքային շատ հանքավայրերի: Նրանցից առաջին հերթին կարելի է նշել Աղբքեջանի Դաշըեսան, Ռուսաստանի «Մազմիտնայա», Բլագոդատ, Վիտկայա, Ուրալի Թեմուր-Թաու, Տելրես, Արական (Արևմտյան Սիբիր) և այլն:

Հանքավայրի շահագործման տնտեսական և լեռնա-տեխնիկական պայմանները բավականին բարենպաստ են՝ ուղղվ ճանապարհով հեռու չեւ Երկաքգծից (5-6կմ), տեղանքի ոնինինքը բույլ է տալիս Երկաքգծից հանքավայր ճոպանուղի անցկացնել, իսկ ջրաբերուկների աննշան հզորությունը (3-5 մինչև 6 մ) հնարավորություն է տալիս հանքավայրի շահագործումը իրականացնել բաց եղանակով:

Նախնական հետախուզման արդյունքներով Կողը հանքավայրի պաշարները 01.01.1952թ. դրույթամբ $B+C_1+C_2$ կարգերով կազմում են 1157280տ՝ Երկաքի 25-27% պարունակությամբ:

Պաշարների բերված թվերը չեն կարող լիարժեք բնութագրել հանքավայրի հեռանկարները, քանի որ այն մնացել է թերի հետախուզված: Հաշվի առնելով հանքավայրի դիրքը, Երկրաբանական կառուցվածքը, հանքային մարմինների ձևությունը բավարար չեւ հանքավայրի շրջանի հանքաբերությունը բնութագրելու համար:

Հանքավայրը ունի բավականին բարդ կառուցվածք, հանքային մարմինների բարդ ձևաբանություն և գոյություն ունեցող հետախուզվական ցանցի խտությունը բավարար չեւ հանքավայրի շրջանի հանքաբերությունը բնութագրելու համար:

1953-54թթ. Կողը ներժայքուկի զանգվածի 2000 կմ² տարածքի վրա աէրոնազմիսական հանույթի տվյալները տվել են դրական արդյունք: Ըստ այդ տվյալների հեռանկարային է Բագրատաշեն գյուղից մինչև Կերպիլի գյուղից արևելք հետամտված անոմալիայի գոտին: Այդ տեղամասերը ներկայացնում են էական հետաքրքրություն և մազմիսական դաշտի բարձր լարման կետերով պետք է անցնել հորատանցքեր:

Հարավային Հայաստանի տիտանամագնետիտային հանքավայրեր:

Կամաքարի (Կալաքարի) հանքավայրը հայտնի է հնուց, ինչի մասին են վկայում Երկաքահանքի ձուլման խարամների կուտակումները: Հանքավայրը գտնվում է Սյունիքի մարզի Մեղրու

շրջանում, Կամաքար և Պալչիսլու լեռների տարածքում, Կարավգետի վերին հոսանքում: Երկարզգծի Ալիդարա կայարանի հետ կապված է 18 կմ երկարությամբ արահետով: Կամաքար լեռը կազմված է ներժայքության ապարներից, որոնց մեջ գերակշռություն են սիենիտ-դիորիտները և դիորիտները: Ներժայքությունում պարփակող հաստվածքը ներկայացված է հրաքսային և նստվածքային ապարների՝ պորֆիրիտների, տուֆերի, տուֆիտների խոշոր տեղամասերով:

Հանքավայրը կազմող սիենիտ-դիորիտների, գարբոների և պիրոքսենիտների մեջ, հարավ-արևելյան ուղղությամբ մոտավորապես 1 կմ ձգված գոտով, 160-400 մ լայնությամբ տեղամասում նկատվում են շլիրային անջատումներ, մազնետիտի երակներ ու կուտակումներ:

Ներփակող սիենիտ-դիորիտային ապարների մեջ մազնետիտային հանքայնացումը առաջացնում է միմյանց հատող 1-2-ից մինչև 20-30 սմ հզորությամբ երակների բավականին խիստ ցանց: Երբեմն նկատվում են միմյանց գուգահեռ, 7-10 սմ հեռավորության վրա տեղադրված, մազնետիտային երակների շարք:

Համեմատաբար հարուստ հանքայնացում հայտնաբերված է «Յուժնի» տեղամասում, որտեղ պիրոքսենիտների մեջ առանձնացվում է 380 մ տարածմամբ և 200 մ հզորությամբ «հանքային մարմին»: Մյուս 2 տեղամասերում՝ «Սևադան» և «Սևերնի» հանքային մարմիններն ունեն 50-60 մ երկարություն և 8-10 մ հզորություն: Հանքավայրի պաշարները գնահատվում են 70 մլն.տ հանքաքար՝ Fe 15-20% պարունակությամբ:

Սիենիտ-դացիտների մեջ գլխավոր հանքային միներալներն են հանդիսանում մազնետիտը և ապատիտը, պիրոքսենիտների մեջ՝ տիտանամագնետիտը, շպինելը՝ խալկոպիրիտի և բորմիտի խառնուրդով:

Fe 15-20% պարունակությամբ հանքաքարերի մեջ հայտնաբերվել է. 0.13% S; 0.07% As; 0.27% P, ինչպես նաև 28% Mn, մինչև 0.09% Ni և 0.5-0.59% TiO₂:

Առաջացման պայմաններով և միներալային կազմով հանքավայրը դասվում է մազմատիկ (ուշ մազմատիկ) տեսակին և ծագումնաբանորեն սերտորեն կապված է սիենիտ-դիորիտների:

(մագնետիտ-ապատիտային հանքաքար) և պիրոքսենիտների (տիտանամագնետիտային հանքաքար) են:

Հանքավայրի հեռանկարները վերջնականորեն պարզված չեն: Մագնետիտ-ապատիտային և տիտանամագնետիտային հանքաքարների տարածման շրջանում անհրաժեշտ են մանրամասն հանուրային և երկարանական աշխատանքներ:

Կարցախի հանքավայրը գտնվում է Ալավերդու շրջանի Թեղուտ գյուղից 5-6 կմ դեպի հարավ, Կարցախ լեռան հյուսիսային լանջին, Երևան-Թբիլիսի երկաթգծից 14 կմ հեռավորության վրա:

Հանքավայրը ներկայացված է Կողքի ներժայքուկ զանգվածի հարավ-արևմտյան ծայրամասում և կազմված է կանաչամոխրագույն էպիդոտացված, հոծ պորֆիրիտներով և նրանց տուֆերով: Տուֆապորֆիրիտային հաստվածքում առկա են նաև մետաստիկ պլոցենետներին հեշտությամբ ենթարկվող կրաքարներ կամ կրաքարային տուֆերի ոսպնյակներ և նրբաշերտեր: Հանքավայրում հանքաքարի արմատական ելքեր հազվադեպ են հանդիպում: Տեղանքը խիստ անտառածածկ է: Յայլաներ տանող ճանապարհից ներքև, անտառում զարիքափ լանջում՝ մոտ 500 մ² մակերեսով տարածքում կան ավելի քան 20 փոսեր, որոնց քափոններում հանդիպում են էպիդոտացված պորֆիրիտների, էպիդոտ-մագնետիտային հանքայնացմամբ բեկորներ՝, երբեմն պիրիտի խառնուրդներով: Դատելով փոսերի և նրանց քափոնների դասավորությունից կարելի է ենթադրել, որ այդ ուղղությամբ անցնում է սկառնային գոտի՝ էպիդոտ-մագնետիտային հանքայնացմամբ: Լանջը ինտենսիվ փորված է, փոսերի գոտին տարածվում է 100-120 մ: Բացի փոսերից և քափոններից, մասնավորապես նրանցից 1 կմ դեպի հյուսիս գյուղ տանող ճանապարհին, հանդիպում են երկարի հանքաքարի հալման խարամների կուտակումներ: Հանքաքարը ներկայացված է քվարց-էպիդոտային ապարներով, մագնետիտի մանրահատիկ նրբերակիկներով և տեղամասերով: Մանրադիտակի տակ քացի մագնետիտից խառնուրդի ձևով հանդիպում են պիրիտ և լիմոնիտ: Կարցախի հանքավայրի հանքաքարը քավականին քարձր որակի է: Հանքաքարի քիմիական անալիզները ցույց են տալիս հետևյալ արդյունքները. հոն հանքաքարում երկարը կազմում է 54.1%, SiO₂ 14.84%, S - 0.48%.

միջին պարունակությունները կազմում են. Fe – 35.40%, SiO₂ - 24.72%, S – 0.19%: Երկրաբանական կառուցվածքով և հանքայնացման բնույթով Կարցախի հանքավայրը շատ նման է Կողըի ներժայթքուկային զանգվածի մերձկոնտակտային երկարի հանքավայրերին, ինչը բույլ է տալիս հանքավայրը դասել կոնտակտմետասումատիկից – հիդրոթերմալ (քարձր ջերմաստիճանային) անցումային տեսակին: Հանքավայրում՝ մազնիսաշափական աշխատանքների արդյունքում, եզրագծվել են հյուսիս-արևելյան տարածմանը ոչ մեծ անոմալիաներ, կապված Կողըի զանգվածի արտաքին կոնտակտի հետ: Բայց այդ անոմալիաները մինչև այսօր չեն ստուգված երկրաբանահետախուզական աշխատանքներով: Հանքավայրը արժանի է ուշադրության: Զգացվում է մանրամասն հետազոտման և որոնողա-հետախուզական աշխատանքների անցկացման անհրաժեշտությունը:

Կողըի և Շոճկանի ներժայթքուկների արտակոնտակտային գոտիների հետ են կապված նաև Շնողի քվարց-հեմատիտային, Գեղակ-Բուրունի (Ախրալայի հանգստյան տան մոտ) հեմատիտային և այլ երևակումները, որոնք արժանի են մանրամասն ուսումնասիրման:

Զանգ հանքավայրը գտնվում է Զանգ և Սարի աղբյուր գետերի միացման հանգույցում: Հարում է Էղցենի հասակի պորֆիրիտների և կրաքարերի կոնտակտին, որտեղ ոչ մեծ բների և երակների տեսքով տեղայնացված է մազնետիտ- հեմատիտային հանքայնացում:

Հանքային երակներն ըստ տարածման հետամտված են 1-10 մ՝ 0.1-0.25մ հզորությամբ: Հանքաքարը կազմված է հիմնականում մազնետիտից, ավելի սակավ՝ հեմատիտից: Այստեղ ևս հանդիպում են հին փորվածքներ (փոսեր և խարամներ): Հանքայնացման մասշտաբները անհայտ են: Երկրաբանական կառուցվածքով նման է Սոտ և Սարի-աղբյուր հանքավայրերին:

Հախնիձորի հեմատիտային հանքավայրը գտնվում է Զանգ գետակի վերին հոսանքում, Հախնիձոր գյուղից 4.5 կմ դեպի հարավ: Տեղամասը ամբողջովին բացված է մակերեսային վլուգումների շնորհիվ: Ջևարանորեն հանքավայրը ներկայացված է հեմատիտով ներծծված 1-1.5 մմ հզորությամբ Էղցենի հասակի պորֆիրիտների շերտով: Այդ շերտում հանդիպում են հեմատի-

տային հանքաքարի հոծ զանգվածային ներփակումներ՝ մազնետիտիտի, քվարցի և դաշտային սպարի քսուկներով: Հանքային մարմինը ներկայացված է երակով, որի կախված թվով կազմված է պորֆիրիտներից, իսկ պառկած թվով՝ փոփոխված կարրոնատային ապարներից: Քարաբեկորային նմուշի քիմիական անալիզի արդյունքներով երկարի պարունակությունը կազմում է 47-50%: Հանքավայրը պատկանում է հիդրոքերմալ տեսակին: Հեռանկարայնությունը որոշելու համար անհրաժեշտ է անցկացնել որոնողահետախուզական աշխատանքներ:

Մարցիգետի ավազանի երկարի հանքավայրեր: *Սոտի (Սագազիմաս) հանքավայրը* հայտնի է և շահագործվել է հնուց և տեղադրված է Լորուս գյուղից Մագազիմատ գետով 6 կմ դեպի հարավ-արևելք, խոլ անտառում: Մոտակա երկարգծի կայարանը թումանյանն է, որի հետ հանքավայրը կապված է 22-25 կմ ճանապարհով:

Հանքավայրը կազմված է հրաբխածին կոմպլեքսից և ներկայացված է լաքրադորային, ավգիտային, դիաքազային պորֆիրիտներով, որոնք շերտավորվում են քվարցային պորֆիրի տուֆավազաքարերով և տուֆախատնաքարերով:

Զանգ և Սարի-աղբյուր գետերի վերին հոսանքներում, եղցենի տուֆային նատվածքների մեջ, ոսպնյակի տեսքով մերկանում են լայնակի ուղղությամբ ձգված կրաքարեր: Այդ հզոր հրաբխանատվածքային ողջ հաստվածքը ճեղքված է ոչ մեծ գրանիտոհային ներժայքությունով, ինչպես նաև պորֆիրային օլիվինային դիաքազների առաջացումներով:

Ծրջանի երկարի հանքավայրերը ձգված են հյուսիս-արևմուտք – հարավ-արևելք ուղղությամբ գոտով և կապված են եղցենի հասակի կրնատակտ-մետատոնատիկ ապարների հետ:

Հանքավայրը կապված է եղցենի հասակի պորֆիրիտների, տուֆերի և կրաքարերի հետ: Հանքայնացումը հարում է պորֆիրիտների և կրաքարերի կրնատակտային գոտուն: Սոտի հանքավայրը ձևաբանութեան ներկայացված է հյուսիս-արևմտյան ուղղությամբ հարյուրավոր մետրեր հետամտված հանքաբեր գոտով: Այս գոտում էպիդոտ-նոնաքար-մագնետիտային սկառները առաջացնում են 0.5-1.0 մ տրամագծով առանձին ոսպնյակներ և քններ:

Հանքավայրում պահպանվել են 5 թեր փորփածքների հետքեր և մի շարք հին փոսեր: Այդ փորփածքների և փոսերի քափոններում հանդիպում են հարուստ մագնետիտային հանքաքարերի բեկորներ, երբեմն պիրիտի և խալկոպիրիտի քսուկներով:

Հանքաքարում հիմնական հանքային միներալ է հանդիսանում մագնետիտը, ստորդաս քանակով հեճատիտը, քիչ քանակությամբ պիրիտը և խալկոզինը: Ոչ հանքային միներալներն են նոնաքարը, էպիդոտը, քվարցը:

Հանքավայրի երկրաքանական միջավայրը, շրջափակող ապարների փոփոխման բնույթը, սկառնային կրաքարերի ներկայությունը, հանքաքարի նյութական կազմը բույլ են տալիս հանքավայրը վերագրել կրնտակտ-մետաստմատիկ (սկառնային) տեսակին: Հանքավայրը իր չափերով փոքր է, բայց արժանի է ավելի մանրամասն ուսումնասիրնան:

Սարի-աղբյուր հանքավայրը իր երկրաքանական կառուցվածքով և հանքայնացման բնույթով նման է Սոտի հանքավայրին, և դասվում է սկառնային տեսակին: Հանքավայրը գտնվում է Լորուս գյուղի ֆերմայից 2-3 կմ դեպի հյուսիս՝ Սարի-աղբյուր գետի հոսանքով և անցյալում մշակվել է, ինչի մասին վկայում են հին փորփածքների առկայությունը: 2 նմուշների տվյալներով Fe_2O_3 - 67.07% և S - 0.12%:

Հանքավայրը կազմված է էղունի պորֆիրիտներից և կրաքարերից: Լայն տարածված են վերամշակման խարամները: Հեռանկարը պարզ չէ:

Մարմարիկի ավազանի երկարի հանքավայրեր: Մերձլայնակի տարածմամբ Մարմարիկի վրաշարժային գոտին հետամտված է Մարմարիկ գետի ձախ ափով, և ներկայացնում ռեզինալ կարգի միասնական ստրուկտորա, որի տարածմամբ հին թերթաքարային հասովածքը հյուսիսից դեպի հարավ վրաշարժված է կավճի և էղունի հասակի հրաբխա-նստվածքային ապարների վրա: Թուլացված տեկտոնական գոտու երկայնությամբ ներդրվել են վերին էղունի հասակի գրանիտոիդային ներժայքուկը, որը ձգված է նոյն՝ լայնակի ուղղությամբ:

Գրանիտոիդների հետ ներփակող հաստվածքի (մինչքեմբ-րի մարմարներ և թերթաքարեր, վերին կավճի և էղունի կրաքա-

բեր) կոնտակտային գոտու հետ են կապված Հրազդան, Աղավնաձոր, Մեղրաձոր, Սալշավան և այլ երկարի հանքավայրերը:

Հրազդանի հանքավայր: Հանքավայրը գտնվում է Երևան-Սևան ավտոմայրուղու վրա, Հրազդանի երկարգծի կայարանի մոտ, Երևանից 49-50 կմ հեռավորության վրա: Հանքավայրի տնտեսական պայմանները բավականին բարենպաստ են՝ ապահոված է էլեկտրաէներգիայով, տեխնիկական և խմելու ջրով:

1948թ. հանքավայրը Գ.Պ. Բաղրասարյանի, Հ.Գ. Մաղարյանի և Թ.Ա. Խաչատորյանի կողմից գնահատվել է որպես հեռանկարային և երաշխավորվել է նանքանասիրման համար: 1948-49 թթ. անցկացվել է երկրաբանահանության և մագնիսաշափական աշխատանքներ, որոնց արդյունքում կազմվել է հանքավայրի սխեմատիկ երկրաբանական քարտեզը և եզրագծվել են մագնիսական անոնալիաները: Հայաստանի երկրաբանական վարչության կողմից 1950-52թթ. իրականացված հետախուզական աշխատանքների (հետախուզահորեր, առուներ և 1 բովանցք) արդյունքում հաշվարկվել է 5 մլն.տ պաշար: Ավելի մանրամասն ուսումնասիրություններ, հետախուզական հորատանցքների միջոցով, կատարվել են 1958-59թթ. և հանքավայրի երկարահանքի հեռանկարային պաշարները գնահատվել են 70-100 մլն.տ., որից 25 մլն.տ հանքաքարում երկարի միջին պարունակությունը կազմում է 37%:

Հանքավայրը կազմված է պալեոգոյի հասակի մետամորֆային թերքաքարերից, որոնք ծածկվում են վերին կավճի և երրորդական հասակի կրաքարերով, կրային թերքաքարերով և ավազաքարերով: Ողջ այդ համալիրը պատռված է երրորդական հասակի գրանուլիտիտային և քվարցային դիորիտների ներժայքություններով, որոնց ազդեցության տակ տեղանքը կազմող ապարները մետամորֆացված են (սկառնացում, եղջերաքարացում, քվարցացում և էպիլիտացում): Այդ ապարների ելքերը մերկանում են ոչ մեծ մակերեսով (մոտավորապես 1.5 կմ²) և ունեն կիսաօղակաձև տեսք: Ներժայքությունների կոնտակտը հետամտվում է վերին կավճի ապարների հետ լայնակի ուղղությամբ, անկում է հարավ-արևմուտք 30-35° տեղ-տեղ կտրուկ անկյան տակ:

Հանքավայրում հանքաքար գոտին վերահսկվում է ներժայքությունի արտակոնտակտային գոտով. հետամտվում է նրա երկայն-

քով համարյա լայնակի ուղղությամբ 1.2 կմ և 350-400 մ լայնությամբ: Նրա երկայնությամբ հայտնաբերված են մեծ քանակությամբ հին փորվածքների հետքեր:

Զեարանորեն հանքային մարմինները էպիդոտ-քլորիտային սկառների, սկառնացված տուֆաավազաքարերի և եղջրաքարերի մեջ մագնետիտի կուտակումներով և ներփակումներով ներկայացված ոսպնյակածն, բնածն, երականման մարմիններ են: Հանքայնացված սկառնային գոտու հզորությունը հասնում է 150-200 մ, իսկ առանձին հանքային մարմինների հզորությունը՝ 2-3 մ և ավելի: Եզրագծված են 2 շերտանման կուտակներ, որոնք տեղադրված են ներփակող ապարներին ներդաշնակ, միմյանց զուգահեռ են և անկում են դեպի հարավ-արևմուտք $30-35^{\circ}$ անկյան տակ:

Առաջին շերտածն կուտակը հորատանցքերով և լեռնային փորվածքներով ըստ տարածման հետամտված է 1100 մ, իսկ անկմանը՝ 300 մ: Հզորությունը տատանվում է 0.5-ից մինչև 67 (միջինը՝ 23.4 մ): Երկարի միջին պարունակությունը 34.4 %:

Երկրորդ կուտակը հետամտված է 600 մ ըստ տարածման և 200 մ ըստ անկման: Հզորությունը 37.5 մ է, իսկ Fe միջին պարունակությունը՝ 35.61%: Ցանավոր հանքայնացումը հետամտվել է 1100 մ ըստ տարածման և 300 մ ըստ անկման: Միջին գումարային հզորությունը մոտավորապես կազմում է 50 մ, երկարի միջին պարունակությունը՝ 18% է: Հանքաքարը ներկայացված է հոծ մագնետիտի, նոնաքարի և էպիդոտի սերտ զուգակցությամբ՝ մագնետիտի գերակշիռ դերով: Ոչ հանքային միներալներն են նոնաքարը, պլազմոկազմը, էպիդոտը, պիրոքսենը, քլորիտը, կալցիտը և ապատիտը: Հոծ հանքաքարի միջին նմուշը պարունակում է՝ SiO_2 - 22.47%, Fe - 31.19%, Fe_2O_3 - 35.03%, FeO - 12.33%, Al_2O_3 - 6%, CaO - 14.96%, MgO - 1.66%, P_2O_5 - 0.24%, Cu - 0.001%, Zn - 0.01%, Pb - 0.001%, TiO_2 - շկա:

Հանքայնացման բնույթով հանքաքարը բաժանվում է հետևյալ տեսակների:

1). հոծ զանգվածային մագնետիտային,

2). բծավոր, որտեղ նոնաքար-էպիդոտային սկառներով մագնետիտը առաջացնում է կլոր և օվալածն անջատումներ,

3). շերտավոր, որտեղ նոնաքար-էպիլոտային սկառների մեջ մագնետիտը հանդիս է զալիս առանձին զուգահեռ շերտերի տեսքով,

4). ցանավոր, որտեղ սկառնային զանգվածում մագնետիտը առաջացնում է մանր ներփակումներ:

Հատ արդյունաբերական նշանակության հանքաքարերը երկարի պարունակությամբ (%) դասակարգվում են հետևյալ տեսակների. հարուստ՝ 45-ից բարձր, միջին՝ 25-45 և աղքատ՝ 25-ից ցածր:

Հրազդանի հանքավայրը երկրաբանական կառուցվածքով, հանքայնացման բնույթով, միներալային կազմով հանդիսանում է կոնտակտ-մետասոմատիկ հանքավայրերի տիպիկ ներկայացուցիչ: Նա տարածականորեն և ծագումնաբանորեն սերտորեն կապված է երրորդական հասակի քվարցային դիորիտ-գրանոդիորիտային ներժայքքուկի հետ: Հանքավայրում 01.01.1964թ. դրույթամբ B+C, կարգերով հաշվարկված հոծ հանքաքարի պաշարները կազմում են 50 մլն տ՝ երկարի 32% միջին պարունակությամբ, իսկ ցանավոր հանքաքարի պաշարները՝ 23 մլն տ՝ երկարի 18% միջին պարունակությամբ:

Տեխնիկատեսական հաշվարկներով հանքավայրի շահագործումը նպատակահարմար է իրականացնել բաց եղանակով:

Տեխնոլոգիական ուսումնասիրությունները կատարվել են երկարի 34.19% միջին պարունակությամբ հանքաքարի նմուշում՝ հանքաքարի նախնական 1-2 մմ և մագնետիտի խտանյութի՝ մինչև 0.074 մմ մանրացմամբ՝ մագնիսական զուման հանքհարստացման սխեմայով, որի արդյունքում ստացվել են.

1) խտանյութ I-ին, Fe 68%, կորզումը մոտ 69%,

2) խտանյութ II-րդ, Fe 60%, կորզումը՝ 10%:

Աղավնաձորի հանքավայրը հայտնի է շատ վաղուց, գտնվում է Աղավնաձոր գյուղից 0.5 կմ և Հրազդանի քաղաքից 13 կմ դեպի հյուսիս-արևելուոք:

Հանքավայրը կազմված է վերին կավճի կարբոնատային հաստվածքից և եղցենի հասակի հրաբխային ապարներից, որոնք պատռվում են քվարցային դիորիտների ներժայքքուկով: Նրա հետ ունեցած կոնտակտում վերին կավճի կարբոնատային ապարները համարյա լիովին վերածվել են նոնաքար-պիրոքսեն-էպիլոտ-մագ-

նետիտային սկառների: Մագնետիտի հանքայնացումը տեղայնացված է սկառներում: Հանքայնացված սկառնային գոտին 80-100 մ լայնությամբ և 1500 մ երկարությամբ տարածվում է հյուսիսարևմտյան ուղղությամբ:

Այս գոտում մագնետիտային հանքայնացումը առաջացնում է ոսպնյակներ, բներ, երեմն՝ երակիկներ և ներփակումներ՝ նոնաքար-պիրոքսեն-էպիդոտային ապարների մեջ: Հանքավայրում զլխավոր տարր է հանդիսանում մագնետիտը, երբեմն դահանակի փառով: Ոչ հանքային միներալներն են նոնաքարը, պիրոքսենը, ամֆիբոլը, էպիդոտը, քվարցը:

Ըստ հանքայնացման բնույթի հանքավայրում առանձնացվում է 2 հիմնական տեսակ.

1. Հոծ մագնետիտային,

2. Ցանավոր, որն առաջացնում է նույրը ցան՝ սկառնային զանգվածում:

Հանքավայրում երկարի միջին պարունակությունը 29% է:

Ելնելով տեղամասի երկրաբանական կառուցվածքից, քվարցային դիորիտների արտակոնտակտային գոտում տեղադրման փաստից, կողային ապարների փոփոխման բնույթից (փոխարկված տիպիկ սկառների)՝ հանքավայրը դասվում է սկառնային կամ կրնտակտ-մետաստմատիկ տեսակին:

Ծագումնաբանական տեսակետից Աղավնաձորի հանքավայրը նմանատիպ է Հրազդանի հանքավայրին:

Հանքայնացման ծավալներն և հանքաքարի բարձր որակը, սկառնային գոտու սահմաններում քավականին բարձր անոմալիաների առկայությունը, նախնական որոնողահետախուզական աշխատանքների դրական արդյունքները, բարենպաստ տրնտեսական պայմանները, տարածքային հարումը Հրազդանի հանքավայրին հիմք են տալիս հանքավայրի հեռանկարները գնահատել դրական:

Սեղրածորի հանքավայրը հայտնաբերվել է 1950թ. Ա.Գ. Միջյանի կողմից: Գտնվում է Սեղրածոր գյուղից դեպի հարավարևմուտք Այղին-ձոր գետակով 1 կմ, իսկ Հրազդան քաղաքից ավտոճանապարհով 18 կմ հեռավորության վրա: Հանքավայրի տարածքում լայն զարգացում ունեն մինչքեմքրիի մետամորֆային քերքաքարները, որոնք պատոված են երրորդական հասակի քվար-

ցային դիորիտ-գրանոդիորիտների ներժայքքուկով: Հանքայնացումը հարուստ է մինչքեմբրիի թերթաքարերի թերթայնացման հարթություններին: Զեարանորեն հանքայնացումը ներկայացված է մազնետիտի անհավասարաչափ ներփակումներով և մինչև 30 սմ հզորությամբ քվարց-մազնետիտային երակների անկայուն գոտով: Երկարի պարունակությունը տատանվում է 13.3-ից մինչև 28.6%: Սազնետիտային թերթաքարերի առանձին մերկացումները ունեն ոչ մեծ չափսեր:

Հանքաքարում հիմնական միներալը մազնետիտն է, որը համարյա միջտ ուղեկցվում է քվարցով: Երբեմն հանդիպում են ոչ մեծ քանակությամբ էպիդոտ և նոնաքար: Քարաբեկորային նմուշների քիմիական անալիզի արդյունքներով հանքաքարի մեջ երկարի պարունակությունը տատանվում է 20-60 % սահմաններում:

Միներալային կազմով հանքաքարը դասվում է քվարց-մազնետիտային տեսակին և հիմնական տարրերի հարաբերակցությանը համապատասխան առանձնացվում է 3 տարատեսակներ.

1. հարուստ, որտեղ մազնետիտը գերակշռում է քվարցին: Հանքաքարում երկարի պարունակությունը 40-60 % է;

2. միջին որակի, որտեղ քվարցը գերակշռում է մազնետիտի նկատմամբ, Fe – 30-40 %;

3. աղքատ՝ քվարցի կտրուկ գերակշռումամբ, Fe – 20-30%:

Հանքավայրի երկրաքանական կառուցվածքի առանձնահատկությունները, հանքայնացման միներալային կազմը և բնույթը, սկանային միներալների լիիվ բացակայությունը և բարձր ջերմաստիճանային քվարցի առատությունը հիմք են հանդիսացել, որպեսզի հանքավայրը դասվի բարձր ջերմաստիճանային հիդրոթերմալ տեսակին: Հանքայնացման տեղայնացման, հիդրոթերմալ լուծույթների շրջանառության և միներալատեղակալման համար բարենպատ պայմաններ են հանդիսացել թերթաքարացումը և թերթաքարերում կրաքարերի նրբաշերտերի առկայությունը, որոնք հեշտությամբ փոխարկվել են քվարցով և մազնետիտով:

Հանքավայրում քվարց-մազնետիտային հանքայնացում հայտնաբերվել է 700×200 մ մակերեսով, որը հաստատվել է մազնիսաչափական հանույթով, սակայն հանքայնացման տարածման բնույթի նախնական ստուգումները հետախուզաառուներով ցույց

են տվել, որ քվարց-մազմետիտային երակները ունեն փոքր հզորություն և սահմանափակ տարածում, նրանք ցրված են մեծ տարածության վրա մետամորֆային թերթաքարերի մնջ, ինչը վկայում է հանքավայրի արդյունաբերական անհեռանկարայնության մասին:

Հերակի հանքավայրը հայտնի է շատ վաղուց: Նա գտնվում է Սալավան գյուղից 2.5-3 կմ դեպի հարավ-արևմուտք՝ Բոյդակ գետի ակունքում: Հանքավայրում տարածված են սենոնի կրաքարերը և եղցենի պորֆիրիտները, որոնք պատռված են գրանոդիրիտ – քվարցային դիրիտի ոչ մեծ շտոքով: Երկարի հանքայնացումը տեղայնացված է Սենոնի կրաքարերի և եղցենի պորֆիրիտների սահմանում՝ գրանիտոիդների մերձկոնտակտային գոտում:

Հանքայնացումը հարում է սենոնի սկառնացված կրաքարերին՝ 60° անկյան տակ հյուսիս-արևելյան անկմամբ, համարյալայնակի տարածմամբ խօման գոտուն:

Հետատիտային հանքաքարի բներով սկառնային կոտակը հետամտված է 1-5 մ հզորությամբ և 100 մ երկարությամբ: Գլխավոր հանքային միներալներն են հեմատիտը, նոնաքարը, էպիդոտը՝ մազմետիտի, քվարցի, հազվադեպ պիրիտի և խալկոզինի առկայությամբ: Քարարեկորային նմուշներում Fe_2O_3 պարունակությունը հասնում է 70%: Հանքավայրը ունի կոնտակտ-մետասումատիկ (սկառնային) ծագում: Հանքավայրի հեռանկարները մեծ չեն:

Սալավանի հանքավայրը հայտնի է վաղուց և գտնվում է Սալավան գյուղից Բոյդակ գետի ձախ վտակով 1 կմ դեպի հյուսիս-արևմուտք:

Հանքավայրը կազմված է սենոնի կրաքարերից և եղցենի պորֆիրիտներից ու նրա տուֆերից, որոնք պատռված են քվարցային դիրիտ – գրանոդիրիտային ներժայքուկով: Հանքայնացումը կապված է վերջինիս ու սենոնի կրաքարերի կոնտակտի հետ և ներկայացված է սկառնային գոտում՝ հեմատիտ-մազմետիտային հանքաքարի բներով: Գոտին ունի միջօրեականին մոտ տարածում և զանիթափ անկում դեպի արևմուտք: Ըստ տարածման գոտին հետամտված է $150-170\text{m}^2$, 20-30 մ հզորությամբ, որից 3.5-4.0 մ բաժին է ընկնում մազմետիտային հարուստ

հանքայնացմանը: Հանքաքարը հեմատիտ-մազնետիտային է (մազնետիտի կտրուկ գերակշռմամբ՝ խալկոպիրիտի, խալկոզինի և դահանակի խառնուրդով: Ոչ հանքային միներալներից տարածված են նոնաքարը, էպիդոտը, քլորիտը, պիրոքսենը և այլն: Հանքավայրը ունի կոնտակտ-մետասոմատիկ ծագում: 1952թ. կատարված երկրաբանական աշխատանքների արդյունքները վկայում են հանքայնացման փոքր ծավալների մասին:

1.2. Պղնձահանքային ֆորմացիա. պղնձի հանքավայրերը

Հայաստանի պղնձահանքային ֆորմացիայի հանքավայրերը ծագումնաբանորեն կապված են մեզո-կայնոզոյան (յորապալեոգեն) հրաբխածին և ներժայքուկային առաջացումների հետ: Որոշ հետազոտողներ պղինձ-կոլչետանային հանքայնացման հասակը ընդունում են միջին յուրա, իսկ մյուսները՝ պալեոգեն-նեոգեն: Հանքայնացման տեղայնացման համար բարենպաստ ստրուկտորաներ են հանդիսանում բրախի ծալքերն ու խզվածքային գոտիները:

Հանքայնացումը ներկայացված է երակներով, երակային գոտիներով, շտոկներով, ոսպնյակներով, հազվադեպ շտոքվերկերով (երակացանավոր տեսակ): Հանքների կողմանը ապարներն են միջին քրվայնության հրաբխային առաջացումները, ինչպես նաև գրանոդիորիտ-պորֆիրները և քվարցային պորֆիրները: Մերձհանքային փոփոխությունները ներկայացված են քվարցացմամբ, սերիցիտացմամբ, քլորիտացմամբ, կարբոնատացմամբ, պիրիտացմամբ, էպիդոտացմամբ: Հանքաքարերի միներալային կազմը ներկայացված է պիրիտով, խալկոպիրիտով, սֆալերիտով, բրոնիտով, էնարգիտով, խալկոզինով, կովելինով, տենանտիտով, հեմատիտով, օալենիտով և այլն: Հանքաքարի օքսիդացման աստիճանը ցածր է: Ծոռկվերկային հանքավայրերում լայնորեն տարածված են օքսիդացված միներալները և ներկայացված են լինոնիտով և դահանակով: Այս ֆորմացիայի հանքավայրերը դասվում են չափավոր փոքր խորությունների միջին ջերմաստիճանային առաջացումներին: Հանքաքարում արդյունաբերական արժեք են ներկայացնում պղինձը, սելենը, տելուրը, բիսմուրը, ոսկին, ար-

ծարը և ծծումքը: Հանքաքարը հեշտ հարստացվող է: Ապրանքային արտադրանք են հանդիսանում պղնձի և պիրիտի խտանյութերը; Պղնձահանքային ֆորմացիային են պատկանում շահագործվող Կապանի, մասնակիորեն վերաբացված Շամլուի և արդյունաբերական յուրացմանը նախապատրաստված Ալավերդու և Լիճքի (պղնձի հանքաքար) հանքավայրերը: Պղնձահանքային ֆորմացիայի հանքավայրերում հիմնականում անջատվում են հանքաքարի 2 միներալային տարատեսակներ. պիրիտ-խալկոպիրիտային՝ հոծ հանքաքարերում և խալկոպիրիտ-պիրիտային՝ երակացանավոր հանքաքարերում: Լիճքի հանքավայրում անջատվում է սոլֆիդային հանքաքարի մեկ տարատեսակ: Վերջինս բնորոշվում է պարզ միներալային կազմով, հիպիդիոնորֆ հատիկային կառուցվածքով, հիմնականում հարածումների ուղիղ սահմաններով: Կապանի հանքավայրում բացի պիրիտից և խալկոպիրիտից նշանակալի քանակությամբ առկա են պղնձի երկրորդական սոլֆիդները, ինչպես նաև սֆալերիտը և էնարգիտը: Երկրորդական հարստացման գոտում խալկոպիրիտը իր քանակով զիջում է պղնձի երկրորդական սոլֆիդներին, որոնց մեջ նա հանդես է գալիս ռելիկտների և էմուլսիոն ցանի տեսքով, հանդիպում է սֆալերիտի, պիրիտի, էնարգիտի մեջ: Կապանի հանքավայրում անջատված են երկու միներալատեխնոլոգիական տարատեսակ և դրան համապատասխան հանքաքարի երկու արդյունաբերական տեսակ՝ սոլֆիդային-պղնձահանքային և սոլֆիդային-պղնձահանքային՝ էնարգիտի, սֆալերիտի և խալկոզինի հետ: Այդ հանքաքարերը տարածականորեն անջատվում են և լեռնատեխնիկական պայմանները բույլ էին տալիս կատարել նրանց անջատ արդյունահանումը: Հանքաքարի առաջին տեսակը մշակվում է ստորգետնյա եղանակով, իսկ երկրորդը՝ բաց հանքով, որի պաշարները ներկայումս սպառված են:

Խալկոպիրիտ-պիրիտային տարատեսակի հանքաքարերը բնուրագրվում են հիպիդիոնորֆ հատիկային և հատիկային կառուցվածքով, նրբերակային, ցանավոր, կոլոնորֆ, մնացորդային և եզրագարդային տեքստուրայով, հարածումների ատամնավոր սահմաններով:

Պիրիտ-խալկոպիրիտային և խալկոպիրիտ-պիրիտային տարատեսակների հանքաքարերը սովորաբար հեշտ են հարս-

տացվում: Հանքհարստացման հիմնական եղանակը հանդիսնում է ֆլուտացիան, որի դեպքում երկու տարատեսակները հարստացվում են միանման և պղնձի կորզման աստիճանը հանքաքարում նրա պարունակության հետ գտնվում է ուղիղ համեմատական կապի մեջ: Շամլուղի և Ալավերդու հանքավայրերի հանքաքարերի երկու տարատեսակների տեխնոլոգիական ցուցանիշներերի նմանությունը հնարավորություն է տալիս այդ հանքաքարի հանքհարստացումը կազմակերպել ընդհանուր բովախառնուրդում, որի հիման վրա առանձնացվում է մեկ միասնական պղինձ-կոլչետանային միներալատեխնոլոգիական տարատեսակ և համապատասխանաբար սուլֆիդային պղնձահանքային երկրաբանատեխնոլոգիական և արդյունաբերական տեսակները:

Կարևորագույն ժողովրդատնտեսական և սոցիալ-տնտեսական խնդիրն է պղնձի ենթացյուղի հանքահումքային հենքի ընդլայնումը: Ենթացյուղի հենքային հանքահարստացման ֆարբիկան (ՀՖ) հանդիսանում է Կապանի ՀՖ, որի պղնձի հարստացման արտադրամասում վերամշակվում են նմանատիպ հանքավայրերի հանքաքարերը: Ակսված են Շամլուղի հանքի վերագործարկման և Ախրալայի հանքհարստացուցիչ ֆարբիկայի լիարժեք վերականգնման աշխատանքները: Ալավերդի քաղաքում վերջին տարիներին կառուցվել է հանքհարստացուցիչ ֆարբիկա պղնձի հանքաքարի վերամշակման համար: Պղնձի ենթացյուղի հումքային հենքը գտնվում է ծանր վիճակում, քանի որ հիմնական պաշարները գրեթե լիովին սպառվել են և վերամշակման են ներգրավվում ցածր որակի հանքաքարերը:

Կապանի ՀՖ-ի հզորությունները պահպանելու նպատակով հումքի որոնումը կատարվում էր հիմնականում երկու ուղղությամբ.

1) պլանաշափ որոնողա-հետախուզական աշխատանքների կատարում հանքային դաշտի սահմաններում պղնձի նոր հանքավայրերի հայտնաբերման և յուրացման նպատակով:

2) հանքային լեռնահատկացմասի սահմաններում արդյունաբերական պաշարների ավելացման նպատակով:

Հայաստանում, երկարաժամկետ հեռանկարում, նոր հանքավայրերի յուրացման հաշվին Կապանի ՀՖ պղնձի արտադրամասի հումքային հենքի կտրուկ բարելավման համար իրական

իիմքեր ներկայումս չկան, իսկ երկրաբանահետախուզական աշ-խատանքների անցկացումը, պաշարների աճի ակնկալիքով, չեն ապահովում սպասվող տնտեսական արդյունքները: Բազմամյա ուսումնասիրությունները հստակ ցույց են տվել, որ Կապանի հանքարշուրյան հումքային հենքի ընդայնման հեռանկարը կապված է ոչ միայն նոր տեղամասերի (հատկապես բազմամետադային, ինչպես, օրինակ, Շահումյանի), այլ նաև Կապանի հանքավայրի հնարավոր բոլոր միջոցների, այդ թվում աղքատ և ցածր որակի մնացած հանքաքարերի լիարժեք օգտագործման հետ, ինչը հավասարազոր է 30 կմ շառավղով պղնձի 2-2.5% պարունակությամբ նոր հանքավայրի հայտնաբերմանը:

Ալավերդու հանքային դաշտի սահմաններում պղնձահանքային ֆորմացիայի հումքային հենքի ընդայնման հեռանկարները կապված են Ալավերդու հանքավայրի և հանքային դաշտի արևամտյան թևի փոքր հանքավայրերի խմբի (Զաղիձոր, Սպասաքար, Մղարք*, Հագվի, Կաճաճկուտ, Ալվարդ) հետ: Ալավերդու խմբի հանքավայրերի թույլ ուսումնասիրվածությունը բացատրվում է շրջանի երկրաբանական կառուցվածքի և հանքայնացման տեղայնացման պայմանների ձևակազմության մասին նախկինում գոյություն ունեցած սխալ պատկերացումներով, ինչը կտրուկ սահմանափակել էր որոնողագնահատողական աշխատանքների հեռանկարները: Հյուսիսային Հայաստանի պղնձի հանքավայրերի գնահատման համար անցկացված մանրամասն երկրաբանահանության և երկրաբանատնտեսական գնահատման աշխատանքները ցույց են տվել, որ լրահետախուզության ավարտից հետո և Ալավերդու հանքավայրի յուրացմանը նախապատրաստվելոց առաջ պետք է սկզբունքային նոր նոտեցում ցուցաբերվի հանքավայրի արևամտյան թևի փոքր հանքավայրերին: Անհրաժեշտ է տարալուծման համակցված սխեմայի օգտագործմամբ նոր տեխնոլոգիական իիմքով իրականացնել նրանց խմբային վերագնահատումը:

* Մղարքի պղնձա-ուսկերեր հանքավայրը շահագործվում է «ԱԼՈՒ» ընկերության կողմից՝ հանքավայրը վերամշակվում է տեղում, իսկ խտանյութերը վերամշակվում են Ալավերդու պղնձաձուլական գործարանում:

Պղնձի հանքաքարի ընդհանուր պաշարների մեջ (տասնյակ մլն.տ) Ալավերդու խմբի հանքավայրերի արդյունաբերական կարգի պաշարների մասնաբաժնը ներկայումս կազմում է 10.4%, պղնձի 3.09% միջին պարունակությամբ, նախնական գնահատված պաշարներինը՝ 8.8%, պղնձի 0.7% միջին պարունակությամբ, հեռանկարային ռեսուրսներինը՝ 80.8%, պղնձի 0.73% պարունակությամբ:

Ծամլուղի հանքավայրը նորմատիվ ժամանակի սահմաններում ապահովված է հանքաքարի պաշարներով, չհաշված կորուստները և ժամանակին արտահանված և դուրս գրված պաշարները: 1989թ. Ալավերդու լեռնամետալորդիական կոմբինատի լուծարման հետևանքով հանքը ժամանակավորապես փակված էր, իսկ այժմ վերաբացվել է և էֆֆեկտիվ շահագործվում է «Մերը Պրինց» ընկերության կողմից:

Ծամլուղի հանքավայրի նախնական երկրաբանատնտեսական գնահատումը ցույց է տալիս, որ նկատի ունենալով նոր տնտեսական պայմաններում արդյունաբերական պաշարների կոնդիցիայի պարամետրերի խստացման շնորհիվ հանքաքարում 40%-ով միջին պարունակության բարձրացումը՝ հաշվեկշռում եղած արդյունաբերական պաշարների մշակումը կլինի շահութաբեր:

Պղնձի ընդհանուր պաշարները պղնձահանքային ֆորմացիայի հանքավայրերում բաշխվում են հետևյալ համամասնությամբ (%). Լիճքի հանքավայր՝ 34.8, Կապանի՝ 25.7, Ծամլուղի՝ 20.1, Ալավերդու՝ 19.4:

Պղնձամոլիխրենային և ոսկի-բազմամետաղային ֆորմացիաների համալիր հանքաքարերում ուղեկցող պղնձի պաշարները գերակշռում են պղնձահանքային ֆորմացիայի հանքաքարերում հաշվարկված պղնձի պաշարներին ավելի քան 10 անգամ: Պղնձամոլիխրենային ֆորմացիային բաժին են ընկնում հանքաքարի հետախուզված պաշարների 98% և պղնձի պաշարների 91%:

Պղնձի հեռանկարային ռեսուրսները 1.5 անգամ գերազանցում են պղնձահանքային ֆորմացիայի պղնձի հետախուզված պաշարներին:

1.3. Պղինձ-մոլիբդենային ֆորմացիա. պղինձ-մոլիբդենային հանքավայրերը

Այդ ֆորմացիայի արդյունաբերական հանքավայրերը տարածականորեն և պարագենետիկորեն կապված են վերին կավիճ-պալեոցենի և վերին էոցեն-միոցենի հասակի (գրանողիորիտային մոդել) գրանիտոփիդների հետ: Դիորիտ-տոնալիտային մոդելի համար ենթադրվում են վերին յուրա-ստորին կավճի հասակ: Այդ ֆորմացիայի հանքավայրերը դասվում են միջին ջերմաստիճանային և չափավոր խորությունների պղինձ-պորֆիրային տեսակին: Հանքայնացումը վերահսկվում է խորքային խզումներով և երակային պորֆիրների ու դայկաների համակարգով: Ներկայացված է երակիկների խիտ ցանցով, երակներով և քվարց-սուլֆիդային կազմի ներփակվածքներով, առաջացնելով հզոր շտոկվերկներ: Ներփակող ապարներն են հանդիսանում, գլխավորապես, հիդրօքերմալ փոփոխված մոնցոնիտները, սիենիտօքրանիտները, քվարցային դիորիտները և գրանոլիորիտ-պորֆիրները: Այդ փոփոխությունները ներկայացված են քվարցացմամբ, սերիցիտացմամբ, բիոտիտացմամբ, կառինացմամբ, մոնտմորիլոնիտացմամբ, օֆապացմամբ և այլն: Հանքային միներալներն են խալկոպիրիտը, մոլիբդենիտը, պիրիտը, սֆալերիտը, գալենիտը, պղնձի երկրորդական սուլֆիդները, մագնետիտը և այլն: Ինտենսիվ զարգացած է օքսիդացման գոտին: Միներալները ներկայացված են լիմոնիտով, դահանակով, պովելիտով, ֆերոմոլիբդիտով, հիդրոմագնետիտով, գյոտիտով: Երկրորդական սուլֆիդային հարստացման գոտին որոշ դեպքերում բույլ է արտահայտված: Այս ֆորմացիայի հանքավայրերի համար բնորոշ է հանքայնացման բազմափուլայնությունը և գլխավոր օգտակար բաղադրամասերի տարածական հստակ առանձնացումը ու տեղայնացման առաջացման ժամանակների փուլայնությունը: Արդյունավետ են համարվում քվարց-մոլիբդենիտային, քվարց-խալկոպիրիտ-մոլիբդենիտային փուլերը: Հանքավայրերում արդյունաբերական արժեք են ներկայացնում պղինձը, մոլիբդենը, ռենիումը, սելենը, տելուրը, բիսմութը, ուլին, արծաթը և ծծումբը: Պղինձ-մոլիբդենային հանքաբարի հանքարատացման համար մշակված է ճկուն տեխնոլոգիական սխեմա: Ենթաճյուղի ապրանքային արտա-

դրանքներն են պղնձի, մոլիբդենի և պիրիտի խտանյութերը: Ներկայում պղնձ-մոլիբդենային ֆորմացիայի հանքաքարերի և նրանց վերամշակման տեխնոլոգիական ապրանքների (ապրանքային արտադրանքի) մեջ հատուկ հետազոտություններով հայտնաբերվել են յուրահատուկ տարրերի արդյունաբերական պարունակություններ. մոլիբդենային խտանյութերի մեջ՝ պլատինիդներ և ռադիոգեն օսմիում-187, իսկ հանքահարստացման մնացուկներում՝ սկանդիում, վանադիում, երկաք, տիտան: Այս տարրերի առկայությունը կտրուկ բարձրացնում է ապրանքային արտադրանքի ու հանքահարստացման մնացուկների պոտենցիալ արժեքը և ստեղծում է տնտեսական հենք այդ մնացուկները վերամշակման մեջ ներգրավման և օգտակար տարրերի հարակից արդյունավետ կորզման նպատակով տեխնոլոգիական սխեմաների կատարելագործման համար:

Պղնձ-մոլիբդենային ֆորմացիային են դասվում Քաջարանի և Ազարակի շահագործվող, ինչպես նաև մանրամասն հետախուզված Թեղուտի, Հանքավանի, Այգեձորի և Դաստակերտի կոնսերվացված հանքավայրերը: Հանքաքարերի միներալոգիական կազմը համեմատաբար պարզ է: Հիմնական հանքային միներալներն են մոլիբդենիտը և խալկոպիրիտը, հաճախ պիրիտը և մազնետիտը, հազվադեպ հանդիպում են հեմատիտ, էնարզիտ, զալենիտ, սֆալերիտ և այլն: Կապված Թեղուտի հանքավայրի ծագումնաբանական առանձնահատկությունների հետ, այսուղ նկատվում են պիրիտի բարձր պարունակություններ, ինչը հաշվի է առնված հանքահարստացման տեխնոլոգիական սխեմայի մշակման ժամանակ:

Քաջարանի և Ազարակի հանքավայրերում սուլֆիդային պղնձ-մոլիբդենային հանքաքարերը տեղայնացված են տարրեր աստիճանի հիդրոքերմալ փոփոխված ապարների մեջ:

Քաջարանի հանքավայրում հանքներփակող մոնցոնիտների հիդրոքերմալ փոփոխությունները հիմնականում ներկայացված են քվարցացմամբ, բիոտիտացմամբ և կառլինացմամբ: Փոփոխված ապարների տարատեսակների հստակ պարանշում հնարավոր չեն, քանի որ շատ հաճախ է նկատվում տարրեր մետաստմատիտների մեջընդմիջումը և վերադրումը, ինչը բացառում է նրանց տարածական անջատումը և անջատ արդյունահանման

հնարավորությունը: Քաջարանի շտոկվերկի արևմտյան թևի, այսպես կոչված, «դժվար հարստացվող» հանքաքարերը, ի տարրերություն կենտրոնական տեղամասի շարքային հանքաքարերի, հիմնականում ներկայացված են քարմ ու թույլ փոփոխված մոնցոնիտներով՝ խալկոպիրիտի և մոլիբդենիտի նուրբ և աղքատ, ինպես նաև մազնետիտի ցանավոր հանքայնացմամբ և մազնետիտի ու խալկոպիրիտի հարածումներով: Միներալների լիարժեք քացումը ապահովելու համար պահանջվում է ավելի քարձը աստիճանի մանրացում: Այդ հանքաքարերի համատեղ վերամշակման ժամանակ տեխնոլոգիական ցուցանիշների նվազումը կանխելու նպատակով առաջարկվել է համապատասխան բովախառնուրդ՝ հանքհարստացուցիչ ֆաբրիկայի պլանային ցուցանիշները ապահովելու նպատակով:

Քազմամյա տեխնոլոգիական ուսումնասիրությունների շնորհիվ Քաջարանի հանքահարստացուցիչ ֆաբրիկայում ներդրվել է ճկուն տեխնոլոգիական սխեմա, որն ապահովում է մեկ միասնական բովախառնուրդում սուլֆիդային հանքաքարերի բոլոր տարատեսակների վերամշակումը, ինչը հնարավոր է դարձնում Քաջարանի հանքավայրի սուլֆիդային հանքաքարերը դասել մեկ միասնական պղինձ-մոլիբդենային երկրաքանատեխնոլոգիական և արդյունաբերական տեսակին: Այդ դեպքում հանքաքարի բնական տարատեսակների միներալատեխնոլոգիական առանձնահատկությունները հաշվի են առնվում լեռնային աշխատանքների ռացիոնալ պլանավորման և արդյունահանված հանքաքարի օպտիմալ միջինացման ժամանակ՝ ապահովելով մետաղների կորզման մակարդակը խտանյութերում:

Քաջարանի հանքավայրի խտանյութերում մկնդեղի պարունակության որոշակի մեծացման կապակցությամբ կատարվել են հատուկ հետազոտություններ խտանյութերի «կեղտուման» պատճառների հայտնաբերման և վերացման նպատակով: Հետազոտությունները ցույց են տվել, որ Cu_3AsS_4 միացության օքոռոմբային էնարգիտից և մննոկլինային լուցոնիտից քացի, Քաջարանի հանքավայրում հայտնաբերվել է նաև խորանարդային լազարեիչիտ միներալը: Այդ պատճառով նախնական ուսումնասիրման ընթացքում մկնդեղարիսմութային հանքաքարերը առաջարկվում է պարանշել՝ հետազոտում հաշվի առնելու նպատակով:

Հանքայնացման համասեռության աստիճանը հիմնավորելու և Քաջարանի հանքավայրում միասնական երկրաբանատեխնոլոգիական տեսակ անջատելու համար Լեռնամետալուրգիայի ինստիտուտը Երևանի Պետհամալսարանի հետ համատեղ կատարել է հատուկ վիճակագրական հետազոտություններ 12 հորատանցքերի տվյալներով: 2231 նմուշների անալիզը ցույց է տվել, որ մոլիբդենի քաշխման անհամասեռության աստիճանի մեծությունը հավասար է 0.384, իսկ պղնձինը՝ 0.25, ինչը մեկ անգամ ևս հաստատում է տեսակավորման ճշտությունը:

Ազարակի հանքավայրի սուլֆիդային հանքարերը վերագրվում են պղնձած-մոլիբդենային երկրաբանատեխնոլոգիական և արդյունաբերական տեսակին: Հազվադեպ հանդիպում են խալկոպիրիտային և խալկոզինային միներալատեխնոլոգիական տարատեսակները, որոնք էական դեր չեն խաղում: Հանքների հակոռ ապարները ներկայացված են սիենիտ-գրանիտներով և գրանոդիորիտ-պորֆիրներով: Առաջինները զգալիորեն կարբոնատացված են, քլորիտացված, սերիցիտացված, հազվադեպ կառլինացված, իսկ երկրորդները՝ ալբիտացված, քլորիտացված, սերիցիտացված, քվարցացված և մասնակի կառլինացված:

Ինչպես և Քաջարանի հանքավայրում, այստեղ նույնպես այդ փոփոխությունները էական ազդեցություն չունեն ֆլոտացիայի ընթացքի վրա: Հանքաքարը հեշտ հարստացվող է, քայլ ի տարբերություն Քաջարանի հանքավայրի, Ազարակի հանքավայրում առանձնացվում է երկրորդ երկրաբանատեխնոլոգիական և դրան համապատասխան, սուլֆիդային հանքաքարի արդյունաբերական տեսակը՝ ցածր տեխնոլոգիական ցուցանիշներով: Դրանք Ազարակի շտոկվերլի հյուսիս-արևմտյան քևի մոնտանորիլոնիտացված գրանիտներում պղնձած-մոլիբդենային հանքաքարերն են:

Նախկինում Թեղուտի հանքավայրում առանձնացվում էր հանքաքարի մեկ սուլֆիդային պղնձած-մոլիբդենային և մեկ օքսիդային՝ փիրուզի հանքայնացմանը երկրաբանատեխնոլոգիական, և դրանց համապատասխան, արդյունաբերական տեսակներ: Սուլֆիդային հանքաքարի վերամշակումը նախատեսված էր իրականացնել կոլեկտիվ-սելեկտիվ ֆլոտացիայի ստանդարտ սխեմայով:

Վերջերս Թեղուտի հանքավայրում իրականացված երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում հորատականությունը նմուշական և նմուշների քիմիական և միներալապետրոգրաֆիական հետազոտությունների շնորհիվ սուլֆիդային հանքաքարերի վերին մասում՝ անմիջապես օրսիդացման գոտուց ներքև, բացահայտվել է պղնձով և մոլիբդենով բավականաչափ հարուստ՝ պղնձի երկրորդական սուլֆիդային հարստացման բավականին հզոր մինչև՝ 70մ հզորությամբ գոտու առկայությունը: Նշված գոտին, նախկինում կատարված հետզոտությունների արդյունքներով, ուներ չնշին հզորություն և խիստ կտրտված քննությունը, ինչը պայմանավորված էր այն ժամանակ հորատանքների հանուկի չափազանց ցածր ելքով, որի հետևանքով աղավաղվել էին քիմիական և միներալոգիական հետազոտությունների արդյունքները և թյուր պատկերացում էր կազմվել հանքաքարի տեսակավորման վերաբերյալ: Նորագույն տվյալներով պղնձի երկրորդական սուլֆիդային հարստացման գոտին միներալային կազմով, ներփակող ապարների փոփոխվածության աստիճանով և հզորությամբ բավականաչափ կայուն է տարածության մեջ և խորքում անցնում է առաջնային սուլֆիդային գոտուն: Երկրորդական սուլֆիդային հարստացման գոտին միներալային կազմով խիստ տարբերվում է առաջնային սուլֆիդային գոտուց և ներկայացված է հիմնականում խալկոզինով, կովելինով և բորնիտով՝ մոլիբդենիտի արդյունաբերական պարունակությամբ: Այսուղ աննշան քանակություն ունի խալկոպիրիտը, որն ի դեպ, համարվում է պղնձի միակ միներալը առաջնային սուլֆիդային գոտուն: Միներալային կազմին հանապատասխան՝ հանքավայրում անջատվում են երկու միներալային տարատեսակներ՝ խալկոզին-կովելին-բորնիտային՝ մոլիբդենիտի հետ և խալկոպիրիտ-մոլիբդենիտային, որոնք իրենց տեխնոլոգիական հատկանիշներով և արդյունահանում լեռնատեխնիկական պայմաններով միանշանակ կարող են դիտվել որպես առանձին երկրաբանատեխնոլոգիական և արդյունաբերական տեսակներ՝ հանքարստացման միևնույն, կոլեկտիվ-սելեկտիվ ֆլոտացիայի սխեմայով, սակայն խիստ տարբեր ռեագենտային ռեժիմով:

Քաջարանի հանքավայրը հանքաքարի և մետաղների պաշարներով աշխարհի խոշորագույն հանքավայրերից մեկն է և

բավականին երկարատև ապահովված է հանքաքարի պաշարներվ, մինչդեռ Ազարակի հանքավայրի արդյունաբերական պաշարները խիստ սահմանափակ են:

Պղինձ-մոլիբդենային ֆորմացիայի հանքաքարերի ընդհանուր գումարային պաշարների 78% հետախուզված և 84% նախնական գնահատված, ինչպես նաև 86% մոլիբդենի և 61% պղինձի պաշարները կենտրոնացված են Քաջարանի հանքավայրում: Հանքաքարի 1.9%, մոլիբդենի 1.6% բաժին է ընկնում Ազարակի հանքավայրին և համապատասխանաբար 20.2% և 12.5% թեղուտի հանքավայրին՝ առայժմ գոյություն ունեցող տվյալներին համապատասխան: Կենսական հարց է հանդիսանում պղինձ-պորֆիրային հանքավայրերի եզրագծի սահմաններում արտահաշվեկշռային հանքաքարերի օգտագործումը, որոնք երկար տարիներ տարվել են բափոնակույտ որպես մակարացման ապարներ: Ազարակի հանքավայրի համար պրոբլեմային է այսպես կոչված «հաշվեկշռային» ըստ պարունակության և արտահաշվեկշռային՝ լեռնա-տեխնիկական պայմաններով հանքաքարերի» եզրագծման հարցը:

Հանրապետությունում պաշարների արդյունաբերական յուրացումը հետախուզված հաշվեկշռային պաշարների հաշվարկով կազմում է 87% ըստ մոլիբդենի և 66.5% ըստ պղինձի: 1988-92 թթ. կորուկ ընկապ պղինձի և պղինձ-մոլիբդենային ենթաճյուղի ձեռնարկությունների հանքահումքային հենքի օգտագործման շահավետությունը: Այսպես, պղինձի խտանյութի արտադրության ժամանակ հանքահարստացման փուլում կորուստները կազմել են 31% (այդ թվում Քաջարանում 40.7%, Ազարակում 23.3% և Կապանում 10.7%), իսկ մոլիբդենային խտանյութի արտադրության ժամանակ – 24.8% (այդ թվում Քաջարանում 24.2% և Ազարակում 29.2%): Եթե նկատի ունենանք, որ պղինձի 51% և մոլիբդենի 89.5% խտանյութերը արտադրվում են Զանգեզուրի ՊՄԿ-ում, ապա պարզ են դառնում 1988թ. 9% պղինձով և 8% մոլիբդենով հումքի օգտագործման մակարդակի կտրուկ անկման պատճառները: Այդ ընթացքում Ազարակի ՊՄԿ-ում արտադրվել է 28.8% պղինձ և 10.4% մոլիբդեն, Կապանի ԼՀԿ-ում – 20.2% պղինձ:

1.4. Ոսկի-քազմամետաղային ֆորմացիա. ոսկի-քազմամետաղային հանքավայրեր

Հայաստանի ոսկու հանքավայրերը ծագումնաբանորեն կապված են մեզոկայնողոյան հասակի հրաբխաներժայթքուկային համակարգի հետ: Հանքայնացումը վերահսկվում է ռեգիոնալ խորքային բեկվածքների գոտում՝ ծալքավոր և խզվածքային խախտումների ցանցով: Հանքային մարմինները ներկայացված են երակացանավոր հանքայնացմամբ կտրուկ անկմամբ երակներով, երակային գոտիներով և հանքային սյուներով: Ոսկու արդյունաբերական կուտակումները կապված են մագմատիկ օջախի, հիմնականում, փոքր ներժայթքուկների տեղադրման հետ: Ոսկին վերադրվել է պղնձի, պղինձ-մոլիբդենային և բազմամետաղային հանքայնացման վրա և դրսւորվում է բոլոր արդյունաբերական հանքային ֆորմացիաներում՝ հանդիսանալով հարակից ազնիվ մետաղ: Նա վերադրված է նույնիսկ եզրափակիչ ցածր ջերմաստիճանային ռեալգար-առորիափիզմենտային հանքայնացման վրա: Հանքներփակող ապարներն են հանդիսանում անդեղիտները, անդեղիտադաշտները, քվարցային պորֆիրները, նրանց տուֆերը և տուֆափշրաքարերը, մննցոնիտները, գրանոդիորիտները: Մետասոնատիկ և հիդրոթերմալ փոփոխությունները արտահայտված են քվարցացմամբ, սերիցիտացմամբ, քլորիտացմամբ, կառինացմամբ, բիոտիտացմամբ, լիստվենիտացմամբ, տալկացմամբ:

Ոսկի-քազմամետաղային ֆորմացիայի հանքավայրերի հանքաքարը բնորոշվում է հանքառաջացման բազմավոլյանությամբ՝ տարրերի ուղղաձիգ և հորիզոնական տարածական գոտիացմամբ: Վերին հորիզոններում զյսավորապես տեղայնացվում են ցածր ջերմաստիճանային ոսկի-տելուրիդային, ռեալգար-առորիափիզմենտային, իսկ ստորին հորիզոններում՝ ոսկի-քազմամետաղային և ոսկի-արսենապիրիտային հանքաքարերը: Հանքաքարի միներալոգիական կազմը բարդ է: Այն ներկայացված է պիրիտով, խալկոպիրիտով, սֆալերիտով, գաղենիտով, անտիմոնիտով, սուլֆատանտիմոնիտով, տելուրիդներով, ռեալգարով, առորիափիզմենտով, պղնձի երկրորդային սուլֆիդներով և այլն: Ոսկի-քազմամետաղային ֆորմացիայի հանքավայրերը սովորաբար ձե-

վավորվում են փոքր (մերձմակերեսային) խորություններում՝ միջին-ցածր զերմաստիճանների պայմաններում: Օրսիդացման գոտին ունի նշանակալի տարածում ու խորություն և ներկայացված է լիմոնիտով, դահանակով, կուպրիտով, ցերուսիտով, անգլեզիտով, սմիթոնիտով, պլյումբոյարոզիտով, սկորողիտով, գյոտիտով: Ուսկին հանքաքարում գտնվում է բնածին և տելուրիդների տեսքով: Բացի ոսկուց և արծաթից արդյունաբերական արժեք են ներկայացնում պղինձը, կապարը, ցինկը, ծարիքը, մկնդեղը, զալիումը, ինդիումը, կադմիումը, սելենը, տելուրը: Հանքաքարի վերամշակման սխեման բազմաստիճան է: Տեխնոլոգիական ցուցանիշները համեմատաբար ցածր են, պայմանավորված բովախառնուրդի (ապրանքային հանքաքար) բարդ կազմով: Ենթաճյուղի ապրանքային արտադրանքներն են հանդիսանում գրավիտացիայի, կոլեկտիվ ֆլոտացիայի, պղնձի, կապարի և ցինկի խտանյուրերը, ինչպես նաև կատոդային ոսկին: Ոսկու հարզը տարբեր հանքավայրերում տարբեր է և տատանվում է 700-960 սահմաններում: Արծաթի և ոսկու համեմատաբար բարձր հարզը հարում է սուֆիդներին, իսկ ցածրը՝ տելուրիդներին:

Ոսկի-բազմամետաղային ֆորմացիային են պատկանում շահագործվող Սոքքի, Մելրածորի, Շահումյանի, Տերտերասարի, Մղարքի, Արմանիսի արդյունաբերական յուրացման համար նախապատրաստված Լիչքվագ-Թեյի, մանրամասն հետախուզված Ազատեկի, ինչպես նաև հետախուզվող Մարցիկեսի և Մարցանի հանքավայրերը: Ներկայումս, ոսկի պարունակող խտանյուրի ստացման համար Հայաստանում գործում են Արարատի՝ Դորե մետաղի ստացմանը (AGRC), Այգեձորի («Սիփան-1»), Թուխ-Մանուկի (Mega Gold) և Մղարքի (ԱլРОС) ոսկեկորզիչ ֆաբրիկաները:

Բոլոր հանքավայրերի համար բնորոշ է հանքայնացման երակային տեսակը, շահագործման բավականին բարդ լեռնատեխնիկական պայմանները և հանքաքարի բազմատարր կազմը, իիմնական սուլֆիդային միներալների և նրանց հետ կապված ոսկու ու արծաթի բաշխման խիստ փոփոխական բնույթը:

Հանքաքարում միշտ ներկա են պիրիտը, խալկոպիրիտը, սֆալերիտը և զալենիտը, որոնք գործորդվելով պարագենետիկորեն պայմանավորում են պիրիտային, խալկոպիրիտային, խալկո-

պիրիտ-սֆալերիտային, սֆալերիտ-գալենիտային, խալկոպիրիտ-սֆալերիտ-գալենիտային միներալային տարատեսակների անջատումը: Հանքավայրերի մեծ մասի համար բնորոշ է ոսկի պարունակող առաջնային հեմատիտի առկայությունը: Հեմատիտը շատ դեպքերում առաջացնում է համատարած կուտակումներ և տարածականորեն անջատվում է (Մարց, Տերտերասար): Ոսկի պարունակող ֆորմացիայի տարրերիչ առանձնահատկություններից մեկը մկնդեղի և ծարիրի նշանակալի կուտակումներով առանձնացված տեղամասերի առկայությունն է: Սկնդեղը ներկայացված է ոսկի պարունակող արսենապիրիտով, որը հանդիսանում է հիմնական ոսկերեր միներալներից մեկը, սերտ զուգորդում է պիրիտի հետ, առաջացնելով պիրիտ-արսենապիրիտային միներալային տարատեսակը (Ազատեկ, Լիճքվազ-Թեյ, Տերտերասար, Սոքք):

Սոքքի հանքավայրում ծարիրի հիմնական կրողը անտիմոնիտն է (անտիմոնիտային տարատեսակ), իսկ մկնդեղի՝ արսենապիրիտը, ռեալգարը և առորիփիզմենտը (ոսկի-արսենապիրիտային և ռեալգար-առորիփիզմենտային տարատեսակներ): Ծարիրով հարուստ հանքաքարերը հատկապես անջատվում են Ազատեկի հանքավայրում, որտեղ նրանք ներկայացված են անտիմոնիտով և կապարի սուլֆոանտիմոնիտով: Նկատի առնելով մկնդեղի և ծարիրի առանձնահատուկ տեխնոլոգիական վարքագիծը, որոշ հանքավայրերում անջատվում են հանքաքարերի ոսկի-մկնդեղային և ոսկի-կապար-ծարիրային միներալատեխնոլոգիական տարատեսակներ, որոնք լեռնատեխնիկական պայմանների հաշվառմամբ դասվում են սուլֆիդային ոսկի-բազմամետաղային (կամ ոսկի-սուլֆիդային) երկրաբանատեխնոլոգիական և արդյունաբերական տեսակին, կամ անջատվում են որպես ինքնուրույն ոսկի-կապար-ծարիրային և ոսկի-մկնդեղային երկրաբանատեխնոլոգիական տեսակներ:

Ոսկի-բազմամետաղային ֆորմացիայի հանքաքարերի հանքհարստացման օպտիմալ սխեման ընտրվել է հանքաքարի որակական և ոսկու ու արծարի ռացիոնալ կազմին համապատասխան: Սուլֆիդների նշանակալի քանակի դեպքում ընտրվել է հանքաքարի կոլեկտիվ-սելեկտիվ (ընտրողական) ֆլոտացիայի սխեման՝ պղնձի, կապարի և ցինկի, իսկ մի շարք դեպքերում պի-

ըիտի խտանյութերի ստացման նպատակով։ Շատ հանքավայրերի համար այդ սխեման հանդիսանում է միակը։ Մյուսների համար այն գուգակցվում է գրավիտացիոն-ֆլուտացիոն սխեմաների հետ՝ գրավիտացիայի և կոլեկտիվ ֆլուտացիայի խտանյութերի ստացմամբ։ Այդ դեպքում, ստացված խտանյութերը մկնդեղով և ծարիրով կեղտոտումից խուսափելու համար, առաջարկվում է խտանյութերի հետագա վերամշակում այդ տարրերի լիարժեք կորզման նպատակով։

Հստակ առանձնացված կապար-ծարիրային հանքաքարերի տեղամասերում (Ազատեկ) առաջարկվում է նրանց վերամշակման կոլեկտիվ ֆլուտացիայի սխեման՝ ուկի պարունակող կապար-ծարիրային կոլեկտիվ խտանյութերի ստացմամբ։ Վերջիններիս հիդրոմետալուրգիական վերամշակմամբ ապահովվում է ինչպես կապարի և ծարիրի, այնպես էլ ուկու ու արծաթի բավականին բարձր կորզում։ Հաշվի առնելով ուկի-բազմամետաղային ֆորմացիայի հանքաքարերի բարդ կազմը, նրանց միներալոգիական և տեխնոլոգիական առանձնահատկությունների որոշ ընդհանուր գծերը, ինչպես նաև ուկեկորզիչ ֆարրիկաներում ազատ արտադրական հզորությունների առկայությունը, հանքաքարի արդյունաբերական տեսակավորման ժամանակ անհրաժեշտ է դեկավարվել տնտեսական նպատակահարմարությամբ և տեսակների առավելագույն նվազեցման սկզբունքով՝ օգտագործելով ճշուն տեխնոլոգիական սխեմաներ և ապահովելով հումքի համալիր օգտագործումը։ Նման մոտեցումը հնարավորություն է ընձեռնում բարդ տնտեսական պայմաններում տարրեր հանքավայրերի հանքաքարի վերամշակումը իրականացնել միասնական բովախառնուրդում (փոքր բվով հանքաքարերի տեսակների դեպքում) տարածաշրջանային և բազային (հանքապետական) հանքահարստացուցիչ ֆարրիկաներում։ Սրանից ելնելով, հանքաքարի ուկի-բազմամետաղային տեսակի մեջ ներառնելով են պղինձ-ուկենիանքային երկրաբանատեխնոլոգիական տեսակը (Արմանիս), իսկ ուկի-հանքային արդյունաբերական տեսակի մեջ՝ ուկի-մկնդեղային երկրաբանատեխնոլոգիական տեսակը (Սորբ)։

Պետհաշվեկշռում հաշվառված են հետախուզված և նախնական գնահատված 9 հանքավայրերի ուկու պաշարները, որոնց

մեջ ամենախոշորներն են Սոթքը (48%), Շահումյանը (12.4%), Սեղրաձորը (7%), Լիչքվազ-Թեյլը (5.6%): Ուկի-բազմամետաղային ֆորմացիայի հանքավայրերի ընդհանուր պաշարներում ուկու հետախուզված պաշարները (այդ թվում նաև նախնական գնահատվածները) կազմում են 80.5%: Համալիր հանքավայրերից ուկու առավել խոշոր պաշարներ կենտրոնացված են Քաջարանի հանքավայրում – 79.1%, որը կազմում է հանրապետության ընդհանուր պաշարների 15.4%: Հաստատված ուկու հեռանկարային ռեսուրսները կազմում են Պետհաշվեկշռային պաշարների մոտ 62%: Ուկի պարունակող պաշարների արդյունաբերական յուրացումը կազմում է 65.9%: Բարձր ցուցանիշ ստացվել է ի հաշիվ Սոթքի և Քաջարանի հանքավայրերի, որտեղ կուտակված են ուկու և արծաթի բոլոր հետախուզված պաշարների համապատասխանարար 56.4 և 68%: Հանրապետության ուկեհանքային արդյունաբերությունը երկարաժամկետ հեռանկարում ապահովված է հումքով:

Գլուխ 2. ՄԵՏԱՂՆԵՐ

2.1. Սև մետաղներ

Մանգան

Հայաստանի տարածքում մանգանի հանքավայրերը տարածված են անհավասարաշափ: Ամենաշատ և նշանակալի պաշարներով հանքավայրերը հայտնաբերված են Իջևանի և Նոյեմբերյանի շրջաններում: Այդ խմբի հանքավայրերի համար ներփակվող են վերին կավճի, որոշ դեպքերում միջին յուրայի հրաբխանութվածքային ապարները:

Մանգանի երևակումների երկրորդ խումբը կենտրոնացված է Ալավերդու, Ստեփանավանի և Վանաձորի շրջաններում և տեղայնացված է միջին էղենի հրաբխանութվածքային հաստվածքում:

Մանգանի հանքավայրերի և երևակումների երրորդ խումբը հայտնաբերված է Վայքի շրջանում, որտեղ մանգանի հանքայնացումը տեղայնացված է էղենի և օլիգոցենի հրաբխանութվածքային ապարներում:

Սևքար – Սարիգյառի հանքավայրի վերաբերյալ առաջին տեղեկությունները բերվում են 1900թ.: Հանքավայրը հետամտվել է միջեօրեականին մոտ տարածմամբ հանքային գոտու տեսքով՝ Աչաջուր գյուղից դեպի հյուսիս, Սևքար և Սարիգյուղ գյուղերով:

Մանգանային գոտու երկարությունը մոտ 8 կմ է՝ Աչաջուր, Սևքար, Սարիգյուղ և Քարակերտ տեղամասերով: Նրանցում հանքային մարմինների ծևաբանական տարրերությունները պայմանավորված են հանքներփակող ապարների լիբոլզիական կազմով:

Հիմնական հանքներփակող հաստվածքը ներկայացված է վերին կավճի ապարներով (մերգելային կրաքարեր, կրաքարային ավազաքարեր, տուֆաավազաքարեր, տուֆախառնաքարեր, տուֆափիշաքարեր, պորֆիրիտներ), բայց որոշ տեղամասերում (Աչաջուր, Քարակերտ) հանքայնացումը տեղայնացված է միջին յուրայի ապարներում (պորֆիրիտներ, տուֆափիշաքարեր, տու-

ֆախառնաքարեր, կրաքարային ավազաքարեր և տուֆաավազաքարեր):

Ծակերի-Ծամփա տեղամասը գտնվում է Սևքար գյուղից 5 կմ դեպի հարավ-արևմուտք, Ծակերի-Ծամփա ճանապարհի երկայնքով:

Հանքայնացումը կապված է միջին յուրայի հասակի կրային տուֆախառնաքարերի և տուֆափշրաքարերի հետ, որոնք ծածկված են նորք շերտավոր տուֆավազաքարերով: Հանքների փակող ապարների անկումը հյուսիս-արևմուտք է, անկման անկյունը $35\text{-}40^{\circ}$: Հանքայնացումը ներկայացված է հոծ մանգանային երակներով և ցանավոր հանքայնացման գոտիներով:

Երակների միջին հզրությունը 0.4 մ է, նրանց կոնտակտը՝ տուֆավազաքարերի հետ կտրուկ է. դեպի խորքը հանքաքարի հոծ երակները աստիճանաբար անցնում են փշրաքարացված և ցանավոր հանքաքարերի գոտու:

Փշրաքարացված հանքաքարերի գոտում նկատվում են մանգանի հանքաքարի կլորավուն, բնանման ներփակումներ՝ 1-ից մինչև 30-40 սմ տրամագծով, որոնց մեջ հաճախ հետամտվում են կալցիտ-պիրուլուզիտային երակներ:

Հանքաքարի կազմում հայտնաքերված են պիրուլուզիտ և փսիլոմելան: Քիմիական անալիզի տվյալներով Mn -ի պարունակությունը տատանվում է $29.12\text{-}45.06\%$, SiO_2 – $4.76\text{-}42.4\%$; Fe_2O_3 – $1.84\text{-}9.15\%$; Al_2O_3 և TiO_2 – $1.01\text{-}14.45\%$, CaO – $5.22\text{-}36.78\%$, S – $0.23\text{-}0.24\%$ (Երկրաբանական վարչություն):

Տեղամասը չի գնահատված և պաշարները չեն հաշվարկված:

Իխինձի ձորի տեղամասը գտնվում է Ծակերի-Ծամփա տեղամասից 1 կմ դեպի հյուսիս՝ համանուն ձորակի աջ լանջին: Տեղամասը կազմված է միջին յուրայի հասակի կրաքարերից, տուֆափշրաքարերից և տուֆախառնաքարերից: Ներփակող ապարներն են խիստ քվարցացած կրաքարերը, որոնց մեջ հայտնաքերված է $5\text{-}6$ մ հզրությամբ, ավելի քան 25 մ տարածմամբ և $10\text{-}15^{\circ}$ անկյան տակ հյուսիս-արևելյան անկմամբ շերտանման հանքային կուտակում: Հանքային մարմինը ներդաշնակ է պարփակող ապարների հետ: Հանքաքարը ներկայացված է պիրուլուզիտի համարյա համատարած ուղիալ-ճառագայթային բյու-

բեղների խոշոր ազրեգատներով՝ գաղտնաբյուրեղային պիրույտիկի և փսիլոմելանի խառնուրդներով: Ոչ հանքային միներալներից են քվարցը, կրասպաքը և բարիտը: Ոչ հարուստ հանքաքարի կազմում հայտնաբերված են. Mn 1.04-21.39%, SiO₂ 45.84-62.88%: Տեղամասը հետախուզված չէ և հեռանկարները պարզ չեն:

Աշաջի տեղամասը գտնվում է համանուն գյուղից (Տավուշի մարզ) 3-3.5 կմ դեպի արևմուտք:

Հանքայնացումը ներկայացված է շերտանման կուտակների տեսքով և տեղայնացված է միջին յուրայի կրաքարային տուֆախառնաքարերի մեջ: Կուտակների ելքերի մակերեսը 200 մ² է՝ 0.5-2.5 մ հզրությամբ:

Ըստ հանքայնացման բնույթի առանձնացվում են.

ա) հոծ պիրույտիկիտային հանքայնացում 0.3-2.3 մ տրամագծով կլորավուն բների ձևով;

բ) այդ բները ներփակող փշրաքարացված հանքաքարի կուտակներ՝ մանգանի օքսիդի ցանի ուղեկցությամբ: Փշրաքարային հանքաքարերը ներառում են կրաքարերի, տուֆափշրաքարերի և այլ ապարների առանձին բեկորներ: Կուտակների ընդհանուր զանգվածի մոտավորապես կեսը կազմող մանգանի հոծ հանքաքարի բները առաջացել են, ըստ երևույթին, կարբոնատային կազմի բեկորների և գլաքարերի մանգանի օքսիդներով ընտրական տեղակալման հետևանքով: Mn-ի պարունակությունը հոծ հանքաքարերում կազմում է 35.7 - 44%, փշրաքարացված հանքաքարում 17.05-23%, առկա են նաև SiO₂ 9.7-36.72%, CaO մինչև 14.73%, Fe 3.68%:

Հանքայնացման բնույթով տեղամասը համանման է Ծակերի-Ծամփա և Իխինների ծոր տեղամասերին: Տեղամասի հեռանկարները պարզ չեն:

Մարակերտ տեղամասը գտնվում է Ծակերի-Ծամփա և Աշաջուր տեղամասերի միջև: Այստեղ հանքայնացումը ներկայացված է պիրույտիկիտի հոծ և փշրաքարացված հանքաքարով: Հանքայնացման հոծ (երակային) տեսակը ըստ խորության փոփոխվում է փշրաքարային տեսակի: Հայտնաբերված են 80° հյուսիս-արևելյան և 330° հյուսիս-արևմտյան անկման ազիմուտով եր-

կու երակներ՝ համապատասխանաբար 0.25 և 0.1 մ հզրություններով:

Հիմիական անալիզների արդյունքներով Mn-ի պարունակությունը տատանվում է 3.52-38.5%, SiO_2 2.64-12.44%, Fe_2O_3 1.7-17.36%, $\text{Al}_2\text{O}_3 + \text{TiO}_2$ մինչև 18.48%, CaO 9.98-44.09%: Տեղամասը փոքր է և նրա հեռանկարները սահմանափակ են:

Նստատեղ տեղամասը գտնվում է համանուն լեռան հարավ-արևմտյան և հարավային լանջերում, Սարիգյուղից 4-5 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Հանքայնացումը հարում է տուրոնի հասակի մանրաբեկորային տուֆախառնաքարերի կախված թվին, որոնք լանջի վրա առաջացնում են խոշորաբեկորային աճատումներով դուրս ցցված քիվեր: Տուֆախառնաքարերը անկում են դեպի հյուսիս-արևելք՝ $30-42^{\circ}$ անկյան տակ:

Աճատվում են հանքաքարի երկու տարրեր ձևաբանական տեսակներ.

1) Երականնան (ըստ Ա.Գ.Բետեխտինի՝ շերտաննան) մարմինը հետամտված է լեռնային փորվածքներով 400 մ և ունի 0.4 մ (0.3-1 մ) հզրություն:

Հանքային մարմինը տեղադրված է ներդաշնակ ներփակող ապարների հետ, որոնք ներկայացված են կախված թևում մանրահատիկ շերտավոր տուֆավազաքարերով, իսկ պառկած թևում՝ մերգելային կրաքարերով: Տուֆավազաքարերում չի հայտնաբերվել հանքայնացում: Հանքային մարմնի և կախված թվի կոնտակտը կտրուկ է. անմիջապես տուֆավազաքարերի տակ նկատվում է հարուստ հանքայնացում, այսինքն, տուֆավազաքարերը ունեցել են էլերանացնող դեր:

Հանքային մարմնի պառկած թևում հանքայնացման ինտենսիվությունը նվազում է, քայլ նրա տակ տեղադրված մերգելային կրաքարերի մեջ հանդիպում են նորք ճյուղավորումներ և մանգանի օքսիդի ներփակումներ:

Հանքաքարը հոծ է, մանրբյուրեղային, հիմնականում պիրույզիտի ու պսիլոմելանի կոլորոֆ խառնուրդով և փիրուն հողանման՝ հոծ պիրույզիտային հանքաքարի 2-10սմ մեծությամբ քնանման ներփակումներով: Շերտի մեջ հանքայնացումը անհավասարաչափ է: Երբեմն այն ներկայացված է 1-1.5 սմ հզրությամբ երակների խմբերով, որոնք կողմնորոշված են հանքներփա-

կող քվարցացված կրաքարերի տարածման ուղղությամբ: Մանգանի պարունակությունը տատանվում է 0.17-50.13%, SiO_2 -6.24-64.7%, $\text{Al}_2\text{O}_3 + \text{TiO}_2$ -1.05-18.24%, Cu -3.58-21.01%, P 0.07-056%:

2) Փշրաքարանման հանքաքարերի գոտին գտնվում է վերը նշված գոտուց 70 մ լանջով դեպի ներքև և իր տեղադրման էլեմենտներով գուգահեռ է առաջինին:

Ըստ տարածման այս գոտին 4 մ միջին հզորությամբ (փրկածքներում 12 մ) հետամտվել է առուներով՝ 200 մ երկարությամբ:

Հանքայնացումը ներկայացված է կարրոնատային ավագաքարերի և տուֆափշրաքարերի մեջ տեղադրված պիրոլյուզիտի բներով և մանրբյուրեղային նրբերակներով: Մանգանի հանքաքարը փշրաքարային գոտու ապարների ընդհանուր զանգվածում կազմում է 20-25%: Մանգանի միջին պարունակությունը կազմում է 5.9% (1.29-41.92): Հանքաքարի պաշարները շերտանման մարմանում կազմում են մոտավորապես 9.5 հազ.տ՝ 17.4% մանգանի միջին պարունակությամբ: Փշրաքարային գոտում հանքաքարի պաշարները չեն հաշված:

Փշրաքարանման հանքաքարերի փորձնական հանքհարստացման 3 եղանակներից՝ լվացում, գրավիտացիա և էլեկտրամագնիսական զոտում, առավել արդյունավետ և պարզ համարվել է լվացման եղանակը:

Ծերտում սպեկտրալ անալիզով հայտնաբերվել է Ni , Co , Ti (տոկոսի հարյուրերորդական մասերից մինչև տասնորդական մասեր), V , Co (տոկոսի մինչև հարյուրերորդական մասեր), իսկ փշրաքարային գոտու հանքաքարում Ni , Co , Ti , V , Cu հետքից մինչև տոկոսի հարյուրերորդական մասեր:

Գոմերի-ճոր տեղամասը գտնվում է համանուն հեղեղատի ափերին, Նստատեղ տեղամասի շերտավոր մարմնի հարավարևելյան քեց 1 կմ դեպի հյուսիս-արևելք: Ներփակող են տուրոնի հասակի կրաքարային ավագաքարերը և տուֆափշրաքարերը:

Տեղամասում հայտնաբերված է հանքաքարի 2 տեսակ՝ փշրաքարանման և հոծ: Բնեկորային դելյուվիալ կուտակումների տեսքով մանգանի օքսիդներով հանքայնացված փշրաքարանման

հանքաքարը հանդիպում է հեղեղատի ձախ ափին: Հիմնական գոտին տեղադրված է հեղեղատի լանջից վերև:

Հոծ հանքաքարը (շերտածն մարմին), մերկանում է ծակքար ժայռի տակ. հանքայնացման բնույթով և տեղադրման տարրերով (անկումը հյուսիս-արևելք 60° , անկման անկյունը 25°) հանքային մարմինը համանման է Նստատեղի տեղամասի մարմնին և հանդիսանում է նրա շարունակությունը: Հանքաքարում կտրուկ գերակշռում է պիրոլյուզիտը, ստորադաս տեղ է գրաղեցնում փսիլոմելանը, հազվադեպ՝ պղիանիտը: Ոչ հանքային միներալներից հանդիպում են կարրոնատը, քվարցը, խալցեղոնը, ազարը, հազվադեպ՝ բարիտը:

Մանգանի հանքաքարում առկա են (16 նմուշի արդյունքով). Mn 2.79-43.04% (միջին պարունակությունը 14.4%), SiO₂ 6.52-67.54%, Al₂O₃ + TiO₂ 0.54-10.03%, Fe₂O₃ 1.17-28.23 %, CaO 2.75-24.08%:

Տեղամասը կարող է ներկայացնել հետաքրքրություն:

Կոտրից-Նով տեղամասը գտնվում են Գ-նմերի-ձոր տեղամասից 0.8 կմ դեպի հարավ-արևելք: Այստեղ կրային տուֆավիշտաքարերում և ավազաքարերում հանդիպում է մանգանի հանքաքարի շերտավոր մարմին, որը հետամտված է ըստ տարածման 25 մ, ըստ հզրության՝ 2,5մ, ունի 45° անկման անկյուն դեպի հյուսիս-արևելք 85° :

Հանքաքարը ներկայացված է հոծ, մանրբյուրեղային պիրոլյուզիտով: Ոչ հանքային միներալներից հանդիպում են խալցեղոնը, քվարցը, բարիտը և կալցիտը: Տեղամասում քայրայված հրաբխանստվածքային ապարների մեջ հանդիպում է նաև մանգանի փշտաքարանման հանքաքար, որը հիմնականում կազմված է պիրոլյուզիտից, մասամբ նաև փսիլոմելանից:

Մանգանի պարունակությունը կազմում է 15.11%: Այս տեղամասի հանքաքարը չի տարբերվում Նստատեղի տեղամասի հանքաքարից, բացառությամբ այն բանի, որ այստեղ բարիտի պարունակությունը նշանակալի է և շերտանման հանքային մարմինը ընդհատումներով և սեղմումներով շարունակվում է մինչև Կոտրից-Նով տեղամասը:

Սևքար-Սարիզյուղի հանքավայրերի և մանգանի այլ երեվակումների ծագման հարցերը դեռևս պարզաբանված չեն: Որոշ

հետազոտողներ գտնում են, որ նրանք ցածրջերմաստիճանային հիդրոքերմալ տեսակի են, բացառությամբ Նստատեղի տեղամասի, որն ըստ Ա.Գ.Քետեխատինի հանդիսանում է նստվածքային ծագման:

Հանքավայրերի շահագործման լեռնատեխնիկական պայմանները բարենպաստ են:

Կալաշինի մանգանի երևակումը գտնվում է Կալաշա գյուղից (Տավոչի մարզ) 5-6 կմ դեպի հյուսիս-արևելք: Երևակումը կազմված է 2 տեղամասերից, որոնք գտնվում են Կակիլ գյուղից 2 կմ դեպի հարավ-արևմուտք և 3 կմ՝ արևմուտք:

Առաջին տեղամասը ներկայացված է հանքային գոտով և տեղայնացված է վերին տուրոն – ներքին սենոնի մերգելների մեջ. անկումը հյուսիս-արևմուտք 320° , անկման անկյունը 70° : Պիրույտիզիտային հանքաքարերը առաջացնում են ոչ մեծ քններ (լայնական կտրվածքում մինչև 0.5 մ) և երակիկներ: Հանքարեր գոտին հետամտված է 60 մ տարածմամբ ելքերով: Հարուստ հանքակտորում պարունակում է Mn 48.38%, Fe 2.12%, CaO 6.64%: Ծծումբը բացակայում է:

Երկրորդ տեղամասը կապված է վերին կավճի պորֆիրիտների և մերգելների կոնտակտի հետ: Հանքային մարմինները ներկայացված են քվարցի, խալցետոնի, կալցիտի հետ զուգորդված պիրույտիզիտի ամուր և բյուրեղացված ոչ մեծ քններով ու երակիկներով: Հանքաքարի հարուստ հանքակտորը պարունակում է Mn 41.89%, Fe 2.01%, CaO 1.17%, S 0.53 %, Si O₂ 29.85%: Ֆոսֆորը բացակայում է:

Երևակումը մանրամասն ուսումնասիրված չէ:

Կորիգեղի մանգանի երևակումը գտնվում է Տավոչի մարզի Կորիգեղի շրջակայքում: Այստեղ սենոնի հիմքի մերգելներում, որոնք տրամագրեսիվ ծածկում են տուրոնի պորֆիրիտները և տուֆափշրաքարերը, հանդիպում են մետատոմատիկ ծագման մանգան-երկաքային աղքատ հանքաքարերի տձև ուսպնյակներ: 2 մ հզրությամբ հանքային գոտին հետամտված է բովանցքներով 15-20մ ըստ տարածման: Կ.Ն.Պաֆֆենհոլցը երևակումը գնահատում է որպես ոչ հեռանկարային, սակայն ըստ նրա մանգանային հանքաքարերի նոր երևակումների հայտնաբերման դեպքում և

Չարախի երկարի հանքավայրի շահագործման ժամանակ հնարավոր է այդ հանքավայրի համալիր շահագործումը:

Դերեղի մանգանի երևակումը գտնվում է Լոռու մարզի նույնանուն գյուղից 1.5 կմ դեպի հյուսիս – հյուսիս-արևմուտք: Այստեղ հանքային գոտին ունի 150-200 մ տարածում և 40-60 մ լայնություն: Հանքային մարմինները ներկայացված են պիրույտի 0.5-10 սմ մեծությամբ անկյունավոր ներփակումներով, փոքր երականման մարմիններով և երակիկներով, որոնք անհավասարաչափ քաշխվում են միջին էղունի տուֆավիշրաքարերի մեջ:

Վերջիններս ծածկված են դացիտային կազմի ամուր, նաև բահատիկ պորֆիրիտներով, որոնք անկում են հարավ-արևմուտք 15-20° անկյան տակ:

Պիրույտի ներփակումների քանակը և չափերը դեպի հանքային մարմնի կախված են, զգայինը մեծանում են: Այստեղ հիդրոքերմալ լուծույթները հավանաբար բարձրացել են տուֆավիշրաքարերի և նրանց էլերանացնող պորֆիրիտների կոնտակտի երկայնքով՝ ստեղծելով բարենպաստ պայմաններ տուֆավիշրաքարերը մանգանի ընտրական տեղակալման համար: Ընդ որում, տեղակալման ինտենսիվությունը կոնտակտից հեռանալուն գուգընթաց աստիճանաբար մարում է:

Ըստ քիմիական անալիզի տվյալների պիրույտի ներփակումներում մանգանի պարունակությունը հասնում է 53.38%, իսկ սովորաբար հանքաքարերը պարունակում են 4.42-8.35% մանգան, 0.02-0.07 % պղինձ, տոկոսի տասնորդական մասերով տիտան:

Հորադիսի մանգանի երևակումը գտնվում է Վայոցձորի լեռնաշղթայի հարավային լանջում, Ազատեկից Հորադիս գյուղ տանող ճանապարհի վրա և տեղայնացված է հարավ-արևելյան 35° անկմանը երրորդական հասակի տուֆածին ապարների մեջ:

Հանքայնացման գոտին հետամտված է 10-100 մ, որի հզորությունը 2-4 մ է: Հանքայնացումը ներկայացված է բյուեղացված պիրույտի տուֆով, օպալի, խալցետոնի և հասպիսի ուղեկցությամբ:

Ըստ քիմիական անալիզի տվյալների Mn 28.9%, Pb 0.5%, Sb 0.22%, Mo 0.038% է:

Ըստ Հ.Ա.Ասատրյանի հանքերևակումը ունի նստվածքային ծագում՝ ելնելով այն բանից, որ հանքային մարմինը ներդաշնակ տեղադրված է ներփակող տուֆավշշրաքարերի մեջ: Երևակումը լավ ուսումնասիրված չէ, հեռանկարները պարզ չեն:

Կարմրաշենի մանգանի երևակումը ներկայացված է 2 ելքերով, որոնցից մեկը գտնվում է Վայոց ձորի մարզի Տապասար գյուղի մոտ և 5-6մ հզորությամբ հետամտված է 100-150մ, իսկ մյուս ելքը՝ Տապասար գյուղից 2 կմ դեպի արևմուտք և 5-6 մ հզորությամբ տարածվում է 150-200մ: Հանքային մարմինները կտրուկ անկմամբ ($80\text{-}85^{\circ}$) տեղայնացված են միջին էոցենի տուֆածին ապարների մեջ: Հանքավայրում պիրույուզիտի և վսիլոմելանի հետ միասին հանդիպում են հասպիս և խալցետրոն: մանգանի պարունակությունը հանքակտորի նմուշում կազմում է 52.6%: Երևակման ծագման և հեռանկարայնության հարցերը պարզ չեն: Անհրաժեշտ է մանրամասն ուսումնասիրել:

Մարտիրոսի մանգանի երևակումը գտնվում է համանուն գյուղի 2.5 կմ դեպի հյուսիս-արևելք և Վայրից 3.5 կմ՝ հարավ-արևելք: Հանքային մարմինները հետամտված են 200-250 մ լայնությամբ և ունեն 25-30 մ հզորություն:

Հանքավայրի ապարներն են օլիգոցենի հասակի անդեգիտները, որոնք տեղադրված են էոցենի հասակի տուֆածին ապարների վրա: Հանքայնացումը տեղայնացված է անդեգիտների մեջ՝ բյուրեղային պիրույուզիտի և վսիլոմելանի 5-10 սմ հզորությամբ նրբերակների և էոցենի տուֆֆիտներում՝ նրանց ցանի տեսքով:

Ոչ հանքային միներալներն են քվարցը և կարբոնատը: Նրբերակներում մանգանի պարունակությունը կազմում է 44.3%, իսկ տուֆիտների մեջ՝ 10.3%:

Սպեկտրալ և քիմիական անալիզներով հանքաքարում հայտնաբերվել են Co, Ni, Pb, Mo, Ba:

Ըստ Հ.Ա.Ասատրյանի մանգանի հանքայնացումը հիլդրեմալ ծագման է և հասակակից է օլիգոցենի դաշիտներին:

Սվարանցի մանգանի երևակումը գտնվում է Սվարանց գյուղից 7 կմ դեպի հարավ-արևմուտք, Աղանձուգետի (Որտան գետի աջ վտակը) վերին հոսանքներում: Տեղամասը կազմված է վերին կավճի (տուրոն) հասակի ավազաքարերից, մերգելներից,

տուֆաավագաքարերից, կրաքարերից, հասպիսային ապարներից, պորֆիրիտներից, նրանց տուֆերից և տուֆափշրաքարերից:

Երևակումը ներկայացված է 2 – 6.5մ հզորությամբ շերտով: Այն անկում է հարավ-արևմուտք 250° և ունի 55° անկման անկյուն: Շերտը վերգետնյա փորվածքներով քստ տարածման հետամտված է 400մ: Դատելով մերկացումներից՝ 0.6-0.9մ հզորությամբ մանգանի շերտը անկման ուղղությամբ ձգվում է 500մ: Տեղայնացված է հասպիսային ապարների մեջ: Նրա պառկած քևում հասպիսային ապարները փոխարինվում են պորֆիրիտներով, նրանց 10 մ և ավելի հզորությամբ տուֆերով և տուֆափշրաքարերով, իսկ կախված քևամ՝ 10 մ հզորությամբ մերգելներով, ավագաքարերով և խառնաքարերով:

Մանգանի հանքարարը բավականին ամուր է և կազմված է հիմնականում ոռղոնիտից և բրաունիտից: Մանգանի պարունակությունը տատանվում է 34.55-50.0% սահմաններում:

Քրոմ

Սևանա լճի հյուսիս-արևելյան ափի քրոմիտի հանքարարերը հայտնի են 19-րդ դարի վերջերից: Այժմ հայտնի են երկու տասնյակից ավելի հանքավայրեր ու երևակումներ որոնցից առավել ուսումնաշիրված և արժանի են ուշադրության Շորժայի և Զիլի խմբերի հանքավայրերը:

Շորժայի խմբի հանքավայրեր: Շորժայի շրջանում քրոմիտի ելքերը առաջին անգամ նկարագրել է Հ.Տ.Կարապետյանը (1923թ.): Այս խմբի հանքավայրերը առավել մանրամասն նկարագրվել է Ա.Գ.Բետեխտինի կողմից: Հանքավայրի տարածքը կազմված է 1.5 կմ մակերեսով պերիդոտիտների զանգվածից, որը պատռում է վերին կավճի և եղցենի հասակի հրաբխանստվածքային ապարների հաստվածքը: Ըստ Ա.Գ.Բետեխտինի, քրոմի բոլոր կուտակումները կապված են բացառապես դրւնիտների հետ, որոնց ելքերն ունեն հողմնահարման հարք մակերևույթ և գորշենին գունավորում:

Դունիտների ելքերը պերիդոտիտների մեջ զբաղեցնում են փոքր տեղամասեր, բայց հետախուզական աշխատանքներով

հայտնաբերվել են մինչև 800-1000 մ երկարությամբ և 150-200 մ միջին հզորությամբ դունիտային մարմիններ:

Առավելապես խոշոր հանքային մարմինները հանդիպում են խճերով և տեղադրված են դունիտների մեջ երականման, քնածել, սյունածել կամ ոսպնյակածել առաջացումների ձևով։ Հանքային մարմինների չափսերը մեծ չեն. քների տրամագիծը 1-3 սմ է, ոսպնյակածել մարմիններն ունեն մինչև 25-30 մ չափսեր և 1-4 մ հզորություն, իսկ սյունածել մարմինները հետամտված են մինչև 30-35մ երկարությամբ, որտեղ նրանց հորիզոնական երկարությունը հասնում է 10մ, իսկ հզորությունը՝ 2.5-3մ։ Ըստ տեքստուրային առանձնահատկությունների անջատվում են հոծ, տաքսիտային և ցանավոր տեքստուրաներով հանքատեսակներ։ Նրանց միներալային կազմում առկա են. քրոմշպինելիդները, սերպենտինը (անտիգորիտ և խրիզոտիլ), օլիվինը։ Ավելի սակավ առկա են քրոմնինաքարեր, քրոմքլորիտներ (կենմերերիտ), հազվադեպ քրոմդիորսիտ, կալցիտ, սուլֆիդներ (պենտականդիտ, միլերիտ), քնածին պղինձ։

Հարկ է նշել, որ ապարների սերպենտինացման ընթացքում քրոմիտը նույնականացնելու համարկվում է լուծույթների վոլխակերպային ներգործությանը՝ քրոմիտի հատիկի շուրջ և ճեղքերում առաջանում են եզրաշերտեր։

Սերպենտինացված ապարներում քրոմիտը նազնիսական է և ավելի հարուստ Fe_2O_3 -ով, քան քարմ կամ քույլ վոլխակաված դունիտներում և պերիդոտիտներում։

Հանքավայրում 1930-51թթ. արդյունահանվել է 12090տ կոնդիցիոն քրոմիտային հանքաքար (Cr_2O_3 միջին պարունակությունը 40%): Հանքավայրի եզրերը և խորը հորիզոնները համարյա ուսումնասիրված չեն։

Զիկիի խմբի հանքավայրերի շարքում ընդգրկված են «Գլխավոր երակ», «Չընադ սար» և «Եֆիմովսկոյե» հանքավայրերը։

Բոլոր հանքավայրերը հետազոտվել են 1930-40թթ.

«Գլխավոր երակ» հանքավայրը գտնվում է Զիկի գյուղից 1.5 կմ դեպի հարավ-արևմուտք։

Հանքային մարմինները ներկայացված են հյուսիս-արևմտյան տարածմամբ, 200-250 մ երկարությամբ, միմյանց զուգա-

հեռ, երբեմն փոխհատող երականման մարմինների խմբով: Cr_2O_3 պարունակությունը հանքաքարում տատանվում է 30-38 %, SiO_2 – 10-16%, Al_2O_3 մինչև 10%, FeO մինչև 8.52%, Fe_2O_3 – 3-5%, MgO մինչև 15.85%:

Հաշվարկված պաշարները կազմում են մոտ 3000տ, որոնց մեծ մասը արդյունահանված է: Խորը հորիզոնների հեռանկարները պարզված չեն:

«Եֆիմովսկոյե» հանքավայրը գտնվում է Չիլի գյուղից 14 կմ դեպի հարավ-արևելք: Հետախուզական աշխատանքներով հայտնաբերվել են քրոմիտի ցանավոր հանքաքարերով երկու ոսպնյակներ, որոնցից յուրաքանչյուրը ունի 18 մ երկարություն, 1-2 մ հզորություն: Պաշարները քիչ են, 11-30% Cr_2O_3 -ի պարունակությամբ: Հանքավայրը խորքում ուսումնասիրված չէ:

«Չրնադ սար» հանքավայրը գտնվում է «Եֆիմովսկոյե» հանքավայրից 1 կմ դեպի հարավ-արևելք:

Ներփակող ապարները ներկայացված են սերպենտինացված դունիտներով, որոնք ծգվում են հյուսիս-արևմտյան ուղղությամբ և ներփակված են սերպենտինացված պերիդոտիտների մեջ:

Հանքային մարմինների ծևաբանությունը բարդ է: Նկատվում են միմյանցից հեռացող ոսպնյակներ՝ քրոմիտի հոծ և ցանավոր հանքայնացմամբ:

Հանքային մարմինները հետախուզակած են 15-18 մ երկարությամբ և 1-1.5 մ հզորությամբ և ունեն ոչ հստակ սահմաններ: Նկատվում է քրոմիտի հոծ հանքաքարից՝ խիտ և հազվադեպ ցանավոր հանքայնացման աստիճանական անցում, մինչև ակցեսոր քրոմիտները:

Հանքավայրը վերագրվում է վաղ մագմատիկ տեսակին: Հանքաքարի պաշարները սահմանափակ են՝ 16-21% Cr_2O_3 պարունակությամբ:

Ծափաքաղի խմբի քրոմիտի երևակումները գտնվում են Գեղարքունիքի մարզի Ծափաքաղ գյուղից 4-5 կմ դեպի հյուսիսարևելք: Այստեղ առանձնացվում են 5 երևակումներ:

Ն. Արմատավաճ տեղամասը տեղայնացված է սերպենտինացված դունիտների մեջ և ներկայացված է 2 ոչ մեծ ոսպ-

Այսկանման մարմիններով՝ քրոմիտի ցանավոր հանքայնացմամբ և հոծ երակներով:

Վ. Արմատավաճ տեղամասը ներկայացված է նոդուլյարի հանքաքարի բնով: Նոդուլների ձևը յուրահատուկ է. քացի կորպավուն և տափակ էլիպսանման ձևերից՝ հաճախ հանդիպում են դեֆորմացված ուրանիստ ձևերով: Նոդուլները կազմված են քրոմիտի 2-3մմ մեծության քյուրեղային հատիկների ազդեգատներից: Քրոմշպինելիոր ներկայացված է քրոմափիկոտիտով:

Ն. Կոչկարանի տեղամասը գտնվում է համանուն գետի միջին հոսանքում, հյուսիս-արևմտյան ուղղությամբ ձգվող սերպենտինացված դրոնիտների գրոսում և ներկայացված է քրոմիտի հոծ և խիտ ցանավոր հանքայնացված բնանման և ոսպնյակաձև մարմիններով: Հանքային մարմինների չափերը մեծ չեն և ունեն 7-10մ երկարություն և 0.3-0.8մ հզորություն: Քրոմշպինելիոր ներկայացված է քրոմափիկոտիտով:

Վ. Կոչկարանի տեղամասը ունի հանքայնացման նույն բնույթը, գերակշռում է խիտ ցանավոր հանքայնացումը: Հանքաքարը պարունակում է Cr_2O_3 34.6%, Al_2O_3 26.7%, FeO 12.9%, SiO_2 8.6%: Քրոմշպինելիոր ներկայացված է ալյումոքրոմիտով:

Փամբակի քրոմիտի երևակումը գտնվում է լեռնաշղթայի լեռնանցքում, Շմպերտ և Փամբակ գետերի ավազանում, Ամուլսար գյուղից հյուսիս: Դունիտներում տեղադրված են ոչ մեծ ոսպնյակաձև և բնանման հանքային մարմիններ՝ քրոմիտի հոծ և ցանավոր հանքայնացմամբ:

Դարանակի խմբի քրոմիտի երևակումների մեջ ընդգրկված են Ներքին, Միջին և Վերին Դարանակները:

Ներքին Դարանակի երևակումը գտնվում է Ակնաջուր և Դարանակ գետերի միացման տեղից դեպի հարավ: Հանքայնացումը ներկայացված է ոսպնյականման և երականման մարմիններով ու կապված է խիստ սերպենտինացված և մագնեզիտացված դրոնիտների հետ:

Արևմտյան մասում հանքային մարմինները ոսպնյակաձև են և հետամտվում են մինչև 30 մ՝ ըստ տարածման, 2-8մ՝ ըստ անկման և ունեն 0.5-2 մ հզորություն: Սարմինների տարածումը հյուսիս-արևմտյան է, անկումը դեպի հյուսիս-արևելք՝ $75-80^{\circ}$ անկյան տակ: Հայտնաբերված են 3 այդպիսի մարմիններ, որոնցից

Երկուսը ներկայացված են քրոմիտի հոծ, իսկ երրորդը՝ ցանավոր հանքայնացմամբ: Արևելյան տեղամասում հայտնաբերված է միայն մեկ երականման մարմին, որը ներկայացված է հոծ, երբեմն խիտ ցանավոր քրոմիտով. հետամտված է ըստ տարածման 65 մ, ըստ խորության 7 մ և ունի 0.6-1.0 մ հզորություն: Cr_2O_3 պարունակությունը հանքաքարում 43-46% է: Քրոմշպինելիոր ներկայացված է մագնոքրոմիտով: Բոլոր մարմինների տարածումը հյուսիս-արևմտյան է, անկումը դեպի հյուսիս-արևելք, անկման անկյունը 80-85°:

Սիջին Դարանակի երևակումը գտնվում է Դարանակ գետի միջին հոսանքում և կապված է պերիդոտիտների մեջ լայնակի ուղղությամբ գոտու ձևով ձգված սերպենտինացված դրւնիտների հետ:

Հանքային մարմինները ոսպնյակածն են, ունեն 10-12 մ երկարություն և 0.6-1.2 մ հզորություն: Հանքային մարմինների կոնտակտները ներփակող ապարների հետ կտրուկ են: Հոծ հանքաքարը կազմված է քրոմիտի 2-3 մմ մեծությամբ հատիկներից:

Վերին Դարանակի երևակումը գտնվում է Սևանի լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջին, Դարանակ գետի ակունքի մոտ և ներկայացված է քրոմիտի գրոններով: Քրոմիտի առանձին բեկորներ կշռում են ավելի քան 1 տ: Արմատական հանքավայրը չի հայտնաբերվել: Ցրոններից 50 մ արևմուտք մերկանում են դրւնիտները, որոնք պարունակում են շիրանման ներփակումներ ու շերտավոր հանքաքարից կազմված փոքր հզորությամբ քրոմիտի մարմիններ: Ցանավոր հանքաքարը պարունակում է 28.2% Cr_2O_3 :

Արփունքի խմբի երևակումները միավորում են 17 հանքային մարմիններ, որոնցից 5-ը տեղայնացած են Արփունք գյուղից արևմուտք, 11-ը՝ հյուսիս և մեկը՝ լեռնանցքից այն կողմն: Բոլոր հանքային մարմինները կապված են սերպենտինացված պերիդոտիտների հետ, իսկ մի քանիսը՝ լիստվենիտների հետ: Նրանք ներկայացված են քրոմիտի բներով, հոծ ու հազվադեպ ցանավոր ոսպնյակներով: Հանքային մարմնի չափսերը փոքր են: Նրանց կոնտակտները շրջափակող ապարների հետ կտրուկ են, քացառությամբ մի քանիսի, որոնցում նկատվում է մարմինների աստիճանական մարում պերիդոտիտների մեջ: Քիմիական կազմը լավ

չի ուսումնասիրված: Cr_2O_3 -ի պարունակությունը հոծ քրոմիտներում տատանվում է 40-53%:

Գառնասարի խմբի երևակումները գտնվում են Գառնասար զյուղից մի քանի կմ հյուսիս-արևելք և ներկայացված են սերպենտինացված պերիդոտիտների հետ կապված հոծ քրոմիտի բնածն, հազվադեպ ոսպնյակածն մարմիններով: Բների մեծությունը կտրվածքում 0.5-1.5 մ է: Առավել մեծ ոսպնյականման մարմինները հետամտված են 6 մ երկարությամբ, 2 մ խորությամբ և ունեն 0.6 մ հզորություն: Հանքաքարը նման է Արփունքի հանքաքարին:

Ոչ հանքային միներալները հանդիպում են հազվադեպ և ներկայացված են սերպենտինով և բլորֆոտով: Cr_2O_3 -ի պարունակությունը 44.3% է:

Ազնվածորի երևակումը գտնվում է Ստեփանավան քաղաքից 9 կմ դեպի հարավ-արևելք, Սև գետակի և Զորագետի ավազանները բաժանող Ազնվածոր ջրաժանում: Այստեղ, Բագրումի լեռնաշղթայի կատարի երկայնքով, ձգվում են գերիհմքային ապարների՝ պիրոքսենիտների և սերպենտինիտների դայկանման ելքեր: Վերջիններս հետամտվում են 1.5 կմ տարածմամբ և 400 մ միջին հզորությամբ:

Հանքայնացումը ներփակող են հանդիսանում խիստ ջարդութված, առանձին տեղերում սերպենտինի սորուն զանգվածի վիխարկված ապարները որոնց մեջ տեղայնացված են հոծ քրոմիտի ոչ մեծ քններ՝ մինչև 54.5% Cr_2O_3 -ի պարունակությամբ:

Աղբարինի խմբի երևակումները գտնվում են Դաշտաքար սարի լանջին, Ամասիայից 8 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Քրոմիտի հանքաքարի բոլոր երևակումները տեղայնացված են սերպենտինացված պերիդոտիտների և դունիտների ոչ մեծ զանգվածներում: Պերիդոտիտների զանգվածը հատում է սենոնի կրաքարերը և եղենի հրաբխածին հաստվածքը:

Այստեղ հայտնի 10 առանձին երևակումները (տեղամասերը) ներկայացված են քրոմիտի հոծ և ցանավոր հանքայնացմամբ ոչ մեծ շլիքներով, երբեմն մինչև 0.3 մ հզորությամբ քրոմիտի երակներով: Քրոմիտի պաշարները գնահատվում են մոտ 1500-2000 տ:

Տիտան

Հայաստանում տիտանի առավել խոշոր կուտակումները կապված են Զանգեզուրի հանքային մարգի զարբրոդային ապարներում հիստերոնագմատիկ երկարահանքերի հետ: Այդ տեսակին են պատկանում Սվարանցի և Կամաքարի տիտանամագնետիտային հանքավայրերը:

Տիտանի բավականին բարձր պարունակություն է հայտնաբերված Հաղարծինի մագնետիտային ավազաքարերի հանքավայրում: Վերջինս դասվում է մերձափնյա ցրոնային հանքավայրերի տեսակին: Տիտանի բարձր պարունակությունը պայմանավորված է սֆենի, ոռոտիլի, իլմենիտի և իլմենոռոտիտիլի, ինչպես նաև ապար կազմող մուգ գույնի միներալներ՝ պիրոքսենների, ալկալային ամֆիբոլների, մելանիտի առկայությամբ և կապված է պեզմատիտային տարատեսակների և Փամբակի ու Մելրու շրջանի նեֆելինային սիենիտների և ալկալային պեզմատիտների հետ: Տիտանի ոչ մեծ կուտակումներ (իլմենիտի և հազվադեպ ոռոտիլի ծեռվ) կապված են գետաբերուկների և լճային նատվածքների հետ, որոնք գլխավորապես զարգացած են Զանգեզուրում և Սևանա լճի հյուսիս-արևելյան ափի երկարությամբ:

Սվարանցի հանքավայրը (մանրամասն նկարագրված է որպես երկարի հանքավայր) ներկայացված է զարբրոյի զանգված՝ մեջ մագնետիտային դայլանման և ոսպնյակածև մարմիններով: Հանքայնացումը մեծ մասամբ ցանավոր է, աղքատ և հազվադեպ առաջացնում է հոծ հանքաքարի ոչ մեծ քններ:

Հանքավայրի շրջանում երկրորդական քվարցիտների մեջ հայտնաբերված են ոռոտիլով հարստացված փոքր քներ և երակներ:

Հանքաքարի կազմում հիմնական նշանակությունն ունեն օլիվինը և մագնետիտը, երկրորդական՝ տիտանամագնետիտը, իլմենիտը և շահինելը: Ընթացիկ ցանավոր հանքաքարը պարունակում է Fe 18-20%, TiO_2 0.8-1.5%, հարուստ հոծ հանքաքարը՝ Fe 32-43%, TiO_2 2.5-3.0%:

Տիտանամագնետիտի մոնոմիներալը պարունակում է Ti_2O_3 7.22%, FeO 32.06%, Fe_2O_3 51.64%, V_2O_5 0.62%, MgO 2.85%, CaO 0.93%, Al_2O_3 3.07%, SiO 1.1%:

Մազմիսական և էլեկտրամազմիսական գատման եղանակներով հանքաքարի հարստացմամբ ստացվում են խտանյոթեր Fe 45-55%, TiO₂ 3-5%, V₂O₅ 5% պարունակությաններով և Fe 75%, Ti 90% կորզմամբ:

Սվարանցի հանքավայրի հեռանկարները տիտանի առումով դեռ բավարար պարզված չեն, բայց նկատի ունենալով պաշարների խոշոր մասշտաբները (ավելի քան 400 մլն. տ հանքաքար), TiO₂ ուսուրացները կարելի է գնահատել բավակին հեռանկարային:

Կամաքարի հանքավայրը իր առաջացման պայմաններով համանման է Սվարանցի հանքավայրին և ներկայացված է գարբրոներում և պիրոքսենիտներում տիտանամազմիտիտի բներով, երակային գոտով և ցանավոր հանքայնացման տեղամասերով: Հանքաքարի զանգվածում գերակշռում է ցանավոր տեսակը, որտեղ Fe պարունակությունը 15-20% է, իսկ TiO₂՝ տատանվում է 1.5-ից մինչև 5.9%:

Հանքավայրը հետախուզված չէ և նրա հեռանկարը՝ տիտանի համար պարզ չէ:

Հաղարծինի հանքավայրի հանքային մարմինները ներկայացված են մագնիտիտային ավազաքարերի շերտերով՝ մագնիտիտի, տիտանամազմիտիտի, հազվադեպ հեմատիտի, իլմենիտի և ուստիի ողորկված մանր հատիկների պարունակությամբ: Համեմատաբար մանքանասն ուսումնասիրված են 5 հանքային շերտեր, որոնք բնորոշվում են ստորև բերված ցուցանիշներով:

Ծերափի համարը	Երկարություն, մ	Հզորություն, մ	Պարունակությունը, %		
			Fe	TiO ₂	V ₂ O ₅
1	600-650	5-7	22.35-49.81	1.41-5.25	0.05-0.35
2	850-900	1-9	37.74-54.51	0.32-1.1	0.04-1.09
3	450-500	1-3	13.12-63.79	1.6-6.78	0.05-0.1
4	800	1-3	15.99-52.65	2.3-7.94	0.02-0.08
5	50	1-1.5	45.92-56.62	2.28-4.95	0.1-0.5

Հանքաքարում տիտանի և վանադիումի բաշխման օրինաշափությունները բավարար ուսումնասիրված չեն:

Հաղարծինի հանքավայրի մագնետիտային ավազաքարերը հեշտ են հարստացվում: Լարորատոր պայմաններում մագնիսական գոտմամբ ստացված խտանյութի ելքը կազմում է 70%, որի մագնիսական մասնաբաժնում (43%) Fe 48.25% է, TiO₂ 45%, իսկ էլեկտրամագնիսական մասնաբաժնում՝ (26.5%) Fe 14.5% է:

Տիտանի հանքայնացման տեսակետից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Հրազդանի և Մեղրու շրջաններում լայն տարածում ունեցող նեֆելինային սիենիտները: Թեժարի նեֆելինային սիենիտները կարելի է դիտել որպես համալիր հումք՝ կավահողի հետ տիտանի և վանադիումի ստացման համար:

2.2. Գունավոր մետաղներ

Ալյումին

Հայաստանում կավահողի միակ իրական աղբյուր են հանդիսանում նեֆելինային սիենիտները (Թեժար, Մեղրի):

Թեժարի ալկալային ներժայքքուկը պատում է միջին եղենի պորֆիրիտներով, նրանց սոուֆերով, տուֆավորշրաքարերով, անդեզիտներով, տրախիտներով և էպիլեյցիտային պորֆիրիտներով ներկայացված հրաբխանատվածքային հաստվածքը:

Նրա կենտրոնական, բարձր մասում՝ Թեժար, Արևմտյան և Հյուսիսային Խալխալ, Ջյոողլի գագարների սահմաններում ցցված է խոշոր շտոկաննան մարմին, «Կենտրոնական զանգված» անվանմամբ: Թեժարի ներժայքքուկի ալկալային ապարների ամքող համալիրը բաժանվում է հետևյալ խմբերի.

1. Ալկալային և նեֆելինային սիենիտներ - բնորոշվում են համասեռ կազմով և տարրերվում են միմյանցից՝ առաջինում նեֆելինի բացակայությամբ կամ նրա աննշան պարունակությամբ: Al₂O₃-ի պարունակությունը կազմում է 18-22%, SiO₂-56-60%:

2. Կեղծ լեյցիտային սիենիտներ և էպիլեյցիտային պորֆիրների դայկաներ: Առաջիններում, Al₂O₃-ի պարունակությունը կազմում է 22.6%, SiO₂ 54.7%:

3. Պեզմատիտներ, որոնցում ըստ միներալային կազմի առանձնացվում են.

Նեֆելին պարունակող պեզմատիտներ. ա) ամֆիբոլ-նեֆելին-դաշտային սպաքային, բ) մելանիտ-ամֆիբոլ-նեֆելին-դաշ-

տային սպաթային, զ) նեֆելին-դաշտային սպաթային, դ) մելանիտ-նեֆելինային;

Առանց նեֆելինի պեզմատիտներ. ա) ամֆիբոլ-դաշտային սպաթային, բ) մելանիտ-դաշտային սպաթային:

Քանակապես գերակշռում են առաջին խմբի պեզմատիտները. մնացածները հանդիպում են հազվադեպ: Պեզմատիտներում հայտնաբերված է $23.7\% \text{ Al}_2\text{O}_3$, $2\% \text{ SiO}_2$:

Մանրամասն երկրաբանա-պետրոգրաֆիական աշխատանքների արդյունքներով “Կենտրոնական զանգվածում” առանձնացվում են նեֆելինով հարստացված երեք գոտիներ.

1. Հյուսիս-արևմտյան գոտի - ճգվում է “Կենտրոնական զանգվածի” ծայրամասի երկայնքով 0.5 կմ երկարությամբ և 80 - 100 , տեղ-տեղ $մինչև 120$ - 150 մ հզորությամբ. մերկանում է հեղեղատներում և կիրճերում՝ $մինչև 150$ - 300 մ, իսկ տեղամասերից մեկում՝ $մինչև 450$ մ խորությամբ:

Նեֆելինով հարստացված ապարների մեջ նշանակալից դեր են խաղում կեղծ լեյցիտային սիենիտները, որոնք մերկանում են գոտու հյուսիս-արևելյան և հարավ-արևմտյան մասերում, առաջացնելով 2 գուգահեռ աղեղնաձև կորացած դայլկանման մարմիններ, որոնցից առաջինը հետամտված է 2 կմ, երկրորդը՝ 1.5 կմ և ունեն 80 - 100 մ հզորություն՝ եզրերում աստիճանաբար սեպածն մարմաբ:

Ջիմիական անալիզի տվյալներով կավահողի պարունակությունը տատանվում է 22 - 23.5% սահմաններում, ալկալիների գումարը ($\text{Na}_2\text{O} + \text{K}_2\text{O}$) 10 - 12% , SiO_2 ՝ 53.12 - 56.78% :

2. Հյուսիսային գոտի – կապված է “Կենտրոնական զանգվածի” հյուսիսային ծայրամասի հետ և մերկանում է 2400 - 2900 մ բացարձակ բարձրությունների վրա: Այդ գոտին ճգվում է լայնակի ուղղությամբ 1 - 1.2 կմ և հեղեղափոսերով բացված է $մինչև 200$ - 250 մ խորությունը: Այդ գոտում լայնորեն տարածված են նեֆելին-սիենիտային պեզմատիտների ոսպնյակաձև և շլիրանման անջատումները՝ 0.5 - 1 մ չափերով և հազվադեպ փոքր հզորությամբ երակներ: Կավահողի պարունակությունը այդ գոտու ապարներում տատանվում է 21 - 22% , ալկալիների ($\text{Na}_2\text{O} + \text{K}_2\text{O}$) գումարը՝ 10 - 20% , SiO_2 ՝ 54 - 56.36% :

3. Հարավային գոտի – զանգվածում առավել խոշորն է և ձգվում է “Կենտրոնական զանգվածի” հարավային եզրամասի երկայնքով՝ 6 կմ երկարությամբ և 100-120-ից մինչև 150-200մ հզրությամբ։ Այդ գոտին պայմանականորեն բաժանվում է 3 տեղամասերի։ Արտավազ (միջին), Թեժագետի (արևելյան) և Ցախամարգ (արևմտյան)։

Արտավազի տեղամասում կավահողի պարունակությունը տատանվում է 19-23, SiO_2 ՝ 54-58, ալկալիների գումարը՝ 11-14%։ Սպեկտրալ անալիզով հայտնաբերվել է գալիում՝ 0.003%, բերիլիում՝ 0.0006%, վանադիում՝ 0.05%։

Թեժագետի տեղամասում կավահողի պարունակությունը 22.7% է, կայծքարինը՝ 56.37%, գալիումինը՝ 0.003%, իսկ Ցախամարգի տեղամասում՝ Al_2O_3 – 22.43%, Fe_2O_3 – 4.47%, TiO_2 – 0.52%, SiO_2 – 55,48%։

Նեֆելինային սիենիտներից կավահողի ստացման ավտոկլավային տեխնոլոգիան մշակվել է ակադեմիկոս Մ.Գ.Մանվելյանի կողմից։ Կավահողի հետ ստացվում է արդյունաբերական արժեքավոր մի շարք համալիր նյութեր։ Պրոցեսը տարբում է այնպես, որ ստացված խտանյութում համարյա բացառվի նատրիումի օքսիդի առկայությունը և այն պարունակի կալիումի օքսիդ։ Ակալային լուծույթը վերամշակվում է նատրիումի ինք ջրային մետասիլիկատ, կալցիումի մետասիլիկատ և կալցիումի կարբոնատացված մետասիլիկատ ստանալու համար։ Միաժամանակ ստացվում է երևանիտ ($m\text{Na}_2\text{CO}_3 \cdot n\text{SiO}_2$) և կայծքար։

Մեղրու համքավայրի ալկալային սիենիտներում Al_2O_3 -ի պարունակությունը 19.86, SiO_2 ՝ 57.16, իսկ ալկալիների ($\text{Na}_2\text{O} + \text{K}_2\text{O}$) գումարը՝ 7.91% է։ Ալկալային սիենիտների միներալային կազմը շատ քեզ քիչ համասեռ է։ Ուղեկից միներալներից առկա են ապատիտը, տիտանիտը, տիտանամագնետիտը, իսկ երկրորդական միներալներից՝ կաղինիտը, սերիցիտը, մուսկովիտը և նեֆելինին տեղակալած միներալները։ Նշված ալկալային զանգվածի սահմաններում ալկալային սիենիտների և մետամորֆային ու հրաբխանատվածքային հաստվածքի մերձկոնտակտային գոտում տարածված են նեֆելինային պեզմատիտներ, որոնցում կավահողի պարունակությունը տատանվում է 24.67-26.21, SiO_2 ՝ 55.01-59.1, իսկ ալկալիների ($\text{Na}_2\text{O} + \text{K}_2\text{O}$) գումարը՝ 12.89-15.64%։

Հանքավայրում նեֆելին պարունակող ապարները ունեն փոքր տարածում և կավահողի ստացման համար գործնական հետաքրքրություն են ներկայացնում լայն տարածում ունեցող ալկալային սիենիտներում առկա կրանատրումային և ալկալային դաշտային սպարները: Ապացուցված է այդ ապարներից կավահողի և այլ արժեքավոր արդյունաբերական նյութերի ստացման հնարավորությունը:

Ալյումինի ստացման հումք են հանդիսանում Կողրի, Սվարանցի, Շենաքաղի, Շաղարբանի (Շահալի-Էլլար) երևակումների անդալուզիտային երկրորդական քվարցիտները:

Սվարանցի երևակումում (Մյունիքի մարզ) 100-150 մ լայնությամբ անդալուզիտային երկրորդական քվարցիտների գոտին ձգվում է հյուսիս-արևմտյան ուղղությամբ 3-4 կմ: Այդ գոտուն բնորոշ է տարրեր ինտենսիվությամբ քվարցացումը, սերիցիտացումը, կառլինացումը, քլորիտացումը, կարբոնատացումը: Ապար կազմող գլխավոր միներալների՝ քվարցի, անդալուզիտի, սերիցիտի և կառլինիտի տարրեր հարաբերակցություններով և կառուցվածքային առանձնահատկություններով անջատվում են հետևյալ տարատեսակները.

1) անդալուզիտ-սերիցիտ-քվարցային (անդալուզիտը չի գերազանցում 5%, քվարցը – 70 - 75 %);

2) սերիցիտ-անդալուզիտ-քվարցային (անդալուզիտ – 20-30%, քվարց – 50-65%, գիրկոն – 5-6 %);

3) սերիցիտ-անդալուզիտային (անդալուզիտ – 45-80%, սերիցիտ - մինչև 10-15%):

Անդալուզիտում առկա են Zr-1, Hf-0.03-0.3, Ga-0.01, V-0.001-0.0003 և Ti - 1%: Կավահողի պարունակությունը տատանվում է 17-34%:

Ուսումնասիրված գոտում անջատվում են առանձին շերտեր՝ 8-10 մ հզորությամբ, անդալուզիտի 45-50% կամ կավահողի 30% միջին պարունակությամբ և վնասակար տարրերի նվազագույն քանակներով: Այդ գոտու հեռանկարները պարզելու համար անհրաժեշտ է կատարել մանրամասն որոնում՝ անդալուզիտաբեր քվարցիտների հզոր և համեմատաբար հարուստ գոտիների հայտնաբերման նպատակով:

Ծեմաբաղի գոտին (Բարզուշատի լեռնաշղթա) համանման է Ավարանցի գոտուն, բայց բնութագրվում է առավել ինտենսիվ պիրիտացմամբ և արսենապիրիտի առկայությամբ: Կավահողի պարունակությունը հասնում է մինչև 25%. առկա են մինչև 1.0 գ/տ ոսկի և մինչև 20-30 գ/տ արծաթ: Դիտարկվող գոտին նպատակահարմար է երկրաբանահետախուզական և հումքի տեխնոլոգիական ուսումնասիրման աշխատանքների անցկացման համար: Նմանատիպ ապարներ կան Այրի գետի վերին մասերում և Արավուսի պղինձ-մկնդեղային հանքավայրի շրջանում, բայց դրանք վատ են ուսումնասիրված:

Ծաղարրանի (Ծահալի-Էլլար) խմբի երևակումներ (Լոռու մարզ): Անդալուզիտային երկրորդական քվարցիտները հետամտվել են նեղ աղեղնանման գոտով ներժայքուկային ապարների կոնտակտի երկայնությամբ 6 կմ, ընդ որում, արևելքում գոտու հզորությունը մեծանում է մինչև 0.5 կմ:

Անջատվում են 4 տեղամասեր.

1. Ծաղարրան N1: Այստեղ անդալուզիտային երկրորդական քվարցիտները ներկայացված են խոշոր ծածկոցների, ելքերի և ոսպնյակաձև մարմինների տեսքով: Al_2O_3 պարունակությունը 12.6-22.5% է, իսկ SiO_2 ՝ 65.5-77.6%: Կորուսիի բյուրեղները ունեն 0.2-0.5 մմ չափսեր:

2. Ծաղարրան N2: Երկրորդական քվարցիտները ներկայացված են 600մ երկարությամբ, 17-20մ լայնությամբ և 15-20 հզորությամբ ոսպնյակաձև մարմինով, հարավ-արևմտյան անկմանը՝ $40-50^{\circ}$ անկյան տակ: Հայտնաբերվել է Al_2O_3 12.56-18.32%, SiO_2 65.14-72.5%:

3. Քաջերի տեղամաս: Գտնվում է N2 տեղամասից 500մ դեպի արևմուտք: Անդալուզիտային երկրորդական քվարցիտները տարածված են 1.5-2.0 հա մակերեսով: Al_2O_3 պարունակությունը 13.3%, SiO_2 ՝ 62.1%, TiO_2 ՝ 0.45% է:

4. Ծեկաջրի տեղամաս: Անդալուզիտային երկրորդական քվարցիտների գոտու ամենաարևմտյան տեղամասն է և տեղադրված է Տլուտի-ջուր գետի վերին մասերում և գրաղեցնում է 1.2 հա մակերես: Al_2O_3 պարունակությունը տատանվում է 1.35-10.5, SiO_2 ՝ 80.48-96.70% սահմաններում:

Հանքածորի խմբի երևակումներ (Լոռու մարզ) (Բերտավան, Վահագնի, Շահալի, Խալալի տեղամասեր):

Բերտավան տեղամասում անդալուգիտային երկրորդական քվարցիտները ներկայացված են առանձին ծածկոցներով և ոսպնյակածև մարմիններով: Լեռնային փորվածքներով հետամտվել է հյուսիս-արևմտյան ուղղությամբ 700-750 մ՝ 500-600 մ լայնությամբ և 10-15 մ հզորությամբ: Al_2O_3 պարունակությունը 16.5-32% է, իսկ SiO_2 ՝ 46-78.5%: Al_2O_3 -ի զգալի պարունակությունները առանձին նմուշներում հնարավորություն են տալիս տեղամասը առաջարկել հետագա որոնողական և երկրաբանահետախուզական աշխատանքների անցկացման համար:

Վահագնի տեղամասում անդալուգիտային քվարցիտների ծածկոցները ունեն 8 հա մակերես: Al_2O_3 ՝ 8.23% է, իսկ SiO_2 ՝ 87.7%:

Շահալի տեղամասն ունի 1.6 հա մակերես: Al_2O_3 ՝ 5.91-20-79%, SiO_2 ՝ 62.76-84.2%:

Խալալի տեղամասն ունի 1 հա մակերես: Al_2O_3 ՝ 4.86-19.8%, SiO_2 ՝ 63.72-91.5%: Անդալուգիտային քվարցիտների ոչ բոլոր ելքերն են ներկայացնում գործնական հետաքրքրություն՝ կավահողի ցածր պարունակության պատճառով:

Ամուսարի երևակումում (Սիսիանի և Վայքի շրջանների սահմանում) էոցենի և օլիգոցենի հասակի հրաբխային ապարները պատռված են խայտարդետ կազմի (սիենիտ-դացիտներից սկսած մինչև անորբոզիտներ և գաբրո) ներժայթքուկներով: Զանգվածում ալունիտը հիմնականում առկա է նուրբ և հոծ ներփակումների տեսքով՝ երկրորդական քվարցի, կառլինիտի, սերիցիտի և այլ միներալների հետ բարդ զուգորդմամբ: Ալունիտը հազվադեպ հանդիպում է քվարցիտներում՝ 2-8 մմ տրամագծով նշածև կամ երիկանածև ներփակվածքների, բնանմամ կամ երականման ոչ կանոնավոր կոտակումների տեսքով: Անդալուգիտի պարունակությունը հասնում է 30% (Al_2O_3 11.1%), հազվադեպ մինչև 50%:

Զորաստանի ալյումասիլիկատների երևակումը գտնվում է Կապանից 8 կմ դեպի արևմտուք և հարում է միջին յուրայի քվարցային պորֆիրներին, որոնք հիդրոքերմալ լուծույթների ազդեցության տակ վերածվել են «ալյումասիլիկատային» ապարների:

Երևակումը ունի միջօրեական ուղղությամբ մի փոքր ձգված ոչ մեծ շտոկի ձև և զբաղեցնում է 12-13 հա մակերես: Այստեղ անջատվում են 2 տարատեսակ.

ա) «Քույլ քվարցացված ալյումասիլիկատներ» 10 հա մակերեսով և Al_2O_3 - 15.61, SiO_2 - 74.22, Fe_2O_3 - 3.35, TiO_2 - 0.5% պարունակություններով:

բ) «Խիստ քվարցացված ալյումասիլիկատներ» 2.5-3 հա մակերեսով և Al_2O_3 - 14.06, SiO_2 - 76.41, Fe_2O_3 - 2.13, TiO_2 - 0.36% պարունակություններով:

Հիդրոթերմալ փոփոխված ապարներում Al_2O_3 - 12.9-19.41, SiO_2 - 70.83 և Fe_2O_3 - 2.5-2.86%:

Կավահողի ցածր պարունակությունը և երևակման սահմանափակ տարածումը մակերեսում և խորքում վկայում է այդ երևակման անհեռանկարայնության մասին:

Ծորժայի և Զիլիսաչի անորողիտները հարում են Սևանա լճի հյուսիս-արևելյան ափի նույնանուն գերիխմքային և հիմքային ապարների հյուսիս-արևմտյան ծայրամասային զանգվածը հանդիսացող գարբրո-պերիոդոտիտային ներժայքուկներին:

Անորողիտները ձևաբանուն ներկայացված են.

ա) ոչ մեծ չափերի ոսպնյակածն և շիրանման մարմիններով՝ Ծորժայի զանգվածում (երկարությունը մինչև 80 մ, լայնությունը 10-25 մ) և համեմատաբար խոչը չափերով՝ Զիլիսաչ զանգվածում, որտեղ նրանք ներկայացված են 2 մարմիններով (170մ երկարությամբ, 10-15 մ լայնությամբ և 800 մ երկարությամբ, 25-30 մ լայնությամբ): Ըստ քիմիական անալիզների Al_2O_3 պարունակությունը 27-30% է: Սպեկտրալ անալիզներով հայտնաբերվել են Cr – տոլկոսի հազարորդական մասից մինչև տասնորդական, Ni, Co, V, Cu, Ga, Li:

Անորողիտների տարածման համեմատաբար փոքր մակերեսը, մարմինների ձևաբանությունը և տեղադրման պայմանները հնարավորություն չեն տալիս երևակումները դիտել որպես հեռանկարային աղբյուրներ կավահողի ստացման համար:

Բորսիտային ապարների որոնումները չեն տվել բավարար արդյունքներ:

Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանում կավահողի հումքի ստացման համար արդյունաբերական մեծ նշանակություն ունեն

միայն նեֆելինային, պսեվդոլեյցիտային (կեղծ լեյցիտային) և ալկալային սիենիտները:

Կապար և ցինկ

Հայաստանի տարածքում բուն բազմամետաղային ֆորմացիայի հանքավայրերի շարքում առավել հետաքրքրություն են ներկայացնում Շահումյանի, Ախրալայի, Մարցիգետի, Մովսեսի, Պրիվոնու և մի շարք այլ հանքավայրերը:

Ախրալայի հանքավայրում հանքային մարմիններն ունեն հարք ոսպնյակաձև և բնաձև տեսք և հարում են հանքներփակող քվարցային պորֆիրների և պորֆիրիտների ծածկող հաստվածքի կոնտակտին: Նրանք հիմնականում տեղադրված են 50-300 մ խորության վրա և միայն երեք հանքային մարմին դրւում են զալիս երկրի մակերևույթ: Առավել խոշոր ոսպնյակաձև մարմինները ունեն հետևյալ չափսերը՝ ըստ տարածման – 80-100մ, ըստ անկանության – 300-350մ և 8-12մ հզորություն (ոսպնյակները ք.10 և 11):

Ախրալայի հանքավայրի հանքաքարը բնորոշվում է քարդ միներալային կազմով: Հանքային միներալներից գերակշռում են պիրիտը, սֆալերիտը, գալենիտը, խալկոպիրիտը, իսկ ոչ հանքային միներալներից՝ քարիտը և քվարցը, երկրորդական դեր են խաղում խունացած միներալները (տենանտիտը հազվադեպ տեսրակերպիտը) և բորնիտը. ոչ մեծ քանակությամբ հանդիպում են արգենտինը, էնարգիտը, շտրոմեյերիտը, բնածին արծաքը, բնածին ոսկին, ունյերիտը, գերմանիտը:

Բարիտ-բազմամետաղային ոսպնյակները որպես օգտակար տարրեր պարունակում են Ba, Pb, Zn, Cu, Cd, Ag, Au:

Բազմամետաղային հանքաքարում գերակշռում է Zn-ի պարունակությունը Pb և Cu նկատմամբ (Pb:Cu:Zn) 1:2:6 հարաբերությամբ:

Հանքավայրում $Zn+Pb+Cu$ մետաղների գումարային պարունակությամբ առանձնացվում են բազմամետաղային հանքաքարի հետևյալ տեսակները.

- ա) հոծ հանքաքար՝ 10% և ավելի,
- բ) նորերակային և երակացանավոր հանքաքար՝ 2.5-10%,
- գ) ցանավոր հանքաքար՝ 1.5-2.5%-ից պակաս:

Հոնդ հանքաքարերը բնութագրվում են հիմնական տարրերի հետևյալ պարունակություններով (%). Pb-5.73, Zn-15.0, Cu-1.97, Fe-6.19, Cd-0.1, As-0.03, Sb-0.05, Au-0.8գ/տ, Ag-66.0 գ/տ:

Նրբերակային և երակացանավոր հանքաքարերը պարունակում են (%). Pb-1.25, Zn-3.37, Cu-0.57, Fe-3.3, Cd-0.3, As-0.01, Sb-0.003, Au-0.5 գ/տ, Ag-32.0 գ/տ:

Ցանավոր հանքաքարերը պարունակում են (%). Pb-0.78, Zn-2.92, Cu-0.65, Fe-4.18, Cd-0.02, As-0.1, Sb-0.004, Au-0.6 գ/տ, Ag-6.8 գ/տ:

Նշված հանքաքարերի տեսակների բնորոշ հատկանիշներն են նրանց տարածական անջատման բավականին հստակ արտահայտությունը: Հանքաքարի յուրաքանչյուր տեսակը ոսպնյակի ընդհանուր կորվածքում գրավում է որոշակի տեղ և ներկայացնում է հիդրոքերմալ լուծույթներով ներփակող ապարների մետաստմատիկ վերամշակման որոշակի փուլ:

Ախրալայի բազմամետաղային հանքաքարերում մշտապես կան հազվագյուտ և գրված տարրեր, այդ թվում Ge մինչև 10 գ/տ, Ga - 16 գ/տ, Se - 20 գ/տ, Te - 10գ/տ, In - 2գ/տ, Sr - մինչև 1% (բարիտի մեջ):

Հանքավայրում բացի բազմամետաղային և բարիտային հանքաքարերից հայտնաբերվել են նաև ծծումբ-կոլշետանային և պղինձ-ծծումբ- կոլշետանային հանքաքարեր, որոնք տեղադրված են ավելի խորը հորիզոններում: Հանքավայրի հեռանկարները կապված են քվարցային պորֆիրիտների մերձկոնտակտային մասերում նոր հանքային մարմինների հայտնաբերման և քվարցային պորֆիրների մեջ թույլ ուսումնասիրված հանքային գոտիների հետ:

Բավականաշափ հեռանկարային է Եռավանք (Ուչքիլսա) գետի աջափնյա մասը:

Ախրալայի հանքավայրում 01.01.1980թ. դրությամբ A+B+C₁ կարգերով հաշվեկշռային պաշարները կազմում են 1335 (39.4) հազ.տոննա բազմամետաղային (բարիտային) հանքաքար, 8000 տ պղինձ, 21500տ կապար, 58300տ ցինկ, 598.5 կգ ոսկի, 46.05 տ արծաթ, 479.5 տ կաղմիում, 29.2 տ սելեն, 7.8 տ տելուր, 9.8 տ ինդիում, 8.8 տ գերմանիում, 22.3 տ թալիում, 20.8 տ գալիում, C₂ կարգի բազմամետաղային հանքաքարի հաշվեկշռային պաշար-

ները 826 հազ.տ են, իսկ արտահաշվելշուային պաշարները կազմում են 9.0 հազ.տ բազմամետաղային հանքաքար, 0.2 տ կապար, 0.2 տ ցինկ, 1.0 տ արծար, 6.0 տ կաղմիում:

Բազմամետաղային հանքաքարի A+B+C₁ կարգի հաշվելշուային պաշարներում օգտակար տարրերի պարունակությունը կազմում է . Cu-0.6%, Pb-1.61%, Zn-4.37%, Au-1.34 գ/տ, Ag- 102.8 գ/տ, Cd- 0.072%, Te- 5.9 գ/տ, Ga-15.6 գ/տ, In- 7.3 գ/տ, Ge - 6.6 գ/տ, Se-21.9 գ/տ, Ba-70 %, As-0.055 %:

Մարցիգետի հանքավայրում որոնողակետախուզական աշխատանքներ տարվել են Մարցիգետի խախտման գոտու երկայնքով՝ նրա 5 տեղամասերում, Պ.Գ. Ալոյանի, Ս.Գ.Ալոյանի և Հ.Պ.Ալոյանի կողմից: Հյուսիս-արևելյուտքից դեպի հարավ-արևելք այդ տեղամասերը տեղադրված են հետևյալ հաջորդականությամբ՝ Զաղիձոր, Մարց, Պրվաշեն-Բուլաղիձոր, Պապնիջուր և Կուրտիք: Մարց, Պրվաշեն-Բուլաղիձոր և Պապնիջուր տեղամասերը տեղադրված են Իքատակի անտիկլինալի կամբարային մասում և իրենց հանքայնացման տեղայնացման պայմաններով և նյութական կազմով առաջացնում են մեկ միասնական տեղամաս՝ 3 հանքերևակումներով: Զաղիձորի տեղամասը տեղադրված է Մարց-Ոսկեսպարի և Մարցիգետի խախտումների հատման հանգույցում և առանձնանում է հանքայնացման տեղայնացման մորֆոստրուկտորային առանձնահատկություններով, նյութական կազմով և հանքաքարի հարատացման տեխնոլոգիայով: Կուրտիքի տեղամասը տարածականորեն մեկուսացված է և տեղադրված է հանքավայրի սահմաններից դորս, հանքային դաշտի ծայր հարավ-արևելքում՝ Մարցիգետի խախտման ճյուղավորված և տարրեր բնույթի մասը լայնակի խախտումների ինտենսիվ զարգացման գոտում:

Զաղիձորի տեղամասը տեղադրված է Դեբեդ գետի աջ ափին՝ նրա աջ վտակ Մարց գետի գետաբերանի շրջակայքում՝ միջին էոցենի հրաբխանատվածքային առաջացումների շրջանում: Վերջիններս ինտենսիվ ջարդրտված են և հիդրոքերմալ փոփոխված: Տեղամասի սահմաններում Իքատակի անտիկլինալ հյուսիս-արևմտյան վերջավորությունում ձեռք է բերում դեպի հարավ-արևելյուտք շուրջ եկած ծալքի բնույթ՝ առանցքային խախտմամբ, որը դեպի հյուսիս անցնում է Սպասաքարի վրաշարժին: Տեղա-

մասից դեպի հյուսիս-արևելք տեղադրված է Սպասաբարի գրան-դիորիների ներժայքությունը: Ինտենսիվ զարգացած են անդեզիտ-ների և դիորիտների դայլային և երակային առաջացումները, ինչպես նաև քվարցային պորֆիրիտների սիլլերը: Հանքների կող ապարները ներկայացված են անդեզիտների և դիարազների տուֆերով և տուֆափշրաքարերով: Մերձահանքային փոփոխությունները արտահայտված են կարրոնատացմանը, կառվինացմանը, սերիցիտացմանը, քլորիտացմանը, քվարցացմանը և էափդուտացմանը: Տեղամասում աճատված և եզրագծված են 14 հանքային մարմիններ, որոնցից առավել հետախուզված են 1, 2, 6 և 7 հանքային մարմինները: Առավել խոշոր համարվում է 7-րդ հանքային մարմինը, որը հետամտված է ըստ տարածման 530մ, իսկ ըստ անկման՝ 220մ՝ հյուսիս-արևելյան անկմանը 70-85° անկյան տակ: Երբեմն նկատվում է հակառակ անկում և հանքայնացման գոտու ալիքաձև տարածում: Հանքային մարմնի միջին հզորությունը մոտ 2մ է: Այդ մարմնում կենտրոնացված է ոսկի-պղնձային հանքաքարերի պաշարների մոտ 80%-ը: Տեղ-տեղ միասնական գոտին բաժանվում է քվարց-կարրոնատ-սոլֆիդային կազմի միմյանց զուգահեռ մի շարք երակային գոտիների, որոնց հզորությունը փրկածքներում հասնում է մինչև 5մ և ավելի: Հանքային մարմինը ներկայացված է խալկոպիրիտի և սֆալերիտի հանքայնացմանը նրբերակներ, քններ և ցան պարունակող ինտենսիվ քվարցացված ապարներով: Օքսիդացման գոտում նկատվում են մալախիտի ու ազորիտի փառանման առաջացումներ, որոնք ուղեկցվում են սերիցիտացման, երկաքացման և օքսիդացման պրոցեսների արդյունքներով: 1, 2 և 6 հանքային մարմինները նույնական ու հանքային առավագանք անկում և հետամտված են ըստ տարածման 300-400մ, ըստ անկման մինչև 300մ՝ 1-1.33մ միջին հզորությամբ:

Սարցի տեղամասը հարում է Իքատակի անտիկլինալի կամարային մասին և կազմված է միջին էոցենի մարզիկետի և սոտի շերտախմբերի առաջացումներից: Նրանք իիմնականում ներկայացված են անդեզիտներով, նրանց տուֆերով, տուֆֆիտներով և տուֆափշրաքարերով: Անտիկլինալի հարավ-արևմտյան թեր՝ Սարցիկետի խախտուման կախված թիվ գոտում կորանում է՝ առաջացնելով հատակ արտահայտված մերձխախտումային նեղ

սինկլինալ՝ թևերի 65-70° անկմանք: Տեղամասում լայն տարածում ունեն կտրուկ անկմանք հանքայնացված գարրո-դիաբազային դայլկաները: Հանքայնացումը հարում է հիմնականում քվարցային երակներին և նրբերակներին: Քվարցացման աստիճանի նվազմանը գուգընթաց նվազում է նաև հանքայնացման ինտենսիվությունը: Մակերեսում նրբերակների կազմը հիմնականում քվարցային է, իսկ խորքում՝ քվարց-սուլֆիդային, քվարց-կարբոնատային և քվարց-բարիտային: Առավել մանրամասն հետազոտված է 2-րդ հանքային մարմինը: Հանքային մարմնի երկայնքով հետամտված է ապարների ինտենսիվ կոտրտման և փոփոխման գոտին: Վերջիններս ներկայացված են կարբոնատացմանք, քվարցացմանք, կառլինացմանք և լիմոնիտացմանք: Գոտին հետամտված է հյուս-արևմտյան ուղղությամբ 1500 մետր և անկում է դեպի հյուսիսարևելք՝ 75-85° անկյան տակ: Հանքայնացումը ներկայացված է քվարց-սուլֆիդային երակներով, բազմաթիվ նրբերակներով, բներով և սուլֆիդների ցանով՝ առաջացնելով երակային գոտի: Երակային գոտում քվարց-սուլֆիդային (բազմամետաղային) երակների հզորությունը տատանվում է մի քանի սմ-ից մինչև 0.5մ-ի, երկարությունը՝ մի քանի տասնյակ մետրից մինչև 150-200մ: Երակների առանցքները կայուն են, բայց ունեն փոփոխական հզորության: 2-րդ հանքային մարմնի հզորությունը տատանվում է 0.2-4.1մ: Հետհանքային խախտումները բույլ են զարգացած՝ խախտման մի քանի մետր անպյուտույանվ:

Միներալային կազմը խիստ անհամասեռ է: Գերակշռում է բազմամետաղային (զալենիտ-սֆալերիտային) հանքայնացումը, սակայն հանդիպում են նաև պղինձ-ցինկային և պղնձահանքային միներալային տարատեսակներ:

Հիմնական հանքային միներալներն են՝ սֆալերիտը, խալկոպիրիտը, զալենիտը, պղիրիտը, խոնացած միներալները, մոլիբդենիտը, բիսմուրինը, հեմատիտը, լիմոնիտը, կովելինը, բորնիտը, խալկոզինը և այլն:

Պրմաշեն-Բուղաղիձոր հանքերներում գտնվում է իքատակի անտիկլինալի կամարային մասերում: Այստեղ ծալքը կտրտվում է զարրո-դիաբազային դայլկաների համակարգով, որոնք ձգվում են հյուսիս-արևմտյան ուղղությամբ, անկում են հյուսիս-արևելք՝ 60-85° անկյան տակ: Հանքայնացումը տեղայ-

նացված է գերազանցապես անդեզիտներում, ավելի սակավ՝ տուֆերում և տուֆային առաջացումներում: Հանքայնացված դայկաները ըստ տարածման և ըստ անկման կայուն են: Նրանց հզրությունը տատանվում է 1-ից մինչև 20մ, միջինը՝ 3-8մ: Դայկաների կոնտակտներով հետամտվում է կոտրտման և հիդրոքերմալ փոփոխման գոտին: Հանքային մարմինները երակներ են և երակային գոտիներ: Նրանք ներկայացված են հիդրոքերմալ փոփոխված, օքրայացված ապարներով, որոնք ներծծված են քվարց-սուլֆիդային, քվարց-կալցիտային և գալենիտ-սֆալերիտային նրբերակներով: Երակային գոտիներում հանքայնացման բնույթը երակացանավոր է: Առաջնային սուլֆիդային միներալները ներկայացված են գալենիտով, սֆալերիտով, սակավ խալկոպիրիտով և պիրիտով, իսկ երկրորդային միներալները՝ ցերոսիտով, անգլեզիտով, ավելի քիչ մալախիտով, ազուրիտով, կովելինով և բորնիտով: Երակների երկարությունը 300-500մ է, միջին հզրությունը 1.5մ: Հանքային գոտիները ունեն ոչ հստակ կրնտակտներ և ներփակող ապարներին անցնում են աստիճանաբար: Տեղամասում հայտնաբերված են 19 քազմամետաղային երակային գոտիներ: Հանքայնացումը գերազանցապես հարում է դիաքազային դայկաների պառկած, իսկ երեսմն կախված կողին: Հանքաքարը համալիր է: Խորքում ուսումնասիրված չէ: Հետաքրքրություն են ներկայացնում ոսկին, արծաթը, պղինձը, կապարը, ցինկը: Բոլոր հանքային մարմիններում առկա է սնդիկի հարուստ հանքայնացում:

Պապմիջուր հանքերնակումը գտնվում է Իրատակի անտիկլինալի հարավ-արևելյան համակցման՝ Մարցիգետի և Քարաջանի խախտումների հատման հանգույցում: Այդ խախտումները ուղեկցվում են գուգահեռ տեկտոնական գոտիների և ճեղքերի համակարգով, որոնք նապատակոր պայմաններ են ստեղծել հանքայնացման տեղայնացման համար: Հանքայնացումը ներկայացված է առաջնային սուլֆիդներով՝ գալենիտով, սֆալերիտով, սակավ խալկոպիրիտով և պիրիտով: Այսուեղ հայտնաբերված են 2 գոտիներ (6 և 7-ը) և քազմաքիվ քազմամետաղային երակներ: Ներփակող ապարները Մարցիգետի շերտախմբի հիդրոքերմալ փոփոխված անդեզիտներն են և նրանց փշրաքարերը: Հանքայնացումը տեղայնացվում է քվարց-կարբոնատ-սուլֆիդային երակ-

ներում և գոտիներում: Երակային գոտիները ունեն անկայուն հզորություն՝ փրվածներում մինչև 15մ և ավելի: Երակները ունեն հստակ եզրագծեր և 0.5-0.8մ հզորություն: 6-րդ և 7-րդ հանքային մարմիններն ունեն հանդիպակած անկումներ և հավանական է, որ խորքում առաջացնում են մեկ միասնական հզոր գոտի: Մակերեսային փորվածքներով այդ գոտիները հետամտված են 500մ, իսկ տեղամասի աշխարհագրատնտեսական պայմանները վկայում են նրանց հեռանկարայնության մասին:

Կորտիքի տեղամասը տեղադրված է Մարցիգետի վարեւորի գոտում և կազմված է Կուրտիքի և Մարցիգետի շերտախմբերի նստվածքներից: Տեղամասում ուսումնասիրված է մեկ գոտի, որը ներկայացված է հիդրոքերմալ փոխոխված անդեզիտներով և նրանց տուֆերով: Փոփոխությունները ներկայացված են քվարցացմամբ և սերիցիտացմամբ: Գոտում նկատվում են բազմաթիվ քվարց-բարիտային երակներ և բազմամետաղային ցանով ներկայացված նրբերակներ: Գոտին ուսումնասիրված է մակերեսային փորվածքներով:

Հակումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրը գտնվում է Հայաստանի հանքավետուրյան հարավ-արևելյան մասում, Կապանի պղինձ-կոլչեղանային (պղինձ-հրաքարային) հանքավայրից 2կմ դեպի արևելք և տեղադրված է Բարգուշատի լեռնաշղթայի հարավ-արևելյան վերջավորության վրա, Ողջի գետի և նրա ձախ վտակ՝ Դիցմայր գետի միջև: Հանքավայրի շահագործումը սկսվել է 1863թ և ընդմիջումներով շարունակվել է մինչև այժմ:

Հակումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրը հարում է Կապանի բրախիանտիկլինալի հյուսիս-արևելյան քիմիա: Հանքավայրի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են միջին յուրայի հրաբխածին ապարները, որոնք ներկայացված են հրաբխային փշտաքարերով ներարկված և հյուսիս-արևելյան ու հյուսիս-արևելյան տարածմամբ դիարազային և գարբո-դիարազային դայլկաներով պատոված անդեզիտա-դացիտային քվարցային պորֆիրիտներով (Բարարատումի շերտախումբ): Անճշան տարածում ունեն վերին յուրայի հասակի հրաբխամիկտային ավազաքարերը և անդեզիտների և անդեզիտաքարալտների նրբաշերտեր պարունակող տուֆավիշրաքարերը:

Հանքավայրի տարածքը մասնատված է հյուսիս-արևելյան՝ միջօրեականին մոտ տարածմամբ մինչհանքային խզումնային խախտումներով:

Հանքավայրի կառուցվածքը բարդեցված է դիաբագների և գարբրո-դիաբագների խոշոր և մանր դայկանման մարմիններով, որոնք պատում են հրաբխային փշրաքարերը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դայկաներն ունեն մինչհանքային հասակ:

Ըստ կառուցվածքային առանձնահատկությունների և հանքայնացման բնույթի Շահումյանի ուսկի-քազմամետաղային հանքավայրը պատկանում է երակային տեսակին: Այստեղ ստորադաս նշանակություն ունի հանքայնացման երակացանավոր տեսակը, որը տեղադրված է գլխավոր հանքային մարմինների և շտոկվերկային հանքայնացման տեղամասերի երկայնքով և ներկայացված է քազմամետաղային հանքայնացման նրբերակներով և մոտիկ տեղադրված երակների փոքր հզորության գոտիներով:

Հանքային մարմինները ներկայացված են միմյանց զուգահեռ, հիմնականում լայնակի տարածմամբ հանքային երակների համակարգով: Երակներն անկում են դեսպի հարավ (հազվադեպ հյուսիս)՝ $70\text{--}85^{\circ}$ անկյան տակ և հետամտված են մինչև 600մ ըստ տարածման (գերակշռում են 100-300մ) և 200-250մ ըստ անկման: Նրանց միջին հզորությունը 30-60սմ է, հազվադեպ 3-3.5մ: Որպես կանոն երակներն ուղեկցվում են երակացանավոր հանքայնացմամբ (երակի կախված և պառկած թևերում): Երակները և նրանց ուղեկցող երակացանավոր հանքայնացման տեղամասերը կազմում են մեկ միասնական հանքային մարմին՝ փրկածքներում մինչև 20-25մ հզորությամբ (երակներ՝ N5 հյուսիսային, N11, 28՝ “Ս.Շահինյան” և այլն): Հաճախ մանր երակները միավորում են ոչ հստակ սահմաններով և բավականին բարդ հանքային կազմով երակային գոտիների:

Հանքային միներալները ներկայացված են սֆալերիտով, խալկոպիրիտով, գալենիտով, պիրիտով, բորնիտով, կովելինով, ալբայիտով, իսկ ոչ հանքային միներալներն են՝ քվարցը և կալցիտը: Հանքավայրում հիմնական օգտակար տարրերն են ոսկին, արծաթը, պղինձը, կապարը, ցինկը, կադմիումը, տելուրը և սելենը: Ոսկին հանդիպում է ինչպես բնածին ձևով, այնպես էլ սուլֆիդա-

յին միներալների մեջ: Ուկու հիմնական կրողը տեղութիւններն են (հեսսիտ, պետցիտ, ալբայխ):

Ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության Ծահումյանի հանքավայրը դասվում է III խմբին:

01.01.2004թ. դրությամբ հանքավայրի պաշարները C_1+C_2 կարգերով կազմում են. հանքաքար – 14916 հազ.տ., պղինձ – 88.73 հազ.տ., ցինկ – 371.3 հազ.տ., կապար – 23.1 հազ.տ., ուլի – 38413 կգ, արծար – 748.8տ, կաղմիում – 499,5տ, ինդիում – 161.8տ, ծծումբ – 1155.2 հազ.տ: Ըստ մարկշեյդերական հաշվարկների բնամասերում և շահագործման համար ոչ նպաստավոր պայմաններում բողնված են նաև պաշարներ, որոնք C_1+C_2 կարգերով կազմում են. հանքաքար – 158.1 հազ.տ., պղինձ – 4.7 հազ.տ., ցինկ – 15.6 հազ.տ., կապար – 1.5 հազ.տ., ուլի – 627 կգ, արծար – 13.4տ:

Հանքավայրի վերաշահագործումը սկսվել է 1989 թվականից: Ներկայումս հանքավայրի շահագործման արտոնագիրը պատկանում է Deno Gold Mining և Dundee Precious Metals ընկերություններին:

Տափուշի մարզի Ծամշադիմի հանքային դաշտի կողեղանային բազմամետաղային երևակումներ.

– Զրգալի-ձորի հանքերևակման հանքայնացումը տարածված է անհավասարաչափ և կապված է հիդրոթերմալ փոփոխված գոտու հետ, որտեղ, որոշ միջակայքերում, օգտակար տարրերի պարունակությունները կազմում են. Pb-3.55-5.03%, Zn-4.27%:

– Բովածորի (Մաղանիծոր) հանքերևակումը տեղադրված է քվարցացված պորֆիրիտների մեջ՝ պիրիտացված և օքրայացված գոտիներում բազմամետաղային հանքաքարի փոքր բնածն կուտակումների և երակի կազմում գտնվող, որոնցում մետաղների պարունակությունը կազմում է. Pb- մինչև 0.53%, Zn- մինչև 2.99%, Cu- մինչև 0.06%:

– Չոլխտ-Չրաղացի հանքերևակումը ներկայացված է հիդրոթերմալ փոփոխված, որոշ տեղերում երկրորդական քվարցիտների վերածված, ստորին յուրայի պլազմիկազային, պիրոքսենային և քվարցային պորֆիրիտներով: Պղնձի պարունակությունը հասնում է 1.22%, ցինկինը՝ 1.66, կապարինը՝ 0.37%: Հանքային երակների հզորությունը տատանվումէ 5-10 սմ.

– Տավոշի-ակ հանքերևակման հանքային գոտիների հզորությունը տատանվում է 0.4-5 մ, իսկ առանձին երակների հզորությունը՝ 0.5-2.5 սմ և պարունակում են կապար 0.68%, ցինկ 1.15%:

Կրաքարային ավազաքարերի և կրաքարերի մեջ կապարցինկային հիդրոքրմալ հանքավայրերին են պատկանում *Պրիվոլմու հանքային դաշտի* բազմաթիվ երևակումներ, կապված միջին էոցենի հասակի հրաբխածին և հրաբխանատվածքային առաջացումների հետ:

Պրիվոլմու հանքավայրի հանքաքարին բնորոշ է հանքային միներալների բաշխման անհամասեռությունը ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղաձիգ ուղղությամբ: Կապարի պարունակությունը (%) տատանվում է 0.2-5, ցինկինը՝ 0.1-7 և ավելի, պղնձինը՝ մինչև 1.4: Հայտնաբերվել են Cd – 0.01, Se – 0.001-ից մինչև 0.005, Tl – 0.0016: Նախնական տեխնոլոգիական հետազոտություններով ապահովվում է կապարի 80-90% կորզում և հանքաքարի հեշտ ֆլուտացիա:

Մոլսեսի հանքավայրի կապար-ցինկային հանքայնացումը տեղադրված է կարբոնատային ապարների մեջ և մոտ 200 մ լայնությամբ հետամտվում է 1200 մ: Հանքայնացման առավել խորությունը – 180 մ է: Զեարանորեն առանձնացվում են՝ ցանավոր, բնածկ և երակային հանքային մարմիններ: Ցանավոր հանքային մարմնի մեջ որոշված են հետևյալ միջին պարունակությունները (%): Pb - 1%, Zn - 1.5%, Cu - 0.3%, Cd - 0.2-0.3%, Ag - 40 գ/տ, Ge - 6 գ/տ: Երակային հանքային մարմինները փոքր հզորությամբ (1-3սմ) երակիկների տեսքով հանդիպում են դրումիտների և կրաքարերի մեջ՝ տեկտոնական խախտման գոտիներում: Բնածկ հանքային մարմինները հարստացված են բարիտով, հանդիպում են հանքավայրի կենտրոնական մասում և ճգվում են մինչև 3 մ՝ 0.02-0.2 մ հզորությամբ:

Բացի բուն բազմամետաղային հանքավայրերից՝ ցինկի և կապարի որոշ պաշարներ առկա են նաև այլ ֆորմացիաների հանքավայրերում, այդ բվում ոսկեհանքային ֆորմացիայի *Մելրածորի* հանքավայրում, պղնձահանքային ֆորմացիայի *Ալավերդու* հանքավայրի “Սաղլեն” ու “Կատու” և Շամլուղի հանքավայրի “Բազմամետաղ” և “Բորխս” հանքազանգվածներում:

Ծարիր

Հայաստանի տարածքում ծարիրի հանքայնացմամբ հայտնի են Ազատեկի և Սոթքի անտիմոնիտային և սոլֆաանտիմոնիտային հանքավայրերը և Ամասիայի շրջանի ծարիրի ոչ մեծ երևակումները:

Ազատեկի ոսկի-քազմամետաղային հանքավայրում ծարիրի հանքայնացումը ներկայացված է 2 տարատեսակով անտիմոնիտային և սոլֆաանտիմոնիտային:

Անտիմոնիտային տարատեսակը հիմնականում ներկայացված են անտիմոնիտով և քվարցով: Ոչ մեծ քանակությամբ հանդիպում են այլրիտ, սֆալերիտ, տենանտիտ, տետրաէդրիտ: Անտիմոնիտը հանդիպում է ասեղնաձև և ձողաձև բյուրեղներով՝ 1-5, երբեմն մինչև 10 մմ երկարությամբ: Այդ տարատեսակի հանքայնացումը հիմնականում հարում է երակների մերձեղուային մասերին:

Սոլֆաանտիմոնիտային տարատեսակը հարում է կտրուկ անկմամբ սորուկտուրաներին, ներկայացված են կապարի և պղնձի սոլֆաաղերի երակային և ցանավոր հանքայնացմամբ և տեղայնացված է հանքավայրի Զախափինյա տեղամասի հանքային մարմիններում: Այդ տարատեսակում հայտնաբերված են բուլանժերիտ, ցինկենիտ, պլազմոնիտ, սեմսեիտ, բուրնոնիտ, տենանտիտ, տետրաէդրիտ, նշանակալի քանակությամբ՝ սֆալերիտ, գալենիտ, պիրիտ: Անտիմոնիտը հանդիպում է հազվադեպ: Ոչ հանքային միներալներից հանդիպում են խալցետրնանման քվարցը և կալցիտը: Հանքավայրի արծաթի հիմնական պարունակությունները կապված են այդ տարատեսակի հետ: Տետրաէդրիտում և սոլֆաանտիմոնիտներում պարունակությունը կազմում է համապատասխանաբար 51.3 և 11.7 կգ/տ արծաթ:

Ուկու հանքաքարերի վերամշակման նյութերում (խոտանյութերում) ծարիրի պարունակությունը, որպես «վճասակար» խառնուրդ, նախկինում նորմավորված էր, մինչդեռ այդ հանքաքարերում ծարիրի գգալի պարունակությունները կարող են գործնական հետաքրքրություն ներկայացնել վերամշակման համապատասխան սխեմայի կիրառման դեպքում: Ընդերքի համալիր օգտագործման տեսանկյունից այդ փաստը պետք է կարևորվի

հանքաքարերի տեսակավորման ժամանակ և հաշվի առնվի հանքավայրերի շահագործման ընթացքում:

Ազատեկի հանքավայրում երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքում հանքաքարում բացահայտվել են ծարիրի մինչև 0.6% պարունակություններ: Հատկապես Զախափնյա տեղամասից նմուշարկված տեխնոլոգիական փորձանմուշներում, որոշված են ծարիրի շատ ավելի բարձր պարունակություններ, որոնք առաջացնում են կուտակումներ՝ հարելով հանքային մարմինների: Հանքաքարերի տեսակավորման ժամանակ այդ կուտակումները հանքավայրի 2-րդ, 4-րդ և 6-րդ հանքային մարմիններում անջատվել են որպես ինքնուրույն անտիմոնիտ-սուլֆատիմոնիտային միներալոգիական (բնական) տարատեսակ, որը իր տեխնոլոգիական առանձնահատկությունների, արդյունահանանան լեռնատեխնիկական և բնապահպանական պայմանների հաշվառմամբ դիտվել է որպես ինքնուրույն ոսկերեր կապար-ծարիրային երկրաբանատեխնոլոգիական և արդյունարերական տեսակ: Այս հանքային տեսակի անջատման և եզրագծման չափանիշ Ազատեկի հանքավայրի հանքաքարում հանդիսանում է ծարիրի 0.5%-ից բարձր պարունակությունը, որի դեպքում հնարավոր է ստանալ ոսկի պարունակող կապար-ծարիրային խտանյոթ՝ նրա հետագա վերամշակումը իրականացնելով հիդրոմետալորդիական եղանակով՝ մետաղական կապար, ծարիր, ոսկի և արծաթ ստանալու նպատակով:

Ազատեկի հանքավայրում ծարիրի պաշարները հաշվառված են Պետհաշվեկշուում և կազմում են 5400 տ՝ 0.07% միջին պարունակությամբ:

Սոքքի հանքավայրում, բացի զարբրոյի զանգվածից և հանքայնացված դայկաներից, մնացած հանքային մարմիններում առկա է նաև ծարիր: Վերջինս առավել բարձր պարունակություններով հանդես է գալիս հանքավայրի թ. 41 հանքային մարմնում: Տեխնոլոգիական փորձանմուշներում հայտնաբերված է 0.5-2.9% ծարիր: Ընդհանուր առմամբ բոլոր հանքային մարմինների վերին հորիզոններում ծարիրը ներկայացված է անտիմոնիտով և սուլֆատերով: Երկրաբանատեխնոլոգիական բարտեզագրման արդյունքներով Սոքքի հանքավայրում նույնական անջատվում է անտիմոնիտ-սուլֆատիմոնիտային միներալային տարատեսակը:

Ամասիայի ծարիքի հանքավայրը հայտնաբերվել է 1953 թվականին: Հանքավայրի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին կավճի կրաքարերը, որոնք հատվում են դրսիտներով, պերիդոտիտներով, պիրոքսենիտներով: Հանքայնացված գոտին տեղայնացված է գերիմքային ապարներում և հետամտված է 1 կմ երկարությամբ: Գոտու հզորությունը տատանվում է 5-20 մ, ունի հյուսիս-արևելյան տարածում և անկում է դեպի հյուսիս-արևմուտք՝ $70\text{--}85^{\circ}$, տեղ-տեղ $40\text{--}50^{\circ}$ տակ:

Հանքային մարմինները ներկայացված են բներով, կարծերակներով, նրբերակներով: Բնանման մարմինների չափսերը կազմում են 0.1-0.4 մ: Երակների հզորությունը մի քանի սանիտիմետրից հասնում է մինչև 0.4-0.7մ: Հանքաքարի կազմում մասնակցում են ճառագայթածև կամ ասեղնածև ստիրնիտը, ռեալզարը, ոչ մեծ քանակությամբ բրոնիտ, խալկոզին, խալկոպիրիտ, աննարերգիտ: Առավել նշանակալից է արևմտյան տեղամասի հանքայնացումը, որը ներկայացված է 3 x 2 մ չափերով ոսպնյակածև մարմնով: Մակերեսից 4 մ խորության վրա այն վեր է ածվում 0.3-0.7 մ հզորությամբ ստիրնիտի հոծ երակի: Sb-ի պարունակությունը տատանվում է հետքից մինչև 15.82%, As – 0.28-15.85%, Ni – 0.1-0.46%: Գերակշռում են ցածր պարունակությունները:

Երևակնան հեռանկարները ծարիքի տեսակետից պարզ չեն:

2.3. Հազվագյուտ մետաղներ

Բացի հիմնական օգտակար բաղադրիչներից (պղինձ, մոլիբդեն, ոսկի, արծաթ, կապար և ցինկ), Հայաստանի տարբեր հանքային ֆորմացիանների հանքաքարերում և նրանց խտանյութերում առկա են հանքապետության Պետհաշվենկոռում մասամբ հաշվառված կամ չհաշվառված արդյունաբերական նշանակության հազվագյուտ մետաղներ:

Հազվագյուտ տարբերը - «այն մետաղներն ու ոչ մետաղներն են, որոնք համեմատած լայն տարածված տարրերի հետ երկրակեղևի կառուցվածքում ունեն աննշան մասնակցություն» (Վ.Ե.Քոյցով): Նրանց լնդիանուր պարունակությունը երկրակեղևում մի քիչ է գերազանցում տոկոսի տասներորդ մասը:

Հազվագյուտ մետաղների լայն օգտագործումը պաշտպանողական, աերոտիեզերական արդյունաբերության և ժողովրդական տնտեսության առանձին բնագավառներում պայմանավորվել է գիտատեխնիկական հեղափոխությամբ և նպաստել ժամանակակից գիտության և տեխնիկայի նոր ճյուղերի, այդ թվում՝ արևային էներգետիկայի, մազնիսական բարձիկների վրա գերարած տրանսպորտի, ինֆրակարմիր օպտիկայի, օպտիկական էլեկտրոնիկայի, լազերային, ինչպես նաև գերմագնիսային, գերթերև, գերկարծր, գերջերմակայուն և բարձր ամրության կոնստրուկտիվ նյութերի և այլ բնագավառների զարգացմանը:

Համաշխարհային շուկայում այդ մետաղներն ունեն մշտապես բարձր պահանջարկ: Առաջատար զարգացած երկրներում նրանցից շատերը (ուղղոգեն օսմիում, սկանդիում, կադմիում, տելուր և այլն) դասվում են ուազմագարական մետաղների կարգին և գանգում են ուազմաարդյունաբերական համայիրի հսկողության ներքո: Ներկայում Հայաստանի խտանյութերում այդ օգտակար տարրերը դուրս են տարվում հանրապետությունից՝ առանց համապատասխան փոխառությունների ավելին, ձեռնարկությունները վճարում են հսկայական տուգանքներ, խտանյութերի «աղտոտվածության». համար:

ՀՀ Պետհաշվեկշռում հաշվառված մի շարք հազվագյուտ մետաղների երկրաքիմիան բավական լավ է ուսումնասիրված: Հազվագյուտ մետաղների ծագումնարանական դասակարգումը, ֆիզիկա-օպտիկական և քիմիական տեղեկատվական տվյալները և բնորոշ հատկանիշները մանրամասն նկարագրված են Հ.Գ. Մադրյանի աշխատանքներում, և դրա համար էլ այդ հարցերը մեր կողմից չեն քննարկվում: Դրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ հանրապետությունում հազվագյուտ մետաղների արտադրության համար գիտատեխնոլոգիական հենքը առայժմ ստեղծված չէ, մինչդեռ հայտնաբերվել են ուազմագարական շատ նոր մետաղներ, որոնք ունեն տնտեսական մեծ պոտենցիալ և տիեզերական ու միջուկային տեխնիկայում օգտագործման հարածուն պահանջ:

Պրոֆ. Վ.Ե. Բոյցովի պատկերավոր արտահայտությամբ «հազվագյուտ մետաղները իրենց բնույթով յուրահասուկ արդյունաբերական վիտամիններ են: Եվ նման այն բանին, ինչպես կենդանի օրգանիզմը չի կարող լիարժեք զարգանալ առանց վի-

տամինների միկրոգրամային քանակների, այնպես էլ առաջավոր ժամանակակից արդյունաբերությունը առանց հազվագյուտ տարրերի անհնար է»: Ուստի ներկայում ժամանակակից պետությունների արդյունաբերատնտեսական մակարդակի զարգացումը և գիտատեխնիկական առաջընթացը որոշվում է ոչ թե պողպատի, թուղի արտադրության մասշտաբներով, այլ հազվագյուտ մետաղների արտադրությամբ և օգտագործմամբ: Աշխարհի զարգացած առաջատար երկրներում վերջին տարիներին կառուցվել են տասնյակ քիմիա-մետալորգիական գործարաններ՝ տասնյակ անգամ-ներ մեծացնելով հազվագյուտ մետաղների արտադրությունը:

Մեր հանրապետությանը հանքահումքային ռեսուրսների համալիր օգտագործման և հազվագյուտ մետաղների արտադրության ստեղծման ճանապարհին, երկար ու դժվարին գործընթաց է սպասվում: Հանրապետությունում լեռնահանքային արդյունաբերության վերականգնումը հանդիսանում է կարևոր նախադրյալ «Մոլիբդեն», «Ունմետ» և «Ունմո» մշակված ծրագրերի լրիվ և հաջող իրականացման համար:

Ըստ Դ.Ի.Սենդելեևի պարբերական աղյուսակի հազվագյուտ տարրերը դասակարգվում են երեք խմբի. սիդերոֆիլ – Ru, Rh, Pd, Os, Ir, Pt, խալկոֆիլ – Cd, Ga, In, Tl, Ge, Te, Se, Re, Bi, և լիթոֆիլ Li, Cs, Be, Sr, V, Y, Yb, Ce, Zn, Ta, Nb, Sc, Rb, TR, La, Hf, U, Th: Սակայն հազվագյուտ տարրերի այդպիսի դասակարգումը միանշանակորեն չի ընդունվում: Նշենք, որ ըստ մի քանի հետազոտողների տվյալների Re և Bi չեն պատկանում խալկոֆիլներին, իսկ Re պատկանում է լիթոֆիլ տարրերին. սիդերոֆիլների խմբին դասվում են ոչ թե պլատինի խմբի մետաղները (ՊԽՄ), այլ Cs, V և այլն:

Ըստ տեխնիկական դասակարգման, հազվագյուտ տարրերը բաժանվում են 5 խմբի՝ թերև, դժվարահալ, ցրված, հազվագյուտ հողերի, լանթանոիդների և ռադիոակտիվ: Վերջիններս նույնպես կրում են պայմանական բնույթ, քանի որ որոշ տարրեր միաժամանակ կարող են վերագրվել տարրեր խմբերի: Օրինակ, ոուրիդիումը և ցեզիումը վերագրվում են թերևներ և ցրված տարրերին, ունիտումը – տիափիկ ցրված և դժվարահալ մետաղ է, վանադիտումը և վոլֆրամը տիափիկ դժվարահալ մետաղ են և միաժամանակ հանդիսանում են ցրված. դժվարահալ տիտանը պատկանում է թերևների մեջ:

տարրերի խմբին և այլն: Բացի դրանից, երկրաբանական գրականության մեջ հաճախ օգտագործվում է «հազվագյուտ և ցրված տարրեր» հասկացողությունը, ինչը, բնականաբար, անընդունելի է: Հանքառաջացման մեջ կարեւոր նշանակություն ունեն ցրված տարրերը: Նրանցից գերմանիումը, սելենը և տելուրը պատկանում են մետաղներին պայմանականորեն, քանի որ ի տարրերություն մետաղների, նրանք հանդիսանում են կիսահաղորդիչներ: Ցրված տարրերը բնության մեջ հանդիպում են գլխավորապես տարրեր մետաղների մեջ խառնուրդների ձևով և հարակից կորզվում են տարրեր մետաղների հանքաքարերից կամ օգտակար հանածոներից (ածուխ, աղ, ֆոսֆորիտներ): Միայն առանձին դեպքերում ցրված տարրերը՝ Sc, Ti, Ge, V, Te, Se և Cd կարող են առաջացնել իրենց ուրույն միներալները: Տարրեր միներալների մեջ ցրված տարրերի գոյածները տարրեր են. իզոմորֆ տեղակալում (հաֆնիումը ցիրկոնիումի միներալների մեջ), սորբցիոն խառնուրդներ, միկրոմիներալներ (տելուրիդները պիրիտում), ամորֆ միներալների մակերեսով կլանված (վանադիումը մոնտմորիլնիտներում, սելենը լիմոնիտների մեջ), մետաղաօրգանական միացությունների առաջացում (ածուխների մեջ), բյուրեղային ցանցում տեղակալված: Տարրերի վերագրումը հազվագյուտների խմբին, ինչպես տեսնում ենք, կրում է որոշակի աստիճանի պայմանական և, հավանաբար, ժամանակավոր բնույթ: Ժամանակի ընթացքում հազվագյուտ տարրերի ցանկը փոխվել և անկասկած, փոխվելու է նաև այսուհետու:

Նախկինում հազվագյուտ տարրերին էին վերագրում սննիկը, վոլֆրամը, մոլիբդենը, անագը և այլն, բայց նրանց խոշոր հանքավայրերի հայտնաբերման հետ կապված, նրանք ներկայում հազվագյուտ տարրերի խմբին չեն դասվում: Բացի դրանից, մի շարք դեպքերում, այդ տարրերի պարունակությունը լեռնային ապարներում (հանքաքարերում) շատ ավելի բարձր է, քան այլ քիչ տարածված, տարրերի պարունակությունները: Օրինակ, ոուրիդիումի պարունակությունը (0.015%) երկրակեղեռում քավականին մեծ է կապարի (0.0016%) պարունակությունից, իսկ սկանդիումինը (0.0013%) մեծ է, քան մկնեղինը (0.0002%), բայց ոուրիդիումը և սկանդիումը հանդիսանում են տիպիկ հազվագյուտ տարրեր:

ՈՅ հազվագյուտ տարրերի միներալոգիայի, երկրաբիմիայի և բյուրեղագիտության ինստիտուտը (1964, Մոսկվա) առաջարկում է հազվագյուտ տարրերի ներքոհիշյալ շարքը՝ լիբիում, ոուրիդիում, ցեզիում, բերիլիում, ստրոնցիում, սկանդիում, խորիում, լանժանիդներ, ցիրկոնիում, հաֆնիում, նեորիում, տանտալ, գերմանիում, սելեն, տելուր, ռենիում:

Հ.Գ. Մաղաքյանը (1971) այդ շարքին ավելացրել է բորը, բացառելով շարքից ստրոնցիումը: Հայաստանի հանքային ֆորմացիաներում հազվագյուտ մետաղների երկրաբիմիական առանձնահատկությունների ու ստացված նոր տվյալների հաշվառմանը հազվագյուտ տարրերի ցանկը մեր կողմից լրացվել է բիստրով, ուղղողեն օսմիումով, պլատինոհիճներով և վանադիումով, ինչպես նաև որանով և բորիումով:

Գալիում

Գալիումը Հայաստանի բազմամետաղային հանքավայրերի հանքաքարերում իզոմորֆ խառնուրդների ձևով հայտնաբերվել է սփալերիտի, մասամբ զալենիտի, պիրիտի և խալկոպիրիտի մեջ: Գալիումի ինքնուրույն միներալներ հայտնաբերված չեն:

Ախրալայի հանքավայրի հանքաքարում գալիումի միջին պարունակությունը 20 գ/տ է (21 նմուշների տվյալներով), ցինկի խտանյուրում՝ 78 գ/տ, (6 նմուշի տվյալներով), իսկ հարստացման պոչերում՝ 10գ/տ (4 նմուշի տվյալներով): Այդ հանքավայրի սփալերիտներում գալիումի պարունակությունը տատանվում է 0.3-ից մինչև 300 գ/տ (11 նմուշների տվյալներով), միջին հաշվով 99.2 գ/տ, ընդ որում մուգ գունավորված տարատեսակում գալիումի պարունակությունը մոտ 4 անգամ փոքր է, քան բաց գունավորված տարատեսակում (166 գ/տ):

Գլածորի հանքավայրի հանքաքարերի մեջ ցինկի 6.05% միջին պարունակության դեպքում գալիումի պարունակությունը հավասար է 12 գ/տ, իսկ սփալերիտի մեջ՝ 1.5 գ/տ: Ավելի քան 200 շարքային նմուշներից կազմված 5 խմբային նմուշների տվյալներով ցինկի պարունակության, ինչպես նաև կապարի ու պղինձի

պարունակությունների գումարի մեծացմանը զուգընթաց՝ զալիումի պարունակությունը փոքրանում է: Այդ հանքավայրի համար ցինկի և զալիումի հարաբերակցության գործակիցը հավասար է 0.95, իսկ նշված մետաղների գումարի և զալիումի՝ 0.97: Հանքավայրի հիմնական մետաղների և զալիումի միջև հակադարձ հարաբերական կապը վկայում է, որ հանքաքարում գալիումի հիմնական զանգվածը կապված է ապար կազմող միներալների հետ:

Բազմամետաղային հանքավայրերում զալիումի առավելագույն քարձը պարունակություն (300 գ/տ) հայտնաբերված է Ախրալայի սֆալերիտների մեջ: Սովորաբար սֆալերիտները քնորշվում են զալիումի ավելի մեծ պարունակությամբ, քան այլ հանքային միներալները:

Հրաքարային-բազմամետաղային ֆորմացիայի հանքավայրերի հանքաքարերի սֆալերիտները քնորշվում են զալիումի առավել քարձը պարունակությամբ (32-120 գ/տ):

Բազմամետաղային ֆորմացիայի հանքաքարերի սֆալերիտներում զալիումի պարունակությունը 15գ-ից պակաս է, հազվադեպ քացառությամբ եղակի նմուշներով քնորշագրված Փամբակի և Մայմեխսի սֆալերիտների: Այդ ֆորմացիայում առավել քարձը պարունակություն նկատվում է մկնդեղ-կապարային (Ազատեկ – 38գ/տ) և մկնդեղ-բազմամետաղային (Արավու – 110 գ/տ) հանքատեսակների համար:

Գալենիտների (Գլածոր, Կաքավասար, Մարց, Չիլախլու), պիրիտների (Մարց, Գլածոր) և խալկոպիրիտների (Գլածոր, Շահումյան) քիմիական անալիզները ցույց են տալիս, որ այդ միներալներում զալիումի պարունակությունը մոտ 1 գ/տ է:

Որոշ դեպքերում Գլածորի սֆալերիտների մեջ որոշված է 9 գ/տ զալիում, իսկ Կաքավասարում՝ 6 գ/տ, Գլածորի և Կաքավասարի զալենիտների մեջ՝ 2 գ/տ, իսկ խալկոպիրիտների մեջ զալիումը կազմում է. Գլածորում՝ 2 գ/տ, Կաքավասարում՝ 5 գ/տ:

Նկատի ունենալով զալիումի բազմաթիվ միացությունների կառուցվածքային մոտիկությունը ցինկի սուլֆիդների հետ, սֆալերիտների մեջ մտնող զալիումի իզոմորֆ ձևերը կարող են տարրեր լինել: Գալիումի հնարավոր գոյածներ են համարվում GaAs, Ge_2As_3 և Ge_2S_3 զուգակցված CuS , Ag_2S կամ Tl_2S հետ: Սֆալերիտում, զալիումի և մկնդեղի պարունակությունների տվյալներով,

առավել հավանական է զալիումի արտահայտման Ga_2S_3 ձևը: ZnS - Ga_2S_3 համակարգի փորձնական հետազոտություններով ենթադրվում է, որ շնայած նրանց պինդ լուծույթների սահմանափակությանը, չի բացառվում սֆալերիտի մեջ զալիումի իզոմորֆ առկայությունը մինչև 13-14 կշռային %-ի չափով՝ առանց բալիումի և արծաթի մասնակցության:

Գալիումի կուտակման գործակիցը տարրեր հանքավայրերի համար տատանվում է լայն սահմաններում՝ 0.03-ից (Չիրախլու) մինչև 3.75 (Փամբակ): Գործակցի բաշխումը ըստ ֆորմացիաների և հանքաքարերի տեսակների հետևյալն է. կոչեղան-բազմամետաղային ֆորմացիայի հանքաքարեր – միջին հաշվով 2.1; բազմամետաղային ֆորմացիայի հանքաքարեր – լճիհանուր առմամբ 1.0, իսկ ըստ տեսակների՝ բազմամետաղային-0.46, կապար-ցինկային – 0.95 (առանց Փամբակի վերը հիշատակված ոչ բնորոշ նմուշի – 0.35), կապար-մկնդեղային – 1.38 և մկնդեղ-բազմամետաղային – 3.44:

Արդյունաբերական տեսակետից զալիումի համար հետաքրքրություն են ներկայացնում կոչեղան-բազմամետաղային (Ախրալա, Շահումյան) և մկնդեղ-կապարային (Ազատեկ) հանքաքարերը:

Գերմանիում

Հայաստանի բազմամետաղային հանքավայրերի հանքաքարերում գերմանիումի ինքնուրույն միներալներ՝ գերմանիտը և ռենյերիտը հայտնաբերվել են Ախրալայի հանքավայրի հանքաքարերում: Այստեղ նրանք հանդիպում են բորնիտի, խալկոպիրիտի, պիրիտի, խունացած միներալների և խալկոզինի դաշտում՝ չափազանց նուրք ներփակումների տեսքով: Բոլոր այդ միներալները ունեն ոչ մեծ տարածում:

Հանքային միներալներից գերմանիումի առավել մեծ պարունակություններ նշվում են տարրեր հանքավայրերի սֆալերիտներում: Բացի դրանից գերմանիումը որոշված է էնարգիտի, տենանտիտի, բորնիտի, խալկոպիրիտի, պիրիտի, զալենիտի և ռեալգարի մեջ:

Հայաստանի քաղմամետաղային հանքավայրերի հանքաբարերի մեջ գերմանիումի հիմնական կրողը հանդիսանում է սֆալերիտը: Սֆալերիտում և սֆալերիտի խտանյութերում գերմանիումի պարունակությունը տատանվում է հետքից մինչև 40 գ/տ:

Ախրալայի հանքավայրի սֆալերիտներում հայտնաբերվել են գերմանիումի հետևյալ պարունակությունները. մարտիտների մեջ (ըստ 6 նմուշների)՝ 12 գ/տ (7.5-ից մինչև 16.0 գ/տ) և կլեյոֆանում (ըստ 5 նմուշների)՝ 18.2 գ/տ (10-ից մինչև 27.0 գ/տ): Արավուսի հանքավայրի սֆալերիտի մեջ որոշված է 28 գ/տ գերմանիում: Շահումյանի 20 նմուշներով, սֆալերիտի մեջ, որոշվել է միջին հաշվով 12 գ/տ գերմանիում (0-ից 359.0 գ/տ): Ապեկտրալ անալիզի տվյալներով Ախրալայի հանքավայրի սֆալերիտներում, 9 նմուշների արդյունքներով, գերմանիումի միջին պարունակությունը կազմում է 9 գ/տ, Կրուգլայա շիշկայի սֆալերիտներում (28 նմուշների արդյունքով)՝ 2 գ/տ:

Այդպիսով, սֆալերիտների մեջ գերմանիումի համեմատաբար բարձր պարունակություններ հայտնաբերված են Ախրալայի, Ջրգալի ձորի, Տավոշի, Ազատեկի, Շահումյանի, Արավուսի և Մովսեսի հանքավայրերում և հանքերևակություններում: Մնացած բոլոր հանքավայրերում գերմանիումի պարունակությունը ցածր է 10 գ/տ-ից և սովորաբար բարձր չէ 5 գ/տ-ից:

Գալենիտների մեջ գերմանիումի պարունակությունը սովորաբար 1 գ/տ-ի սահմաններում է. Շահումյանի հանքավայրում (4 նմուշ)՝ 0.5 գ/տ, (3 նմուշ)՝ 0.4 գ/տ:

Խալկոպիրիտի մեջ գերմանիումի առկայությունը որոշված է՝ Շահումյանում (4 նմուշ)՝ 7 գ/տ, Աղվերանում (2 նմուշ), Գլածորում (4 նմուշ) և Շահումյանում (4 նմուշ) - 1 գ/տ, Կաքավասարում (8 նմուշ) - 2.7 գ/տ, Ախրալայում (6 նմուշ) - 1.7 գ/տ:

Պիրիտների մեջ գերմանիումի առկայությունը որոշվել է եզակի նմուշներում և նրա պարունակությունը սովորաբար չի գերազանցում 1 գ/տ-ից (Շահումյան, Գլածոր և այլն):

Մյուս հանքային միներալներից գերմանիում է հայտնաբերված Գլածորի հանքավայրի խունացած միներալներում (2 նմուշ) - 1.0 գ/տ, Արավուսի հանքավայրի էնարգիտում (3 նմուշ) - 10.0 գ/տ, տեսանտիտում - 3 գ/տ, բորնիտում - 3 գ/տ, Ախրալայի հանքավայրի բորնիտներում (9 նմուշ) - 0 - 320.0 գ/տ (միջինը 103.0 գ/տ):

Պիրիտի, խալկոպիրիտի և զալենիտի մեջ գերմանիումի ցածր պարունակությունները, ինչպես նաև գերմանիում կրող բոր-նիտի, էնարզիտի, տենանտիտի աննշան տարածումը բացառում է գերմանիումի տեսակետից նրանց գործնական հետաքրքրությունը: Այդ տեսակետից առավել կարևորվում են սֆալերիտները, ընդ որում այն հանքավայրերի, որոնց մեջ գերմանիումի պարունակությունը 10.0 գ/տ-ից բարձր է:

Կուտակման համեմատաքար բարձր գործակիցներ որոշված են Արավուսի (0.5), Ախրալայի (0.47) և Արմանիսի (0.4) հանքավայրերի սֆալերիտների մեջ:

Հայաստանի կապարի և ցինկի հանքավայրերի սֆալերիտները բնորոշվում են գերմանիումի համեմատաքար ցածր պարունակությամբ: Գերմանիումի հիմնական միներալ-կուտակիչ հանդիսանում է սֆալերիտը, քանի որ գերմանիումի մնացած միներալ-կուտակիչները՝ բորնիտը, խալկոպիրիտը, էնարզիտը, խունացած միներալները և այլն, բացառությամբ Ախրալայի հանքավայրի բորնիտների, նույնպես պարունակում են գերմանիումի ցածր բանակություն և նրանց տարածումը հանքային զանգվածում անհաշան է:

Սֆալերիտների մեջ, ըստ գերմանիումի կուտակման գործակցի, առավել մեծ ցուցանիշը ունեն կարբոնատային ապարների (Մոլսեն) մեջ տարածված կապար-ցինկային ֆորմացիայի (0.8), իսկ ամենափոքր գործակցը՝ բազմամետաղային ֆորմացիայի (0.05) հանքաքարերը: Կուտակման համեմատաքար բարձր գործակից ունեն կապար-մկնդեղային, մկնդեղ-բազմամետաղային հանքաքարերի սֆալերիտները, համապատասխանքար 0.4 և 0.5, ինչը, հավանաբար, կապված է նրանցում մկնդեղի առկայության հետ:

Գործնական հետաքրքրություն կարող են ներկայացնել Ազատեկի, Շահումյանի և Ախրալայի հանքավայրերը, որոնց հանքաքարերի համալիր վերամշակումը հնարավորություն կտաստանալ գերմանիում:

Ինդիում

Հայաստանի բազմամետաղային հանքավայրերում ինդիումը հանդիպում է բավականին հաճախ, չնայած նրա ինքնուրույն միներալներ չեն հայտնաբերվել: Ինդիումի հիմնական կուտակիչներ են հանդիսանում սֆալերիտը և խալկոպիրիտը: Ինդիումի պարունակությունը սֆալերիտների և սֆալերիտային խտանյութերի մեջ տատանվում է հետքից մինչև 260 գ/տ (Լիչքվազ): Ինդիումի առավել բարձր պարունակություններ նշվում են Աղվերանի, Լիչքվազի, Արավուսի, Չիրախյի, Շահումյանի և Կաքավասարի հանքավայրերի և հանքաերևակումների սֆալերիտների մեջ, որոնցում ինդիումի պարունակությունը կլարկի համեմատությամբ հավասար է 1 կամ ավելին, Աղվերանի համար՝ 4:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ինդիումի պարունակությունը Մազրայի, Սիսիանի, Վաղաշենի հանքավայրերում (20-30 գ/տ):

Ախրալայի հանքավայրի հանքաքարերում ինդիումի պարունակությունը (հետքից մինչև 70 գ/տ) 11 նմուշներում միջին հաշվով 4.1 գ/տ է, իսկ խտանյութերում կազմում է այդ թվում՝ ցինկի՝ 7 գ/տ, պղնձի՝ 3.6 գ/տ (3 նմուշ) և կապարի՝ 3.4 գ/տ:

Գլածորի հանքավայրի սֆալերիտներում ինդիումի պարունակությունը 10 գ/տ է, Ազատեկում՝ 30 գ/տ, Ախրալայում 10-100 գ/տ, Չիրախյում՝ 45 գ/տ, Արավուսում՝ 30-100 գ/տ, Մովսեսում՝ 30-100 գ/տ, Ջրհալի ձորում՝ 3.0 գ/տ, Շահումյանում՝ 80 գ/տ:

Մի շարք հանքավայրերի պղնձի խտանյութերում որոշված են ինդիումի բարձր պարունակություններ. Շահումյանում՝ 185 գ/տ, Արգարանում՝ 240 գ/տ, Կաքավասարում 48 գ/տ և Սիսիանում 30 գ/տ: Ինդիումի միջին պարունակությունները միևնույն հանքավայրերի խալկոպիրիտների մեջ բացաձակ նշանակությամբ միշտ բարձր են, քան սֆալերիտների մեջ և ունեն, չնայած ոչ հստակ, բայց ուղղակի հարաբերակցական կապ:

Արավուսի հանքավայրի էնարգիտի 3 նմուշից երկուսում հայտնաբերված են ինդիումի հետքեր, իսկ մեկում՝ 10 գ/տ:

Լալիզյուղ, Գլածոր, Սպիտակօղուր և Արավուս հանքավայրերի պիրիտների մեջ հայտնաբերվել են ինդիումի հետքեր, իսկ միայն մեկ նմուշում՝ 1գ/տ:

Մի քանի հանքավայրերի գալենիտների քիմիական անալիզները նույնպես ցույց են տվել ինդիումի հետքեր, իսկ Արավուսի գալենիտների մեջ՝ 4 գ/տ:

Սփալերիտների մեջ ինդիումի կուտակման գործակիցը առանձին հանքավայրերում մեծ է մեկից և կազմում է՝ Շահումյան՝ 1.0, Չիրախլու՝ 1.1, Արավուս՝ 1.3, Լիչքվազ՝ 3.3, Աղվերան՝ 4.0: Որոշակի հետաքրքրություն կարող են ներկայացնել Կարավասարի՝ 0.9, Սիսիանի՝ 0.6, Մազրայի՝ 0.6 սփալերիտները: Մնացած հանքավայրերում՝ Ախրալա, Զրիալիձոր, Տավուշ, Լալիզյուղ, Մայմեխ, Գլածոր, Փոքր-ձոր, Սպիտակ-ջուր, Մարց, Փամբակ և Ազատեկ, այդ գործակիցը հավասար է կամ փոքր 0.2-ից:

Զգալիորեն բարձր մեծություն է նշվում խալկոպիրիտի մեջ ինդիումի կուտակման գործակցի համար: Այսպես, Աղվերանում՝ 20.0, Շահումյանում՝ 15.4, Կաքավասարում՝ 5.3, Սիսիանում՝ 3.3: Կոչեղանային ֆորմացիայի հանքաքարերին քիչ են բնորոշ սփալերիտի մեջ ինդիումի կուտակումները և ընդհանուր ֆոնի վրա միայն առանձին հանքավայրեր կարող են ունենալ 1-ից ավելի կուտակման գործակից: Ինդիումը առավել բնորոշ է բազմամետադային ֆորմացիայի բազմամետադային տեսակի հանքաքարերի սփալերիտներին: Այստեղ միայն առանձին հանքավայրեր չեն պարունակում ինդիում, իսկ կուտակման գործակցի միջին արժեքը կազմում է 1.3: Մոտավորապես այդպիսի նշանակություն ունի մկնդեղ-բազմամետադային տեսակը: Մնացած տեսակների համար ինդիումի կուտակման գործակիցը սփալերիտի մեջ 1-ից ցածր է:

Ինդիումի տեսակետից գործնական հետաքրքրություն կարող են ներկայացնել Շահումյանի և Լիճքվազի հանքավայրերի սփալերիտները և խալկոպիրիտները:

Ո-ԵԱՀՈՒՄ

Հայաստանի մոլիբդենի խոտանյութերի մեջ ունիումի միջին պարունակությունը կազմում է՝

Ծահագործվող պղինձ-մոլիբդենային հանքավայրերի հանքաքարերի խտանյութերում՝ 260 գ/տ-ից (Քաջարան) մինչև 524 գ/տ (Ազարակ):

Մանրամասն հետախուզված և արդյունաբերական յուրացմանը նախապատրաստված՝ հանքավայրերի խտանյութերում՝ 340 գ/տ-ից (Լիճը) մինչև 740 գ/տ (Թեղուտ):

Ունիտումի միջին պարունակությունը այդ հանքավայրերի հանքաքարերում տատանվում է 0.1-ից մինչև 0.3 գ/տ:

Ունիտումի խոշոր պաշարներ հայտնաբերված են Վայոցձորի խմբի հանքավայրերի հանքաքարերում, որտեղ մոլիբդենային խտանյութերի մեջ ունիտումի միջին պարունակությունը հասնում է 4000-18800 գ/տ, այսինքն մինչև 4-18.8 կգ/տ: Այդ հանքավայրերը հետախուզված չեն, պաշարները հաշված և գնահատված չեն: Այդ հանգամանքը թելադրում է նրանց առաջնահերթ ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Հայաստանի հանքաքարերի մեջ ունիտումի հաստատված և հեռանկարային լրադիանուր պաշարները կազմում են համաշխարհային պաշարների մոտ 10-12%, ԱՄՆ մի քանի հարյուր միլիոն դրամի հասնող արդյունահանման արժեքով: Ունիտում պարունակող խտանյութերից ստացվող հիմնական արդյունաբերական արտադրանքներն են պերունիտումային քրուն, ամոնիտի պերունատը և ունիտումի մետաղական փոշին (99.99%):

Ունիտումը հարատացման ժամանակ հիմնականում անցնում է մոլիբդենային խտանյութի մեջ: Մշակված են Քաջարանի և Ազարակի մոլիբդենային խտանյութերի (51% մոլիբդենի պարունակությամբ) վերամշակման տեխնոլոգիաները: Պատրաստված է տեխնոլոգիական կանոնակարգ ֆորձարարարությունաբերական արտադրամասի նախագծման համար:

Սկանդիտում

Հայաստանի հանքային ֆորմացիաների սկանդիտումաբերության վերաբերյալ ուսումնասիրությունները իրականացվել են վերջին տասնամյակներում՝ ելնելով համանման հանքավայրերի, այդ քում ԱՄՆ Բիլսգինեմ Կենյոն հանքի պղնձի հանքաքարի ծծումք պարունակող մնացուկներից, ինչպես նաև Կլայմաքսի

պղինձ-մոլիբդենային հանքավայրի հանքաքարի սկանդիտում պարունակող վոլֆրամային խտանյութերից սկանդիտումի կորզման վաստացի տվյալներից: Հաշվի են առնվել նաև հիմքային և գերհիմքային ապարների մեջ երկար-մազնեզիտումային միներալների հետ կապված սկանդիտումի կուտակումների առկա տվյալները, ինչպես նաև տերիզեն ածխարեր առաջացումներում սկանդիտումի հնարավոր կուտակման հարցը: Նմանակման ճանապարհով ուսումնասիրվել են Հայաստանի պղինձ-մոլիբդենային (Քաջարան, Լիճք), ոսկո (Սոքք) հանքային ֆորմացիաների հանքավայրերը և միջին էոցենի հիմքի ածխարեր առաջացումները (գորշ ածուխներ):

Անալիզները կատարվել են ՌԴ մասնագիտացված լաբորատորիաներում. Մոսկվայի Վերնադսկու անվան Երկրաքիմիայի ինստիտուտ - Էմիսիոն մոտավոր-քանակական սպեկտրալ անալիզի մեթոդով, Ապատիտի ՌԳԱ Կոլայի գիտական կենտրոնի Երկրաբանության ինստիտուտ - կիսաքանակական սպեկտրալ անալիզի մեթոդով, Ապատիտի ՌԳԱ Կոլայի գիտական կենտրոնի միներալային հումքի և հանքային տարրերի տեխնոլոգիայի և քիմիայի ինստիտուտ - սպեկտրալ քանակական անալիզի մեթոդով: Անալիզներ կատարվել են նաև Մոսկվայի ԻՄԳ-ՐԷ Բրոնիցելու ԵՀԱ, Սանկտ-Պետերբուրգի համալսարանում և ՌԴ ԳԱԱ ԵԳԻ:

Ստացված տվյալները հիմք են հանդիսանում նշելու.

1. Անալիտիկ հետազոտությունների տվյալներով որոշված է սկանդիտումի պարունակությունները Սոքքի ոսկո, Քաջարանի և Լիճքի պղինձ-մոլիբդենային հանքավայրերի հանքաքարերում, ինչպես նաև Հյուսիսային Հայաստանի միջին էոցենի հիմքի գորշ ածուխներում: Սոքքի հանքավայրում սկանդիտումի պարունակությունը նրա սովորական հանքաքարերում կազմում է 5-6 գ/տ, օրսիդացված հանքաքարերում՝ մինչև 15-20 գ/տ: Վերամշակման ժամանակ սկանդիտումի մոտ 75-80% անցնում է շլամի մեջ: Քաջարանի հանքավայրի հանքաքարում սկանդիտումի պարունակությունը տատանվում է 6-ից մինչև 20 գ/տ միջակայքում, որից 50-80% անցնում է հանքահարստացման երկար պարունակող մնացուկների մեջ: Լիճքի հանքավայրում սկանդիտումը գերազանցապես կուտակվում է մոլիբդենիտի մեջ (5-6 գ/տ): Սպեկտրալ անալիզի արդյունքներով միջին էոցենի հիմքի գորշ ածուխներում

սկանդիումի պարունակությունը 15-20 գ/տ է (14 անալիզների արդյունքով):

2. Ելնելով ստացված տվյալների համեմատական վերլուծությունից և հաշվի առնելով սկանդիում պարունակող հանքաքարերի (տեխնոլոգիական նյութերի) վերամշակման գոյություն ունեցող տեխնոլոգիական սխեմաները՝ նրանց արդյունաբերական յուրացումը դառնում է լիովին նպատակահարմար: Առավել հեռանկարային է դիտվում Քաջարանի պղինձ-մոլիբդենային հանքաքարի հարստացման երկար պարունակող մնացուկներից սկանդիումի կորզումը: Սակայն տվյալ հարցի վերջնական լուծման համար անհրաժեշտ է անցկացնել տեխնոլոգիական և միներալաբերկրաքիմիական լայնամասշտար համալիր հետազոտություններ: Այսպիսի հարցադրման կարևորությունը ենում է սկանդիումի քավականին բարձր արդյունահանման արժեքից, ինչպես նաև Քաջարանի պղինձ-մոլիբդենային կոմբինատի տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորություններից:

3. Հեղինակային հաշվարկների տվյալներով Քաջարանի հանքավայրի հանքաքարում սկանդիումի հաշվեկշռային պաշարները կազմում են ավելի քան 30 հազ.տ, որից արդյունահանվողը մոտ 90 տ է (մոտ 11%) սկանդիումի 15 գ/տ միջին պարունակությամբ՝ մնացուկներից 10% կորզման հաշվարկով: Այս դեպքում չեն հաշվարկված մի քանի հարյուր միլիոն տոննա պահուատային պոչերը: Այդ պաշարների արդյունաբերական արժեքը հաստատվում է հանքավայրի պղինձ-պորֆիրային տեսակին նրա ֆորմացիոն պատկանելությամբ, հարստացման երկար պարունակող մնացուկներում սկանդիումի կոտակումներով, կոմբինատի հսկայական արդյունաբերական հզորություններով, և վերջապես, մետաղի ռազմավարական իրավիճակով ու նրա մշտական բարձր արժեքով: Սորքի և Լիճքի հանքավայրերի հանքաքարերի սկանդիումաբերությունը կարիք ունի ուսումնասիրությունների երկրորդ փուլի՝ Սորքի հանքաքարի վերամշակման և Լիճքի հանքավայրի արդյունաբերական յուրացման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներից հետո:

4. Համաշխարհային պրակտիկայում (ԱՄՆ) մշակված է, Քաջարանին համանման երկար պարունակող մնացուկներից սկանդիումի կորզման տեխնոլոգիան: Մշակված է սկանդիումի

օրսիդից մինչև 99,999% մաքրությամբ սկանդիումի ստացման տեխնոլոգիան՝ օգտագործելով իռնափոխանակման քրոմատոգրաֆիայի մեթոդը:

5. Անհրաժեշտ է կատարել սկանդիում պարունակող գորշ ածուխների և միջին էոցենի հիմքի տերիգեն առաջացումների ողջ հաստվածքի (սկանդիումի 0.0018% միջին պարունակությամբ) էքսպրես ուսումնասիրություն՝ նկատի ունենալով նրանց բարենպաստ աշխարհագրատնտեսական և լեռնատեխնիկական պայմանները և առանց հորատման ու պայթեցման աշխատանքների բաց նշակման հնարավորությունները: Սկանդիումը այստեղ սերտորեն կապված է հազվագյուտ տարրերի՝ խորիումի և խտերիումի հետ: Դումիտ-պիրոքսենիտ-գաբրոյի ֆորմացիայի գերհիմքային ապարների զանգվածի հետ կապված տիտանամագնետիտային պիրոքսենիտների Սվարանցի հանքավայրը կարող է դառնալ սկանդիումի պոտենցիալ աղբյուր (սպասվող պարունակությունը 0.01%):

Մելեն և տելուր

Հայաստանի Պետհաշվեկշում գրանցված սելենի և տելուրի պաշարները հաշվարկված են Քաջարանի, Ազարակի, Կապանի և Շահումյանի շահագործվող հանքավայրերում: Սելենի ընդհանուր պաշարները կազմում են 6182.4 տ, տելուրինը՝ 6267տ.: Սելենի առավել բարձր պարունակությունները կապված են Քաջարանի հանքավայրում՝ մոլիբդենիտի (374 գ/տ), իսկ Շահումյանի հանքավայրում՝ զալենիտի (600 գ/տ) հետ: Շահումյանի հանքարի խտանյութերում տելուրի պարունակությունը կազմում է (գ/տ): Կապարի խտանյութում 1900, պղնձի՝ 480, ցինկի՝ 212, պիրիտի՝ 129.3: Պղինձ-մոլիբդենային և պղնձի հանքավայրերի հանքարքերի վերամշակման ժամանակ սելենը և տելուրը առավելագույնս կորզվում են պղնձի խտանյութի մեջ: Կապանի հանքարքերից՝ 61.5% և 63.7%, Քաջարանի հանքարքերից՝ 56.8 և 48.8% համապատասխանաբար: Շահումյանի բազմամետաղային հանքարքից սելենը և տելուրը առավելագույնս կորզվում են կապարի խտանյութ համապատասխանաբար 31.4 և 48.1 %:

Հայաստանի հանքավայրերում սելենի և տելուրի երկարիմիան մանրամասն ուսումնասիրված է: Տնտեսապես հիմնավորված է Քաջարանի և Ծահովյանի խտանյութերից սելենի և տելուրի արդյունաբերական կորզման նպատակահարմարությունը, սակայն պղնձի, մոլիբդենի և բազմամետաղային խտանյութերի վերամշակման մետալուրգիական փակ ցիկլի բացակայության պատճառով, այդ բանկարժեք հազվագյուտ մետաղները խտանյութերի հետ արտահանվում են առանց համապատասխան հատուցման:

Սելենի և տելուրի նշանակալի պաշարներ կան պղնձի, պղինձ-մոլիբդենային և ոսկի-հանքային ֆորմացիաների չլրահետախուզված, որոնված, առանձին դեպքում մանրամասն հետախուզված, սակայն թույլ ուսումնասիրված հանքավայրերում:

Այդ պաշարները հաշվեկշռում գրանցված չեն, բայց ներկայացնում են հետաքրքրություն՝ ինչպես հարակից կորզման տեսակետից, այնպես էլ, հնարավոր է, հազվագյուտ մետաղների ոչ մեծ ինքնուրույն արտադրության կազմակերպման առումով:

Սեծ հետաքրքրություն են ներկայացնում Ալավերդու հանքային դաշտի արևմտյան ծայրամասի պղնձի հանքավայրերը (Ալավերդի, Հազվի, Ալվարդ և այլն)՝ որպես հումք մանրէարանական և ծծմբաքրվական տարալվացման համար:

Միամիներալային հանքաքարերում սելենի պարունակությունը՝ 235-328 գ/տ է: Բուն Ալավերդու պղնձի հանքավայրում սելենի միջին պարունակությունը կազմում է 235 գ/տ, Հազվիի և Ալավերդու հանքաքարերում՝ 300 գ/տ-ից ավելի: Արդյունաբերական յուրացմանը նախապատրաստված Ազատեկի հանքավայրի հանքաքարերում սելենի պարունակությունը 400 գ/տ է: Բոլոր այդ հանքավայրերում լեռնաերկրաբանական և աշխարհագրատնտեսական պայմանները բավականին բարենպաստ են: Հրաքարային ֆորմացիայի հանքավայրերում (Կապան, Ծամլուղ, Ախրալա, Չիրուխի, Տանձուտ և այլն) սելենը և տելուրը հիմնականում ներկայացված են ցրված խառնուրդների տեսքով: Պղնձի և ծծմբա-հրաքարային հանքաքարերում սելենի և տելուրի պարունակությունը տատանվում է տոկոսի հազարերորդական, իսկ առանձին դեպքերում՝ հարյուրերորդական մասերի սահմաններում:

Կապանի պղնձի և Չիրուխլիի ծծմբակոչեղանային հանքավայրերում նկատվում է դրական հարաբերակցական կախվածություն. առաջին դեպքում՝ սելենի, պղնձի և ծծմբի միջև, իսկ երկրորդ դեպքում՝ ծծմբի, սելենի, և տելուրի միջև։ Սելենի և տելուրի հարաբերակցությունը կոչեղանային ֆորմացիայի հանքարերում 3:1 – 1:1 է։

Սելենը և տելուրը հանդիսանում են Զաջարանի, Ազարակի, Դաստակերտի և այլ պղինձ-մոլիբդենային ֆորմացիայի հանքավայրերի հանքաքարերի բնորոշ խառնուրդներ։

Քազմամետաղային ֆորմացիայի հանքաքարերում սելենի և տելուրի պարունակությունները տատանվում են տոկոսի հարյուրերորդական մասերի սահմաններում։ Սելենի և տելուրի հարաբերակցությունը 1.5:1-ից մինչև 5:1։ Այդ ֆորմացիայի հանքավայրերի հանքաքարերի մեջ (Գլաճոր, Ազատեկ, Կարավասար, Արտիզ և այլն) սելենը հանդես է զալիս սուլֆիդների և սուլֆատների բյուրեղագիտական ցանցում՝ իզոմորֆ խառնուրդների տեսքով, այն դեպքում, եթե տելուրը առաջացնում է կապարի, բիսմուրի, արծարի և ուկու տելուրիդներ։ Խալկոպիրիտի մեջ սելենի պարունակությունը հասնում է 153 գ/տ, ալիրիտի մեջ՝ 150 գ/տ։ Խալկոպիրիտի մեջ տելուրի պարունակությունը կազմում է տոկոսի հարյուրերորդական մասեր, այսինքն 100 գ/տ սահմաններում։ Սելենի առավել բարձր պարունակությունը որոշված է անտիմոնիտի մեջ՝ մինչև 340 գ/տ, իսկ սֆալերիտի մեջ սելենի և տելուրի պարունակությունները տատանվում են 40-50 գ/տ սահմաններում։ Առանձնահատուկ հետաքրքրություն կարող են ներկայացնել Մեղրաձորի ուկու հանքավայրի տելուրիդները։ Հատերկարանահետախուզական աշխատանքների և տեխնոլոգիական նմուշների կիսաարդյունաբերական փորձարկումների տվյալների Մեղրաձորի հանքաքարերում բացի ուկուց և արծաթից գործնական նշանակություն ունի նաև տելուրը, որը ներկայացված է տելուրիդներով։ Se և Bi պարունակությունները ցածր են և չեն գերազանցում 3-5 գ/տ (անալիզի ճշտության սահմաններում)։

Հանքաքարի ֆլոտացիայի ժամանակ տելուրիդները անցնում են ուկի պարունակող խտանյութերի մեջ։ Տելուրի միջին պարունակությունը ֆլոտոխտանյութերի մեջ կազմում է 348 գ/տ՝ նրա

87.43% կորզման դեպքում: Տեղուրի պաշարների հաշվարկը կատարվել է 12 տեխնոլոգիական նմուշների տվյալներով: Տեղուրի միջին պարունակությունը՝ Կենտրոնական տեղամասում (Երկրորդ, «Կույր», Խնճերորդ հանքային մարմիններ) կազմում է 30.6 գ/տ, Հինգերորդ հանքային մարմնում (Աջարիձորի տեղամաս)՝ 12 գ/տ և Առաջին հանքային մարմնում (Հյուսիսային տեղամաս)՝ 21.45 գ/տ: Տեղուրի միջին պարունակությունը հանքավայրում կազմում է 23.6 գ/տ: $C_1 + C_2$ կարգով պաշարները կազմում են 15.4տ:

Լրահետախուզության առաջնահերթ օբյեկտները են հանդիսանում Հանքավանի հանքային դաշտը և նրա առանձին տեղամասները (սելենի, տեղուրի և բիսմուրի համար): Կողեւկտիվ սոլֆիդային խտանյութի մեջ տեղուրի և բիսմուրի պարունակությունները հասնում են 100 գ/տ, իսկ սելենը տեղրադիմիտային (տեղուրիդներում) խտանյութի մեջ՝ 4.4 կգ/տ, տեղուրը՝ 350 կգ/տ: Պոլինամկնդեղային հանքաքարերի մեջ սելենի պարունակությունը 1.2 կգ/տ է, իսկ տեղուրի՝ 720 գ/տ: Միջանցիկ կորզումը ցածր է և տարբեր խտանյութերից կազմում է 2-ից մինչև 9 %, ըստ որում հարատացման փուլում՝ 5-29%, իսկ մետալորդիական վերամշակման ժամանակ՝ 20-42%: Հումքի վերամշակման տեխնոլոգիական պրոցեսների լուծումը՝ կորսադի կրծատման նպատակով, կարևոր է ոչ միայն տնտեսական և արտադրական տեսակետից, այլև էկոլոգիապես, հաշվի առնելով, որ սելենը և տեղուրը բարձր քունավորության տարրեր են: Վերջին տարիներին սելենի և տեղուրի միջանցիկ կորզումը խտանյութերից հասցեն է մինչև 70-80%, լուծույթներից՝ մինչև 98%:

Թալիում

Հայաստանի հանքավայրերում թալիումի պարունակությունը քիմիական անալիզներով որոշված է գալենիտի, ինչպես նաև սֆալերիտի, պիրիտի, խալկոպիրիտի խտանյութերում: Հարկ է նշել, որ նրա առավել բարձր պարունակությունը՝ (3.5 գ/տ) որոշված է Գլաձորի և Մովսեսի հանքավայրերի գալենիտային խտանյութերի մեջ:

Թալիումը որոշված է Արավուսի հանքավայրի ռեալգարի, առողջապահության և էնարգիտի մեջ, որտեղ նրա պարունակությունը 2.5 գ/տ-ից փոքր է:

Թալիումի առավել բարձր պարունակություն հայտնաբերված է Ազատեկի հանքավայրի մկնդեղ-կապարային հանքաքարերի մեջ՝ 3-ից մինչև 55 գ/տ, միջինը (ըստ 7 նմուշների)՝ 22.0 գ/տ, իսկ խտանյութերում թալիումի պարունակությունը տատանվում է 4-ից մինչև 17 գ/տ, միջինը 12 գ/տ: Հիմնական տարրերի (մկնդեղ և կապար) հանքահարստացման ժամանակ 2 անգամ փոքրանում է թալիումի պարունակությունը:

